INSTITUTE OF LANGUAGE
AFTER H. ACHARYAN OF NAS RA

VIKTOR KATVALYAN

DICTIONARY
OF BAYAZET DIALECT

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

ВИКТОР КАТВАЛЯН

СЛОВАРЬ
БАЯЗЕТСКОГО ДИАЛЕКТА

YEREVAN - ЕРЕВАН
2021

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 81’28:811.19’374
ԳՄԴ 81.51-4
Կ 280

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ բ.գ.թ. Ն.Գ. Հովհաննիսյան

Կատվալյան Վ.Լ.
Կ 280 Բայազետի բարբառի բառարան.- Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2021 թ., 429 էջ:

Աշխատանքն ընդգրկում է Բայազետի բարբառի շուրջ 8 000 բառային միավոր, դարձվածք և ոճ: Բառարանի յուրաքանչյուր բառահոդված պարունակում է գլխաբառը և նրա բացատրությունը, քերականական տեղեկություններ, որպես կանոն՝ տվյալ բառով բարբառային խոսքի օրինակ: Օրինակները բարբառային խոսքի նմուշներ են, ասացվածքներ, դարձվածքներ, հաճախ էլ բերված նմուշները բովանդակային կապ ունեն և պատումներ են ձևավորում: Բառարանը տեղեկություններ է պարունակում նաև բարբառակիր հանրության կենցաղի, առօրյայի, սովորույթների, պատկերացումների, աշխարհընկալման վերաբերյալ: Բարբառային խոսքը ներկայանում է իր կենդանի գործածությամբ: Գլխաբառերը և դրանք պարունակող նմուշները բերվում են բարբառային տառադարձությամբ:

Բառարանը օգտակար կլինի լեզվաբաններին, բարբառագետներին, ազգագրագետներին, բանահյուսության մասնագետներին, կարող է օգտագործվել բուհական դասընթացներում:

ՀՏԴ 81’28:811.19’374
ԳՄԴ 81.51-4

ISBN 978-9939-9277-1-8

© Կատվալյան Վ.Լ. 2021
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մինչև 19-րդ դարի սկզբները Բայազետի բարբառը գործածվում էր Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառում, որը զբաղեցնում էր Էրզրումի նահանգի հարավարևելյան մի հատվածը՝ Վանա լճից հյուսիս-արևելք: Հյուսիսից գավառին սահմանակից էին Կարսի մարզն ու Երևանի նահանգը, արևելքից՝ Պարսկաստանը, հարավից՝ Վանի նահանգը, արևմուտքից՝ Խնուսի և Բասենի գավառակները[1]: Բայազետի բարբառով ներկայում խոսում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մեկ տասնյակից ավելի գյուղերում, որոնց բնակիչների նախնիները Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից գաղթել են 1829-1830 թթ.:

Բայազետի գավառը պատմականորեն մոտավորապես համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառին, որը նշանակալից դեր է խաղացել դեռևս Արարատյան թագավորության (Ուրարտու) ժամանակ, այնուհետև եղել է արքունի կալվածք: Արշակունիների թագավորության անկումից հետո (428թ.) Կոգովիտն անցնում է Բագրատունիներին: 10-12-րդ դարերում Կոգովիտին շարունակում էին տիրել Բագրատունի կրտսեր պայազատները, ու այդ պատճառով Դարույնքը այնուհետև սկսեց կոչվել նաև Պայազատ, որի հնչյունափոխված ձևն է հետագա Բայազետը[2]: Բայազետի մասին («բերդն Բայազիտի» կապակցությամբ) հայ պատմիչներից առաջինը հիշատակել է Առաքել Դավրիժեցին՝ 1451թ. ընդօրինակված Հայսմավուրքի հի-

[1] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 582-583;

[2] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Ե., 1979, էջ 503:

շատակարանից բերված հատվածում[3]: Օսմանյան զորքերն առաջին անգամ Կոգովիտ են մտել 1554 թ., երբ Սելիմ սուլթանը այն գրավում է Իրանից և հանձնում Սիլվան կամ Սլիվան կոչվող քրդական տոհմին, որն էլ այստեղ կիսանկախ իշխում է մինչև 19-րդ դարը: Մինչև 1829թ. Կոգովիտը բազմամարդ էր, ուներ գրեթե միատարր հայ բնակչություն. հայաբնակ էին գավառի 60-ից ավելի գյուղեր, իսկ Բայազետ քաղաքը ուներ 7000 բնակիչ, որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին: 1828 թ. օգոստոսին ռուսական զորքերը հայերի աջակցությամբ գրավում են Բայազետը: Սակայն 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանուպոլսում ստորագրված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով Ռուսաստանը Բայազետը զիջում է Թուրքիային: Այդ պայմանագրի 13-րդ հոդվածով արևմտահայերին իրավունք էր տրվում ներգաղթելու ռուսական կայսրության սահմանները: 1830 թ. գարնանից սկսվում է արևմտահայերի զանգվածային արտագաղթը: Վերաբնակիչները հաստատվում են նաև Սևանա լճի արևելյան, հարավային, մասամբ նաև արևմտյան ափերին: Բայազետ քաղաքից գաղթածները հիմնվում են պատմական Գեղարքունյաց գավառի Գավառ կամ Գավառենի ամայի բնակավայրում[4], որը 1850 թ. ստանում է քաղաքի կարգավիճակ և վերանվանվում Նոր Բայազետ (հետագայում՝ Կամո, ներկայում՝ Գավառ): Բայազետ քաղաքի շրջակա գյուղերից եկածներն էլ հաստատվում են Գավառի մերձակա տարածքներում՝ Գավառագետի ավազանում, և հիմնում մոտ մեկ տասնյակ բնակավայրեր: Գավառ քաղաքը և բայազետցիների սերունդներով բնակեցված բնակավայրերը (ներկայումս՝ Հացառատ, Արծվաքար, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Ծովազարդ,

---

[3] Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Ե., 1958, էջ 175, նաև՝ Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 423:

[4] Ամայացել էր 17-րդ դարի սկզբներից՝ Շահ-Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 920):

Լճափ, Հայրավանք, Բերդկունք) 1930թ. կազմում են Նոր Բայազետի շրջանը, որը 1959թ. վերանվանվում է Կամոյի շրջան: Բայազետի բարբառը բայազետցիների սերունդների միատարր միջավայրում մինչ օրս անխաթար պահպանված է Գավառի տարածաշրջանում, որն ընդգրկված է Գեղարքունիքի մարզում:

Թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերի սկզբներին պատմական հայրենիքից գաղթած շատ բայազետցիներ բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, հայտնվել բարբառային այլ միջավայրերում[5]: Ժամանակի ընթացքում նրանց սերունդները որոշ դեպքերում հիմնականում պահպանել, այլ դեպքերում՝ լրիվ կամ մասամբ կորցրել են մայրենի բարբառը: Բարբառային այլ շրջապատը կամ նույն բնակավայրում այլ բարբառային խոսքի հետ շարունակական շփումը հաճախ առաջ են բերել տարաբնույթ ազդեցություններ, երբեմն էլ ստեղծել են տարբեր բարբառների հատկանիշները զուգորդող լեզվական նոր իրավիճակներ:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Բայազետի գավառում մնացած հայությունը բազում անգամ հայտնվում է աղետների, պատերազմների բովում, ենթարկվում կոտորածների, տեղահանությունների ու գաղթերի: 1909 թ. Բայազետի գավառակի 110 գյուղերից միայն երեքն էին հայաբնակ: 1914 թ. Բայազետ քաղաքն ուներ 5000 բնակիչ, որից 2000-ը՝ հայ: 1918 թ., երբ թուրքերը հերթական անգամ հետ են վերցնում Բայազետը, հայերն ամբողջովին տեղահանվում են: Այդուհետ Բայազետը բնակեցվում է թուրքերով և քրդերով[6]:

Բայազետի բարբառի վերաբերյալ գիտական առաջին տեղեկությունները գտնում ենք Հր.Աճառյանի «Հայ

---

[5]Այսօր նրանց սերունդները բնակվում են Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի մարզերում և այլուր (տե՛ս Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., 2008) :

[6] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 583-584:

բարբառագիտություն» աշխատության մեջ, որտեղ այն, «Պայազիտի ենթաբարբառ» անվանումով, համարվում է Երևանի բարբառի երեք ենթաբարբառներից մեկը: Բայազետի բարբառային միավորին (արդեն *Նոր Բայազետի ենթաբարբառ* անվանումով) անդրադարձել են նաև Ա.Ղարիբյանը[7], Ա.Գրիգորյանը[8]: Նախորդների համեմատությամբ Բայազետի բարբառի վերաբերյալ ընդգրկուն տեղեկություններ է տալիս և առաջին անգամ բարբառիս հատկանիշները քիչ թե շատ հանգամանորեն ներկայացնում Ռ.Բաղրամյանը «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները» աշխատությունում[9]: Նա նաև գիտական տառադարձությամբ ներկայացնում է Բայազետի բարբառի՝ մի շարք բնակավայրերի խոսվածքների նմուշներ:

Բայազետի բարբառային միավորը առանձին բարբառ (*Բայազետի բարբառ* անվանումով) է դիտարկում Գ.Ջահուկյանը՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման արդյունքում: Ըստ այդմ՝ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը կազմում են Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառները[10]: Առաջին անգամ այլ բարբառների շարքում բարբառս ներկայացվում է հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների ամբողջությամբ, որոշվում է բարբառի դիրքը հայ բարբառների շարքում, և Բայազետի բարբառը հստակորեն սահմանազատվում է Արարատյան բարբառից: Գ.Ջահուկյանը կատարել է նաև 5-րդ դարի հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգում[11] և հնարավոր հարավարևելյան միջբարբառի շրջանակներում արձանագրել է Կոգովիտի (Կամո [Նոր-Բայազետ - Բայազեդ /Դարույնք/])

---

[7] Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1953:

[8] Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

[9] Ռ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Եր., 1972, 225 էջ:

[10] Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 135:

[11] Նշվ . աշխ., էջ 180 - 192:

ենթաբարբառի առկայությունը[12]: Եթե Գ.Ջահուկյանի դասակարգումը «գոնե մասամբ ճիշտ է արտացոլում հայոց լեզվի զարգացման հին շրջանի բարբառային տարբերությունների վիճակը»[13], ապա պետք է կարծել, որ Բայազետի բարբառը իր հիմնական հատկանիշներով գալիս է մեր լեզվի գործառության հնագույն ժամանակներից:

Բայազետի բարբառի հնչյունական առանձին իրողություն-ների ուսումնասիրությամբ ու դիտարկումներով զբաղվել են Ա.Խաչատրյանը[14], Ա.Հանեյանը[15], Հ.Մուրադյանը[16]:

Բարբառի ամբողջական ուսումնասիրությունն է ներկա-յացնում մեր «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչություն-ները շրջակա բարբառների հետ» աշխատությունը[17]:

Բայազետի բարբառով մեզ հայտնի գրավոր առաջին նյու-թերը վերաբերում են 19-րդ դարավերջին: Շատ արժեքավոր է Տիգրան Նավասարդյանցի՝ 1889թ. հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթների» 5-րդ գրքում «Հին Բայազեդու բարբառով» զրանցված հեքիաթը՝ «Ուստայ-նաջարի սաւածը» վերնագրով[18]: Բայազետի բարբառի Արծափի խոսվածքի մասին դիտարկումներ է

---

[12] Նշվ. աշխ., էջ 185:

[13] Նշվ. աշխ., էջ 189:

[14] Տե՛ս Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 146. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976, էջ 432-440. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в армянских диалектах, Միջազգային հայերենագիտական գիտաժողով - 1982, Եր., 1984, էջ 327-336.

[15] Ա.Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., 2010, էջ 166-231:

[16] Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, հնչյու-նաբանություն, Ե., 1982:

[17] Վ.Կատվալյան, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:

[18] Տե՛ս Տ.Նավասարդեանց, Հայ ժողովրդական հէքիաթներ, 5-րդ գիրք, Տփխիս, 1889, էջ 79-80:

կատարել և ապա խոսվածքով մի ընդարձակ երկխոսություն ներկայացրել[19] Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, որը նույնպես որոշ տեղեկություններ տալիս է բարբառի՝ 19-րդ դարավերջի քերականական, բառապաշարային, որոշ չափով նաև հնչյունական իրողությունների մասին[20]: Բայազետի բարբառին առնչվող մի շարք նյութեր կան «Ազգագրական հանդեսի» էջերում: Հանդեսի 13-րդ գրքում (1906թ.) Ե.Լալայանը հրապարակել է հայկական էպոսի իր գրառած մի տարբերակ՝ «Սասմայ Ծռեր (Նոր-Բայազէտի բարբառով)»[21], իսկ 14-րդ գրքում՝ «Ռուստամ Զալ (Նոր-Բայազէտի բարբառով)» պատումը[22]: «Ազգագրական հանդեսի» 19-րդ գրքում (1910թ.) Ե.Լալայանը «Նոր Բայազէտի գաւառի բանահիւսութիւնից» խորագրով հրապարակել է երեք հեքիաթ[23]: Դրանցից միայն մեկը՝ «Լալազար» հեքիաթն է ներկայացնում Բայազետի բարբառը[24]: Բայազետի բարբառի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» շարքի 11-րդ հատորը[25], որում զետեղված են Նոր Բայազետի շրջանից հավաքված ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս գրքում ընդգրկված է Բայազետի բարբառով երբևէ գրի առնված ամենածավալուն և բազմաբնույթ նյութը (հեքիաթներ, զրույցներ, առակներ, անեկդոտներ, երգեր, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, անեծքներ), որը նաև ուղեկցվում է բարբառային բառերի սեղմ բառարանով: Մեր «Քյավյառա խյաննյաք-չյաննյաք (Զվարճապատումներ

[19] Տե՛ս Մ.Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ», Վաղարշապատ, 1895, էջ 377-378:
[20] Տե՛ս նշվ. աշխ., էջ 452-453:
[21] Տե՛ս «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, 1, էջ 37-82:
[22] Տե՛ս «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, 2, էջ 69-85:
[23] Տե՛ս «Ազգագրական հանդես», XI X գիրք, 1910, 1, էջ 115-150:
[24] Տե՛ս նշվ. աշխ., էջ 150:
[25] Հայ ազգագրություն և բանահյուսություն, 11, Երևան, 1980, էջ 166:

Բայազետի բարբառով)»[26] գրքում տրվում է Բայազետի բարբառի համառոտ բնութագիրը, հայ իրականության մեջ առաջին անգամ գիտական ճշգրիտ տառադարձությամբ բարբառակրի կողմից ներկայացվում է բարբառիս արդի վիճակն արտացոլող բավականաչափ նյութ: Բարբառիս բառապաշարին առնչվող զգալի նյութ է պարունակում Հ.Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանը» (Թիֆլիս, 1913):

Բայազետի բարբառի հիմնական առանձնահատկություններից են հետևյալները.

1. ընդհանուրհայերենյան *ա, է, ի, ու, օ, ը* ձայնավորներից բացի բարբառս ունի նաև՝

ա) ա̊ շրթնայնացած ձայնավոր (մոտավորապես *ուա* սերտ արտասանությամբ), որը *ա* ձայնավորի դիրքային տարբերակն է և հանդես է գալիս բացարձակ բառասկզբում (ա̊ման, ա̊սել) և բառասկզբի խուլ բաղաձայններից (բացի *խ, հ* շփականները), *մ, ն* ձայնորդներից հետո (պա̊նիր, կա̊տու, տա̊լիք, ծա̊րավ, ճա̊շ, ֆա̊նէրկա, սա̊րքել, շա̊տ, մա̊ծուն, նա̊ռդի).

բ) ä քմայնացած ձայնավոր (սովորական ա ձայնավորից տարբերվում է լեզվի մեջքի բարձրացմամբ), որը հանդիպում է ոչ միայն փոխառյալ, այլ նաև բնիկ շատ բառերում՝ առանց դիրքային սահմանափակության (օր.՝ հäշկ, գäդä, դ́äնäկ, ձ́äք, թäզä, միյնäկ, օրինäկ, փէսä , լäց, քäռի, զäնել, զäտիկ, ժäնգ, ժäժիկ և այլն), և կարող է բառիմաստը տարբերակող արժեք ունենալ (թափուկ /թափված/ - թäփուկ /անասունի ոտքի հարված/, թաթ /անհասկացող/ - թäթ /ձեռքի թաթ/, թալ /փափուկ/ - թäլ /զցի́ր/, լալ /համր/ - լäլ /լաց լինել/, քար /ապար/ - քäր /շահ/).

գ) *ե* երկբարբառային ձայնավոր (ունի *իէ* սերտ արտասանություն), որը հանդես է գալիս *ղ, խ, ռ* բաղաձայններից առաջ

---

[26] Վ.Կատվալյան, Քäվäռա խäնäք-չäնäք (զվարճապատումներ Բայազետի բարբառով), Ե., 2009 էջ:

(սեղան, մեղավոր, նեխուկ, չեխական, մեռըլոց, դեռասան), շեշտակիր վանկում՝ բացառությամբ է պարզ ձայնավորի դիրքերի (ցեփ, իրեք, նեսկ, ցօրեն, մեխկ, սիբեխ, գ՛ըրել).

դ) *ո* երկբարբառային ձայնավոր (ունի *ուա* սերտ արտասանություն՝ այդպիսով նույնանալով շրթնայնացած *ա* ձայնավորի հետ), որը դրսևորվում է ո̈ ձայնավորի համար բացառված դիրքերում, սովորաբար՝ շեշտակիր վանկում (բ՛ոց, գ՛ող, ձ՛որ, փոս, քոր, թոք, վոտ, խընձոր, ծմոն, տըլոխ, ծըռտոտ, փոցըղ, կըտորտանք).

2. Բայազետի բարբառին հատուկ են բաղաձայնական համակարգի հետևյալ յուրահատկությունները.

ա) գրական հայերենի երեսուն բաղաձայններից բացի՝ բարբառն ունի շնչեղ ձայնեղ *բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛* բաղաձայններ (մոտավորապես *բh, գh, դh, ձh, ջh* սերտ արտասանությամբ), որոնք հանդես են գալիս հնհայերենյան բառաշերտի բառերի սկզբում (բ՛անցըր, գ՛արի, դ՛ուռ, ձ՛ավար, ջ՛ուր).

բ) բառի բոլոր դիրքերում գրաբարյան *հ* - ի դիմաց առկա է *խ* (հաց - խաց, հոգի - խօքի, բահ - բ՛ախ, մահ - մա̈խ, պահել - պա̈խել).

գ) նոր փոխառություններում (նաև գրական լեզվից կատարված) բառամիջում *հ* - ի դիմաց բարբառս ունի *յ* (սահման - սա̈յման, ջահել - ջա̈յէլ, դահլիճ - դ՛ա̈յլիճ, զահլա - զա̈յլ , թագուհի - թաքույի, պահեստ - պա̈յեստ, փահլևան - փա̈յլէվան).

դ) այլ բարբառների՝ փոխառյալ բառերի սկզբի *ղ* - ի դիմաց Բայազետի բարբառում առկա է *կ* (ղարիբ - կա̈րիբ, ղազ - կա̈զ, ղավուրմա - կա̈վուրմա, ղսմաթ - կըսմա̈թ, Ղազար - Կա̈զա̈ր, ղալբ - կա̈լբ, ղութի - կութի).

3. հնչյունափոխական իրողություններից հիշատակելի են հետևյալները.

ա) օրինաչափ են բազմավանկ բառերի բառամիջի ձայնավորի պատմական փոփոխությունները (բաժանել - բ՛աժնել, հավաքել - հավքել, ժողովել - ժօղվել, սովորել - սօրվել, ոլորել - օլըրել,

ողողել - օղըղել, ամաչել - ա̈մչընալ, քառասուն - քառսուն, երեսուն - յեռսուն, հայելի - խա̈յլի).

բ) շեշտից զրկվելով՝ սղվում կամ *ը* - ով փոխարինվում են բոլոր ձայնավորները (օր.՝ հէժան - հէժնընալ, հարէվան - հարէվնի, գ՛էրան - գ՛էրնի, դ՛ա̈նա̈կ - դ՛ա̈նկի, ջ՛աղաչ - ջ՛ախճի, ա̈ճառ - ա̈ճըռէ, թա̈նա̈ք - թա̈նքօտել, թառթափ - թառթըփները, շա̈փաթ - շա̈փտըվա, օխճար - օխճըրի, ցօրեն - ցօրնի, ա̈սեղ - ա̈սխի, ա̈վել - ա̈վլի, հավել - հավըլնալ, հիրես - հիրսի, ա̈ղվէզ - ա̈ղվըզի, հըմէն - հըմընի, հառէչ - հառչի, գ՛օմէշ - գ՛օմշի, կօլոն - կօլնել, բ՛օլոր - բ՛օլըրել, ժօղօվ - ժօղվել, կօտոշ - կօտըշխըրել, սա̈պոն - սա̈բնի).

գ) բառասկզբում (ձայնավորից առաջ) հաճախադեպ է ձայնեղ *հ* հնչյունի հավելումը (հառէչ, հէքուց, հիրկուն, հընգընել, հուստա, հօբա).

4. անվանական համակարգը բնութագրվում է հետևյալ յուրահատկություններով.

ա) *եր, ներ, ք* հոգնակերտներից բացի՝ գործածական են նաև *անք, վանք, րանք, տանք* և այլ հոգնակերտ մասնիկներ (ձ՛հյանք, իշվանք, գ՛իլվանք, տիրվանք, գ՛եղրանք, տեղրանք, քըվորտանք, ա̈խպըռտանք).

բ) բարբառը ներգոյական հոլով չունի, և այդ հոլովական իմաստն արտահայտվում է կա՛մ կապային կառույցով (գ՛եղի մէչը, դա̈րա̈կի մէչը), կա՛մ հայցականի ձևով (Էնի մըկա գ՛եղն ա).

գ) բացառական հոլովը *-ից* վերջավորությամբ ձևերի զերակայության պայմաններում ունի նաև *-է* վերջավորությամբ ձևեր (տընէ, գ՛ըլխէ, օրէ, մըկավնէ, հառավտընէ).

դ) հատուկ տեղանունները սեռական և բացառական հոլով-ներում ունեն *-ա* վերջավորություն (Հէրէվնա, Քա̈վա̈ռա, Սէվանա, Իջէվանա).

ե) ձայնավորով ավարտվող բառերը կարող են ստանալ կրկնակի որոշիչ հոդ (կա̈տունը, տըղէնը, հառունը).

գ) *սա, դա, նա* ցուցականների դիմաց Բայազետի բարբառն ունի *էսի, էտի, էնի* ձևերը, որոնք հոլովվում են և ունեն հոգնակի թիվ (ըստու, ըտու, ընդու, ըստոնք, ըտոնք, ընդոնք), իսկ *այս, այդ, այն* ցուցականների դիմաց գործածվում են *էս, էտ, էն* ձևերը, որոնք չեն հոլովվում և հոգնակի թիվ չունեն.

է) բարբառումս գործածական են անձնական և ցուցական դերանունների՝ *ի* և *իկ* հավելվածներով ձևեր (ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի, ընձիկ, քեզիկ, մեզիկ, ձ՛եզիկ, էսիկ, էտիկ, էնիկ).

5. բայական համակարգի առավել ակնհայտ հատկանիշներից են.

ա) Բայազետի բարբառը չունի ապառնի դերբայ, իսկ ապառնի ժամանակի իմաստը արտահայտվում է այլ միջոցներով (գ՛ըրեմ, կըգ՛ըրեմ, պըտի գ՛ըրեմ).

բ) հարակատար դերբայն ունի *-ուկ* վերջավորություն (գ՛ըրուկ, բ՛էրուկ, տåրուկ, կåյնուկ, խըմուկ).

գ) վաղակատար դերբայն ունի *-էր* վերջավորություն (գ՛ըրէր եմ, տåրէր եմ), որը դառնում է *-ե*, երբ օժանդակ բայը նախորդում է դերբային (դ՛ու յես բ՛էրե).

դ) *գ՛ալ, լåլ, տալ* բայերի դեպքում անկատար դերբայի *-ում* վերջավորությունն ավելանում է անորոշի ձևերին (գ՛ալում, լåլում, տåլում).

ե) անցյալ կատարյալում բայի սեռը որոշակի դեպքերում արտահայտվում է նաև համապատասխան վերջավորություններով (թըռչի /թռչեցի/ - թըռչա /թռչվեցի/, գ՛ըրի /գրեցի/ - գ՛ըրվա /գրվեցի/, կըտըռտի /կտրտեցի/ - կըտըռտըվա /կտրտվեցի՝ շատ չարչարվեցի/, մըրօտի /մրոտեցի/ - մըրօտա /մրոտվեցի/).

զ) *Ե* խոնարհման պարզ բայերը սովորաբար անցյալ կատարյալը կազմում են ոչ ցոյական հիմքով (գ՛ըրի, գ՛ըրիր, յերքի, յերքիր, նըկարի, նըկարիր).

է) օժանդակ բայի անցյալի երկձայնավոր ձևերում *է*- ն սղվել է (էի, էիր, էր, էինք, էիք, էին < ի, իր, էր, ինք, իք, ին).

ը) վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայը կարող է դերբային միաժամանակ նախորդել և հաջորդել (յես եմ գ՛ըրէր եմ, չեմ ուզում եմ, չի՞ր գիդում իր).

թ) անկատար ներկա և վաղակատար ներկա ժամանակաձևերի եզակի թվի երրորդ դեմքում օժանդակ բայը կարող է և չլինել (Հէսօր էնի գ՛ալում /գ՛ալում ա/. Մըկա Վաղօն էկէ /էկէր ա/).

ժ) վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում ավելի հաճախ գործածվում է -*ած* վերջավորությամբ դերբայական ձև, որը վաղակատար ներկայի իմաստը կարող է արտահայտել և՛ առանց օժանդակ բայի, և՛ օժանդակ բայի եզակի ու հոգնակի ձևերի հետ (Ընդոնք հէրէկ էկած. Ընդոնք հէրէկ էկած ա. Ընդոնք հէրէկ էկած են. Ընդոնք հէրէկ էկէր են - Նրանք երեկ եկել են), իսկ վաղակատար անցյալի իմաստը արտահայտում է միայն օժանդակ բայի հետ (Ընդոնք հէրէկ էկած ին. Ընդոնք հէրէկ էկէր ին - Նրանք երեկ եկել էին):

ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բառարանը ընդգրկում է Բայազետի բարբառի բառային շուրջ 8000 միավոր, որոնք ոչ միայն արտացոլում են հեղինակի՝ բարբառի իմացության շրջանակը, այլ նաև հավաքվել են Գավառի տարածաշրջանի բնակավայրերում կատարված դաշտային աշխատանքների ընթացքում: Իբրև գլխաբառ ներկայացվում են նաև ոճեր, դարձվածքներ, կայուն բառակապակցություններ: Գլխաբառերը տրվում են այբբենական կարգով: Համանուն գլխաբառերը համարակալվում են արաբական թվանշաններով: Բառի տարբերակները տրվում են մեկ բառահոդվածում՝ միմյանցից անջատվելով // նշանով: Եթե բառը փոխառություն է, և աղբյուրը հայտնի է, փակագծերի մեջ նշվում է փոխատու լեզուն: Մեկից ավելի փոխատու լեզուներ նշվում են, եթե փոխառության աղբյուր կարող է լինել դրանցից յուրաքանչյուրը: Երբ փոխառյալ է հարադրության առաջին բաղադրիչը միայն, փոխատու լեզվի վերաբերյալ նշումը արվում է այդ բաղադրիչից հետո:

Բառերի բնութագրումը կատարվում է խոսքիմասային պատկանելության, բայի պարագայում՝ նաև սեռի արձանագրումով, մի շարք դեպքերում՝ նաև գործածության ոլորտը որոշող նշումներով: Քերականական նշումներին հաջորդում է գլխաբառի՝ գրական հայերեն բացատրությունը: Գլխաբառի բացատրության փոխարեն տրվող տեղեկությունը բերվում է շեղատառ: Շատ դեպքերում բացատրությանը հաջորդում է գլխաբառի գործածությունը ներկայացնող նմուշ-նախադասություն: Իրար հաջորդող գլխաբառերին վերաբերող նախադասությունները հաճախ կազմում են կապակցված խոսք, որպես կանոն՝ մանրապատում: Քիչ չեն նաև իբրև օրինակ բերված ասացվածքները: Բարբառային խոսքի նմուշները փակագծերում բացատրվում են գրական արևելահայերենով: Գլխաբառերը և դրանք ներկայացնող բարբառային նմուշները ներկայացվում են բարբառային տառադարձությամբ:

Բառարանում գործածվել են տառադարձական այբուբենի հետևյալ գրանշանները.

ա - պարզ ձայնավոր, ինչպես գրական հայերենում.

ա̊ - շրթնայնացած ձայնավոր՝ մոտավորապես *ուա* սերտ արտասանությամբ.

ա̈ - քմայնացած ձայնավոր, որ սովորական *ա*-ից տարբերվում է լեզվի մեջքի բարձրացմամբ.

է - պարզ ձայնավոր.

ե - երկբարբառային ձայնավոր՝ *իէ* սերտ արտասանությամբ.

օ - պարզ ձայնավոր.

ո - երկբարբառային ձայնավոր՝ մոտավորապես *ուա* սերտ արտասանությամբ

ի, ու, ը - պարզ ձայնավորներ

բ, գ, դ, ձ, ջ - ձայնեղ բաղաձայններ

բ́, գ́, դ́, ձ́, ջ́ - շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ մոտավորապես *բհ, գհ, դհ, ձհ, ջհ* սերտ արտասանությամբ:

Մյուս բաղաձայնները (փ, ք, թ, ց, չ, պ, կ, տ, ծ, ճ, վ, զ, ժ, ղ, ֆ, ս, շ, խ, հ, մ, ն, լ, ր, ռ, յ) իրենց արտասանությամբ գրական հայերենի համապատասխան հնչյուններից չեն տարբերվում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.	ածական
բցս.	բացասական
գ.	գոյական
դ.	դերանուն
դբ.	դերբայ
թ.	թվական
կ.	կապ
հեգն.	հեգնական
ձ.	ձայնարկություն
մկ.	մակբայ
մնկ.	մանկական
նբ.	ներգործական սեռի բայ
շ.	շաղկապ
չբ.	չեզոք սեռի բայ
վ.	վերաբերական
փխբ.	փոխաբերական իմաստ

Փոխատու լեզուներ

ասոր.	ասորերեն
արաբ.	արաբերեն
թրք.	թուրքերեն
իտալ.	իտալերեն
պրսկ.	պարսկերեն
ռուս.	ռուսերեն

Ա

աբարանք, գ. - պալատ, մեծ առանձնատուն

աբաըրանք (բցս.), գ. - վարք, պահվածք, կեցվածք. - Ըտու աբաըրան-քին չկա /Դրա նմանը չկա/

աբաըրանքից հ՛ըլնել, չբ. - չափն անցնել. - Լըռիվ աբաըրանքից հ՛էլե /Ամբողջովին չափն անցել է/

աբալօվկա (ռուս.), գ. - փայտակաղապար

աբէդ (ռուս.), գ. - ընդմիջում, ճաշ. - Գ՛ացած աբէդ /Գնացել են ընդմիջման/

աբէլանցի (ռուս.), գ. - վիրահատություն

աբիվկա (ռուս.), գ. - երեսպատման պաստառ

աբուռ (պրսկ.), գ. - ամոթի զգացում .- Էսա ձ՛եր հարէվան Ժէնիկը վոնչ ամոթ ունի, վոնչ աբուռ, է՛ն բօռալն ա բօռում, մա՛յլօվ մէկ ձ՛էնը դըմփում /Ձեր հարևան Ժենիկը ամոթ չունի, այնպես է գոռում, ողջ թաղում ձայնը զնգում է/

աբրանք, գ. - անասուն և ամեն տեսակի իր, գույք, ունեցվածք.- Հառավոտ լուսօվ էկե, ասում՝ մեր բ՛ախերը չէ՞ք տէսե, դ՛ուռը դ՛ըրուկ ին: Ա՛յ քեզի բ՛ան… Մե՞նք ենք վէրցե… Հա՛շկըտ աբըրընքիտ վըրէն պահա, հարէվնիտ էլ գ՛ող մի ասա /Առավոտ շուտ եկել ասում է՝ մեր բահերը չե՞ք տեսել, դռանը դրված էին: Ա՛յ քեզ բան… Մե՞նք ենք վերցրել… Ունեցածիդ հանդեպ անփույթ մի եղիր և կորուստիդ համար ուրիշներին մի մեղադրիր/

ագլա՛կեր, ած. - տզեղ, անճոռնի .- Մէ ագլա՛կեր էլ մարթ ունի, չես ուզի յանը հիշկաս. սիրած էլ պահում. բը հընչա՛ ասած՝ քաք բ՛ան քաք մարթից /Մի անճոռնի էլ ամուսին ունի, չես ցանկանա կողմը նայես. սիրուհի էլ պահում է. բա ինչո՛ւ են ասել՝ ստորություն ստոր մարդուց/

ձգլատիզ, գ. - մեծ պասին պատրաստվող շաբաթացույց, որն իրենից ներկայացնում է սոխ՝ վրան փետուրներ ամրացրած.- Ըտուն վոր տէնում եմ՝ լօլօզ գ՛ըլօխ, մձզերը բիզ-բիզ, ինչօր ձգլատիզ հըլնի. յերեվի կընիկը շձփաթը մէկ մձզերը փիդում… էտ հընչե՞ս չօքըտ մձժում /Դրան որ տեսնում եմ՝ երկար ու բարակ գլուխ, մազերը ցից-ցից, կարծես պասի շաբաթացույց լինի. Երևի կինը շաբաթը մեկ մազերը պոկում է… ինչո՞ւ ես ծունկդ տրորում/

ձգնատ, գ. - անցք կամ դարակ պատի մեջ

ձգռձժձժ, գ. - նորահարսի հոր տնից հարսանիքի հաջորդ օրը փեսային ուղարկվող ընծա (թխվածք).- Տօ ձխճի, ձ՛եր խացատձն դ՛ուռը էրկու խատ բ՛ախ էր դ՛ըրուկ, չի տէսե, էնենց փիս զձնի… Մէ քօ ջ՛ոչ սինին տու, փէսին ձգռձժձժ յեմ ղըրկում… /Տո աղջի, ձեր հացատան դռանը երկու բահ էր դրված, չէի տեսել, այնպես թափով խփեցի… Մի քո մեծ սկուտեղը տո՛ւր, փեսային թխվածք եմ ուղարկում…/

ձգռա, գ. - սեղանատամ.- Բը մեր խացատընից ի՞նչ կուզիր, վոր վոտըտ էլ զձնէր ես… էս իմալ ձգռէս ցավաց… /Բա մեր հացատնից ի՛նչ գործ ունեիր, որ ոտքդ էլ խփել ես… Այս ինչպե՛ս ակռաս ցավեց…/

ձգռէքը խամբըրել - ատամները հաշվել, թույլ տեղը իմանալ.- Բ՛այց էտի լավ էլ քօ ձգռէքը խամբըրե, պըտի մէ լավ բ՛ըշտիր, վոր էկէր էր, բ՛ախ էր խառցընում… քէլա՛, քէլա՛ սինին բ՛ե, վըռազն եմ… /Բայց դա լավ էլ քո թույլ տեղը գիտի, պիտի մի լավ կշտամբեիր, որ եկել էր, բահ էր հարցնում… գնա՛, գնա՛ սկուտեղը բեր, շտապում եմ…/

ձգրօնօմ (ռուս.), գ. - գյուղատնտես

ռդռթ (արաբ., թրք.), գ. - սովորություն.- Մեր ռդռթները փօխում էք հուրիշի ռդռթօվ, զիդում էք՝ զարքացա՞ք /Մեր սովորությունները փոխում եք ուրշների սովորությամբ ու կարծում եք՝ զարգացա՞ք/

ռդանօվ, ած. - բարձր յուղայնություն ունեցող (կաթ). - Էն կռրմիրը ռդանօվ կօվ ա /Այն կարմիրը բարձր յուղայնության կաթ տվող կով է/

ռդաշ (թրք.), ած. - անվանակից

ռդէ (քրդ.), գ. - տատ

ռդըլել, չբ. - համակերպվել. - Լավ ա, ռդըլե, էլ չըր՛օղօքում /Լավ է, համակերպվել է, էլ չի բողոքում/

ռդըլցընել, նբ. - հանդարտեցնել, հաշտեցնել . - Գ՛ացի ռդըլցըրի, էկա /Գնացի հանդարտեցրի, եկա/

ռդմախատիկ, գ. - ատամիատիկ

ռդմըները խամբըրել - թույլ տեղերն իմանալ.- Մի թող՝ ռդմըներըտ խամբըրեն, գ՛ըլնեն կընըստեն գ՛ըլխիտ /Մի թույլ տուր, որ թույլ տեղերդ իմանան, կսկսեն քեզ իշխել/

ռդյալ (ռուս.), գ. - ծածկոց

ռդրէզ // ռդրէզկա (ռուս.), գ. - շորացու գործվածք, կտոր

ռդրէս (ռուս.), գ. - 1. հասցե, 2. բացասական բնութագիր. - Քօ ռդրէսը հըմէն էլ զիդում են /Քո վատ վարքը բոլորն էլ գիտեն/

ռզաբ (արաբ., պրսկ.), ած. - ամուրի, չամուսնացած.- Մէ բ՛ան ռսեմ՝ չընեղանաս. քօ ռզաբ տըղէն ի՞նչ գ՛ոռծ ունի՝ հըմընօր մեր Սիրունի տունը բ՛ըռնե կռյնե, էտ տունը իրեք ռզաբ ռխճիկ կռ, ըտոնց ռնվան խէտ հընչա՞ խաղում /Մի բան ասեմ՝ չնեղանաս. քո ամուրի տղան ի՞նչ գործ ունի՝ ամեն օր մեր Սիրունի տանն է լինում,

այդ տանը չամուսնացած երեք աղջիկ կա, դրանց անվան հետ ինչո՞ւ է խաղում/

ձզաբաշի, գ. - հարսանիքի ժամանակ փեսայի կողքին կանգնող և թուր խաղացնող չամուսնացած երիտասարդ, հարսնեղբայր.- Վա՛յ, քօ տունը շինվի, Գ՛էվօյ տըղի խառնըսին իմ տըղէն ձզաբաշին էր, Սիրունի ջ՛ոչ ձխճիկն էլ խառսնաքուրն էր, ըտեղից հիրար ճձնշնում են, հընգերութուն են ձնում, ըտու մէչն ի՞նշ կձ… /Վա՛յ, քո տունը շինվի, Գևոյի տղայի հարսանիքին իմ տղան հարսնեղբայրն էր, Սիրունի ավագ դուստրն էլ հարսնաքույրն էր, այդտեղից իրար ճանաչում են, ընկերություն են անում, ի՞նչ վատ բան կա/

ձզաբութուն, գ. - ազապ լինելը, ամուրիություն.- Է՜, հըմէն ինչ ըտեղից ա ըսկըսվում, հէ՛յ գիդի ջձյէլութուն, հէ՛յ գիդի ձզաբութուն… /Է՜, հէ՛յ գիտի ջահելություն, հէ՛յ գիտի ազապություն /

ձզադվել, չբ. - ծննդաբերել. - Լա՛վ, ձռթէն հուրիշ բ՛ան ես խօսում, դ՛ու էն ձսա, ճի՞շտ ա, վոր խառըստ հէրէկ ձզադվե, տըղա յա բ՛էրե… հձշկըտ լուս հըլնի /Լա՛վ, արդեն անհաճո բան ես խոսում. դու էն ասա՛՝ ճի՞շտ է, որ հարըստ երեկ ծննդաբերել, տղա է ունեցել… աչքդ լույս լինի/

ձզատում, գ. - փրկություն, ազատություն . - Շընօրակալ եմ, ձբրես, փոխը բալէքիտ հըլնի… Սիրո՛ւշ, տըղիտ կձրքա. գ՛ընա Սիրունի ձխճըկան ուզա, թէ չէ մէ բ՛ան գ՛ըլնի՝գ՛ընգես քարը, Սիրունից ձզատում քեզի չըլնի /Շնորհակալ եմ, ապրես, նույնը զավակներիդ եմ կամենում… Սիրուշ, տղայիդ ամուսնացրու, գնա Սիրունի աղջկան ուզի՛ր, թե չէ մի բան կլինի՝ծանր վիճակում կհայտնվես, Սիրունից փրկություն չես ունենա/

ӛզըզամեռ - անեծք, որով դիմացինին ցանկանում են սիրելիի մահ.- Կէթի կուզի, բ՛այց յես էտ Սիրունից նեղացուկ եմ. մէ տåրի ըտու խէտ կըռվանք, ընձի էլ ինչ ասես՝ վոր չասավ, չում բիլӛ ընձի ӛզըզամեռ էլ åսավ /Կգնայի կուզեի, բայց ես այդ Սիրունից վիրավորված եմ. մի տարի դրա հետ կռվեցինք, ինձ ի՛նչ ասես՝ ասաց, մինչև անգամ ինձ անիծեց/

ӛզըզվորել, չբ. - հիվանդ ձևանալ

ӛզըզվորցընել // ӛզըզցընել, նբ.- փայփայել, լրացուցիչ ուշադրություն դարձնել, հոգ տանել.- Ա՛յ կընիկ, չում մըկա քէ՞ն ես քըշում, էն գ՛ախ մåռթը թӛզӛ մեռուկ ա հէլե, սիռտը զիս ա հէլե, լարի մըկա տե՝ իմալ են ӛզըզվորցընում, ի՛մալ են վըրէն դ՛օղում… /Ա՛յ կին, մինչև հիմա քե՞ն ես պահում, այն ժամանակ ամուսինը նոր մահացած է եղել, սիրտը լիքն է եղել, մի ե՛կ հիմա տես՝ ինչպես են փայփայում, ինչպես են ուշադրության կենտրոնում պահում/

ӛզիզ (պրսկ., արաբ.),ած. - սիրելի, հաճելի, թանկագին.- Ըտու մåռթը ӛզիզ տըղա յէր, հազար åփսոս, վոր շուտ մեռավ. թէ åխճըկան ուզեմ՝ խօր խաթրին կուզեմ… åխճի, կåրո՞ղա էտ Սիրունն ա քեզի հօղըրկե իմ կուշտը, դռ՛ւզն åսա… /Դրա ամուսինը շատ լավ տղա էր, հազար ափսոս, որ շուտ մահացավ, թե աղջկան ուզեմ, հորը նկատի ունենալով կուզեմ… աղջի՛, կարո՞ղ է՝ այդ Սիրունն է քեզ ուղարկել ինձ մոտ, ճի՛շտն ասա/

ӛզիզ պåխել, նբ. - գուրգուրանքով, լիության մեջ պահել . - Քա կընի՛կ, չե՞ս åմչընում, էտենց բ՛ան ես խօսում, յես Սիրունին դռ՞ր եմ տէսե, վոր էնի ընձի åսէր՝ գ՛ընա Սիրուշի բ՛էրնի գ՛ոլը զիցի համ էլ խոսկ թӛլ… վա՛յ աման, չէ՛, չէ՛, չէ՛, ուզո՞ւմ ես՝ Տիկօյըս ӛզիզ åնդրանեկ

պծխեր եմ, ջ՛օչըցըրէր եմ, հիրա ծրեվօվ յեռթըվամ… էտ Սիրունը ի՛մալ ընձի քըցեց կըրակը… /Ա՛յ կին, չե՞ս ամաչում, այդպիսի բան ես խոսում, ես Սիրունին ո՞րտեղ եմ տեսել, որ նա ինձ ասեր՝ գնա Սիրուշի տրամադրվածությունը ճշտի՛ր ու նաև խոսք բաց արա… վա՛յ աման, չէ՛, չէ՛, չէ՛, ուզո՞ւմ ես՝ Տիկոյիս իբրև առաջնեկ գուրգուրանքով պահել եմ, մեծացրել եմ, իր արևով երդվեմ… այդ Սիրունը ինչպե՛ս ինձ կրակը գցեց…/

ծզիզ օր, գ. - հատուկ՝ տոն օր . - Լա՛վ, լա՛վ, քե մի՛ կօտօրա, հէսօր ծզիզ օր ա, պըտի էթանք Ծծխկավանք, յես հիրա վոտը պծչեմ, ծսսուց հառէչ չընգընենք, տըղէս ի՛մալ ուզեց, էտենց կծնենք… ծխճի՛, էտ Սիրունի կիսուրը լը կծ՞, յծքծ ջ՛ոչ ա, չէ՞… /Լա՛վ, լա՛վ, քեզ մի՛ կոտորիր, այսօր հատուկ օր է, պիտի գնանք Ծաղկավանք, ես իր ոտքը համբուրեմ, աստծուց առաջ չընկնենք, տղաս ինչպես կամեցավ, այդպես կանենք… աղջի՛, այդ Սիրունի սկեսուրը դեռ կա՞, ահագին մեծ է, չէ՞/

ծզնավուր, ած. - հսկա, քաջ, հերոս

ծթամպուպուզ տէնալ - կարծածից ավելի տարիքով լինել, շատ ծեր լինել, իբրև թե՝ Ադամի մանկական տարիքը տեսած լինել.- Բը ի՞մալ, էնի ծթամպուպուզ տէսե… /Բա ինչպե՞ս, նա շատ ծեր է/

ծթանդա կծյնել - հսկել . - Լըսա լը՝ ճի՞շտ ա, վոր էտի խառս ու տըղի թծզծ պըսակվուկ գ՛ախ գ՛իշերը ըտոնց գ՛ըլխընէրին ծթանդա յա կծյնե /Լսի՛ր, ճի՞շտ է, որ դա հարս ու տղայի նոր ամուսնացած ժամանակ գիշերը դրանց հսկել է/

ծթար, գ. - աթար

ձժբձտես (արաբ.՝ *աջաբ* /զարմանալի, տարօրինակ/ և հայ.՝ *տես*), ած. - խիստ տգեղ .- Քա վա՜յ, ձժբձտես, դ՛ո՞ւ էտի հուստ ես գիդում… հէլի՛, հէլի՛ էթանք Ծձխկավանք, յես էլ եմ գ՛ալում /Քա վա՜յ, այլանդակ, դո՞ւ այդ որտեղից գիտես… ե՛լ, ե՛լ գնանք Ծաղկավանք, ես էլ եմ գալիս /

ձժել, չբ. - 1. արժել, արժենալ. 2. լավ՝ տեղին՝ պատշաճ լինել

ձժուռի բ՛էրել, նբ. - կարգավորել

ձժօղ - չձժօղ, ած. - արժող-չարժող. - Է՛, խա, ձժօղ - չձժօղ ըտուց օքտըրվում են /Արժող-չարժող դրանից օգտվում են/

ձլ (պրսկ.), ած. - վարդագույն

ձլ կձրմիր, ած. - վառ կարմիր

ձլ ու ձլվձն, ած. - շատ գեղեցիկ

ձլաթ, գ. - փեղկ.- Լուսամութի ձլաթները փազա, ուժեղ քամի յա ձնում, կըտա, շուշէքը կըջ՛առթա /Պատուհանի փեղկերը փակիր, ուժեղ քամի է անում, կխփի, ապակիները կկոտրի/

ձլձմ (արաբ., պրսկ., թրք.) **ձշխար** - ողջ աշխարհը, բոլորը. - Տօ, ձլձմ ձշխարը ըտու վըրէն շիվարե /Տո, ողջ աշխարհը դրա վրա զարմացել է/

ձլամաթը կըդրել - շնչին նստել, հանգիստ չտալ

ձլձմ-կուլձմ, ած. - խաբեբա, հափշտակող, թռցնող.- Էտի ձլձմ-կուլձմ մձռթ դ՛ուս էկավ /Պարզվեց՝ դա հափշտակիչ է/

ձլան - թալան (պրսկ.), գ. - կողոպուտ

ձլապուճիկ խախծընել, նբ. -1. պտտեցնելով խաղալ, 2. մեկի համար քաշքշուկ ստեղծել

ն̈լն̈ջն̈ - բուլն̈ջն̈ (թրք.), ած. - տարօրինակ, խայտաբղետ.- Հն̈շկիս ն̈լն̈ջն̈ - բուլն̈ջն̈ յես էրէվում /Աչքիս տարօրինակ ես երևում/

ն̂լասավա (արաբ., թրք.), մկ. - խառը, առանց տարբերակելու

ն̂լավերքի ծն̂ղիկ, գ. - արևածաղիկ.- Էստն̂րի ձ́եր դ́ուռը ն̂լավերքի ծն̂ղիկ չէ՞ք ցանե, մըտէ՞տ ա՝ էն տն̂րի իմալ սն̂ղ գ́օխծան տն̂րան /Այս տարի ձեր բակում արևածաղիկ չե՞ք ցանել, հիշո՞ւմ ես՝ մի տարի ինչպես ամբողջը գողացան տարան/

ն̈լն̈ք - բն̈լն̈ք, գ. - գույնզգույն

ն̈լն̈ֆըռն̈նգի (թրք.), մկ. - տարօրինակ ձևով

ն̂լէնի (արաբ.՝ ալանի), մկ. - բացահայտ.- Էլի ն̂րավ ն̂լէնի, չես կն̂նում մէ բ́ան գ́աղնի պն̂խես /Դարձյալ բոլորին հայտնի դարձրեց, չես կարողանում՝ մի բան գաղտնի պահես/

ն̂լըրթըրթախ, մկ. - ալրաթաթախ.- Կուխնին մէ ժամ գ́ոռծ էր ն̂նում, ն̂լըրթըրթախ նեռս էկավ /Խոհանոցում մեկ ժամ գործ էր անում, ալրաթաթախ ներս եկավ/

ն̂լըրմն̂ղ, գ. -ալյուրի մաղ.- Խառվավ հիրար, ն̂լըրմն̂ղը խէտը բ́էրեց, դ́ըրեց կըռէսլօյ վըրէն /Շփոթվեց, ալյուրի մաղը հետը բերեց, դրեց բազկաթոռի վրա/

ն̂լըրմն̂ղ ն̂նել, նբ. - փխբ. մանրամասնորեն ստուգել

ն̂լըրոտ, ած. - ալյուրոտ.- Դ́առցավ ն̂լըրոտ ձ́եռնէրօվ փատըտվավ տըղին. մէ տն̂րի չէր տէսե /Ապա ալյուրոտ ձեռքերով փաթաթվեց տղային. մի տարի չէր տեսել/

ն̂լըրտուն, գ. - ջրաղացի տաշտակը, ուր լցվում է ալյուրը

ն̂լըրօտել, նբ. - ալյուրոտել.- Խեխճ տըղին վոտից գ́ըլօխ ն̂լըրօտեց /Խեղճ տղային ոտքից գլուխ ալյուրոտեց/

ֆլիշվէլիշ (թրք.), գ. - առևտուր, բանակցություն . - Էտ ի՞նչ ֆլիշվէ-լիշի մէչ էք /Այդ ի՞նչ գաղտնի խոսքուզրույց եք անում/

ֆլլֆ // հֆլլֆ (թուրք.), ձ. - անեծքից հետո հնչեցվող ձայնարկություն

ֆլնի, ած. - 1. ոչ աղի 2. անհամ, տաղտկալի.- Ըտու խըմար ա ֆսած՝ ֆլնի յէր, խընձըրախամն էլ վըրա տըվեց /Դրա համար են ասել՝ բանի նման չէր, ավելի վատացավ/

ֆլուկուլ /*առուկուլ* ձևից/ **ֆնել** - արագ-արագ հավաքել տանել, յուրացնել

ֆլուր ֆխծան ֆնել, նբ. - խիստ փշրել, ծեծել

ֆլչու (թուրք.) - վեգի այն կողմը, որը հաջողության նշան է

ֆլվֆղ (արաբ., թուրք.), գ. - զավակ, ժառանգ.- Մֆրթ պըտի էտենց ֆլվֆղ ունէնա /Մարդ պիտի այդպիսի ժառանգ ունենա/

ֆլվֆն - ֆլվֆն, ած. - լավագույն, տեսակ-տեսակ .- Լը տե՝ տըղէն գ՛ախ-գ՛ախ մօրը տֆնում, ֆլվֆն - ֆլվֆն շորեր ա ֆռնում /Տես՝ տղան ժամանակ առ ժամանակ մորը տանում, տեսակ-տեսակ հագուստներ է գնում/

ֆլվել // ֆվել ֆնել - ավելել.- Էն ֆխճիկն էլ հըմընօր գ՛ալում, մօր ֆվելն ֆնում, էթում:

ֆլք (պրսկ.՝ ալ), ած. - տգեղ, այլանդակ.- Բ՛այց էն ֆլք խառսը խեխճին օր ու ֆրեվ չըտֆլում /Բայց այն անդուր հարսը խեղճին շատ է նեղում/

ֆխ (ախ), գ. - վախ.- Ըտու ֆխը ընձի տֆրե /Դրա համար շատ եմ վախենում/

ֆխ ֆնել - շատ ցանկանալ .- Չըթօղում, վոր քըվորըս էրէվանը էթամ, ֆխ եմ ֆնում, վոր ընդուն նորից տէնամ /Չի թողնում, որ քրոջս այցելեմ, շատ եմ ցանկանում նրան նորից տեսնել/

ախար (պրսկ., թրք.), վ. - չէ՞ որ.- Ախար հիրար խէտ ենք ջ՛օչըցե /Ախր իրար հետ ենք մեծացել/

ախ ու դ՛ող, գ. - սարսափ .- Հէսօր քանօր ախ ու դ՛օղի մէչ ենք /Մի քանի օր է՝ սարսափի մեջ ենք/

ախ ու զառզանդ թափել, չբ. - ահ տալ, վախեցնել. -Էնենց ախ ու զառզանդ թափեց վըրընէրըս, սաղ մէթափուց ձ՛էնըներըս կըդրինք /Այնպես վախեցրեց, որ բոլորս միանգամից լռեցինք/

ախ ու զառզանդ ունենալ, չբ. - ազդեցիկ՝ ահարկու լինել .- Տըղամառթը պըտի մէշօլ ախ ու զառզանդ ունենա /Տղամարդը պետք է մի քիչ էլ ազդեցիկ լինի/

ախ տալ - վախեցնել, սպառնալ .- Համ էկավ, տէլէվիզըրը քըցեց ջ՛առթեց, լը մէ բ՛ան էլ ընձի ախ տըվեց, գ՛ընաց /Եկավ, հեռուստացույցը գցեց կոտրեց, դեռ մի բան էլ ինձ սպառնաց, գնաց/

ախ քըցել սիռտը - ահով համակել.- Ախար էնենց բ՛աներ ասավ՝ ախ քըցեց սիռտըս /Ախր այնպիսի բաներ ասաց՝ ինձ ահով համակեց/

ախըր (արաբ.), գ. - վերջ. - Բը հընչեն ասում՝ մառթի վեռչին ախըրը պըտի խէր հըլնի /Բա ինչու են ասում՝ մարդու վերջը պիտի բարի լինի/

ախըր զամանին - դժգոհության արտահայտություն իրողության հանդեպ

ախծան անել, նբ. - փշրել, մանրացնել

ախկ, ձ. - *զզվանք, դժգոհություն արտահայտող ձայնարկություն*

ախկատ - ուխկուտ (հեգն.), ած. - աղքատ, աննշան

ախճըկավարի, մկ. - աղջկա նման.- Այ տըղա, ախճըկավարի հիրար մի՛ արի, ամօթ ա /Այ տղա, աղջկա նման մի շարժվիր, ամոթ է/

ախճըկութուն, գ. - կուսություն

ախճի - *աղջիկ* բառի կոչականը.- Լըսա՛, ախճի՛ Թամար, էտա ձ՛եր հարէվան Գուվարը ախճըկան Քա̈վա̈ռ տըվեց, խա՞, էս անքամ գ՛օնէ լա՞վ տըղի յա տըվե /Լսի՛ր, աղջի՛ Թամար, էդ ձեր հարևան Գոհարը աղջկան Գավառ ամուսնացրեց, հա՞, այս անգամ գոնե լա՞վ տղայի է տվել/

ախճիկ, գ. - աղջիկ .- Հէրէկ ասում էր՝ ախճիկ տըվի, տըղա առա, փէսի վըրէն շա̈տ ուրախ ա, ասված խէրն անա, յեսի՞մ… /Երեկ ասում էր՝ աղջկաս տվեցի՝ փեսաս ինձ որդի է, փեսայի վրա շատ ուրախ է, աստված բարին կատարի, ի՞նչ իմանամ…/

ախճիկ առնել - ամուսնանալ.- Փէսէն էլ ա շա̈տ ուրախ, ասեմ՝ զիդաս, էնօր ասում էր՝ ինշքան պըտի ման գ՛ի, վոր էսենց ախճիկ առնի, աստըված մեզի ռաստ բ՛էրեց /Փեսան էլ է շատ ուրախ, ասեմ՝ իմանաս, անցած օրը ասում էր՝ ես որքա՛ն պիտի որոնեի, որ այսպիսի աղջկա հետ ամուսնանայի, աստված մեզ հանդիպեցրեց/

ախճիկ գ՛ախ, մկ. - չամուսնացած ժամանակ.- Թա̈ռլա̈՛ն Գուվար, էնենց ֆօլա-ֆօքսա վո՛ր. մըտէ՞տ ա՝ էտի լը ախճիկ գ՛ախ հըմընին սիրվըցընում էր վըրէն, քանի դա̈ն բըռնըցըրին… բը դ՛ու փէսին վո՞րդե յես տէսե /Աննման Գոհար, այնպես խելքները ուտի ո՛ր. հիշո՞ւմ ես՝ դա դեռ չամուսնացած ժամանակ բոլորին հրապուրում էր, քանի անգամ բռնացրին… իսկ դու փեսային ո՞րտեղ ես տեսել/

ախճիկ ուզել - հարս ուզել, խնամախոսության գնալ.- Վա՛յ, վոր էկան ախճիկ ուզէլու, յես ըտոնց տունն ի, էտ գ՛ախ լավ տընդըղի, խէտը կըսա̈ յէլ արի… Գուվարը հա՛ հա̈շկօվ-հունքօվ խասկըցընում էր, թէ՝ հէլի գ՛ընա, բ՛այց յես

դ՛ընում ի չըտէնալու /Վա՛յ, որ եկան խնամախոսության, ես դրանց տանն էի, այդ ժամանակ լավ տնտղեցի, հետը զրուցեցի էլ… Գոհարը անընդհատ նշանացի հասկացնում էր, թե՝ ե՛լ գնա, բայց ես չտեսնելու էի տալիս/

ախճիկ տալ - դստերն ամուսնացնել .- Գիդո՞ւմ ես, մըտկում ի՝ բը հարէվանը էլ վո՞ր օրվա խըմար ա, կա՞րօղա մէ բ՛անօվ էլ յես օքուդ տամ… Քանի դա՛ն տըղի մօր դ՛էմը ասի՝ Գուվա՛ր, ախճիկ տալը խաղ ու պա՞ր չէ, գ՛օնէ էս անքամ մի՛ վըռազցի, բ՛այց ի՛նչ՝ յես ասի, յես լըսացի… հըմա էտ օրն էլ մա՛ղնիքը դ՛ըրին /Գիտե՞ս՝ մտածում էի՝ բա հարևանը ո՞ր օրվա համար է, հնարավոր է՝ մի բանով կարողանամ օգնել… Մի քանի անգամ տղայի մոր ներկայությամբ ասացի՝ Գոհա՛ր, դստերն ամուսնացնելը խաղ ու պար չէ, գոնե այս անգամ մի՛ շտապիր, բայց ի՛նչ՝ ես ասացի, ես լսեցի… հենց այդ օրն էլ նշանեցին/

ախճիկ օլան, գ. - չամուսնացած աղջիկ.- Էն իմ բէֆա՛յմ ախճիկն էլ տունը չէր, վոր կանչի բ՛էրի՝ քա՛վա՛ռցիքը տէնին, բա՛լքի բա՛խտը բ՛ասվէր… ըտու խըմար էնքան նեղվա, ընձի-ընձի ասում ի՝ չօթէ՛, դ՛ու ախճիկ օլան, գ՛իշէրվա կէսին դո՞ր ես… /Էն իմ անհասկացող աղջիկն էլ տանը չէր, որ կանչէի բերեի՝ գավառցիները տեսնեին, գուցե բախտը բացվեր… դրա համար շատ նեղվեցի, ինձ ու ինձ ասում էի՝ ա՛յ հյուծված, դու՝ չամուսնացած աղջիկ, կեսգիշերին ո՞ւր ես…/

ախմախ (արաբ.), ած. - հիմար, բթամիտ, տգետ, անմիտ.- Վեռչը յեռսօտուկ գ՛ացի տուն, վոր ախճըկաս հախից գ՛ամ, տէնամ ախմախ ախպէրը նըստե՝ ֆուդբօլ ա հիշկում, ասի՝ քուրըտ հո՞ւր ա, բը՝ յես ի՞նչ եմ գիդում՝ սիրածի

խէտ գ՛ընաց… սիրածն էլ վո՛րն ա՝ Համօյ պըստի տըղէն, ախճըկանիցըս խինգը տա՛րի պըստիկ… Էտենց ախճըկաս փախծըրին տարան… Շատ նեղվա, տըվի-առա, բ՛այց ի՛նչ անի… /Ի վերջո բարկացած գնացի տուն, որ աղջկաս պատժեմ, տեսնեմ՝ հիմար եղբայրը նստել ֆուտբոլ է նայում, ասացի՝ քույրդ ո՞ւր է, բա՝ ես ի՛նչ իմանամ, սիրածի հետ գնաց… սիրածն էլ ո՛վ է՝ Համոյի փոքր տղան, աղջկանիցս հինգ տարով փոքր… Այդպես աղջկաս փախցրին տարան… Շատ նեղվեցի, հուզվեցի, բայց ինչ անեի…/

ախմախութուն, գ. - անմիտ գործ, հիմարություն

ախն առնել սիռտը, չբ. - մի բանից վախենալ, վախով մի բանի սպասել . - Դ՛ուռը բ՛աց էր, ախն առավ սիռտըս, ասի՝ չըլնի՞ տունը գ՛ող ա մըտե /Դուռը բաց էր, վախեցա, մտածեցի՝ չլինի՞ տունը գող է մտել/

ախուղ՛ող, գ. - վախ, սարսափ.- Հո՛ւշիկ ախուղ՛ողօվ նեռս մըտա /Վախով կամաց ներս մտա/

ախպանոց, գ. - աղբանոց.- Տէնամ՝ ինչ. տունը սարքած ախպանոց /Տեսնեմ՝ ինչ. տունը դարձրել են աղբանոց/

ախպէր, գ. - եղբայր.- Ընձի-ընձի ասի՝ ախպէր, ինչ վոր գ՛օղնում էք՝ գ՛օղնում էք, բը տո՞ւնն հընչէք ավիրում /Ինձ ու ինձ ասացի՝ եղբայր, ինչ որ գողանում եք՝ հասկացանք, իսկ տո՞ւնն ինչու եք ավերում/

ախպըրացու, գ. - 1.խորթ եղբայր, 2. իբրև եղբայր ընկալվող

ախպըթափիկ, գ. - աղբը թափելու գործիք

ախտել, չբ. - հաղթահարել, ուժը պատել.- Դ՛ու կախտե՞ս՝ էտի առնես շըլակըտ, էթաս /Քո ուժը կպատի՞՝ դա վերցնես շալակդ, գնաս/

ախօղ ունէնալ - ախորժել

ա̊խօռ ա̊նել - ախոռը մաքրել, աշխատել ախոռում.- Էտ գ՛ախ յես ա̊խօռ ի ա̊նում. հա՛մ օրը տա̊սը կօվ կըթում ի, հա՛մ էլ տըկըներն ա̊վլում ի, մա̊քրում ի /Այդ ժամանակ ես ախոռում էի աշխատում. և՛ օրական տասը կով կթում էի, և՛ տակները ավելում էի, մաքրում/

ա̊խօվ ա̊խաչոր ա̊նել, նբ. - սարսափեցնել.- Մեզի ա̊խօվ ա̊խաչոր էր ա̊րե, յե՞փ էր օր ու ա̊րեվ տա̊լում /Մեզ շատ էր վախեցրել, ե՞րբ էր մեզ ազատ շնչելու հնարավորություն տալիս/

ա̊ծան խավ, գ. - ածող հավ.- Բը ի՞մալ, ա̊ծան խավը կըչկըչան գ՛ըլնի /Արդյունք տվողի ձայնը բարձր կլինի/

ա̊ծել, նբ. - ձու դնել, ածել (հավի մասին).- Էս կա̊րմիր խավը հէսօր քանօր ձ՛ու չածում, ա̊սում եմ՝ մօռթեմ, թոռըս չըթօղում, ա̊սում՝ մեխկ ա, լը կա̊ծա /Այս կարմիր հավը վերջերս ձու չի ածում, ուզում եմ՝ մորթեմ, թոռս չի թողնում, ասում է՝ մեղք է, դեռ կածի/

ա̊ծիկ, գ. - ցորենի ծիլերի հյութով և ալյուրի խյուսով պատրաստած կերակուր.- Գ՛արունը վոր բ՛ացվում էր, մէրըս ա̊ծիկ էր դ՛ընում. ցօրենը թռչում էր, փըռում էր սըլի մէչը, դ՛ընում էր խացատունը. վոր ծըլում էր, խանում էր, ա̊խծում էր, դ՛ընում էր փէջի վըրէն էփում էր, խօ խամօվ չէր հըլնում, խօ խամօվ չէր հըլնում… սա̊ղին պըտի բ՛աժնէր /Գարունը որ բացվում էր, մայրս ածիկ էր դնում. ցորենը թրջում էր, փռում էր տափակ կողովի մեջ, դնում էր հացատանը. երբ ծլում էր, հանում էր, աղում էր, դնում էր վառարանի վրա եփում էր, ի՜նչ համեղ էր լինում, ի՜նչ համեղ էր լինում… բոլորին պիտի բաժաներ/

ձկան հըղօղ - վերջին ունեցվածք .- Զուր բիլլմ ձկան հըղօղն էլ հավքեց տմրավ /Մինչև անգամ վերջին ունեցվածքն էլ հավաքեց տարավ/

ձկընկալ, գ. - թոնրի օդանցքը փակելու քուրջ

ձկուշկա (ռուս.), գ. - պատուհան

ձկօլել, նբ. - քանդել, ավերել

ա հա հա, ձ. - արհամարհական ձայնարկություն.- Ա հա հա, միյնմկ էտ էր պակաս /Հա հա, միայն այդ էր պակաս/

ձղ դ՛ընել, չբ. - մթերքը աղի մեջ պահել.- Հառէչ Սէվան լավ կօղակ էր հըլնում, շմտ գ՛ախ կօղակը ձղ ին դ՛ընում, էտենց ին ուտում /Առաջ Սևանում շատ կողակ էր լինում, հաճախ կողակը աղ էին դնում, այդպես էին ուտում/

ձղ ու խաց (աղ ու հաց), գ. - կերակուր, փխբ. երախտիք, մտերմության խորհրդանիշ

ձղա (պրսկ., թուրք.), ած. - 1. առատաձեռն, լիասիրտ, 2. հեգն. բարձր դասի պատկանող

ձղա-իշխան, ած. - պատվարժան. - Վէրցե ձսե՝ իմ ձղա-իշխան ձխպէրն էկավ, էնի չէլավ կմյնէր /Ասել է՝ իմ պատվարժան եղբայրը եկավ՝ նա ոտքի չկանգնեց/

ձղաման, գ. - աղի աման

ձղաչանք-պձղատանք ձնել, չբ. - շատ աղաչել

ձղաչել-պձղատել - աղաչելով խնդրել

ձղավարի, մկ. - ինքնագոհ, մեծավորի նման

ձղդ՛ըրուկ, ած. - աղի մեջ պահված.- Մէ կըտոր ձղդ՛ըրուկ պձնիր բ՛ե, էս ձլնի պձնիրը յես չեմ սիրում /Մի կտոր աղ դրած պանիր բեր, այս անալի պանիրը ես չեմ սիրում/

ձղզուն (թրք.), ած. - կատաղի.- Մէ խատ ձղզուն շուն բ՛ե կմպա ձ՛եր դ՛ուռը, ճմմփի վըրվի տուն ա, հընցնօղ-դ՛առցօղը՝

շա՜տ… /Մի հատ կատաղի շուն բեր կապի՛ր ձեր դռանը, փողոցի վրայի տուն է, անցնող-դարձողը՝ շատ/

ճղզունննալ, չբ. - դառնալ հարձակողական, հանդուգն

ճղէ ճռունք թափել, չբ. - դառը լաց լինել. - Ի՞նչ անեմ, էկավ ճղէ ճռունք թափեց, մեխկըս էկավ /Ի՞նչ անեմ, եկավ դառը լաց եղավ, խղճացի/

ճղըլ (թրք.), գ. - սարում ոչխարի ցանկապատված փարախ.- Մեր ճղըլի մէչը էրկու խատ բա՛լա՛ք գ՛առ կա՛ր, մէկը բ՛ըռնի, տըվի ըտուն, ա՛սի տա՛ր, խալալ հըլնի /Մեր փարախի մեջ երկու հատ խատուտիկ գառ կար, մեկին բռնեցի, տվեցի դրան, ասացի՝ տար, հալալ լինի /

ճղանձ, գ. - աղանձ .- Վէրցեց ու գ՛ընաց, համ էլ հիրան-հիրան բըռթբըռթաց՝ մուգն էլ ա ճղանձ ուտել գիդում /Վերցրեց ու գնաց, իրեն-իրեն էլ մռթմռթաց՝ մուկն էլ է աղանձ ուտել իմանում/

ճղընձել, նբ. - խարկել, աղանձ անել.- Զըղայնացա, ա՛սի՝ լը մէ բ՛ան էլ մույնա՛թ ես գ՛ալում, ի՛նչ ճղանձ, ի՛նչ մո՛ւկ, ի՛նչ ճղընձել… /Բարկացա, ասացի՝ դեռ մի բան էլ ինձ վրա ես նեղանում, ի՛նչ աղանձ, ի՛նչ մուկ, ի՛նչ աղանձ անել/

ճղժունք, գ. - աճուկ.- Տա՛րավ - բ՛էրեց մէ խատ էնենց թա՛փուկօվ զա՛նեց ճղժունքիս՝ կա՛րկըմա /Տարավ - բերեց՝ այնպես հարվածեց աճուկիս՝ կարկամեցի/

ճղի ճղաման հըլնել - մեկին մշտապես նյութական օգնության հասնող լինել. - Դ՛առցե ա՛սում՝ յես ձ՛ե վա՞տ եմ հէլե, ձ՛եր ճղի ճղամանն ի /Հետո ասաց՝ ես քո հանդեպ վա՞տ եմ եղել, քեզ մշտապես օգնում էի/

ճղիք, գ. - աղիք.- Մէ կերպ ա՛սի՝ է՛, խա՛, բը ա՛խկընե՞րըս հընչես թափում /Մի կերպ ասացի՝ է, հա՛, բա աղիքնե՞րս ինչու ես թափում/

ա̊ղկէրուկ, ած. - աղ կերած, աղը ներծծած.- Վէրցեց ա̊սավ՝ յես քեզնից ա̊ղկէրուկ պա̊նիր ի ուզում, էս գ՛առը տա̊նում եմ՝ ի՛նչ անեմ /Ասաց՝ ես քեզնից աղ կերած պանիր էի ուզում, այս գառը տանում եմ՝ ի՛նչ անեմ/

ա̊ղն ուտել - աղ դրած մթերքի՝ աղը քաշելը, ներծծելը.- Ըստիբված ա̊սի՝ մեր պա̊նիրը լը ա̊ղ չըկէրե /Ստիպված ասացի՝ մեր պանիրը դեռ աղ չի կերել/

ա̊ղուխացօվ, ած. - հյուրասեր.- Էն յանից կընիկըս էկավ, թէ՝ մենք ա̊ղուխացօվ ժօղօվուռթ ենք, քուրօ ջան, ա̊րի մէ բ՛աժակ կօֆէ դ՛ընեմ, խըմա՛ /Էն կողմից կինս եկավ, թե՝ մենք հյուրասեր մարդիկ ենք, քույր ջան, եկ մի բաժակ սուրճ հյուրասիրեմ/

ա̊ղուն, գ. - աղալու հացահատիկ.- Մէ խատ կընգաս խօլոր զա̊նեց, ա̊սավ՝ յա՛, էրէվում ա̊ղուն ունես ա̊խծէլու /Կնոջս խոժոռ նայեց, ասաց՝ յա՛, երևում է՝ ինձնից շահ ունես/

ա̊ղուր, գ. - սայլի ճանապարհ.- Հազիվ ընձի զըսպի, վոր չըփըրքըվցընեմ տըլոտ ա̊ղուրի մէշտեղը, խեխտեմ /Հազիվ ինձ զսպեցի, որ չփռեմ ցեխոտ ճամփին, խեղդեմ/

ա̊ղջ՛ուր, գ. - աղաջուր.- Դ՛առցավ ընձի ա̊սավ՝ դ՛ու գ՛ընա պա̊նիրը բ՛ե, մէշօլ ա̊ղջ՛ուր կըբ՛էրես /Շուռ եկավ, ինձ ասաց՝ դու գնա՛ պանիրը բեր, մի քիչ էլ աղաջուր կբերես/

ա̊ղօթկ ա̊նել, չբ. - աղոթել.- Կընիկըս ձ՛եռները պա̊ռզեց յերկինք, յես ա̊սի՝ ա̊ղօթկ ա ա̊նում, բ՛այց ա̊սավ՝ ա̊՛սված, էս կընիկը ի՞նչ ա ուզում իմ մա̊ռթից /Կինս ձեռքերը մեկնեց երկինք, ինձ թվաց՝ աղոթելու է, բայց ասաց՝ աստված, այս կինը ի՞նչ է ուզում իմ ամուսնուց/

ա̊ղօթուկ էշ, ած. - կամազուրկ, հեզ ու հիմարավուն.- Էտ կընիկը մէ խատ խընդաց, ա̊սավ՝ մա̊ցէր էր՝ քօ ա̊ղօթուկ էշ մա̊ռթը ընձի խավնէր կա̊մ չըխավնէր /Այդ կինը ծիծաղեց,

ասաց՝ մնացել էր՝ քո հիմար ամուսինը ինձ հավաներ կամ չհավաներ/

ա̊ղօթրան, գ. - արշալույս, հորիզոնի արևելյան կողմը, արևելք

ա̊ճառ, գ. - հաճար

ա̊ճըռէ փըլավ, գ. - հաճարով փլավ

ա̈մա̈կ (թրք.), գ. - երախտիք, խնամք

ա̈մա̈կ ունէնալ -երախտիք ունենալ

ա̈մա̈կ տալ, չբ. - նպաստել, օգնել.- Թէ էլի թոռը էտ խեխճէրին ա̈մա̈կ տա /Երևի հենց թոռը օգնի այդ խեղճերին/

ա̊ման- չաման, գ. - ամանեղեն

ա̊մանաթ (արաբ., թրք.), ած. - պահ տրված, ավանդ.- Էսի վէրցա էնենց տեղ դ՛ի՝ չընգի ջ՛առթի, ա̊մանաթ ա̊բրանք ա /Սա վերցրու և այնպիսի տեղ դիր՝ չընկնի կոտրվի, պահ տրված իր է/

ա̊մանլըվիկ, գ. - ամանները լվալու լաթ

ա̊մառ- ա̊մըռնոցով, մկ. - ամառվա կեսին, ամռանը.- Վա՜յ, ա̊մառ-ա̊մըռնոցով էս կա̊րկո՛ւթը հուստ էկավ /Վայ, ամառվա կեսին այս ինչ կարկուտ եկավ/

ա̊մառ բիթուն, մկ. - ողջ ամառ.- Խեխճը ա̊մառ բիթուն դ՛աշտէրից տուն չէկավ /Խեղճը ամբողջ ամառ դաշտերից տուն չեկավ/

ա̊մարաթ (արաբ.), գ. - պալատ, ապարանք, մեծ ու շքեղ առանձնատուն.- Էնենց մէ ա̊մարաթ ա սա̊րքե, վոր մըղնես՝ բ՛արեվըստ կըմօռնաս /Այնպիսի մի շքեղ առանձնատուն է կառուցել, որ մտնես՝ կմնաս ապշած/

ա̊մբ օր, գ.- ամպամած օր.- Գ՛էլը ա̊մբ օրի յա մա̊ն գ՛ալում /Վատ գործի համար հարմար պահ է ընտրվում/

ա̊մբա̈խտ (անբախտ), ած. - բախտ չունեցող, դժբախտ.- Ըսկի կա̊սե՞ս՝ էն ա̊մբա̈խտ կընգա քամբըխից ա հէլէ

/Կիավատա՞ս, որ այն անբախտ կնոջ քողտիկից է ծնունդ առել/

ամբախ-զամբախ խօսալ - ավել-պակաս խոսել, դատարկաբանել.- Բօլ ա ամբախ-զամբախ խօսաս, գ՛ընա էն քըռչ ու քավալը բ՛ե, քըցենք վըրըներըս քընենք /Հերիք է ավել-պակաս խոսես, գնա այն քուրջերը բեր, գցենք մեզ վրա, քնենք/

ամբար, գ. - թոնրատանը սարքված փայտե մեծ տարողություն, շտեմարան.- Ման եմ գ՛ալում՝ չեմ գ՛ըթնում, կարո՞ղա ճըխտէր ես ամբարը /Որոնում եմ՝ չեմ գտնում, կարո՞ղ է՝ խցկել ես ամբարի մեջ/

ամբել, չբ. - ամպել.- Էտ օրը հառավոտ հէլա, լուսամութից հիշկացի, տէսա՝ ամբե /Այդ օրը առավոտյան ելա, լուսամուտից նայեցի, տեսա՝ ամպել է/

ամբըռտել, չբ. - ամպերով պատվել.- Կէսօրվա յանը քանի գ՛ընաց, հավէլի ամբըռտեց, յես ու հարէվնի ախճիկն էլ կայնէր ինք ծառի տակը, խօսում ինք /Աստիճանաբար ավելի ամպեց, ես ու հարևանի աղջիկն էլ կանգնել էինք ծառի տակ, խոսում էինք/

ամբըրոց, գ. - աթարի բրգաձև շարվածք.- Մէկ էլ ուժեղ անձըրեվ բ՛ըռնեց, վազանք մըտանք ամբըրոցը /Մեկ էլ ուժեղ անձրև սկսվեց, վազեցինք մտանք աթարի դեզի մեջ/

ամբոտ, ած. - ամպամած, ամպոտ.- Յես ուրխըցա, բ՛այց էտ ախճիկը հիրանն էնենց էր պախում, կասիր՝ յերկընքից էր հիչե, վողներն էլ ամբոտ ին /Ես ուրախացա, բայց այդ աղջիկն իրեն այնպես էր պահում, կասեիր՝ երկնքից էր իջել, ոտքերն էլ ամպոտ էին/

ամբուզամբը խախընդել, չբ. - իրավիճակը խաղաղվել.- Մէշու յետո մեզի ըսկըսին ման գ՛ալ, ձ՛էն տալ, բ՛այց մենք դ՛ուս չէլանք, մինչեվ ամբուզամբը չըխախընդավ /Քիչ հետո

սկսեցին մեզ որոնել, ձայն տալ, բայց մենք դուրս չեկանք, մինչև իրավիճակը չխաղաղվեց/

ա̈մեղ տեղ, մկ. - զուր տեղը.- Թէ ինչ էր հէլե վոր՝ ա̈մեղ տեղը ա̈խճըկա խէրը բ՛ըռնեց կընգան տըփեց /Թե ինչ էր եղել որ՝ զուր տեղը հայրը բռնեց կնոջը ծեծեց/

ա̈մեղ տեղ, ա̈նշուշ տեղ - անհիմն կերպով, առանց մեղքի. - Բայց կընգան բ՛ան էլ չէր հէլե, էն ա վոր՝ ա̈մեղ տեղ, ա̈նշուշ տեղ խեխճ մա̈ռթին միլիցէքը բ՛ըռնին տա̈րան /Բայց կինը չէր տուժել, ուղղակի անհիմն կերպով նրան բռնեցին, տարան/

ա̈մէք, դ. - ամեն, յուրաքանչյուր

ա̈մէք մա̈ռթ, դ. - յուրաքանչյուրը

ա̈մէք մէկը, դ. - ամեն մեկը.- Գիցի՝ ա̈ստըված ա̈մէք մէկին մէ ձ՛եվի յա ըստեխծե, քօ դ՛ուր գալ-չըգ՛ալուն վոշ մէկն էլ չիշկում /Իմացի՛ր՝ աստված ամեն մեկին յուրօրինակ է ստեղծել, քեզ դուր գալուն կամ չգալուն ոչ մեկը չի նայում/

ա̈մէք տեղ, մկ. - յուրաքանչյուր տեղ

ա̈մէքն իհրանը, մկ. - ամեն մեկը իր համար

ա̈մըռնեց, մկ. - ամռանը.- Իմալ հիշում եմ՝ պա̈պիկս ու տա̈տիկըս ա̈մըռնեց սա̈ր ին էթում /Ինչ հիշում եմ՝ պապս ու տատս ամռանը սար էին գնում/

ա̈մըռնուկ, ած. - ամռանը հասնող միրգ.- Ցես ու խէրըս նըստում ինք ա̈մըռնուկ տա̈նձի ծա̈ռի տա̈կը /Ես ու հայրս նստում էինք ամռանը հասնող տանձի ծառի տակ/

ա̈մի (արաբ.), գ. - հորեղբայր.- Ձ՛եռի փէղը տըխկըցընէլօվ՝ էն յանից ա̈մի Մուշօն գ՛ալում էր, խօրըս խէտ նա̈ռդի յին խաղում /Ձեռնափայտը թրխկացնելով՝ էն կողմից գալիս էր հորեղբայր Մուշեղը, հորս հետ նարդի էին խաղում/

ըմնել-դամնել, նբ. - դասավորել, ամեն ինչ իր տեղում դնել.- Էտ գ՛ախ մէրըս տունը ըռթէն ըմնուկ-դամնուկ էր հըլնում, կօֆէ յէր դ՛ընում, ընձէլ կըռնչում էր, վոր էթամ բ՛էրեմ /Այդ ժամանակ մայրս տունը արդեն դասավորած էր լինում, սուրճ էր դնում, ինձ էլ կանչում էր, որ գնամ բերեմ/

ըմչըկոտ, ած. - ամաչող, քաշվող.- Մէրըս շըտ ըմչըկոտ էր, ըմի Մուշօյ խէտ ձ՛եռօվ-վոտօվ էր խօսում, խէտը լիզու չէր թըռչում /Մայրս շատ ամաչկոտ էր, հորեղբայր Մուշեղի հետ նշանացի էր հաղորդակցվում, բառերով չէր խոսում/

ըմսագ՛ըլօխ - ամսվա վերջը.- Հըմէն ըմսագ՛ըլօխ պըպիկըս սըրից հիշնում էր, մեզի կըթ ու մըծուն, յեղ ու պընիր էր բ՛էրում /Ամեն ամսավերջ պապս սարից իջնում էր, մեզ կաթ ու մածուն, յուղ ու պանիր էր բերում/

ըմսէըմիս, մկ. - ամսեամիս.- Ընձընօվ շըտ էր ուրխըընում, ըսում էր՝ բալէս, ըմսէըմիս բօյ ես թըլում /Ինձանով շատ էր ուրախանում, ասում էր՝ տղաս, ամսեամիս հասակ ես առնում/

ըմօթ, գ. - ամոթ.- Գիդո՞ւմ ես՝ ըմօթ չունէցօղ մըռթը ըմօթօվ մըռթին ձ՛եռ ըռնում, բ՛այց մէկ ա՝ ըմօթը լավ բ՛ան ա… /Գիտե՞ս՝ ամոթ չունեցող մարդը ամոթով մարդուն ծաղրում է, բայց միևնույն է՝ ամոթը լավ բան է/

ըմօթ - զամօթ, մկ. - ամաչելով, քաշվելով.- Խա, չեմ ըսում՝ հըմէն տեղ մըռթ ըմօթ-զամօթ հիրար գ՛ա, չէ՛, իզուր տեղը խըըլըից քաշվել պէտկ չէ /Հա՛, չեմ ասում՝ ամեն տեղ մարդ ամաչելով շարժվի, չէ՛, իզուր տեղը ուրիշից ամաչել պետք չէ/

ըմօթ ընել, չբ. - ամաչել.- Բ՛այց մըռթ պըտի ըմօթ ընա՝ սուտ չըխօսա, ջ՛ոչի հիրես չըթըռնի, խըըլըին վատութուն չանա, հիր օքուդի խըըմար ըստուն-ընդուն վըընաս

չիտա, հիր ծընօղի խօսկը չանտեսա… /Բայց մարդ պետք է ամաչի՝ սուտ չխոսի, մեծին չվիրավորի, ուրիշին վատություն չանի, իր օգուտի համար սրան-նրան վնաս չտա, իր ծնողի խոսքը չանտեսի/

ամօթանք տալ - նախատել, ամաչեցնել.- Մառթ պըտի էնենց հըլնի, վոր հիրանը ամօթանք չիտան, չասեն՝ հընչի գ՛ոռծըտ լավ չես անում, հընչի հընդանիքիտ մասին չես մըտածում, հընչի ծընօղիտ դ՛եղ չես խասցընում, հընչի նեղի մառթին չես խասնում… /Մարդ պիտի այնպես լինի, որ իրեն ամոթանք չտան, չասեն՝ ինչ՛ու գործդ լավ չես անում, ինչ՛ու ընտանիքիդ մասին չես մտածում, ինչ՛ու ծնողիդ դեղ չես հասցնում, ինչու նեղության մեջ եղողին ձեռք չես մեկնում/

ամօթի թիքա, գ. - վերջին պատառը, որ ոչ ոք չի ուտում.- Կարօղա ընձի մեղ դ՛ընեն, բ՛այց մէ բ՛ան կասեմ՝ ինչքան էլ սիռտըտ ուզա՝ ամօթի թիքէն ամնի մըչից դ՛ու չըվէռցես, կարօղա հուրիշին էտի հավէլի պէտկ ա /Հնարավոր է՝ ինձ մեղադրեն, բայց մի բան կասեմ՝ ինչքան էլ սիրտդ ուզի՝ վերջին պատառը ամանի միջից դու չվերցնես, գուցե ուրիշին այդ ավելի անհրաժեշտ է/

ամօթու գ՛էտինը մըղնել, չբ. - շատ ամաչել.-Խըխճիտ ու ասսուն դ՛էմ մի գ՛ընա, ճակաթըտ պառզ արա, թօ քե դ՛ատօղը ամչընա, ամօթու գ՛էտինը մըղնի /Խղճիդ ու աստծուն դեմ մի՛ գնա, ճակատդ պա՛րզ արա, թող քեզ վատ կամեցողը ամաչի, գետինը մտնի/

ամօթօվ, ած. - պատվով, զուսպ

ամօղլի, գ. - հորեղբորորդի

այամ (պրսկ., արաբ.), գ. - ժամանակ, իրավիճակ

այամը փօխվել, չբ. - ժամանակները, իրավիճակը փոխվել

այան (արաբ., պրսկ., թուրք.) - բացահայտ, ակնհայտ կերպով

ձյանդա ձնել, նբ. - հայտնի դարձնել

ձյար (թուրք.), գ. - թամբ.- Ճձմփին մէ խատ ձյար էր թձլուկ, վէրցինք տձրանք դ՛ըրինք գ՛ոմի դ՛ուռը /Ճամփին մի թամբ էր գցված, վերցրինք, տարանք դրինք գոմի դուռը/

բ՛ան, գ. - 1. իր, 2. գործ, աշխատանք, 3.որևէ իրողություն.- Հա՛շկըտ թեքիր՝ բանիտ տէրը չես, խառըըս խառցընում էր՝ ախպօրըտ կընիկը էն վոսկին գըթա՞վ /Պետք է զգույշ լինել, գող-ավազակները շատ են, հարսս հարցնում էր՝ եղբորդ կինը այն ոսկին գտա՞վ/
բ՛ան ա՛նել, չբ. - գործ անել.- Քօ խառըը յե՞փ ա բ՛ան ա՛նել գիդում, թօղես՝ ջ՛ոչ-ջ՛ոչ խօսա /Քո հարսը գործ անել ե՞րբ է իմանում, թողնես՝ մեծ-մեծ խոսի/
բ՛ան ա՛սել, չբ. - նեղացնել.- Քա կընիկ, ես քե բ՛ան յե՞փ ա՛սի, վոր դ՛ու էտենց յեռի-յեռի էկար /Այ կին, ես քեզ ե՞րբ նեղացրի, որ դու այդպես վրդովված խոսեցիր/
բ՛ան ա - եթե պատահի ... .- Դը ուրեմ գիցի, բ՛ան ա՝ թէ վոր մէկ էլ իմ ախպօր կընգա մա՛սին խօսկ բ՛ասվի, դ՛ու ձ՛էն չըխանես, խառըի տէր ես /Դե ուրեմն իմացի՛ր, եթե պատահի, որ իմ եղբոր կնոջ մասին խոսք բացվի, դու ձայն չհանես, հարսի տեր ես/

բ՛ան դ՛ուս գ՛ալ - արդյունք ունենալ, նոր բան պարզվել.- Վաա՛յ, ախճի, խէտըտ լիզու թըռչել չըլնում, էս էլ թա՛զա՛ բ՛ան դ՛ուս էկավ /Վա՛յ, հետդ խոսել չի լինում, այս էլ նոր բան պարզվեց/

բ՛ան ու գ՛ոռծ, գ. - զբաղմունք, աշխատանք.- Սո՛ւս, սո՛ւս, բ՛ան ու գ՛ոռծ չունե՞ս, հէլի գ՛ընա, քօ զա՛յլէն չունեմ /Լռի՛ր, գործ չունե՞ս, վեր կաց գնա՛, քո հավեսը չունեմ/

բ՛ան ու գ՛ոռծըս կըրդրե, վ. - փույթս չէ, անգործ եմ մնացել.- Դուզն ես ասում, բ՛ան ու գ՛ոռծըս կըրդրե՞, վոր քօ նըմանի խէտ նըստէր եմ, չա՛նա՛ յեմ ծէծում /Ճիշտ ես ասում, անգո՞րծ եմ մնացել, որ քեզ նմանի հետ նստել շատախոսում եմ/

բ՛ան ու գ՛ոռծի տէր, ած. - զբաղմունք ունեցող.- Խա՛, խա՛, խա՛, բ՛ան ու գ՛ոռծի տէր ես, բը ի՞մալ, լա՛վ, լա՛վ, սիռտըս հէլուկ ա, էկէր եմ մէշու գ՛անգըտեմ, թեթըվնամ, արի նըստի, մի՛ զընթըկա /Հա՛, հա՛, զբաղված ես, բա ինչպե՞ս, լա՛վ, լա՛վ, վրդովված եմ, եկել եմ՝ մի քիչ զանգատեմ, թեթևանամ, եկ նստի՛ր, մի՛ խրտնիր/

բ՛անատեղ դ՛ընել, նբ. - արժևորել, հաշվի առնել.- Էտքանից յետօ ի՞մալ եմ յես քե բանատեղ դ՛ընում, ախճի, մէշու գ՛ընա էն յան, նըստեմ /Այդքանից հետո ինչպե՞ս եմ ես քեզ հաշվի առնում, աղջի՛, մի քիչ մի կողմ գնա, նստեմ/

բ՛անարար, ած. - գործունյա, ձեռներեց

բա՛նդ (պրսկ.), գ. - ջրի ավազան, առվի գլուխ, սկիզբ, արգելք ջրի առջև

բա՛նդ հըլնել, չբ. - սպասել

բա՛նդա՛ֆ, գ. - խորամանկություն

բա՛նդերը կապել - նախադրյալներ ստեղծել

բ՛անել, չբ. - աշխատել

բ՛անը բ՛անից հընցնել - այլևս ուշ լինել

բ՛անը բ՛ուռթ ա - վիճակը վատ է

բանթիկ (ռուս.), գ.- մազերի ժապավեն

բ՛անթոխս հըլնել, չբ. - ինչ-որ պատճառով գործը թողնել
բ՛անի բ՛անարար,ած. - աշխատող, կարողացող
բ՛անի դ՛ընել, նբ. - գործի դնել
բ՛անի հըլնել, չբ. - զբաղվել, աշխատել
բ՛անի հիդվից //հիդեվ հընգնել, չբ. - զուր տեղը մի բանի ձգտել
բ՛անի վըրա յա - զբաղված է
բ՛անիտ գ՛ընա՛ - մի՛ խառնվիր
բ՛անիտ մա՛ց - քո գործով զբաղվի՛ր
բ՛անն ա՛չօղել, չբ. - բախտը բանել.- Էրկու շուն խաաան հիրար, ճամփօռթի բ՛անն ա՛չօղավ /Ստեղծված իրավիճակից երրորդ կողմը օգտվեց/
բ՛անուման, գ. - ինչ-որ բաներ
բ՛անչըկա, վ. - հոգ չէ
բ՛անջըրաբ՛ուսիկ, գ. - մանր կարկուտ
բ՛անվորա, վ. - միևնույն է, մի բան որ է
բ՛անցընել, նբ. - աշխատեցնել
բ՛անցըրամըռութ, ած. - գոռոզ
բ՛անցըր-բ՛անցըր, մկ. - բարձրաձայն
բ՛անցըրից գ՛ալ, չբ. - բարձր բաներից խոսել
բ՛անցըրկըրունգ // բ՛անցըրակըրունգ, ած. - բարձրակրունկ
բ՛անօքի, գ. - խորում անելու գործիք
բա՛շ, գ. - նշան մարդու և կենդանու գլխի վրա
բաշարել (արաբ.), չբ. - կարողանալ, հնարը գտնել
բաշլուղ (թրք.), գ. - գլխանոց
բաջաղ (թրք.), գ. - սրունք
բաջանաղ (թրք.), գ. - քենակալ
բա՛ռ, գ. - կարպետ
բա՛ռա՛ղա՛րի, ած. - անիմաստ, անօգուտ
բա՛ռա՛ղի, ած. - անպետք, անգործունյա
բա՛ռդա՛ն (պրսկ.), գ. - մեծ ջվալ
բա՛ռէվան հընգնել, չբ. - փորձել հաշտեցնել կռվողներին

բ՛առթակօլոն, գ. - կույտ
բ՛առթել վըրէն - մեղքը մեկի վրա գցել
բ՛առթոց, գ. - կույտ՝ խոտի, ցորենի
բ՛առցել, նբ. - բարձել
բ՛առցէք, գ. - շնորհավորելու այցելություն ծննդկանին՝ նվերներով
բ՛առցի տօ՛զն ուտել - անիրավությամբ կուտակածը առողջությունը վերականգնելու վրա ծախսել, անկողնում ուտել /անեծք է/
բ՛ռօժ, ած. - արնկող
բ՛ռօժվել, չբ. - արնկող անել
բ՛ա, գ. - զրույց, նորություն
բ՛աբ՛էրան, ած. - ոչ գաղտնապահ
բ՛աձ՛եռ, ած. - առատաձեռն
բաստուրմա (թրք.), գ. - ապուխտ
բատարէ (ռուս.), գ. - լապտեր
բ՛ար, գ. - ընտանիք, գերդաստան
բար (պրսկ.), գ. - պտուղ
բ՛արակ ձ՛որի օ՛ղվէզ (հեգն.) - շատ նիհար
բ՛արակ-մարակ, ած. - նիհար
բ՛արակպըռկըներ, ած. - բարակ շուրթեր ունեցող
բ՛արա՛քա՛թ (արաբ.), գ. - առատություն
բ՛արա՛քէն - առատ, շատ /իբրև մաղթանք/
բ՛արեվ տալ, չբ. - բարևել
բ՛արեվը մօռնալ, չբ. - շքեղության վրա շատ զարմանալ
բ՛արեվմընա, գ. - հրաժեշտի ձեռքսեղմում.- Ինչ հէրէկ եմ տէսե. էկավ բ՛արեվմընա օ՛րավ, գ՛ընաց /Ինչ երեկ եմ տեսել, եկավ հրաժեշտ տվեց, գնաց/
բ՛արեվն օ՛ռնել, չբ. - պատասխանել բարևին.- Իմալ օ՛սում՝ բ՛արեվն օ՛սսուն ա. հա՛մ բ՛արեվ տալը, հա՛մ բ՛արեվն օ՛ռնելը պըտի լի սըռտօվ հըլնի, վոր մօ՛ռթ խասկընա, վոր հիրանը լավն ես կօ՛մէնում /Ինչպես ասում են՝

բարևն աստծուն է. և՛ բարև տալը, և՛ բարև առնելը պետք է լի սրտով լինի, որ մարդ հասկանա, որ իրեն լավն ես կամենում/

բ՛արէզմի տէր, ած. - խնամի ունեցող

բ՛արէզմութուն, գ. - խնամիություն, բարեկամություն

բ՛արէլի , ած. - բարի, կամեցող

բ՛արէլի չես - բարի պըտուղ չես

բա̈րէմբա̈ր (պրսկ.), մկ. - հավասար, համաչափ

բա̈րիշ (թուրք.) - հաշտ

բա̈րիշել, չբ. - հաշտվել

բ՛արլուս // բ՛այլուս - բարի լույս.- Բ՛արլուս, Սօֆիկ, էտ իընչէ՞ս կա̊յնէ /Բարի լույս, Սոֆիկ ջան, այդ ինչո՞ւ ես կանգնել/

բ՛արլուսախառ // բ՛այլուսախառ, մկ. - առավոտ շուտ .- Բ՛այլուս, Թամար ջան, տըղին ճա̊մփու դ՛ըրի, ուզում եմ էթամ թունդիրը վառեմ, բը դ՛ո՞ւ բ՛այլուսախառ դո՛ր ես էթում, էտ ի՞նչ ա ձ՛եռըտ /Բարի լույս, Թամար ջան, տղային ճանապարհեցի, ուզում եմ՝ գնամ, թոնիրը վառեմ, բա առավոտ շուտ դո՞ւ ուր ես գնում, այդ ի՞նչ է ձեռքիդ/

բարխատ (ռուս.), գ. - թավիշ .- Էրկու մետըր բարխատ ա, տա̊նում եմ տամ պա̊ռտնօյը, ընձի դէյրա̈ կա̊րա, էլ գ՛ախ չունեմ, պըտի էթամ Քա̈վա̈ռ /Երկու մետր թավշյա գործվածք է, տանում եմ տամ դերձակին, որ ինձ շրջազգեստ կարի, ուրիշ ժամանակ չունեմ, պիտի գնամ Գավառ/

բ՛արկ, ած. - թեժ.- Քուրօ՛, ա̊րի վըռազ թունդիրը վառեմ, կըրակը բ՛արկ կա̊նեմ՝ չում հանթըռտի, խէտըտ գ՛ամ դ՛առնամ, յես էլ մէ լավ ա̊դրէզկա ունեմ… /Քույրի՛կ, ե՛կ շտապ թոնիրը վառեմ, կրակը թեժ կանեմ, մինչև հանդարտվի, հետդ գամ, դառնամ, ես էլ մի լավ շորացու կտոր ունեմ…/

բ՛արկել // բ՛արկընալ[1], չբ. - բարակել, նիհարել.- Սօֆի՛կ, ինչօր բ՛արկէ՞ր ես, թէ՞ խալաթըտ ա էտենց նըշանց տա̊լում

/Սոֆիկ, նիհարե՞լ ես, թե՞ խալաթդ է այդպես ցույց տալիս/

բ՛արկընալ[2], չբ. - թեժանալ.- Չէ, ախճի, էս քանօր դիէտա յեմ պահում, բ՛արկէր եմ, դ՛ու էրկու փէդ էլ թա՛լ, թօ կըրակը բ՛արկընա, չուր յես շոր թա՛լեմ վըրէս, գ՛ամ /Չէ, աղջի, մի քանի օր է՝ դիետա եմ պահում, նիհարել եմ, դու երկու կտոր փայտ գցիր, թող կրակը թեժանա, մինչև ես շոր հագնեմ, գամ/

բարութ (թրք.), գ. - վառոդ

բ՛արութունը բ՛ըռնել, չբ. - հանկարծակի բարություն անել.- Սօֆի՛կ, կա՞րօ՞դա բ՛արութունըտ բ՛ըռնա, կըռասնի մասկըվա դուխիտ բ՛էրես, մէշու ցանեմ վըրէս, տեղ ենք էթում…

բարուրել, նբ. - բարուրել.- Իմը պըռծե, էն խառսը ճըժին էր բարուրում, տէնամ դոր ա, հիրա դուխին գ՛օխտուկ կըբ՛էրեմ, վա՛յ, ախճի, մառթըս էկավ… /Իմը վերջացել է, էն հարսը երեխային էր բարուրում, տեսնեմ՝ ուր է, թաքուն իր օծանելիքը կբերեմ, վա՛յ աղջի, ամուսինս եկավ/

բ՛արօվ էկար - *ողջույն եկող անձին* .- Բ՛արօվ էկար, յեխպար Մուշօ, ի՞մալ ես, էս քանօր քե չի տէսե /Բարով եկար, եղբայր Մուշո, քանի օր է՝ քեզ չէի տեսել/

բ՛արօվ, հազար բ՛արին - ջերմ ողջույն .- Բ՛արօվ, հազար բ՛արի, Թամար ջան, խէ՞ր հըլնի, հառավոտ բ՛արլուսախառ մեզի հիշէր ես /Բարև, հազար բարև, Թամար ջան, ի՞նչ կա՝ առավոտ շուտ եկել ես/

բ՛ացբ՛էրան, ած. - ոչ գաղտնապահ.- Դ՛ու գիդում ես, Մուշօ ջան, յես բ՛ացբ՛էրան կընիկ չեմ, չե՛մ ասի. լավ եմ արե՝ էկէր եմ… /Դու գիտես, Մուշո ջան, ես բացբերան կին չեմ, չեմ ասի. լավ եմ արել՝ եկել եմ…/

բ՛ացել, նբ. - բանալ, բացել.- Վա՛յ, Թամա՛ր, Թամա՛ր, քօ տիպը չըկըդրի, խօսկի ման չես գ՛ալում. բ՛էրանըտ բ՛ացում

ես՝ մնոթի ծըձող ա գ՛ալում /Վա՛յ, Թամար, Թամար, մեզնից անպակաս լինես, խոսքի ման չես գալիս, բերանդ բացում ես՝ մարդու ծիծաղ է գալիս/

բ՛ացիկ, գ. - բացիչ

բ՛ացուխուփ ըննել, նբ., չբ. - բացել-փակել

բ՛ացսիռտ,ած. - սրտաբաց

բ՛ացօվլի,ած. - բացովի

բ՛ափէլական կըրակ, գ. - աստվածային պատիժ

բեղ, գ. - ընչացք

բ՛եռթ, գ. - բանտ

բ՛եռօվ-բ՛առցօվ գ՛ալ, չբ. - մի տեղից շատ մթերքներով, իրերով գալ.- Էտ հո՞ւստ ես էտենց բ՛եռօվ-բ՛առցօվ գ՛ալում, չըմդէ թօշա՞կ ես ըստացե... բըխտըվոր իմ ու քօ գ՛ըլօխը /Այդ որտեղի՞ց ես այդպես մթերքներով ծանրաբեռնված գալիս, գուցե թոշա՞կ ես ստացել. բախտավոր իմ ու քո գլուխը/

բեր, գ. - ոչխարներին կթի տանելը

բէնբուռ, ած. - անամոթ, անինքնասեր

բէբըրըքըթ, ած. - օգուտ չտվող, եկամուտ չբերող

բէբաշար, ած. - անճարակ

բէգ՛ախ, մկ. - անժամ, տարաժամ, ոչ հարմար ժամի

բէգումըն (պրսկ.), մկ., ած. - անհույս, անսպասելի

բէզրել, նբ. - վատաբանել

բէդռանգ (պրսկ.) - գունատ

բէղօվլըթ (պրսկ., թրք.), ած. - չար, անպետք զավակ

բէզըր (պրսկ., թրք.), ած. - ձանձրացած, զզված

բէզըրել, չբ. - հոգնել, ձանձրանալ

բէթըր (պրսկ.), ած. - ավելի վատ, վատթար.- Է՛, ըսված է՛լ բէթըրէն ըզատա /Պետք է զգուշանալ ավելի վատից/

բէլլու (թրք.) **ա՛նել**, չբ. - նկատելի լինել, զգացվել.- Խէլօք գ՛առը քօզի մէչը բէլլու յա ա՛նում /Շնորհքը երևում է մանկուց/
բէխաբար (պրսկ.), ած. - անտեղյակ, առանց իմանալու
բէխէր (պրսկ.), ած. - հաջողություն չբերող, ոչ բարի, չար
բէխէր-բէխէր խօսալ, չբ. - անհաջողություն կանխատեսել
բէհալ (պրսկ.), ած. - անուժ, թույլ
բէմույնա՛թ // բէմինա՛թ, մկ. - առանց ուրիշի աջակցության
բէմուրազ // բէմուրադ, ած. - իղձերն անկատար
բէյ (թրք.), գ. - կանխավճար
բէյթ (արաբ.), գ. - առակ, ծիծաղաշարժ փոքրիկ պատմություն, սիրային բանաստեղծություն
բէյթուն (պրսկ.), ած. - անհաճո, տգեղ, անհաջող
բէյն (արաբ.), գ. - ուղեղ, գլուխ
բէյնէբէն, մկ. - հանգամանալից
բէյնից կա՛լին, ած. - անհասկացող, ուղեղը հաստ.- Ըտոնք մէշու բէյնից կա՛լին են, բ՛անը չում մէ քանի դա՛ն չես ասում՝ չեն խասկընում /Դրանք մի քիչ անհասկացող են, բանը մինչև մի քանի անգամ չես ասում՝ չեն հասկանում/
բէնա՛մուս, ած. - աննամուս, պատվազուրկ
բէշա՛ր, ած. - անհրավացի
բէշբէթա՛ր, ած, - վատից վատ
բէշքա՛րթմա՛, գ. - երկու կողմի ծնողների որոշում՝ երեխաների չափահաս դառնալուց հետո ամուսնացնելու վերաբերյալ
բէչա՛ տալ, չբ. - 1.կողքից ծլարձակել, 2.մեղվի նոր ընտանիքի ձևա-վորվելը
բէջա՛րել (թրք.), նբ. - մշակել
բէջուռա՛, ած. - անճոռնի, տարօրինակ ձև ունեցող
բէռումա՛թ ա՛նել, նբ.- չգնահատել
բէվախտ (պրսկ.), մկ. - անժամանակ, անպատեհ

բ՛էտ, ած. - մեծ

բ՛էտ ու պըստիկ, ած., գ. - մեծ ու փոքր.- Բէտ ու պըստիկ ըտուն շա՛տ են ուզում. հա՛մ խօրօտ ա, համ էլ ա՛րարմուտկօվ ա /Մեծ ու փոքր դրան շատ են սիրում. և՛ գեղեցիկ է, և՛ վարմունքով/

բ՛էտ-բ՛էտ բ՛ըռթել, չբ. - մեծախոսել.- Դ՛ու ա՛ռթէն բ՛էտ-բ՛էտ ես բ՛ըռթում, գիցա՞ր, էսենց վոր տըվի, կըփըրքըվես գ՛էտնին /Դու արդեն մեծախոսում ես, էսպես որ խփեցի, կփռվես գետնին/

բ՛էտ-բ՛էտ խօսալ, չբ. - մեծախոսել

բ՛էտընալ, չբ. - մեծանալ

բ՛էտըռկել, չբ. - 1.սկսել մեծախոսել, 2.ավելի մեծ կաթիլներով տեղալ

բ՛էրան, գ. - 1. բերան, 2. անգամ.- Բ՛էրնէ բ՛էրան՝ հազար բ՛էրան /Մեկից մեկին անցնելով՝ լուրը մեծ տարածում է ունենում/

բ՛էրան բ՛ացել, չբ. - ակնարկել

բ՛էրան բ՛էրել, չբ. - ասել

բ՛էրան ծըռել, չբ. - մեկից ավելորդ տեղը մի բան խնդրել

բ՛էրանը բ՛աց մընալ, չբ. - հիանալ

բ՛էրանը գ՛ալ - մտքով անցնել.- Ինչ բ՛էրանըտ գ՛ալում՝ ա՛սում ես, էտենց ի՞մալ գ՛ըլնի /Ինչ մտքովդ անցնում է՝ ասում ես, այդպես ո՞նց կլինի/

բ՛էրանը դ՛ա՛ռնընալ, չբ. - դառը համ զգալ.- Վայ թէ մըռսէր եմ, բ՛էրանըս դ՛ա՛ռնըցե /Երևի մրսել եմ, դառնահամ եմ զգում/

բ՛էրանը թա՛լել, նբ. - կաշառել

բ՛էրանը լիզու դ՛ընել, չբ. - պատճառ դառնալ, որպեսզի մեկը հանդուգն դառնա.- Սա՛ղ դ՛ու ըտու բ՛էրանը լիզու դ՛ըրիր, էնքան գ՛օվացիր, փըշի-փըշի ա՛րիր՝ հէլավ նըստավ գ՛ըլխընէրիս /Դու պատճառ դարձար դրա

հանդգնության, այնքան գովեցիր, սիրաշահեցիր՝ երես առավ/

բ՛էրանը խոտ հանյվան, ած. - հիմար, անհասկացող

բ՛էրանը խուփ // բ՛էրանը փազ, ած. - գաղտնապահ

բ՛էրանը հընգնել, չբ. - իմանալ և դարձնել խոսակցության առարկա

բ՛էրանը մէ բ՛ան դ՛ընել - թեթև սնունդ ընդունել

բ՛էրանը ջ՛ախել, չբ. - շատախոսել

բ՛էրանը փազել, չբ. - կաշառքով կամ սպառնալիքով լռեցնել

բէրանն առնել, նբ. - մեծապես հովանավորել

բ՛էրել, նբ. - ծնել, աշխարհ բերել

բ՛էրնէ բ՛ոզ, ած. - լուրեր տարածող

բ՛էրնէ՞ն էր էկե - իր ջանքերով չէ տվյալ արդյունքը

բ՛էրնէբ՛էրան, մկ. -1. լիքը, 2. բերանից բերան, 3. բառացիորեն.- Բէրնէբէրան ասի՝ էտ թուխտը կըտաս նախակի ձ՛եռը, հուրիշ մառթի չիտաս, յես ի՞նչ անեմ, վոր տարե տըվե պայեստապետին /Բառացիորեն ասացի՝ այդ թուղթը կտաս նախագահի ձեռքը, ուրիշ մարդու չտաս, ես ի՞նչ անեմ, որ տարել տվել է պահեստապետին/

բ՛էրնէն կըդրել - տնտեսել՝ իրեն զրկելով

բ՛էրնըկալ, գ. - կափարիչ

բ՛էրնըփոխ, գ. - համտեսելու համար բերված մթերք /հիմնականում՝ միրգ/

բ՛էրնի գ՛ոլը գիդալ - զգուշորեն մտադրությունը, կարծիքը իմանալ

բ՛էրնի խամը գիդալ - ճաշակ ունենալ

բ՛էրնի ծամոն դ՛առնալ, չբ. - դառնալ խոսակցության առարկա.- Տօ, խայտառակ ենք հէլե, գ՛եղի բ՛էրնի ծամոն ենք դ՛առցե, վիրը բ՛արեվ ենք տալում՝ բիձի կարքըվէլուց ա խառցընում /Տո, խայտառակ ենք եղել, դարձել ենք գյուղի խոսակցության առարկան, ում բարև ենք տալիս՝ բիձայի ամուսնանալուց են հարցնում/

բ՛էրնի ջ՛ըրերն էթալ, չբ. - մի բան շատ ցանկանալ

բ՛էրնին գ՛ալ, չբ. - խոսքը ընդհատել, թույլ չտալ շարունակել
բ՛էրնօվ ծնե՞լ ա - շատ դժվար գործ է.- Էտքան քար կըրելը բ՛էրնօվ ծնե՞լ ա, գ՛իշեր - ցէրէկ տըղէրքը բ՛անին, իրեք օրվա վըրէն նոր պըրծան /Այդքան քար կրելը հե՞շտ է, գիշեր-ցերեկ տղաները աշխատեցին, երրորդ օրը նոր ավարտեցին/
բէփայ - բէբ՛աժին հըլնես - *անեծք է*
բէփայ հէլուկ - *անեծք է*
բէքա̈րա̈ (պրսկ., թրք.), ած. - օգուտ չտվող, անպետք
բէքէֆ (պրսկ.), ած. - վատառողջ, անտրամադիր
բէֆա̈յմ, ած. - անհասկացող, հիմար
բըգլատ, ած. - բկլիկ, շատակեր
բըզել // բըզբըզել, նբ. - հրել, բոթել, հրահրել
բըզի ծիրին զօմփօվ զա̈նել - անհամարժեք եղանակով փորձել ընդդիմանալ.- Ցես չի ծվատում, ծսում ի՝ տըղա ջան, բըզի ծիրին զօմփօվ չես զա̈նի, էտի քօ խելքի բ՛անը չէ, բ՛այց տըղէն լավ էլ հիր ուզածին խասավ, ըտուն էլ ծմօթօվ թօղեց /Ես չէի հավատում, ասում էի՝ տղա ջան, դու դրան չես կարող ընդդիմանալ, դա քո խելքի բանը չէ, բայց տղան լավ էլ իր ուզածին հասավ/
բըզիկ-բըզիկ ծնել, նբ. - պատառոտել
բըզօվ ծա̈կուկ, ած. - մանր /աչքեր/
բըթել, նբ. - ձեռքով հրել՝ մի բան հասկացնելու համար
բ՛ըթիկ - կախարդական գիր (գործածվում է *թուխտ ու բ՛ըթիկ* կապակցության մեջ)
բըթլել (արաբ.), նբ. - ձախողել, վերացնել, խափանել
բ՛ըթխեխտ ծնել, նբ. - շատ նեղել, բթով խեղդել
բ՛ըթնօլոր տալ, նբ. - կմճտել
բըժըժել, չբ. - խելքը մաղել, հոգնել, շշմել.- Էն էրէխէն էնքան ա նըստե կծմպուտըրի դ՛էմը՝ բըժըժե, խան թօ էթա դ՛ուսը, մէշու ծան գ՛ա, հա̈շկէրին էլ լավ չէ /Երեխան

այնքան է նստել համակարգչի առաջ՝ շշմել է, հա՛ն, թող գնա դուրս, մի քիչ ման գա, աչքերին էլ լավ չէ/

բըժի-բըժի, ձ. - հորթին կանչելու ձայնարկություն

բըժօ /փղքշ./, գ. - հորթ

բըլա̈գ (թրք.), գ. - դաստակ

բըլա̈գօվ, ած. - ուժեղ

բըլա̈գուկ (թրք.), գ. - ապարանջան

բըլանդել, նբ. - մեծ կարերով կարել

ԲԸԼԲԸԼԱԼ, չբ. - շատախոսել

ԲԸԼԲԸԼՑԸՆԵԼ, չբ. - անհասկանալի խոսել

բ՛ըլբ՛ըլուկ, ած. - տարբեր տեղերից վթարված /տուն/.- Մէ խատ բ՛ըլբ՛ըլուկ տուն ա ա̊ռե, վըրէն էլ էնքան ուրախ ա /Մի խարխուլ տուն է գնել և դրանով շատ ուրախ է/

բըլբուլ (պրսկ.), գ. - սոխակ

բըլբուլ կըդըրել, չբ. - երկար և գեղեցիկ խոսել.- Հուրիշ օր խօսցընում ենք, մէ բ՛առ քա̈լբա̈թօվ չենք կա̊նում քօ բ՛էրնից խանենք, հէսօր հընչե՞ս բըլբուլ կըդըրե /Ուրիշ օր խոսեցնում ենք, քո բերանից մեկ բառ աքցանով չենք կարողանում հանել, այսօր ինչո՞ւ ես սոխակ դարձել/

բըլդուղ, գ. - բերանի խոռոչ

բ՛ըլել, չբ. - փուլ գալ

բըլըխկալ, չբ. - աչքերը դուրս ցցվել, հորդել

բըլըխկան հա̈շկեր, ած. - դուրս ցցված աչքեր

բըլընգա̈գ, ած. - նվազ, անճարակ.- Չէ՛, չէ՛, լավ չես գիդում, ընդու տըղէն բըլընգա̈գ չէ. հա՛մ կէյըըթօվ ա, համ էլ քըթի ծա̊կ ունի /Չէ՛, չէ՛, լավ չգիտես, նրա տղան անճարակ չէ. և՛ ուժով է, և՛ շուտ է կողմնորոշվում/

ԲԸԼԹԲԸԼԹԱԼ, չբ. - եռալ՝ ձայն հանելով

բ՛ըլկել, չբ. - առատ ծուխ առաջացնել

բըլդուր (թրք.), գ. - ձավար

բ՛ըլցընել, նբ. - խորտակել, փուլ բերել.- Տօ զա̈ղա̈, էտ հասարի վըրվօվ մի՛ թըռի, կըբ՛ըլցընես, կա̊յնի՛, յես քօ տիրու խէրը… /Ա՛յ տղա, պատի վրայով մի՛ թռչիր, փուլ կբերես, կա՛նգ առ, ես քո տիրու հերը…/

բըլուլ (քրդ.), գ. - հովվի սրինգ

բըլքի նըման կա̊յնել շընչին - իր ներկայությամբ դիմացինին ճնշել, խանգարել

բըլօջ, գ. - միջատ

բըխկալ, չբ. - ջուրը հանկարծակի բխել

բըխկըռտալ // բըկըռտալ, չբ. - եռալ

բ՛ըխպըճել, չբ. - 1. պղպջակներ տալ, 2.բշտիկներ առաջանալ

բ՛ըխպուճ, գ. - բշտիկ, պղպջակ

բըկընալ, չբ. - դառնալ դժվար ըմբռնող

բըհա̈մ բ՛ըռնել, չբ. - արմատ գցել, հիմնավորվել

բըղբըխկալ, չբ. - ջուրը եռալ

բըղլամ (արաբ., թրք.), գ. - խուխ, լորձ, մաղձ

բ՛ըճատել, չբ. - ոչ ամուսնական հղիության ընդհատումը

բ՛ըճբ՛եր, ած. - անօրինական ճանապարհով երեխա ունեցող կին

բըմբըլախանա̊նել, նբ. - 1.փետրահան անել, 2.ծանր պարտության ենթարկել.- Նըստի՛, նըստի՛, հէսօր քեզի պըտի բըմբըլախան ա̊նեմ, զառերն հո՞ւր են, Սա̊մօ, զառերը բ՛է /Նստի՛ր, նստի՛ր, այսօր քեզ պիտի ծանր պարտության ենթարկեմ, զառերն ո՞ւր են, Սամվե՛լ, զառերը բե՛ր/

բըմբըլել, նբ. - փետրահան անել

բըմբուլ, գ. - փետուր

բընա̈ բ՛ըռնել, չբ. - հիմնավորվել, ընտանիք կազմել

բ՛ընակըռել, չբ. - բնակություն հաստատել.- Մա̊ռթ պըտի լավ հարէվան ունէնա, թէ ըտոնք հո՞ւստ ա էկած բ՛ընակըռած մեր կողը /Մարդ պետք է լավ հարևան ունենա, թե դրանք ո՞րտեղից են եկել, հաստատվել մեր կողքը/

բ՛ընբ՛ընալ, չբ. - ինչ-որ բանի շուրջ պտտվել, հետազոտել.- Հէսօր քանօր մեր մӓյլէն բ՛ընբ՛ընում, պըտի ըզգուշ հըլնենք, ӓսում են՝ էտի գ՛ող ա /Մի քանի օր է՝ դա մեր թաղում պտտվում է, պետք է զգույշ լինենք, ասում են՝ դա գող է/

բընդել, նբ. - բինտով կապկապել

բ՛ընկալ, գ. - հավի բնում թողնվող ձու

բ՛ընուտկ, գ. - բնույթ, բնավորություն

բընջըվուկ, ած. - փոքրամարմին, նվազ

բըշկըտալ, չբ. - լույսի հազիվ առկայծելը.- Լը լուսը չէր բ՛ասվե, խօրիցըս գ՛օխտուկ՝ մէրըս ընձի զառթընցըրեց, վոր էթինք մӓն գ՛ինք. մո՛ւթ, մո՛ւթ էր, միյնӓկ մէ լուս էր բըշկըտում դ՛էմի հօլիկից /Դեռ լույսը չբացված՝ հորիցս թաքուն մայրս ինձ զարթնեցրեց, որ գնայինք որոնեինք, շատ մութ էր, միայն մի լույս էր հազիվ առկայծում դիմացի հյուղակից/

բըշկուլ, գ. - ոչխարի թրիք.- Մեր հօլիկի դ՛էմը լիքը բըշկուլ կէր, լամփէն մօտկըցըրի, ӓսի կӓրօղա ըտոնց մէչը հըլնի /Մեր հյուղակի առաջ ոչխարի շատ թրիք կար, լամպը մոտեցրի, մտածեցի՝ կարող է դրանց մեջ լինել/

բ՛ըշտել, նբ. - կտրուկ հանդիմանել, կոպտել.- Մէրըս բ՛ըշտեց, ӓսավ՝ գիժ-ӓննօրմալ, էտի խին բըշկուլ ա, դո՞ր ես ըտե մӓն գ՛ալում /Մայրս խիստ նախատեց, ասաց՝ գիժ-աննորմալ, դա հին թրիք է, ո՞ւր ես այդտեղ որոնում/

բըռ, գ. - ոչխարների խումբ.- Թեվիցըս քաշեց, ӓսավ՝ քէլա էթանք, օխճըրի բըռի մէչը մӓն գ՛անք, թէ հըլնի՝ ընդե գ՛ըլնի /Թևիցս քաշեց, ասաց՝ ե՛կ գնանք ոչխարների խմբի մեջ որոնենք, թե լինի՝ այնտեղ կլինի/

բըռӓկ (ռուս.), ած. - գործածության համար ոչ պիտանի, խոտան.- Քամին զӓնեց, լամփէն հանքավ, ӓսի՝ ա՛յ մէր, էս լամփէն բըռӓկ ա, ӓսավ՝ բըռӓկը դ՛ու յես, վոր չըկӓռցար էնենց ӓնիր՝ չըհանքէր /Քամին փչեց,

լամպը հանգավ, ասացի՝ ա՛յ մեր, այս լամպը խոտան է, ասաց՝ խոտանը դու ես, որ չկարողացար այնպես անել, որ չհանգեր/

բըռալ, չբ. - մայել.- Օխճըրները ըսկըսին բըռալ, գ՛ացինք էտ յանը /Ոչխարները սկսեցին մայել, գնացինք դեպի այդ կողմը/

բըռասլէտ (ռուս.), գ. - ապարանջան.- Ջանըս դ՛ող հընգավ, էնենց ցուռտ էր, ճսի՝ էթանք, թօ լուսը բ՛ասվի, գ՛ըքանք կըզ՛ըթնենք, ճսավ՝ էտի խօրըտ ճռուկ բըռասլէտն ա, վոր գ՛իցավ՝ ձ՛եռից չենք պըռծի, պըտի մըկա գ՛ըթնենք /Մարմինս դող ընկավ, ասացի՝ գնանք, թող լույսը բացվի, կգանք կգտնենք, ասաց՝ դա հորդ գնած ապարանջանն էր, որ իմացավ՝ ձեռքից չենք ազատվի, պետք է հիմա գտնենք/

բըռբըռալ, չբ. - ոչխարների մայելը.- Մըտէր ինք օխճըրնէրի մէչը, ըտոնք էլ ըսկըսին բըռբըռալ, շըներն ըսկըսին խատուկենտ խաչալ /Մտել էինք ոչխարների մեջ, դրանք սկսեցին բարձր մայել, շներն սկսեցին հաչել/

բըռթբըռթալ, չբ. - փնթփնթալ.- Մէկ էլ մէ ճռթ բըռթբըռթալէն էկավ, ձ՛էն տըվեց՝ էտ վո՞րն ա մըտե օխճըրի մէչը, էսի գ՛իլի բ՛ան չէ, Վաղօ՛, դ՛ո՞ւ յես. ճսեմ, վոր Վաղօն խէրըս ա /Մեկ էլ մի մարդ փնթփնթալով եկավ, ձայն տվեց՝ այդ ո՞վ է մտել ոչխարի մեջ, սա գայլի բան չէ, Վաղո՛, դո՞ւ ես. ասեմ, որ Վաղոն հայրս է/

բըռթբըռթել, նբ. - շարունակ հրել.- Մէրըս օխճըրնէրին բըռթբըռթէլօվ մօտկըցավ էտ ճռթին, ճսավ՝ յեխպար Սէփան, Վաղօն չէ, Վաղօյ կընիկն ա, հէրէկ կըթի գ՛ախ բ՛ան եմ կուրցըրե /Մայրս ոչխարներին հրելով մոտեցավ այդ մարդուն, ասաց՝ եղբայր Սեփան, Վաղոն չէ, Վաղոյի կինն է, երեկ կթելու ժամանակ բան եմ կորցրել/

բըռթել[1], նբ. - հրել.- Ա՛յ քօ տունը շինվի, խընդաց բիձա Սէփանը, հիրանը քըսմըսվող շճնը մէ յան բըռթեց, ճսավ՝ քօ

մǻռթը հէրէկ մէ բըռաւլէտ գ՛ըթավ, ǻսավ՝ էսի իմ կընգանը գ՛ըլնի, ուրեմ դո՞ւզն էր ǻսում. չըտը՞վե քե…

/Այ քո տունը շինվի, ծիծաղեց բիձա Սեփանը, իրեն քսմքսվող շանը մի կողմ հրեց, ասաց՝ քո ամուսինը երեկ մի ապարանջան գտավ, ասաց՝ սա իմ կնոջը կլինի, ուրեմն ճիշտ էր ասում, չի՞ տվել քեզ…/

բ՛ըռթել[2], նբ. - կտորների բաժանել.- Մեր Գ՛էվօյ տըղէն հըմընօր քընէլուց հառէչ մէ դօդ մǻծուն էր բ՛ըռթում՝ էնենց, վոր գ՛ըթալը մէչը կǻյնէր, ուտում էր, նոր քընում էր /Մեր Գևոյի տղան ամեն օր քնելուց առաջ մի մեծ աման մածունի մեջ հացը բրդում էր, այնպես, որ գդալը մեջը կանգներ, ուտում էր, նոր քնում/

բ՛ըռթըռտել, նբ. - կտրատել

բ՛ըռթըվուկ,ած. - *անեծք է*

բ՛ըռթըվուկ-կըտըռտըվուկ,ած. - *անեծք է*

բ՛ըռթուճ, գ. - բրդուճ, լավաշի փաթույթ՝ ուտելիքով

բ՛ըռթօտել, չբ. - մազապատվել

բ՛ըռնավոր, գ. - բանտարկյալ

բ՛ըռնել, նբ. - 1.փակել, 2.պատրաստել, 3.արմատակալել, 4.պտղավորվել, 5. պահել.- Մէ ձ՛եռօվ էրկու ձ՛ըմէրուկ ա բ՛ըռնում /Միաժամանակ մի քանի գործ է ձեռնարկում/

բ՛ըռնըպըտել, նբ. - որևէ ակնկալիքով մեկից չհեռանալ

բ՛ըռնըցընել // բ՛ըռնըկցընել, նբ. - հանցանքի վայրում բռնեցնել

բ՛ըռնօթի (թրք.), գ. - քթախոտ

բըռջ//բուռջ (արաբ.), գ. - բուրգ, վեր ցցված վայր

բըռռալ, չբ. - ոչխարի մայունը

բըռվել, չբ. - բանտարկվել

բըսկ,գ. - ոչխարի չխուզած բուրդը.- Մեզի լավ բըսկօվ խինգը խատ օխճար ունինք, խէրըս հըմէն ǻնքամ հǚբրըկօվ կընդում էր, մէրըս բ՛ուռթը տǻնում էր զօլը, քարէրի վըրէն էնքան էր տըփում, մինչեվ լըռիվ մǻքըրվում էր, բ՛էրում էր փըռում էր շըրդին, չօրցընում էր, յետօ յէլ

չըփխում էր, փըմփըխցընում, նոր յօրղան-դօշա̈կ էր կա̈պում, էտենց ջըլէրի մէչը վո՞րը չէր քընի. բ՛այց կէսը պա̈խու յէր կա̈մ ծա̈խու, դ՛առսում էր կա̈ռաֆտի վըրէն, էտենց մընում էր /Մենք առատ բրդով հինգ ոչխար ունեինք, հայրս ամեն անգամ համապատասխան գործիքով խուզում էր, մայրս բուրդը տանում էր մեր լճակ, քարերի վրա այնքան էր հարվածներով լվանում, մինչև լրիվ մաքրվում էր, բերում էր փռում պարանին, չորացնում էր, հետո ճիպոտի հարվածներով ուռեցնում էր, նոր միայն վերմակ-ներքնակ կարում, այդպիսի անկողնում ո՞վ չէր քնի. բայց կեսը պահու էր կամ ծախու, դարսում էր մահճակալի վրա, այդպես մնում էր/

բըստըրէլ, նբ. - հորինել, ցնդաբանել

բ՛ըվալ, չբ. - շարունակ դժգոհել, վատ բաներ գուշակել

բըրօշկա (ռուս.), գ. - մետաղյա զարդ

բ՛ըփուկ, գ. - մեծ փետուր

բ՛ըփռէճ, ած. - զզզված մազեր ունեցող

բ՛ըքառկել - բքի պատճառով ճանապարհի փակվելը

բ՛ըքել // բ՛ուք ա̈նել, չբ. - բուք անել.- Մըկա էլ յե՞փ ա բ՛ուք ա̈նում, լաաա՝ ձ՛ուն կա̈՞, վոր բուք ա̈նա /Այժմ էլ բուք չի անում, մի ասա՛՝ ձյուն կա՞, որ բուք անի/

բ՛ըքըլկել, չբ. - առատ ծուխ արձակել.- Էտ ի՛նչ բ՛ըքըլկել էք բ՛ըքըլկում, ի՞նչ ա հէլէ, դա̈ռղըներըտ շա̈տըցե՞ /Այդ ի՛նչ առատ ծուխ եք հանում, ի՞նչ է եղել, ձեր դարդերը շատացե՞լ են/

բիբար (թրք.), գ. - պղպեղ

բիզ (թրք.), գ. - սրածայր գործիք՝ հերյուն, մախաթ.- Բիզը սըրօղին ա ծակում /Ուրիշի հանդեպ դավ նյութողը ինքը կվնասվի/

բիզ-բիզ, ած. - ցցված (մազեր)

բիթավնալ, չբ. - անշարժանալ /մարմնի մասը/

բիթի հըլնել, նր. - գլխի ընկնել
բիթուն (թրք.), դ. - բոլոր, ամբողջ
բիլա̈զուկ // բըլա̈զուկ (թրք.), գ. - ապարանջան.- Տա̊տիկը պա̊րէլօվ բ՛էրեց, թոռան թեվը մէ բիլա̈զուկ կա̊պեց, թըշերը պա̊չեց, դ՛առցավ մէ նըվէր էլ փէսին տըվեց, ըտու ճա̊կաթն էլ պա̊չեց, մէշօլ պա̊րեց, գ՛ընաց նըստավ հիր տեղը, ուրախութունից սիռտը լըսվավ, լա̈յլըխօվ հա հա̈շկերը սըռփում էր /Տատը պարելով բերեց, թոռան թևին մի ապարանջան կապեց, այտերը համբուրեց, մի նվեր էլ փեսային տվեց, դրա ճակատն էլ համբուրեց, մի քիչ էլ պարեց, գնաց նստեց իր տեղը, ուրախությունից հուզվեց, թաշկինակով աչքերն էր սրբում/
բիլիջի, ած. - շփվող, ասող-խոսող
բիկ, ած. - անհասկացող
բիձա̈, գ. - ծերունի, հորեղբայր.- Բիձա̈ Հայկօն ինըսուն տա̊րէկան ա, բ՛այց էնենց ձ՛ի յա խէզնում, հիրա թայերը ըսկի գ՛էդնի հիրեսը չեն կա̊նում հիրար գ՛ան /Բիձա Հայկոն իննսուն տարեկան է, բայց այնպե՛ս է ձի հեծնում, իր հասակակիցները գետնի երեսին չեն կարողանում տեղաշարժվել/
բիձընալ, չբ. - ծերանալ (տղամարդը).- Հայկօյ խէտ վո̏ըր կա̊նա վոտ թա̈լա, հիրանից տա̊ս տա̊րի պըստըկներըս բիձըցէր ենք, չենք կա̊նում էսատուց հըլնենք նըստենք էնատե /Հայկոյի հետ ո՞վ կարող է ոտք գցել, իրենից տասը տարով փոքրերս ծերացել ենք, չենք կարողանում մի տեղից ելնել մի ուրիշ տեղ նստել/
բ՛իճ (թրք.), գ., ած. - 1.անօրինական զավակ, 2.ճարպիկ.- Ջա̈յէլ գ՛ախ էլ, ա̊սում են, Հայկօն բ՛իճ ա հէլե, վոշ մէկը խէտը թափ չարե /Ջահել ժամանակ էլ, ասում են, Հայկոն ճարպիկ է եղել, ոչ ոք հետը չի կարողացել մրցել/

բ՛իճ բ՛էրել - անօրինական զավակ ունենալ
բինդ (ռուս.), գ. - վիրակապ
բիստ կմյնել, չբ. - ուղիղ և համառ կանգնել, սպասել
բիստի խաղալ, չբ. - մետաղյա ձողերով խաղ խաղալ
բիրդմն մղա դ՛առնալ, չբ. - միանգամից հարստանալ
բիրիք, ած., մկ. - մի անգամից, մեծաքանակ
բ՛ոզ, ած. - անբարոյական
բ՛ոզարած, ած. - կանանց հետ քարշ եկող
բ՛ոզ-պօռնիկ, ած. - անբարոյական /կին/
բ՛ոխկ, գ. - *բույսը*
բոցառք, գ. - նորից բոցավառելը /թոնրի/
բ՛ոցել, նբ. - թոնիրը վառել
բուդ (թրք.), գ. - ազդր.- Նոր տմրուն տէնաս էլի պըտի սմղ խոզի բո՞ւդ մռնեն, դ՛ընեն սեղանին, էս ժօղօվուռթը բըդից յե՞փ կըկըշտընա /Տեսնես ամանորին էլի բոլորը պետք է խոզի ա՞զդր գնեն, դնեն սեղանին, այս ժողովուրդը ազդրից ե՞րբ կկշտանա/
բուզմ բ՛անցըրցընել, չբ. - աղմկել
բուզմա, գ. - հագուստի ծալքերը, որ առաջացնում են մեջքակարի միջի թելով
բուզմել, չբ. - թելը ձգելով՝ ծալքեր առաջացնել, փխբ. շուրթերը իրար վրա հավաքել
բութմ-բութմ, մկ. - կղզյակ-կղզյակ, խումբ-խումբ
բութուլկա (ռուս.), գ. - շիշ
բուղ (թրք.), գ. - գոլորշի
բուղա (թրք.) , գ. - ցուլ
բումբմրմք հըլնել, չբ. - վայելել
բ՛ունուճիկ, գ. - խարխուլ, անշուք հյուղակ
բ՛ուռ, գ. - մի բուռ, բռաչափ.- Մէ բ՛ուռ ժօղօվուռթ ենք մմցե, հիրար չենք խասկընում, սեվ ու սիֆտմկ ենք մնում, մմօթ չէ՞

/Մի բուռ ժողովուրդ ենք մնացել, իրար չենք հասկանում, սև ու սպիտակ ենք անում, ամոթ չէ՞/

բ՛ուռ սիֆտա՛կ, ած. - ամբողջովին սպիտակած /մազերը/

բ՛ուռթ, գ. - բուրդ.- Բուռթը կընդե, խառվե գ՛առնէրին /Տարիքը հաշվի չի առնում, ջահելների հետ խաղ է անում/

բ՛ուռթը քամուն տալ - 1. խիստ պատժել, ունեցվածքը փչացնել, 2. պարտության մատնել.- Հարի՛, հարի՛ բ՛ուռթըտ քամուն տամ, սիֆտըկնէրո՞վ ես խաղում, թէ՞ սեվէրօվ /Ե՛կ, ե՛կ քեզ պարտության մատնեմ, սպիտակներո՞վ ես խաղում, թե՞ սևերով/

բուռմել, նբ. - լավաշ հացի մեջ փաթաթել պանիր կամ այլ ուտեստ

բուռնութի (թրք.), գ. - քթախոտ

բուռում (թրք.), գ.- լավաշի մեջ փաթաթված պանիր կամ այլ ուտեստ.- Մէ բուռում պա̊նիր եմ կէրե, մէ խատ էլ փախլավա, էտ էլ հէլավ հառսանիք էթա՞լ /Պանրով մեկ բրդուճ եմ կերել և մեկ փախլավա, այդ էլ եղավ հարսանիք գնա՞լ/

բուսում (թրք.) **պա̊խել**, չբ. - հսկել, սպասել.- Բուսում պա̊խի, չում խէրը տընից գ՛ընաց, նոր զանգի, խէտը խօսացի /Սպասեցի, մինչև հայրը տնից գնաց, նոր զանգեցի, հետը խոսեցի/

բ՛ուվ (պրսկ.), գ. - բու

բուտկա (ռուս.) , գ. - շարժական կրպակ, տնակ.- Գ՛եղի մէչը մէ բուտկա յա դ՛ըրե, պա̊պիլօզ-մա̊պիլօզ, ծա̊մոն, կա̊նֆեռտ ա ծա̊խում, ձ՛եռը մէ բ՛ան մընում, յեսի՞մ /Գյուղամիջում կրպակ է դրել, սիգարետ, ծամոն, կոնֆետ է վաճառում, ձեռքը մի բան գալիս է՝ ի՛նչ իմանա՞մ/

բ՛ուք ու բօրան (թրք. բօրան՝ փոթորիկ), գ. - ուժեղ բուք

բօբօլաթ, գ. - ուժեղ քամի, պտտահողմ

բօբօլօզ խանել, չբ. - փոշի բարձրացնել

բօզ, գ. - կոկորդ

բօզացավ, գ. - կոկորդի ցավ.- Էնենց մըխտա̈ռ բօզացավ ա, չում չես պա̊րկում, չընսնում /Կոկորդի շատ տհաճ ցավ է, մինչև անկողնով չեսպառկում, չի անցնում/
բօզին չօքել, չբ. - ստիպել, պահանջել
բօղ, ած. - սնամեջ
բօզ (թրք.), ած. - մոխրագույն, գորշ
բօլ (թրք.), ած., մկ. - առատ, բավական
բօլ ու բօլղա̈ն, մկ. - ահագին, բավարար չափով.- Չէ՛, էտ մըխէրից բօլ ու բօլղա̈ն ունեմ, լը պէտկ չէ, վոր պա̊կասութուն ա̊րավ՝ կա̊սեմ /Չէ՛, այդ մեխերից ահագին ունեմ, դեռ պետք չէ, երբ պակասություն արեց, կասեմ/
բօլ-բօլ, մկ. - շատ
բ՛օլըրել, չբ. - հավաքվել, շրջապատել
բօլտ[1] (ռուս.) , գ. - 1.հեղույս, 2.կարտոֆիլի հոր
բօլտ[2], գ. - կարտոֆիլի հոր
բօլօլա ա̊նել, չբ. - ոչնչից մեծ աղմուկ սարքել
բ՛օլոր, մկ. - շուրջը
բ՛օխի, գ. - ուտելի բույս
բօխճա (պրսկ., թրք.) , գ. - կապոց
բօղազ (թրք.) , գ. - կոկորդ
բօղզօվ, ած. - լավ ուտող
բ՛օղօքավոր, ած. - բողոքավոր.- Դ՛ու լը բ՛օղօքավո՞ր ես, ինչ ունէր - չունէր՝ կեր ա̊րավ քեզի /Դու դեռ բողոքո՞ւմ ես, ինչ որ ունէր՝ տվեց քեզ/
բօմբ (ռուս.) , գ. - ռումբ
բօմբ թա̈լել // բօմբել, չբ., նբ. - ռմբակոծել
բօյ (թրք.) , գ. - մարդու մարմնի հասակ.- Բօյն իշխընի, խելքը՝ իշի /Արտաքինը խաբուսիկ է/
բօյ ու բուս // բօյ ու բուսաթ, գ. - հասակ
բօյ քաշել, չբ. - հասակ առնել.- Ախար, ա̊խն ա̊ռէր էր սըռտընէրըս, ա̊սում ինք՝ բը վոր տըղէն էտենց կօլօտ

մընա, դը տըղին կօլօտ մէշու չըսմզում, էն էլ լավ ա՝ էրկու տմրվա մէչը էնենց բօյ քաշեց, վոր ընձընից էլ բօյօվ ա մըկա /Ախր, շատ էինք վախենում, մտածում էինք՝ բա որ տղան այդպես կարճահասակ մնա, դե տղային կարճահասակ լինելը մի քիչ չի սազում, բայց լավ է՝ երկու տարվա մեջ այնպես հասակ առավ, որ հիմա ինձնից էլ բարձրահասակ է/

բօյաբօյ // բօյէբօյ, մկ. - երկայնքով

բօյախանի (թրք.) **կմրաս**, գ. - մեծ տարողություն, անսպառ պահեստ.- Տըղա ջան, խօ մեր տունը բօյախանի կմրաս չէ, վոր հըմէն դմն գ՛աս, ինչ մըտկօվըտ հընցնի՝ տմնես. հարէվա՛ն՝ հազա՛ր հարէվան, շընորքն էլ լավ բ՛ան ա, չէ՞ /Տղա ջան, հո մեր տունը քեզ համար պահեստ չէ՞, որ ամեն անգամ ամեն անգամ գաս, ինչ մտքովդ անցնի, տանես. հասկացանք՝ հարևան ես, բայց շնորհքն էլ լավ բան է, չէ՞/

բօյլուխ (թրք.՝ բօյլու), ած. - բարձրահասակ

բօյխօրուկ - *անեծք է*

բօյօվ // բօյօվ-բուսօվ // բօյօվ-սօյօվ, ած. - բարձրահասակ

բօյօվնալ, չբ. - հասակը աճել

բօնթ քըցել, չբ. - մեծ աղմուկ բարձրացնել

բ՛օնձօ, ած. - փոքր, նիհար /մարդ/

բօշ (թրք.), ած. - պարապ, դատարկ

բօշա, գ. - աներես, պնդերես, թափառական մանրավաճառ.- Բօշէն փաշա չըդ՛առնա /Փոքրոգի մարդը իր բնույթը չի փոխի/

բօշի հիրես ունէնալ - աներես լինել

բօշկա (ռուս.) , գ. - տակառ

բօշութուն, գ. - աներեսություն

բ՛օպիկ, ած. - բոկոտն.- Էտ բ՛օպի՞կ ես ջ՛ուր մնում, վոդներըտ կըպմըղըցընես, բօզերըտ կուռի /Բոբի՞կ ես ջուր անում, ոտքերդ կսառեցնես, կոկորդդ կուռչի/

բ՛օպկընալ , չբ. - բոբիկանալ. - Էնենց լավ ա, ուզում ես՝ դ՛ու յէլ բօպկըցի, վոդներըտ կըդինջընան /Այնքան լավ է, ուզում ես՝ դու էլ բոբիկացիր, ոտքերդ կհանգստանան/
բօջակ (թրք.), ած. - փոքրամարմին
բօռալ, չբ. - գոռալ.- Ջ՛ուրը էս հընչի՞ պըքսավ, մէ բօռա՝ թօ շըտըցընեն /Ինչո՞ւ ջուրը պակասեց, ձայն տուր, թող շատացնեն/
բօռալ - բօռբըռալ // բօռբըռալ, չբ. - գոռգոռալ.- Վայ թէ ջ՛րի վըրէն կըռիվ են ընում, լըսո՞ւմ ես՝ բօռբըռում են, էթա՞մ տէնամ՝ ինչ ա հէլե /Երևի ջրի վրա կռիվ են անում, լսո՞ւմ ես՝ գոռգոռում են, գնա՞մ տեսնեմ՝ ինչ է եղել/
բօռբըռան, ած. - գոռգոռացող.- Գիդո՞ւմ ես՝ էտ բօռբըռան մըռթը վո՛րն ա, հէրէկա կըրմիր շորօվ ըխճըկա խէրն ա, էտի ընդու ձ՛ենն ա /Գիտե՞ս՝ այդ գոռգոռացող մարդը ո՛վ է, երեկվա կարմիր հագուստով աղջկա հայրն է, այդ նրա ձայնն է/
բօռբըռօց, գ. - գոռգոռոց.- Գյ, դ՛ու ջ՛ըրա, լը հըլնեմ տէնամ՝ էտ մըռթը հընչա՞ բօռբըռօցը քըցե /Դու ջրիր, ես ելնեմ տեսնեմ՝ այդ մարդը ինչո՞ւ է գոռգոռում/
բօռօց, գ. - գոռոց.- Լը վազի, էս ի՞նչ բօռօց էր… /Մի վազի՛ր, այս ի՞նչ գօռօց էր…/
բօստան (պրսկ.), գ. - կարտոֆիլի ցանքատարածություն.- Գիդո՞ւմ ես՝ ինչ էր հէլե. էտ քօ ըսուկ կըրմիր շորօվ ըխճիկը էկե բօստան ջ՛ըրէլու, բօստընի մըչից փախծըրած, ըտու խէրն ու տըղի խէրն ին հիրար զընում /Գիտե՞ս՝ ինչ էր եղել. այդ քո ասած երեկվա կարմիր հագուստով աղջիկը եկել է բոստան ջրելու, բոստանի միջից փախցրել են, դրա հայրն ու տղայի հայրն էին կռվում/
բօստան ընել, չբ. - զբաղվել կարտոֆիլի մշակությամբ.- Տօ լավ էլ ըրած, ըսա՝ ըխճի՛կն ինչ, բօստան ընե՛լն ինչ… չընայած՝ էտ մըռթը խիվընդոտ ա, տըղա յէլ չունի /Տո,

լավ էլ արել են, աստ՝ աղջիկն ինչ, բոստանում աշխատելն ինչ… չնայած՝ այդ մարդը հիվանդոտ է, տղա էլ չունի/

բոստընչի (պրսկ., թրք.), գ., ած. - բոստանները հսկող

բօվանդա, ած. - անգործ թափառող

բ՛օրակ, ած. - աղի

բօրանի, գ. - բազուկի ցողուններից պատրաստվող կերակուր

բ՛օրբ՛ըքնել, նբ. - կրակը բորբոքել

բօր ու բօստան, գ. - հողամաս, կարտոֆիլի և այլ ցանքատարածություններ

բ՛օփօլ գ՛ըլօխ, ած. - առատ մազեր ունեցող

բօքոն, գ. - երկար ձև ունեցող հաց.- Մէրըս վոր խացի յէր հըլնում, մէ քանի խատ էլ բօքոն էր թըխում, տո՛ք-տո՛ք բ՛ըռթում ինք ջ՛ոչ սուլբըկի մէչը, յեղ ինք դ՛ընում, վըրէն պիսօք ինք ցանում, սո՛րքում ինք ճըմուռ, ուտում ինք, էնենց խամօ՛վ էր /Երբ մայրս հացի էր լինում, մի քանի հատ էլ բոքոն էր թխում, բրդում էինք խորը և մեծ ափսեի մեջ, յուղ էինք դնում, վրան շաքարավազ էինք ցանում, սարքում էինք ճմուռ և ուտում. այնքա՜ն համեղ էր/

Գ

գա՛ // գա՛դա՛ (թրք.) - տղա /դիմելաբառ/

գա՛գա՛յիչ հ՛ընգընել, չբ. - ծամածռություններով մեկին անընդհատ բարկացնել, հոգու հետ խաղալ

գա՛դա՛-գուդա՛, գ. - ինչ-որ տղաներ

գա՛դա՛վարի, մկ. - տղայի պես

գազ, գ. - փշոտ, դյուրավառ բույս

գա՛զ (պրսկ.) , գ. - երկարության չափ

գա՛գա՛գա՛ն, մկ. - թրև եկող

գ՛ազան, գ. - 1. գազան, 2. ուժեղ, բարկ, թունդ

գ՛ազանավարի, մկ. - գազանաբար, կոպտորեն
գӓզӓր (պրսկ.) , գ. - բույսը
գ՛ազըզնել, չբ.   - գազազել
գ՛աթա, գ. - թխվածք.- Կըռվի մէչը գաթա-հալվա չեն բ՛աժնում /Կռվի մեջ կարող են վնասվածք էլ ստանալ/
գ՛ալ[1], գ. - բույսերի հյուս
գ՛ալ[2]**,** ած. - եկող, գալիք, առաջիկա
գӓլӓջի, գ. - զրույց
գӓլӓջի ӓնել, չբ.   - զրուցել
գ՛ալել, նբ. - բույսերը հյուսել չորացնելու համար
գ՛ալըստուկ (ռուս.) , գ. - փողկապ
գ՛ալըստուկավոր, ած. - փողկապավոր
գ՛ալիք, գ. - փորձություն.- Մӓռթ ի՛նչ գիդա հիր գ՛ըլխի գ՛ալիքը /Մարդ ի՛նչ իմանա, թե ինչ փորձություն է իրեն սպասվում/
գալիֆէ (ռուս.), գ. - շալվարի տեսակ
գ՛ալտӧրի // գ՛ալօղ տӧրի // գ՛ալիք տӧրի, գ. - եկող տարի.- Գ՛ալտӧրի էլ էս բօստանը չեմ ցանի, թօ մէ տӧրի հանգըստանա /Եկող տարի այս բոստանը չեմ ցանի, թող մեկ տարի հանգստանա/
գալօփ (ռուս.), գ. - ձիու քառատրոփը
գ՛ախ (պրսկ.), գ. - ժամանակ.- Գ՛էտը հըմէն գ՛ախ գ՛էրան չըբ՛էրա /Ամեն անգամ հաջողություն չի լինի/
գ՛ախ-գ՛ախ, մկ. - ժամանակ առ ժամանակ.- Խաշը վոր դ՛ըրիր վըրէն, չըպըտի հանգիստ չուր լուս քընես, գ՛ախ-գ՛ախ պըտի հըլնես, հիշկաս, շըթաֆես /Խաշը որ դրեցիր օջախին, չպետք է մինչև լույս հանգիստ քնես, ժամանակ առ ժամանակ պետք է ելնես, նայես, հոգ տանես/
գ՛ախէն // գ՛ախուց, մկ. - ի սկզբանե
գ՛ախի բէ գ՛ախի, մկ. - պատեհ-անպատեհ
գ՛ախին, մկ. - ժամանակին

գ՛ախօվ, մկ. - ոչ ուշ.- Գ՛ախօվ գ՛ըքաս, տեղ ենք էթում /Ժամանակին կգաս, տեղ ենք գնում/

գա̈մ (թրք.), գ. - սանձ

գա̈մել, նբ. - սանձել

գա̈մերը թօղել - ազատ թողնել, չկառավարել

գա̈մերը քաշել - սանձել, զսպել

գայկա (ռուս.), գ. - պտուտակ

գ՛անգատ ա̊նել, չբ. - գանգատվել.- Էկէր ես, գ՛անգատ ես ա̊նում՝ վոր ի՛նչ. յես քե քանի դա̈ն ա̊սի՝ ըտուց յեռու մա̊ց, էտի չար, նա̊խանձ, սութասան, սըռփութուն չունէցօղ մա̊ռթ ա, ի՛նչ մա̊ռթ, էտի մա̊ռթ չէ, թէ ի՞մալ խելքըտ կէրավ, չեմ խասկընում /Եկել ես, գանգատվում ես՝ որ ի՛նչ. ես քեզ քանի անգամ ասացի՝ դրանից հեռու մնա, դա չար, նախանձ, սուտասան, սրբություն չունեցող մարդ է, ի՛նչ մարդ, դա մարդ չէ, թե ինչպե՞ս քեզ հիմարացրեց, չեմ հասկանում/

գ՛անգատավոր // գ՛անգըտվոր, ած. - դժգոհ, բողոքող.- Հառչի մա̊ռթիցտ էլ իր գ՛անգըտվոր, բ՛այց էնի զօնէ քե չէր տըփում, վոնչ էլ վոսկիներտ էր ծա̊խում, տա̊լում խըմէլու /Նախորդ ամուսնուցդ էլ էիր դժգոհ, բայց նա զոնե քեզ չէր ծեծում, ոսկեղենդ չէր վաճառում, տալիս հարբելու/

գ՛անգըտբ՛էրան, ած. - անընդհատ բողոքող

գ՛անգըտել, չբ. - գանգատվել.- Ի՛նչ ասեմ, քօ բա̈խտը քօ խէտ ա. ի՛նչ մա̊ռթ ա̊ռար՝ բըռա̈կ դ՛ուս էկավ, գ՛անգըտում ես էլ՝ ա̊սում են՝ գ՛անգըտբ՛էրան ա. յեսիմ, է՛, հա̈լբա̈թ ա̊սված մէ լուս կա̊նա /Ինչ ասեմ, այդպիսին է քո ճակատագիրը. ո՛ւմ հետ ամուսնացար՝ անպետք դուրս եկավ, գանգատվում ես էլ՝ ասում են՝ բողոքավոր է. չգիտեմ, է՛, երևի աստված մի լույս կանի/

գ՛առ, գ. - 1. գառ, 2. փոքրերին դիմելու փաղաքշական բառ
գառանավարի, մկ. - վայրենու պես, անփութորեն
գառանի, ած. - վայրենի, անփույթ
գա̈ռդա̈ն (պրսկ.), գ. - վիզ
գառդիրօվկա (ռուս.), գ. - պահարան.- Չընայած՝ իմալ քըցում եմ բ՛ըռնում եմ՝ ծ̈սում եմ՝ վի՞րն ա խանած դ՛ըրած գառդիրօվկի գ՛ըլխին /Չնայած, որքան ծանր ու թեթև եմ անում, ասում եմ՝ ո՞ւմ են մեծ պատվի արժանացրել/
գ՛առը գ՛իլին պա̈խ տալ - մի բան անվստահելի մարդու պահ տալ.- Բ՛այց վոր խէրըտ քե տըվեց ըտուն, յես ծ̈սի՝ սեվ գ՛ա խելքիտ, գ՛առը գ՛իլին պա̈խ տըվեց /Բայց երբ հայրդ քեզ ամուսնացրեց դրա հետ, ես ասացի՝ անխելք մարդ, գառը գայլին պահ տվեցիր/
գ՛առնարած, գ. - գառնարած
գա̈վա̈զություն ա̈նել, չբ.   - շատախոսել, ջրիկանալ
գ՛ավ (պրսկ.), գ. - կավից ջրաման, կուլա, գինու փարչ
գարաժ (ռուս.), գ. - ավտոտնակ
գ՛արի քըցել, չբ.   - գուշակություն անել գարիով
գ՛ափառ, գ. - վիզ
գ՛աքատ, գ. -   գլխի վերին մասը
գ՛եղ, գ. - գյուղ.- Էկավ ծ̈սավ՝ ա̈նշուն գ՛եղ ա մըտե, ա̈նփէդ մա̈ն ա գ՛ալում /Եկավ ասաց՝ հսկող չկա, ինչ ուզում՝ անում է/
գ՛եղ տեղ, մկ. - գյուղական վայր
գ՛եղախըռիկ, մկ. - ողջ գյուղով
գ՛եղավարի, մկ. - գյուղավարի, բարբառով
գ՛եղավըրա̈, մկ. - առանց խոսակցի անունը տալու խոսելը, կողմնակիորեն.- Մեր խառսը գ՛եղավըրա̈ յա խօսում, մա̈մա, պա̈պա ասել չկա /Մեր հարսը առանց անունը տալու է խոսում, մայրիկ, հայրիկ ասել չկա/
գ՛եղացի, գ. - գյուղացի
գ՛եղի բ՛էրանն հընգնել - դառնալ խոսակցության առարկա

գ՛եղի մէչ, գ. - գյուղամեջ

գ՛եղօվի, մկ. - բոլոր գյուղացիներով.- Գ՛եղօվի հընչէ՞ք հէլե էկե, յես ձ՛ե դո՞ր տեղավորեմ /Ամբողջ գյուղով ինչո՞ւ եք ելել, եկել, ես ձեզ ո՞րտեղ տեղավորեմ/

գ՛եստ, գ. - զգեստ

գ՛եստ մըղնել, չբ. - գեղեցիկ հագնվել.- Էտ հընչե՞ս էտենց գ՛եստ մըտե, դո՞ր ես էթում. թէ՞ տունը մ՛առթ ա գ՛ալում /Ինչո՞ւ ես այդպես գեղեցիկ հագնվել, ո՞ւր ես գնում. թե՞ հյուր ունենք/

գ՛էղնախընձոր, գ. - բույս է

գ՛էղնել, նբ. - վայր գցել, տապալել

գէժ // գիժ (պըսկ.), ած. - խելագար, գիժ

գէժ-գէժ // գէժէգէժ, մկ. - հիմար-հիմար

գէժդյ՛անգէժ խօսալ, չբ. - անհեթեթ, անկապ բաներ ասել.- Բօլ ա գէժդյ՛անգէժ խօսաս, զ՛այլէտ չունեմ /Հերիք է՝ անկապ բաներ ասես, հավեսդ չունեմ/

գէժէգէժ, մկ. - հիմարի պես

գէժըռել, չբ. - շշմել, հոգնել

գէժըռցընել, նբ. - ձանձրացնել, շշմեցնել.- Էնքան խօսաց, գէժըռցըրեց, խելքըս մ՛աղեց, հազիվ մէ ՛աթօռ գ՛ըթա, նըստա /Այնքան խոսեց՝ շշմեցրեց, գլխապտույտ ունեցա, հազիվ մի աթոռ գտա, նստեցի/

գէժուսուլ // գէժասուլ, ած. - գժի նման, հիմար

գ՛էլ, գ. - գայլ.- Գ՛առ ու գ՛էլ հիրար խէտ ՛արածում են /Համերաշխու-թյուն է տիրում/

գ՛էլ ու գ՛ազան, ած. - անհաշտ, կռվարար.- Ի՛նչ գիդինք, վոր էտի գ՛էլ ու գ՛ազան էր /Ի՛նչ իմանայինք, որ դա կռվարար է/

գ՛էլխեխտ, ած. - գայլ խեղդող

գ՛էլփոր, ած. - շատակեր

գ՛էշ, ած. - տգեղ

գ՛էշանոց, գ. - որտեղ տգեղներ շատ կան

գ՛էշ-գ՛էշ, ած. - տգեղ-տգեղ

գ՛էշընալ, չբ. - տգեղանալ

գ՛էտըստանք, գ. - գետին.- Գ՛էտըստանքի խէտ ա խօսում /Գլուխը միշտ կախ զգած է քայլում/

գ՛էտին, գ. - գետին.- Տ՚աշուկ քարը գ՛էղնին չըմընա /Արժանավորը իր տեղը կգտնի/

գ՛էտինը մըղնել, չբ. - ամաչել. *նախատինք*

գ՛էտնել, նբ. - հակառակորդին գետնին զցել

գ՛էտնի հիրեւ, գ. - գետնի վրա.- Ինշքան գէղնի հիրեւն ա, էրկու էտքան գէղնի տ՛ագն ա /*Ասվում է կարճահասակ և խորամանկ մարդկանց մասին*/

գ՛էրան, գ. - Ըտոնց մ՛ազն ուտօղը գ՛էրան կըքաքա /Պետք չէ դրանց օգնությունը ընդունել/

գ՛էրէզմըներ, գ. - գերեզմանոց

գ՛էրընդի քաշել, չբ. - հնձել.- Նեղի տ՛արի յէր, ի՛նչ անինք, պըտի յօլա էթինք. յես ու քուրըս հէլանք, գ՛ացինք կօլխօզի հառտը, էս քուրըս ըսկըսեց քաղել, յես էլ հավքում ի. քուրըս տըղամ՛առթանակ էնենց գ՛էրընդի յէր քաշում վոր… /Նեղության տարի էր, ի՛նչ անեինք, պիտի գոյատևեինք. ես ու քույրս ելանք, գնացինք կոլտնտեսության արտը, քույրս սկսեց քաղել, ես էլ հավաքում էի. քույրս տղամարդավարի այնպես էր գերանդիով հնձում որ…/

գ՛էրի գ՛ըրվել, չբ. - կամավոր մեկի կամքին հնազանդվել.- Ն՛ախակէն էկավ, ըսկըսեց բօռբըռալ. վա՛յ, քուր ջան, զուր քըշեց ըտու վըրէն, ՛ասավ՝ գընա՛, քօ էսենց էնենցը, քեզի խօ գ՛էրի չե՛նք գ՛ըրվե, թող գ՛ընա՛, թէ չէ փոռըտ կըթափեմ, ի՛նչ անենք, թօղենք ՛անասունը խատի՞ /Նախագահը եկավ, սկսեց գոռգոռալ, վա՛յ, քույր ջան, վրա քշեց, հայհոյեց, ասաց՝ հո կամավոր քո գերին չե՞նք դարձել, թող գնա, թե չէ փորդ կպատռեմ, ի՛նչ անենք, թողնենք անասունները սատկե՞ն/

գ՛ըզգ՛ըզել, նբ. - պատառոտել, զզզզել.- Էս նմխակէն մէ գ՛ըզգ՛ըզուկ թաշկինակ ջիբից խանեց, քըռտինքը սըրփեց, ֆըռաց ու գ՛նաց, մենք էլ խոտը բ՛առցինք տէքմ֊րըս տըղի գըռուզավիկը, բ՛էրինք /Այս նախագահը գրպանից մի պատառոտված թաշկինակ հանեց, քրտինքը սրբեց, շուռ եկավ ու գնաց, մենք էլ խոտը բարձեցինք տեգորս տղայի բեռնատարը, բերեցինք/

գ՛ըզգ՛ըզնուկ, ած. - զզզզված

գ՛ըզիկը խանել - զզզզել, ավերել, փչացնել

գ՛ըթածուրիկ, ած. - գտած

գ՛ըթէլ // գ՛ըթալ, գ. - գդալ.- Գ՛ըթէլ-գ՛ըթէլ ժօղեց, շէրեփ-շէրեփ ցըրվեց /Մեծ դժվարությամբ ձեռք բերածից հեշտությամբ բաժանվեց/

գ՛ըթլել, նբ. - գդալով արագ ուտել

գըժանակ, մկ. - գժի նման

գըժանոց, գ. - գժանոց

գըժգըժնօտել // գըժըժնօտել, չբ. - զայրանալ

գըժգըժցընել, նբ. - զայրացնել

գըժութուն, գ. - գժություն

գըժվել, չբ. - գժվել

գըժվըցընել, նբ. - հոգու հետ խաղալ, խենթացնել

գըլգըլալ, չբ. - խոխոջել

գըլգըլալէն, դբ. - գլգլալով

գըլգըլան, ած. - խոխոջուն

գըլըլել, չբ. - պտղի ձևավորվելը

գըլթըգվորել, չբ. - հպարտ ու անհաղորդ կեցվածք ընդունել

գըլթիկ, գ. - ծնոտի տակի փափուկ միսը

գըլթիկ տալ, չբ. - հպարտ կեցվածք ընդունել՝ գլուխը բարձր պահելով և կրկնակզակը ընդգծելով

գ՛ըլխակեր, ած. - ուրիշներին կորուստի մատնող

գ՛ըլխամեռ, ած. - մեռնելու արժանի

գ՛ըլխանի, ած. - գլուխ ունեցող (էրկու գ՛ըլխանի)

գ՛ըլխանց, մկ. - նախօրոք, ի սկզբանե

գ՛ըլխաշոր, գ. - կանանց գլուխը կապելու լաթ
գ՛ըլխապընդել, չբ. - մեկ անգամ ևս ամրապնդել, հաստատել
գ՛ըլխառադ ա՛նել, նբ. - գործը անփույթ և արագ անել-վերջացնել
գ՛ըլխացավանք, գ. - տհաճ հոգս, պատուհաս
գ՛ըլխել, նբ. - 1.լիքը լցնել, 2.գլխով հարվածել գնդակին
գ՛ըլխէ դ՛ուս, մկ. - 1.հիմար-հիմար, 2.չափից շատ
գ՛ըլխէ խանել, նբ. - այդ մասին մոռանալ
գ՛ըլխէգ՛ըլօխ, մկ. - ծայրից ծայր, լիքը
գ՛ըլխըվեր, մկ. - զառիվայր
գ՛ըլխըվըրել, չբ. - ներքև իջնել
գ՛ըլխի գ՛ալիք, գ. - հետը կատարվելիք.- Մա՛րթ ի՛նչ գիդա հիր գ՛ըլխի գ՛ալիքը /Որևէ մեկը չի կարող իմանալ իր հետ կատարվելիքը/
գ՛ըլխի գ՛ալուկ, գ. - հետը կատարված տհաճ դեպքեր
գ՛ըլխի հընգնել, նբ. - կռահել
գ՛ըլխի ճա՛րը տէնալ, չբ. - ելքը գտնել
գ՛ըլխի վիրեվը, մկ. - գլխավերև
գ՛ըլխի տա՛կը կա՛կուղ բ՛առց դ՛ընել - սուտ հույսերով խաբել
գ՛ըլխի քըցել, նբ. - հասկացնել
գ՛ըլխին դ՛ընել ֆըռալ - շատ սիրել, տեղ տալ, մեծ հարգանք ցուցաբերել
գ՛ըլխին թափել, չբ. - վրան հավաքվել
գ՛ըլխին խաղ խաղալ - փորձանքի մեջ գցել
գ՛ըլխին կա՛յնել, չբ. - վերահսկել.- Տունը վոր գ՛ոռծ ա՛նօղ ես բ՛էրում, պըտի գ՛ըլխընէրին կա՛յնես, թէ չէ գ՛ըլխառադ կա՛նեն, կըթօղեն կէթան /Եթե գործ անող ես տուն բերում, պետք է վերահսկես, թե չէ անփույթ գործ կանեն, կթողնեն կգնան/
գ՛ըլխին կըրակ մա՛ղել - դառը կսկիծ ունենալ
գ՛ըլխին ձ՛ուն գ՛ալ - մեծ փորձանքի ենթարկվել
գ՛ըլխին նա՛ղըլ կա՛ռթալ - անիմաստ խրատել

գ՛ըլխին նըստել, չբ.   - ենթարկել, կառավարել
գ՛ըլխին շ՛ան օյին դ՛ընել - խիստ կշտամբել, նախատել
գ՛ըլխին սա՛րքել, չբ.   - զուր տեղը մեղքը բարդել մեկի վրա
գ՛ըլխին տալ, չբ.   - փոշմանել
գ՛ըլխին տեղ ա՛նել - տեղավորվել, աշխատանք ունենալ.- Օրական մէ բ՛ան մօկօնում, իմալ ա՛սում՝ գ՛ըլխին տեղ ա՛րե, մըկա յէլ վողնէրին ա տեղ ա՛նում /Օրական մի բան հորինում է, ինչպես ասում են՝ տեղավորվել է քիչ չէ, պահանջներ է ներկայացնում/
գ՛ըլխին քար ա՛ղալ - նախատել, կշտամբել.- Խաբեց ա՛սավ՝ խէլօք ա՛խճիկ ա, գ՛ըլխին քար ա՛ղաս՝ չըդ՛առնա, պա՛դասխան չիտա, բը հո՞ւր ա, հընչի՞ էտենց չէ /Խաբեց ասաց՝ համեստ աղջիկ է, ինչքան նախատես, շուռ չի գա, պատասխան չի տա, բա ո՞ւր է, ինչո՞ւ այդպես չէ/
գ՛ըլխին քար թափել - ծանր կսկիծ ունենալ
գ՛ըլխին օյին խաղալ // գ՛ըլխին խաղ խաղալ - փորձանքի հանդիպեցնել
գ՛ըլխից դ՛ուս, մկ. - անչափ, անսահման
գ՛ըլխից դ՛ուս տալ, չբ.   - անմիտ խոսել
գ՛ըլխից թըռնել, չբ. - 1.մոռանալ, 2.մեկին հանիրավի շրջանցել.- Խեխճ մա՛ռթը էկավ, խընթըրեց, վոր հիրա տըղին օքտեմ, ըըռտանց խօստացա, բ՛այց գ՛ացինք խասանք ընդե, գ՛ըլխիցըս թըռավ, ինչօր վոնչ խընթըրուկ հըլնէր, վոնչ խօստացուկ հըլնի, թէ ինչ կա՛տարվավ՝ չեմ գիդում. սա՛ղին օքտի, ըտուն ըսկի չըմօտկըցա /Խեղճ մարդը եկավ, խնդրեց, որ իր տղային օգնեմ, սրտանց խոստացա, բայց գնացինք տեղ հասանք, մոռացա, կարծես ոչ խնդրել էր, ոչ էլ խոստացել էի, թե ինչ կատարվեց՝ չգիտեմ. Բոլորին օգնեցի, դրան բոլորովին չմոտեցա/
գ՛ըլխից խանել, նբ. - 1.հորինել, 2.մոռացության տալ

գ՛ըլխից հընցնել, չբ. - հաշվի չառնել, շրջանցել
գ՛ըլխից ձ՛եռ քաշել, չբ. - բնավ չվախենալ
գ՛ըլխից ցըրել, նբ. - իր վրա պատասխանատվություն չվերցնել
գ՛ըլխու // գ՛ըլխի հըլնել, նբ. - հասկանալ
գ՛ըլխու // գ՛ըլխի հընգընել, նբ. - կռահել
գ՛ըլխօվ, ած. - գիտուն, խելացի
գ՛ըլխօվ ա՛նել, չբ. - 1.համաձայնության նշան ցույց տալ, 2. ինչ-որ բան հասկացնել
գ՛ըլխօվ հընսնել, չբ. - 1.հետը կատարվել, 2.մտքով անցնել
գ՛ըլխօվ-ա՛րեվօվ յեռթըվալ - մեկին շատ հարգել
գըլորգընդի, մկ. - գլորվելով.- Վոր հըլնում ինք Պա՛ռվի վանք, մեր Էդօյ վոտը թա՛լեց, գըլօրգընդի յա՛քա հիչավ, վախէցանք՝ մէ բ՛ան չըլնի՞ հանգառծ, էն էլ լավ ա՝ միյնա՛կ չօքերն էր քէռծըվե, մէշու ա՛րընէր էր /Երբ բարձրանում էինք Պառավի Իլիկավանք, մեր Էդոն սայթաքեց, գլորվելով ահագին իջավ, վախեցանք՝ հանկարծ մի բան չլինի՞, բայց լավ էր՝ միայն ծնկներն էին քերծվել, մի քիչ արյունել էին/
գըլվըլալ, չբ. - գլորվել
գըլվըլիկ, գ. - մետաղյա ձողից պատրաստված, ակերով ընթացող խաղալիք-հարմարանք
գըլուլ, գ. - վայրի ոլոռ
գըլուլ-գըլուլ, մկ. - արցունքի կաթիլների առատ թափվելը
գ՛ըլօխ, գ. - գլուխ.- Դուզը խօսօղի գ՛ըլօխը ծակ ա /Ճիշտ խոսողին չեն սիրում/
գ՛ըլօխ բ՛էրել, նբ. - 1.իրականացնել, 2. հաջողություն բերել.- Վոր դ՛ու կա՛նաս էտ գ՛ոռծը գ՛ըլօխ բ՛էրես, ուրեմ յա՛քա մա՛ռթ ես /Եթե դու կարողանաս այդ գործը իրականացնել, ուրեմն կարգին մարդ ես/
գ՛ըլօխ բ՛ըռնել, չբ. - հողի մեջ բույսի պտղի ձևավորվելը
գ՛ըլօխ գ՛ալ, չբ. - իրականանալ
գ՛ըլօխ գ՛ըլխի, մկ. - կողք կողքի, միացած

գ՛ըլօխ գ՛ըլխի տալ, չբ. - զրուցել, խորհրդակցել.- Բ՛այց ամօթ ա, է՛լի, տըղամա՛ռթը բ՛ամփասա՞նք կ՛նա. էտ էրկուսը դոր հըլնեն, մէկ էլ տէնաս՝ գ՛լօխ գըլխի յէն տա՛լում, փըսփըսում, խըլղի վըրէն խընդում… /Բայց ամոթ է, է՛լի, տղամարդը բամբասա՞նք կանի. այդ երկուսը ուր լինեն, մեկ էլ տեսնես՝ զրուցում են, փսփսում, ուրիշների վրա ծիծաղում/

գ՛ըլօխ գ՛օվալ, չբ. - պարծենալ

գ՛ըլօխ դ՛ընել, չբ. - վիճաբանել

գ՛ըլօխ խանել, չբ. - հասկանալ, գլուխ հանել.- Ըտուց վո՞րն ա գ՛ըլօխ խանում /Դրան ո՞վ է հասկանում/

գ՛ըլօխ պ՛ախել, չբ. - գործից խուսափել

գ՛ըլօխ պ՛անիր, գ. - պանրի ամբողջական ձև

գ՛ըլօխ սոխ, գ. - հողից հանվող սոխը

գ՛ըլօխ վէռցել, չբ. - ըմբոստանալ

գ՛ըլօխ տ՛անել- ձանձրացնել

գ՛ըլօխ տալ, չբ. - բարևել

գ՛ըլօխ տընգել, չբ. - ըմբոստանալ

գ՛ըլօխբ՛ աց, մկ. - գլխաբաց

գ՛ըլօխգ՛օվան, ած. - պարծենկոտ

գ՛ըլօխը բ՛աց, մկ. - գլխաբաց

գ՛ըլօխը բ՛ացել, նբ. -գլխաշորը կամ գլխարկը հանել

գ՛ըլօխը բ՛ացել // գ՛ըլօխը ճըղել - գլխի վրա պատռվածք առաջացնել

գ՛ըլօխը գ՛ալ, չբ. - կատարվել իր հետ /վատ բան/.- Ինշքան խըլղի վըրէն ծըղզացէր եմ՝ էկե գ՛ըլօխըս, մըկա խասկըցէր եմ, վոր պէտկ չէ հուրիշի վըրէն ծըղզալ /Ինչքան ուրիշի վրա չարախնդացել եմ, նույն բանը կատարվել է ինձ հետ, հիմա հասկացել եմ, որ պետք չէ չարախնդալ/

գ՛ըլօխը թըռցընել - գլխատել

գ՛ըլօխը լըվալ, չբ. - գերազանցել /վատ իմաստով/

գ՛ըլօխը խառն հըլնել - շատ զբաղված լինել

գ՛ըլօխը խելք հավքել - խելքի գալ.- Տըղա՛ ջան, գ՛ըլօխըտ խելք հավքա, հըմէն էլ մ՛առդ են, դ՛ու խըլղին լավ ու վատ մի՛ ՛ասա /Տղա ջան, խելքի արի, բոլորն էլ մարդ են, դու ուրիշին մի քննադատի՛ր/

գ՛ըլօխը կ՛ախ, մկ. - 1.գլուխը խոնարհած, ամոթահար 2.ուրիշների գործերին չխառնվելով

գ՛ըլօխը կ՛ախել, չբ. - ամաչել

գ՛ըլօխը կըպել, չբ. - զարմանալ

գ՛ըլօխը մըղնել - վերջապես հասկանալ

գ՛ըլօխը մըտցընել - 1.հասկացնել, 2.ինքն իրեն որոշել

գ՛ըլօխը պ՛ախել, չբ. - մի կերպ յոլա գնալ

գ՛ըլօխը պ՛այթել, չբ. - գլուխը ուժեղ ցավել

գ՛ըլօխը պըտըտել, չբ. - գլխապտույտ զգալ

գ՛ըլօխը ս՛արքել - մազերը կտրել /տղամարդու/.- Հէսօր գ՛ըլօխըտ կըս՛արքես, ՛ամօթ ա, տեղ ենք էթում /Այսօր մազերդ կկտրես, ամոթ է, տեղ ենք գնալու/

գ՛ըլօխը վէրցել էթալ, չբ. - հեռանալ

գ՛ըլօխը տըփել, չբ. - կատարվածի համար շատ ցավել

գ՛ըլօխը քաշել, նբ. - խմել

գ՛ըլօխը քոր գ՛ալ, չբ. - պատժի ենթակա վտանգավոր բան ձեռնարկել

գ՛ըլօխը քօրէլու գ՛ախ չունէնալ - խիստ զբաղված լինել

գ՛ըլօխկօնձի տալ, չբ. - գլխիվայր շրջվել

գ՛ըլօխն ՛առնել էթալ//փախնել, չբ. - թողնել հեռանալ

գ՛ըլօխն ՛առնել հառիքը - գոռոզանալ

գ՛ըլօխն ուռել, չբ. - մտավոր հոգնություն զգալ, ձանձրանալ

գ՛ըլօխն ուտել - կործանել, մահվան պատճառ դառնալ

գ՛ըխալ, չբ. - չարակամել

գ՛ըխկըմել, չբ. - խոնավությունից փափկել

գըխտալ, չբ. - գկռտալ

գըղալ, չբ. - մանկան ձայն հանելը

գըղգըղալ, չբ.   - 1.դայլայլել, 2. մի բանում առաջընթացի սկսվելը
գըմալ, չբ.   - խուլ ու միալար ձայն արձակել
գըմել, չբ.   - պահվել, թաքնվել
գըմոց, գ. - խուլ ու միալար ձայն
գըմփալ , չբ. - 1.ընկնել և հարվածի ձայն հանել, 2. պայթել
գըմփգըմփալ, չբ.   - պայթյունի ձայներ արձակել
գըմփըռ, ած. - գիրուկ
գըմփիկ, գ. - խաղալիք պայթուցիկ
գըմփոց, գ. - պայթյունի ձայն
գ՛ընա գ՛ալում եմ - *Հիացմունքը հաստատող արտահայտություն է* .- Էնենց մէ ջ՛ոչ տուն ա սա՛րքե՝ գ՛ընա գ՛ալում եմ /Այնպիսի մեծ մի տուն է կառուցել, որ ասելու չէ/
գ՛ընդել, նբ. - գնդել, խմորից գնդեր շինել
գ՛ընդըվել // գ՛ընդընալ, չբ.   - անշարժանալ, քայլել չկարողանալ
գ՛ընձակ, գ. - ավելի պոչի հանգույցը՝ ա՛վլի գ՛ընձակ
գընջի, գ. - դմակին, ոտքերին կպած կոշտացած թրիք
գընջոտ, ած. - կեխտոտ
գ՛ըշերախան // գ՛ըշերախառը, մկ. - վաղ առավոտյան, դեռ լույսը չբացված
գ՛ըշերանց, մկ. - գիշեր ժամանակ
գըռ, գ. - ջրջրոտ քոս
գըռ մըղնել, չբ.   - իրար չսիրել, շարունակ վիճել
գըռալ, չբ.   - ամպերի գոռալը
գըռան - գըմփան, ած. - լիառատ, հարուստ.- Լավ տըղա, գըռան - գըմփան տուն՝ էլ ի՞նչ ա ուզածըտ /Լավ տղա է, տունն էլ՝ հարուստ, էլ ի՞նչ ես ուզում/
գըռգըռալ, չբ.   - ամպերի գոռգոռալը
գըռղաբը հընգնել - տնօրինության տակ լինել.- Վոր հընգար ըտու գըռղաբը, էլ քե պըռծում չըկա /Եթե ընկար դրա տնօրինության տակ, էլ քեզ փրկություն չկա/
գըռղաբըռ, գ. - մեծ սղոց
գըռզըմոտ, ած. - անհարթ առարկա, հիմնականում՝ քար

գըռըթըփ, մկ. - թափով, հախուռն.- Գըռըթըփ էկան լըսվան, էլ վո՞րը կնռցավ մէ բ՛ան ն՛սէր /Հախուռն եկան լցվեցին, որևէ մեկը չկարողացավ մի բան ասել/

գըռըշտել, նբ. - հրել.- Խէլօք նըստի տեղըտ, բօլ ա գըռըշտես, տէնում ես՝ գ՛ոռծ եմ ն՛նում /Խելոք նստիր տեղդ, հերիք է հրես, տեսնում ես՝ գործ եմ անում/

գըռըցընել, նբ. - թափով լցնել, դատարկել.- Էտենց կնռտօլը մի՛ գըռըցըրա մէշօքը, կըջ՛առթի /Կարտոֆիլը այդպես թափով մի՛ լցրու պարկի մեջ, կջարդվի/

գ՛ըռթան, գ. - թուխս.- Տէնո՞ւմ ես՝ իմալ ա գ՛ըռթանը կնդվին լ՛րում /Տեսնո՞ւմ ես՝ ինչպես է թուխսը կատվին հետապնդում/

գըռխուտ, ա՛. - փսլնքոտ.- Էտա մեր գըռխուտ ճիժը գ՛ըռթընի չափ էլ չըկա, կնտուն խացը ձ՛եռից թըռցըրեց տ՛րավ /Մեր այդ փսլնքոտ երեխան թխսկանի չափ էլ չկա, կատուն հացը ձեռքից թռցրեց տարավ/

գ՛ըռթալ, չբ. - թուխսի ձայն հանել.- Էտի էն խա՞վն ա, վոր ն՛սում իր՝ գ՛ըռթում /Դա այն հա՞վն է, որ ասում էիր՝ թուխսի ձայն է հանում/

գ՛ըռթան, գ. - թուխս.- Խա, բը էտի յա, վոր մըկա գ՛ըռթան ա /Այո, հենց դա է, վոր այժմ թուխս է/

գըռմըռալ, չբ. - շան գռմռալը.- Յա՛, հէտա ձեր դ՛ն՛նդ՛ն շունն էլ գ'ըլխի հընգավ, վոր հ՛յ՛թը կնտու յա ֆըռֆըռում, ըսկըսեց գըռմըռալ /Ահա ձեր ծանրակշիռ շունն էլ գլխի ընկավ, որ բակում կատու է ման գալիս, սկսեց գռմռալ/

գըռմըռոց, գ. - շան մռլտոցը.- Է՛, բ՛այց կնտուն էտ գըռմըռոցը վոնչ էլ լըսում, շ՛նն էլ ըսկի շ՛ն տեղ չըդըընում /Է՛, բայց կատուն այդ գռմռոցը չի էլ լսում, շանն էլ բոլորովին բանի տեղ չի դնում/

գըռնէլ, գ. - սայլակ չքայլող երեխայի համար.- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ն՛խճի՛, էտ ճըժին գըռնէլի մըջից խան, մըկա էտ կնտուն կըթըռնի, գըռնէլը կըշըռճա /Վայ,վայ, աղջի՛, էդ

երեխային սայլակից հա՛ն, հիմա էդ կատուն կթռչի, սայլակը կշրջի/

գըռոտ,ած. - քոսոտ.- Թէ էս քօսոտ ձնտէր կձտուն հո՞ւստ էկավ, փըշտա՛, թաղեմ տէրըտ … /Թե այս քոսոտ անտեր կատուն ո՞րտեղից եկավ, փի՛շտ, թաղեմ տերդ /

գըռոց-գըմփոց, գ. - մեծ աղմուկ.- Էս ի՞նչ գըռոց-գըմփոց ա… ձխճի՛, ճըժին բ՛ըռնա՛, փըշտա՛', ձնտէր մձցուկ, լը տե, վոր վոտըս ճձնզըռթեց /Այս ի՛նչ աղմուկ է… աղջի՛, երեխային բռնի՛ր, փի՛շտ, անտեր մնացած, մի տե՛ս, որ ոտքս ճանկռեց/

գըռջ՛ուր, գ. - քարի փոսի միջի ջուր.- Էտա գըռջ՛ըրից քըսա ճըժի հիրեսը, թօ ձ՛էնը կըղրա /Էդ քարափոսի ջրից քսիր երեխայի երեսին, թող լացը կտրի/

գըռսել, նբ. - 1.ծեծել, 2.խժռել.- Վա՛յ, վոր էտ կձտուն հընգէր ձ՛եռըս՝ էնենց կըգըռսի, էնենց կըգըռսի /Վայ, թե որ այդ կատուն ձեռքս ընկներ, այնպես կծեծեի/

գ՛ըռտըընակ, գ. - գրտնակ.- Էտի խացի գ'ըռտըընակն ա, դո՞ր ես շըպըռտում կձղվի վըրէն /Դա հացի գրտնակն է, ո՞ւր ես նետում կատվի վրա/

գ՛ըռտըընքել, նբ. - գրտնակով բացել.- Հընչի դ՛ու էս փէդի կըտորօ՞վ ես խացը գ՛ըռտըընքում /Ինչ է, դու այս փայտի կտորո՞վ ես հացը գրտնակում/

գըռուզավիկ (ռուս.) , գ. - բեռնատար ավտոմեքենա.- Լա՛վ, գըռուզավիկը կձյնե դ՛ուռը, կձռտօլը բ՛առցում են, բօլ ա խօսաք, ձրէք տէնանք՝ ինչ ենք ձնում /Լավ, բեռնատարը կանգնել է դռան մոտ, կարտոֆիլը բարձում են, հերիք է խոսեք, եկեք տեսնենք՝ ինչ ենք անում/

գըռօտել, չբ. - քոսոտել

գըրձ-գըրձ, ած. - մեծահարուստ, նշանավոր (մարդիկ). Վոր տէնիր՝ ի՛նչ գըրձ-գըրձ մձռթիք ին էկե, բ՛էրանըտ բ՛աց

կըմընէր /Եթե տեսնեիր, թե ինչ նշանավոր մարդիկ էին եկել, շատ կզարմանայիր/

գըրաֆինզա (ռուս.) , գ. - ջրաման

գ՛ըրբ՛ագ, գ. - գուշակ

գըրըմփալ, չբ. - ընկնելու ուժեղ ձայն գալ

գ՛ըրկանոց, գ. - գրկի երեխա.- Էնի գ՛ըրկանոց հէլե՝ կըռիվն ըսկըսվե /Նա գրկի երեխա է եղել, երբ կռիվն սկսվել է/

թիթիզութուն ՚նել, չբ. - իրեն ցուցադրել, ծանրակշիռ չպահել, ջրիկանալ
թիմրել, նբ. - անասունին գործիքով քորել, շոյել
թիրմ տալ, նբ. - հրահրել.- Վոր թիրմ տըվօղ չըլնէր, էտի էտքան չէր հաբըրգի /Եթե հրահրող չլիներ, դա այդքան չէր հանդգնի/
թիփի (թրք.), գ. - ձյունախառն քամի
թիփի ՚նել, չբ. - 1. ձյունախառն քամի անել, 2. կեղծ բարկություն հանդես բերել.- Մի՛ վախէցի, էտի թիփի յա ՚նում /Մի՛ վախեցիր, դա կեղծ բարկություն է անում/

թիքմ (պրսկ.), գ. - մաս, պատառ.- Հավել թիքէն փոր չըծմկա /Պետք չէ ժամանակից շուտ բավարարվել ձեռք բերածով/

թողզի // թողզը, կ. - բացի

թութմկ, գ. - 1. թութակ, 2. ազդրամիս, ազդր

թութար, գ. - ունեցվածք

թութխալ (թրք.), գ. - սոսինձ

թութուզ, գ. - թռչնի նախաստամոքս

թութուն (թրք.), գ. - ծխախոտ.- Հառէչ մեր գ՛եղը էնքան թութուն ին ցանում, մե յէլ դըբռօցից տմնում ին թութուն քաղէլու /Առաջ մեր գյուղում այնքա՜ն ծխախոտ էին ցանում, մեզ էլ տանում էին քաղելու/

թութուշ, գ. - այտ

թուլ ու մուլ, մկ. - թույլ կերպով

թուլմ (արաբ.), գ., ած. - 1.շան ձագ, 2. չնչին մարդ

թուլմփայ, գ. - չնչին բաժին

թուլբ՛էրան, ած. - ոչ գաղտնապահ.- Ըտոու նըման թուլբ՛էրան մմռթ չըկա, կուշտը մէ բ՛ան խօսացիր, գիցի՝ հէքուց սմղ կըզիդան /Դրա նման բացբերանը չկա, մոտը մի բան խոսեցիր, իմացիր՝ վաղը բոլորը կիմանան/

թուլդըրել, չբ. - թուլանալ, հոգնել

թուլ-թոք // թուլութոք, մկ. - հոգնած, թուլացած

թուլխունջան, ած. - վարտիքը կախ ընկած

թուլումուլ, մկ. - թուլացած

թուլցընել, նբ. - թույլ դարձնել

թուխտ մնել, նբ. - մեկի նկատմամբ կախարդանք գործադրել

թուխտ բ՛անալ, չբ. - գուշակել

թուխտ ու բ՛ըթիկ մնել // թուխտ ու գիր մնել - մեկի նկատմամբ կախարդանք գործադրել.- Մըտկօվս հընցավ, մսի՝ վայ թէ մեր տըղին թուխտ ու գ՛իր մրած, սմղօր կընգա փէշը բ՛ըռնուկ ման ա գ՛ալում, էլ մեր մսուկը բ՛անի

տեղ չըդ՛ընում. մէկ էլ ճաի՝ թէ՞ թճզճ յենք կճրքե՝ ըտուց ա, հիր խէրն էլ էր էտենց… /Մտքովս անցավ, ասացի՝ երևի մեր տղային կախարդել են. ամբողջ օրը կնոջ հետևից ման է գալիս, էլ մեր ասածը բանի տեղ չի դնում, մեկ էլ ասացի՝ թե՞ նոր ենք ամուսնացրել՝ դրանից է, իր հայրն էլ էր այպիսին…/

թումբան (պրսկ.), գ. - կիսավարտիք.- Մէ խատ էլ թումբան ա խաքնում, ճսում եմ՝ տըղա ջան, ճմօթ ա, գ՛ընա էտ թումբանը խան, ճսում՝ էսի թումբան չէ, տճտիկ, շօռտիկ ա, մըկա սճղ էլ խաքնում են /Մի հատ էլ կիսավարտիք է հագնում, ասում եմ՝ տղա ջան, ամոթ է, գնա այդ վարտիքը հա՛ն, ասում է՝ սա վարտիք չէ, տատ, շորտիկ է, հիմա բոլորն էլ հագնում են/

թունդիր, գ. - թոնիր.- Էնօր թունդիրը վառէր ի, ճսի գ՛օխտուկ էթամ, էտ թումբանը բ՛էրեմ, թճլեմ վառի /Մի երկու օր առաջ թոնիրը վառել էի, ասացի՝ թաքուն գնամ այդ վարտիքը բերեմ, գցեմ վառվի/

թուշ, գ. - այտ.- Իմալ վոր դ՛ուռը բ՛ացի, տէնամ՝ թոռըս կընգա թըշերն ա պճքում. ճմօթու գ՛էտինը մըտա. էտենց հիրա պճպիկն էր գ՛ախին ընձի պճքում /Հենց որ դուռը բացեցի, տեսնեմ՝ թոռս կնոջ այտերն է համբուրում. ամոթից գետինը մտա, ժամանակին իր պապն էր այդպես ինձ համբուրում/

թուշ հըլնել, չբ. - կպչել պոկ չգալ

թուջ (թրք.) - ձիգ, ամուր

թուռլի-թուռլի խախծըլնել, նբ. - մեկին անընդհատ բարկացնել, նեղել.- Փունք տըվի, փունք ճռա, ճսի՝ էս տըղէն ընձի թուռլի-թուռլի յա խախծընում /Բարկությունից պայթեցի, ասացի՝ այս տղան ինձ արդեն շատ է բարկացնում/

թուռշի (պրսկ., թրք.), գ. - կաղամբով և գազարով թթու.- Ընձի թ՛ալի դ՛ուս, տէնամ մէրը, մէ ամաև թուռշի ձ՛եռը՝ պածդվըլից հըլնում. իմալ վոր զ՛անի՝ էտ թուռշին ամնօվ թըռավ, գ՛ընաց հընգավ ծառի տակը /Դուրս նետվեցի, տեսնեմ մայրը, մի աման կաղամբաթթու ձեռքին, նկուղից բարձրանում է. այնպես հարվածեցի՝ այդ թթուն ամանով թռավ, գնաց ընկավ ծառի տակ/

թուր ու դ՛անակ// թըվանք հըլնել - կատաղի հակամարտության մեջ լինել.- Ի՞նչ ա հէլե, ա՛յ մէր, մենք խօ թուր ու դ՛անակ չե՞նք հըլնի, հընչե՞ս յեռսօտե՝ ասավ. ասի՝ էսենց, էսենց, տըղէտ կընգա թըշերը պաքում էր, իմ հ՛աշկօվ եմ տէսե /Ի՞նչ է եղել, այ մեր, մենք հո թշնամի չե՞նք դառնա, ինչո՞ւ ես բարկացել, ասաց. ասացի՝ այսպես ու այսպես՝ տղադ կնոջ այտերը համբուրում էր, իմ աչքով եմ տեսել/

թուրը աչ ու ձ՛ախ կըդրել - մեծ հնարավորություններ ունենալ.- Ա՛յ մէր, ասավ, բը հընչե՞նք էտ խառսին բ՛էրե, բը քօ գ՛ախ ի՞մալ էր /Այ մեր, ասաց, բա ինչո՞ւ ենք այդ հարսին բերել, քո ժամանակ ինչպե՞ս էր/

թուփ, գ. - տերև.- Իմ գ՛ա՛խ... Կէրսարը՛տ... Ըստու նըման խօ թումբան չէ՞ր խաքնում..., ասի յու սիռտըս լըսվավ, էս խառսըս փատըտվավ ընձի, ասի՝ թո՛ղ, թող էթամ թըփէրի մըչից թուռշու ամանը բ՛էրեմ, բալա ջան... /Իմ ժամանակ... Սկեսրա՛յրդ ... Սրա նման հո վարտիք չէ՞ր հագնում..., ասացի, ու սիրտս լցվեց, էս հարսս փաթաթվեց ինձ, ասացի՝ թո՛ղ, թող գնամ թփերի միջից թթվի ամանը բերեմ, բալա ջան.../

թուփի ու թթու, գ. - կաղամբով և այլ բանջարեղեններով պատրաստված թթու.- Թոռըս հէլավ դ՛ուս, թէ՝ տատիկ, էտ ի՞նչ ես անում ծառի տակը, ասի՝ գիդո՞ւմ ես՝ մէրըտ

էստա՞րի ի՛նչ թուփ ու թըթու յա դը՞րե, դ՛ու յու կընիկըտ մա՞ղներըտ խէտը կուտէք... /Թոռս դուրս ելավ, թե՝ տատիկ, այդ ի՞նչ ես անում ծառի տակ. ասացի՝ գիտե՞ս՝ մայրդ այս տարի կաղամբով ի՛նչ թթու է դրել, դու և կինդ մատներդ հետը կուտեք/

թուք ու մուր, գ. - նախատինք.- Թոռս ա՞սավ՝ էտ ի՞մալ էլ թուք ու մուր չես տա՞լում, տա՞տ ջան /Թոռս ասաց՝ էդ ո՞նց է, էլ թուք ու մուր չես տալիս, տատ ջան/

թուք ու մուր ուտել, չբ. - նախատինքի արժանանալ.- Խընդացի, ա՞սի՝ տա՞տը մեռնի ջանիտ, իմ քախծըր բալա, ըստուց դէն վո՛նչ դ՛ու, վոնչ էտա նըխշուն կընիկըտ էլ թուք ու մուր չէք ուտի, գ՛ացէք հիրար վայէլէք /Ծիծաղեցի, ասացի՝ տատը մատաղ լինի քեզ, իմ քաղցր տղա, այսուհետ ո՛չ դու, ո՛չ նախշուն կինդ թուք ու մուր չեք ուտի, գնացեք իրար վայելեք/

թուքը չօրնալ, չբ. - սաստիկ վախենալ

թօ, վ. - թող.- Թօ ա՞սեն գ՛էշ ա, չասեն՝ էշ ա /Ավելի լավ է արտաքի-նով պախարակելի լինել, քան էությամբ/

թօբաթէ (արաբ, թրք.), վ. - համա թե, դժվար թե

թօզ (թրք, գ.- փոշի

թօզ ա՞նել, չբ. - 1.փոշի բարձրացնել, 2.ստել.- Ա՛յ կընիկ, էտ ի՞նչ թօզ ես ա՞նում, բօլ ա, է՛լի, շունչըներըս կըղըրավ /Այ կին, այդ ի՛նչ փոշի ես բարձրացնում,բավական է, է՛լի, շունչներս կտրվեցին/

թօզ խանել - փոշի բարձրացնել

թօզ ու դուման կա՞պել - ուժեղ փոշի բարձրացնել

թօզ-մա՞րախում ա՞նել - ուժեղ փոշի բարձրացնել

թօզոտ, ած. - փոշոտ

թօզօտել, նբ. - փոշոտել

թօթխար, ած. - գործը ձգձգող, գործի մասին չմտածող, ծույլ

թօթօլ-մօթօլ, ած. - կլորիկ, գնդլիկ

թօժան, գ. - ոչխարի կաշուց պատրաստված աման ժաժիկի համար
թօխի ա՜նել, չբ. - ուրագով հողը փորել
թօխմախ (թրք.), գ. - փայտից թակ՝ միս ծեծելու համար.- Հառէչ քուֆտէն սա՛լի վըրէն ին ծէծում, փէղից թօխմախ կա՛ր, ըտօվ ին ծէծում /Առաջ քուֆթան սալի վրա էին ծեծում, փայտից թակ կար, դրանով էին ծէծում/
թօխում (պրսկ., թրք.), գ. - սերմ
թօշ տալ, չբ. - պատնեշի առաջ ջրի կուտակվելը
թօռ (թրք.), գ. - ցանց
թօռթմ (թրք.), գ. - կարազը հալելուց առաջացած ոչ պիտանի մասը, դիրտ
թօռթըռալ, չբ. - թույլ ձյուն գալ
թօռմել, չբ. - թոռոմել
թօռն հընգնել, չբ. - մեկի ազդեցության տակ ընկնել
թօռչի (թրք.), գ. - ձկնորս
թօրգել, նբ. - թողնել, լքել
թօփ (թրք.), գ. - 1.գնդակ, 2.թնդանոթ, 3.կտորեղենի փաթեթ.- Հառէչ խըր գ՛արունը բ՛ասվում էր, ճըժերը հըլնում ին, ճա՛մփէն թօփ ին խաղում, մըկավա ճըժէրն էլ յե՞փ են խաղում /Առաջ հենց գարունը բացվում էր, երեխաները ելնում էին, ճանապարհին գնդակ էին խաղում, հիմիկվա երեխաները էլ ե՞րբ են խաղում/
թօփալ (թրք.), ած. - կաղ
թօփալ-թօփալ, մկ. - կաղալով
թօփըլտալ // թօփըռտալ, չբ. - կաղալով քայլել
թօփի բ՛էրան - կրակոցների տակ
թօփլալ, չբ. - կաղալ

Ժ

ժա՜ժ գ՛ալ, չբ. - շարժվել
ժա՜ժ տալ, նբ. - շարժել

ժմժմն գ՛ըլօխ, ած. - գլուխը շարունակ շարժող, տարուբերող

ժմժել, նբ. - շարժել

ժմժիկ, գ. - փշրված պանիր, լոռ

ժակէթ (ռուս.), գ. - կանացի վերնազգեստի տեսակ

ժամ, գ. - եկեղեցի.- Ժամից յես եմ գ՛ալում, տէր օղօրմին դ՛ու յես տալում /Փորձում ես ինձ մի բան բացատրել, որը քեզնից լավ գիտեմ/

ժամ ա̊սել - ժամասացությունը

ժամէրօվ, մկ. - երկար ժամանակ

ժամխար, գ. - ժամհար, ժամկոչ

ժմնգերը խառնել, չբ. - մռայլվել

ժմնգոտ, ած. - ժանգոտ

ժարիթ, գ. - տապակած կարտոֆիլ

ժարիթ ա̊նել - տապակա պատրաստել.- Նըստի՛, մի՛ վըռազցի, Էթում եմ Քմվմռա կա̊ռտօլ ա̊ռնեմ, բ՛էրեմ կընիկըս ժարիթ ա̊նա, նըստենք թըթի ա̊րաղօվ, թըթվօվ ուտենք, հըլնենք կա̊յնենք /Նստի՛ր, մի՛ շտապիր, գնում եմ Գավառի կարտոֆիլ գնեմ, բերեմ կինս տապակի, նստենք թթի օղով, թթվով ուտենք, ելնենք կանգնենք/

ժեխ, գ. - աղբ

ժեխթափիկ, գ. - աղբը թափելու գործիք

ժեռ քար, գ. - կարծր քար, մեծ քար

ժէշտ, գ. - թիթեղ

ժէշտ հընգնել, չբ. - հույսերը չարդարանալ

ժէշտ քըցել, նբ. - հուսախաբ անել.- Լավ էլ ըտուն ժէշտ քըցիր, թօ գիդա, վոր լավ բ՛ան չանում /Լավ էլ դրան հուսախաբ արեցիր, թող իմանա, որ լավ բան չի անում/

ժէշտմնչի, գ. - թիթեղագործ.- Մեր հարէվանը ժէշտմնչի յա, շա̊տ լավ ժէշտի գ՛ոռծ ա ա̊նում /Մեր հարևանը թիթեղագործ է, շատ լավ թիթեղի գործ է անում/

ժէշտել, նբ. - թիթեղապատել.- Պըտի կմնչեմ՝ գ՛ա մեր կըրիշէն զմնա, մէշու հուրիշ ժէշտէլու գ՛ոռծ էլ կմ /Պիտի կանչեմ՝ գա մեր ձեղունը պատրաստի, մի քիչ թիթեղելու ուրիշ գործ էլ կա/

ժէշտէ, ած. - թիթեղյա.- Կըտանք՝ մէխատ էլ ժէշտէ վառարան թօ սմրքա, վառարանի տմքութունն հուրիշ ա /Կտանք՝ թող մեկ հատ էլ թիթեղյա վառարան սարքի, վառարանի տաքությունն ուրիշ է/

ժըժան (պրսկ.), ած. գ. - խառնիխուռն, խճճված

ժըժընթըփուկ, մկ. - շշմած, հոգնած, խառնված

ժըժնել, նբ. - խճճել, խառնել, շփոթեցնել.- Էտենց չէլե, դ՛ու հավէլի ժըժնեցիր, թող յես պմդմեմ /Այդպես չի եղել, դու ավելի խճճեցիր, թող ես պատմեմ/

ժըխշել, նբ. - թափահարել, ցնցել, շարժել.- Ուրեմ, յես գ՛ոմի դ՛ուռը թիզնէր ի, համայրա պմրկուկ ի, է՛լի, խա՛, հմշկըս կըպէր էր. մէկ էլ տէնամ՝ մէզն ընձի ժըխշում /Ուրեմն, ես գոմի դռանը թիկն էի տվել, համարյա պառկած էի, է՛լի, հա՛, աչքս կպել էր. մեկ էլ տեսնեմ՝ մեկն ինձ ցնցում է/

ժըխշըռտել, նբ. - շարունակ ցնցել.- Քունը գ՛ըլօխս էր, չի կմնում ձ՛էն մնի, էսի հա՛ ընձի ժըխշըռտում /Քունը գլուխս էր, չէի կարողանում ձայն հանել, սա ինձ անընդհատ ցնցում էր/

ժըղլել (արաբ.), չբ. - զբաղվել /զրույցով, խաղով/.- Յես գիցա պմհակն ա, մսի՝ գ՛ընա տըղէրքի խէտ ժըղլի, թող մէշու հմշկըս կըպցընեմ /Իմացա՝ պահակն է, ասացի՝ գնա տղերքի հետ զբաղվի՛ր, թող մի քիչ քնեմ/

ժըղլըցընել, նբ. - զբաղեցնել.- Տօ՛ քօ էսենց էնենցը, չես թօղում քնեմ, վօր հըլնեմ քե ժըղլըցընե՞մ, ի՞նչ ես մսում՝ յեռսօտա թըռա հէլա կմյնա, հէնա պըտի մէ խատ կըպցընի քիթ ու մըռթին, տէնամ՝ բիձմ Գ՛էվօրքն ա /«Տո՛ քո ինչն եմ

ասել, չես թողնում քնեմ, որ վեր կենամ՝ քեզ զբաղեցնե՞մ, ի՞նչ ես ասում»,- բարկացա, թռա կանգնեցի, պիտի հարվածեի քիթ-մռութին, տեսնեմ՝ բիձա Գևորգն է/

ժըմեխ, գ. - անասնակեր.- Ա՛յ տըղա, հէլի, քօ խըմար քընէր ես, ժըմեխը գ՛օխծան տա՛րան, կըկըպեն քեզի, պա՛հակը հո՞ւր ա /Ա՛յ տղա, քեզ համար քնել ես, անասնակերը գողացան տարան, քեզ կմեղադրեն, պահա՞կը ուր է/

ժընջըլել, նբ. - շղթայել.- Մէկ էլ տընքալու ձ՛էն ա՛ռանք, վազանք տէսանք՝ պա՛հակն ա, ժընջըլած, բ՛էրանը մէ քըռչ ա ճըխտած, շա՛ն բ՛ընան դ՛էմն էլ պա՛րկըցըրած /Մեկ էլ տնքալու ձայն լսեցինք, վազեցինք տեսանք՝ պահակն է, շղթայակապ, բերանը մի քուրջ խցկած, շան բնի առջև պառկեցված/

ժընջիլ (պրսկ., թրք.), գ. - շղթա, կապանք.- Ժընջիլները թուլ ին, հառծըկինք, բ՛էրնից քըռչը խանինք, բիձէն ա՛սավ՝ լա՛վ, դ՛ու ըսկի՞ ուժ ու կուվաթ չունիր, վոր չըթօղիր՝ քե կա՛պին, շո՞ւնն հուր ա /Շղթաները թույլ էին, արձակեցինք, բերանից քուրջը հանեցինք, բիձան ասաց՝ լավ, դու բոլորովի՞ն ուժ չունեիր, որ չթողնեիր՝ քեզ կապեին, շո՞ւնն ուր է/

ժըռտուկ, ած. - անսնունդ, անհամ /կերակուր/.- Ո՛ւժը դոր էր, ա՛սավ պա՛հակը, օրը մէ ա՛ման ժըռտուկ շօռվա խըմօղին ո՛ւժը դոր էր, համ էլ՝ ի՞նչ շուն /Ուժ ո՞րտեղից, ասաց պահակը, օրը մեկ աման անսնունդ ապուր խմողին ո՞րտեղից ուժ/

ժըրել, չբ. - աշխուժանալ.- Բը քեզի ի՛նչ տանք ուտես, վոր ժըրես, յեռսօտավ բիձա՛ Գ՛էվորքը, յեղ ու մեղըր հո՞ւստ բ՛էրենք, շունը հո՞ւր ա, ա՛յ տըղա, շո՛ւնը /Բա քեզ ի՛նչ տանք ուտես, որ աշխուժանաս,- բարկացավ բիձա Գևորգը,- յուղ ու մեղր ո՞րտեղից բերենք/

ժուլիկ (ռուս.), ած. - ճարպիկ.- Բը էն ժուլիկ տըղէրքը հո՞ւստ մէ փէշ կմ՛ռտօլ բ՛էրին, թօղի ժըմեխը տ՛րան... վա՛յ, վա՛յ, քօ տիրու խէրը..., էս ի՞նչ եմ ՛սում... շ՛ն ժընջիլն էլ խանին, ընձի կ՛պին, վոր հավատիք /Բա այն ճարպիկ տղաները ո՞րտեղից մի փեշ կարտոֆիլ բերեցին, թողեցի անասնակերը տարան... վա՛յ, վա՛յ, քո տիրոջ հերը..., այս ի՞նչ եմ ասում... Շան շղթան էլ հանեցին, ինձ կապեցին, որ հավատայիք/

ժուկ, գ. - ժամանակ.- Մէ ժուկ հընցավ, գացինք բ՛եռթը պ՛հակին տէնալու /Որոշ ժամանակ անց գնացինք բանտ՝ պահակին տեսակցության/

ժուռ, գ. - սնունդ.- Բիձ՛ Գ՛էվորքը խընդմընդաց, ՛սավ՝ հը՛, ՛խպէր, ըստեղի ճ՛շէրի մէչը ժուռ կ՛՞, շընի՞ց ինչ խաբար ունես /Բիձա Գևորգը խնդմնդաց, ասաց՝ հը՛, եղբայր, այստեղի ճաշերի մեջ սնունդ կա՞, շնից ինչ լուր ունես/

ժօղըռտել, նբ. - հավաքել իրար վրա

ժօղվել // ժօղել // ժողովել, նբ. - հավաքել

ժօղօվկ ՛նել - մուրալ

ժօղօվկըրան, գ. - մուրացկան

Ի

իդարա (արաբ.), գ. - գոյամիջոց, հույս

իդարախօրուկ, ած. - հույսը թաղված

իդարամեռ, ած. - հույսը մեռած

իզ (թրք.), գ. - հետք

իզ բ՛անալ - արահետ բացել.- Էնենց ձ՛ուն էր գ՛ալում, հիրար գ՛ալ չէր հըլնում. պըտի հառավոտ հըլնինք, մինչև ճ՛մփէն մէ իզ բ՛ացինք, վոր ճըժերն էթին դըբռօց /Այնքան ձյուն էր գալիս, որ շարժվել չէր լինում. Առավոտ պիտի

ելնեինք, մինչև ճանապարհը արահետ բացեինք, որ երեխաները գնային դպրոց/

իզ ու թօզը կուրել, չբ. - անհետանալ.- Ա՛յ մառթ, մէր էն թիյակի իզ ու թօզը կուրե, վորդե մա՛ն եմ գ՛ալում, չեմ գ՛ըթնում, քօ հա՛շկօվ չը՞նգե /Ա՛յ մարդ, մեր թին անհետացել է, ուր որոնում եմ՝ չեմ գտնում, աչքովդ չի՞ ընկել/

իզը բ՛ըռնել - հետքի վրա ընկնել, հետքով գնալ.- Լը էսա իզը բ՛ըռնա գ՛ընա, թիյկօվ բ՛ացուկ ա, կա՛րօղա վեռչը թիյկին խասնես /Այս հետքով գնա, թիով բացված է, հնարավոր է՝ վերջում թիին հասնես/

իզկուրուս ա՛նել - հետքը կորցնել.- Չեմ գիդում, լավ թիյակ էր, վայ թէ մէկը վէռցե տա՛րե, իզկուրուս ա ա՛րե /Չգիտեմ, լավ թի էր, երևի ինչ-որ մեկը տարել է, հետքը կորցրել է/

իլաջ, գ. - ճար, ելք

իլլա՛քչի // իլլա՛քի (թրք., արաբ.), վ. - մանավանդ

իլլաջ (արաբ., թրք.), գ. - դեղ, ճար, հնար

իլլաջ ա՛նել, չբ. - ճար անել.- Խօրըտ ա՛սա՝ թօ գ՛ա, մէ իլլաջ ա՛նա, էս փէջի տրումբէքից մուխ ա հըլնում /Հորդ ասա՝ թող գա, մի ճար անի, այս վառարանի խողովակներից ծուխ է ելնում/

իմ ու քօ անել, չբ. - ունեցածը հավասարապես չօգտագործել, իրար վրա գցել.- Սէլաֆն էկե, լըսվում դ՛ըռները, սա՛ղի տըները կըքըշա կըտա՛նա, փօխանակ հըմընօվ հըլնեն՝ վիրեվից դ՛էմն ա՛ռնեն, իմ ու քօ յեն ա՛նում, ա՛մէք մէկը հիր դ՛ուռը կա՛յնե, մէկէլի վըրէն մույնա՛թ ա գ՛ալում /Հեղեղը եկել, լցվում է բակերը, բոլորի տները կքշի կտանի, փոխանակ բոլորով ելնեն, վերևից դեմն առնեն, իրար վրա են գցում, ամեն մեկը իր դռանը կանգնել՝ մյուսին է նախատում/

իմալ, դ. - ինչպես.- Իմալ գ՛եղի նա՛խիրը, էնենց էլ՝ պա՛ռվի մօզին /Ինչպես բոլորը, այնպես էլ՝ նրանցից մեկը/

իմալ ճառում - ինչպես ասում են

ի՞մալ թէ - ինչպես թե

իմպըռնի (ռուս.), ած. - արտասահմանյան.- Խանութը իմպըռնի շոր էր էկե, էնա տըղին ճսի՝ գ՛ընա յեռթ պճխա, ջան չարավ՝ էթէր /Խանութը արտասահմանյան հագուստներ էր ստացել, տղայիս ասացի՝ գնա հե՛րթ պահիր, ծուլացավ չգնաց/

ինադ (արաբ., թրք.), գ. - խռով, հակառակություն, համառություն

ինադ ճնել, չբ. - նեղանալ, խռովել.- Էտա մեր խառոն էլ ինադ ճրե, հէսօր քանօր էլ յե՞փ ա զատ էփում /Մեր հարսն էլ խռովել է, այս քանի օրը էլ ճաշ չի եփում/

ինադ-զինադ, մկ. - խռովածի պես, նեղացած.- Խէտընէրս էլ ինադ-զինադ ա, թէ հընչի՝ չենք գիդում /Հետներս էլ խռովածի պես է, թե ինչու՝ չենք իմանում/

ինադու, մկ. - դիտմամբ, ի հեճուկս.- Յես էլ ինադու հըլնում եմ, քօ գիցած լավ-լավ բ՛աները խալադէնիկից խանում եմ, մէ լավ զապռավկա յեմ հըլնում, նոր էթում եմ իմ գ՛ոռծին /Ես էլ դիտմամբ ելնում եմ, իմացածդ լավ կերակուրները սառնարանից հանում եմ, մի լավ սնվում եմ, նոր գնում եմ իմ գործին/

ինադվորել, չբ. - նեղացած կեցվածք ընդունել.- Թօ խառոը հա՛ ինադվորի, բը ի՞նչ անեմ /Թող հարսը երկար նեղացածի կեցվածք ընդունի, բա ի՞նչ անեմ/

ինչվորայա, մկ. - ինչ որ է, ինչնէ.- Օ՜ֆ, ինչվորայա, հէքուց մէկէլ օր հճլբճթ գ՛անթըռտի, բը ի՞նչ /Օ՜ֆ, ինչ որ է, վաղը մյուս օր երևի կհանդարտվի, բա ի՞նչ/

ինջումիշ հըլնել, չբ. - ցավեր ունենալ, անհանգիստ լինել.- Հէրէկ գ՛իշեր էլ տէնամ՝ ինջումիշ ա հըլնում /Երեկ գիշեր էլ տեսնեմ՝ անհանգիստ է/

ինվալիդ (ռուս.), գ. - հաշմանդամ.- Ինվալիդ հալիս հէլա, քըռքաշ խասա ըտոնց դ՛ըռան կուշտը, հանգաճ դ՛ըրի /Հաշմանդամ վիճակով ելա, հազիվհազ հասա դրանց դռան մոտ, ականջ դրի/

ինքը, գ. - ինչ-որ բան.- Տէնամ տըղէս ӑսում՝ էն ինքը հո՞ւր ա, չեմ գըթնում /Էն բանը ո՞ւր է, չեմ գտնում/

իշաբ՛եռ, գ. - էշի բեռ, մեկ էշի տանելու բեռ.- Ընձի-ընձի ӑսի՝ էլի կըռվում են, բը ի՞նչ անեմ. ի՞նչ պըտի ӑնեմ՝ դӑվէն վոր խատի, կӑշին էլի մէ իշաբ՛եռ գ՛ըլնի, յես պըտի ըստոնցը բӑրիշցընեմ, վոնչ հառջինն են, վոնչ հիդվինը /Ինձ ու ինձ ասացի՝ ուղտը որ սատկի, կաշին էլի մի իշաբեռ կլինի, ես պետք է սրանց հաշտեցնեմ, ո՛չ առաջինն են, ո՛չ վերջինը/

իշավարի, մկ. - կոպիտ, հիմարաբար.- Դ՛ուռը թափօվ բ՛ացի, մըտա նեռս, էս էշ տըղէս կӑռաֆտից հընգավ գ՛էտին ու իշավարի էնենց բօռաց վըրէս՝ լեղիս ջ՛ուր դ՛առցավ /Դուռը թափով բացեցի, մտա ներս, էս ավանակ տղաս մահճակալից ցած ընկավ ու այնպես գոռաց վրաս՝ սարսափից քարացա/

իշավողնուկ, գ. - իշոտնուկ, երկար նստարան.- Հէքսի հառավոտ հէլա, գ՛ըլօխըս կӑպի, ӑռանց խաց ուտել նըստա բալկոնի իշավողնուկին, ըսկըսի քիթըս քաշել, զիվӑ նեխսըռտէր եմ /Հաջորդ առավոտյան ելա, գլխաշորս կապեցի, առանց հաց ուտելու նստեցի պատշգամբի իշոտնուկին, սկսեցի քիթս քաշել՝ իբր նեղսրտել եմ/

իշատէր, գ. - էշի տեր, էշ ունեցող.- Ի՛նչ անի՝ տըղէս՝ էշ, յես՝ իշատէր. էտենց չըլնէր՝ վըռազ կըվազնէր կըմըդնէր կընգա ծո՞ցը /Ի՞նչ անեի, տղաս՝ էշ, ես՝ իշատեր/

իշարած, գ. - էշ արածեցնող

իշընալ, չբ. - հիմարանալ, իր սխալը հասկանալով՝ ապշել.- Էտենց մէ՞ ժամ էր, էրկո՞ւ ժամ էր՝ չեմ գիդում, սիռտըս ӑռթէն թուլնում էր, մէկէլ տըղէս խընդմընդալէն էկավ, թէ՝ ա՛յ մէր, ախար իզուր ես նեղանում, հէլի՛, հէլի էթանք խաց ուտենք. մըտկիս մէչն ӑսի՝ այտենց կիշընաս, հէլա, ծӑնդըր մӑկուլ խէտը գ՛ացի կուխնին /Այդպես մե՞կ

ժամ էր, երկո՞ւ ժամ էր՝ չեմ իմանում, սիրտս արդեն թուլանում էր, մեկ էլ տղաս խնդմնդալով եկավ, թե՝ այ մայրիկ, ախր իզուր ես վիրավորվում, ե՜լ, ե՜լ գնանք հաց ուտենք. Մտքումս ասացի՝ այդպես սխալդ կընդունես, վեր կացա, ծանրակշիռ ընթացքով հետը գնացի խոհանոց/

իշի կնթնուկ, գ. - *բույս է*

իշի ձ՛ռք - *հանդիմանություն*

իշի մէկ - *հանդիմանություն*

իշի տեղ դ՛ընել - հիմարի տեղ դնել

իշի տըղա - *հանդիմանություն*

իշի քուռակ - *հանդիմանություն*

իշխընալ, չբ. - համարձակվել, հանդգնել.- Ցես չիշխըցա հըլնի սհրը, լըսացէր ի, վոր գ՛իլվանքը ըտե բ՛ուն ին դ՛ըրե /Ես չհամարձակվեցի սարը ելնել, լսել էի, որ գայլերն այդտեղ բույն էին դրել/

իշմար (թրք.), գ. - նշան, ակնարկ

իշութուն, գ. - 1.էշություն, 2.անօգուտ աշխատանք, 3.հիմարություն

իշուկ, գ. - հարմարանք, որն օգտագործում են գերանդին սրելիս

իշտն թէ - հարցն այն է, որ

իշտնյ // իշտնղ (արաբ., թրք.), գ. - ախորժակ.- Հէսօր ըսկի իշտնյ չունեմ, հառըվտընէ մէ քուֆտն յեմ կէրե, էրկու ձ՛ու, մէ խավի բուդ, մէկ էլ՝ չըմդէ ինչ… /Այսօր բոլորովին ախորժակ չունեմ, առավոտից մեկ քուֆթա եմ կերել, երկու ձու, հավի մեկ բուդ, մեկէլ՝ չգիտեմ ինչ…/

իսան (արաբ., թրք.), գ. - մարդ

իսկնլն (իտալ., թրք.), գ. - ժամանակավոր տախտակամած շինարարությունում

իրավ անել, չբ. - իրեն իրավունք վերապահել

իրավ ունէնալ մէկի վըրէն - վստահել մեկին.- Ցես քօ վըրէն իրավ ունեմ, ըտու խըմար էլ քե յեմ ղըրկում /Ես քեզ եմ վստահում, դրա համար էլ քեզ եմ ուղարկում/

իրավատեղ, գ. - վստահելի մարդ
իրեք, թ. - երեք
իրեքնոց, գ. - երեքանոց
իրեքնուկ, գ. - խոտաբույս
իրեքտա՛նկ, ած. - երեքտակ
իրեքտըկել, նբ. - երեք տակ անել

Լ

լա՛զա՛ն (պրսկ., թրք.), գ. - կոնք
լազեռ (ռուս.), գ. - ճամբար
լա՛զզի, ած. - նիհար
լա՛զլա՛զ (արաբ., թրք.), ած. - նիհար և բարձրահասակ
լա՛զա՛թ (արաբ., թրք.), գ. - հաճույք, բավականություն, համ, քաղցրություն
լա՛զա՛թ տըվեց - շատ լավ եղավ.- Պա՛պէյ մեռնել լա՛զա՛թ տըվեց, հէսօր էլ մա՛ցինք գ՛եղը /Շատ լավ եղավ, որ այդպես ստացվեց, այսօր էլ կմնանք գյուղում/
լազվել, չբ. - կպչուն դառնալ, շատախոսել
լա՛թ, գ. - ձորձ
լա՛լ, չբ. - լացել.- Կոշտը նըստե, քարի դա՛ռղըն ա լա՛լում /Ծանր վիճակում գտնվողը համեմատաբար լավ վիճակում եղողի համար է տրտմում/
լալ (պրսկ.), ած. - համր
լա՛լա՛ (պրսկ.), գ. - կակաչ
լա՛լա՛կան-ծա՛ռական, մկ. - նվիրված, հավատարիմ.- Էսքան տա՛րի յես իմ կիսուրին լա՛լա՛կան-ծա՛ռական եմ հէլե, խօսկին խօսկ չեմ բ՛էրե, ըտու խըմար էլ նըստում-կա՛յնում՝ ընձի գ՛օվում /Այսքան տարի ես իմ սկեսուրին նվիրված եմ

եղել, չեմ հակաճառել, դրա համար էլ շարունակ ինձ գովում է/

լյըլյըկըթնել, չբ. - լացակումել.- Խէրախօրուկը էնօր լյըլյըկըթնավ, մեխկըս էկավ /Հերը մեռածը այն օրը լացակումեց՝ մեղքս եկավ/

լալընալ, չբ. - համրանալ

լյըլկան // լյունկան, ած. - լացկան.- Չէ, լյունկան չէ, դյառը օրեր շյա՛տ ա տէսէ, մէգ-մէկ վոր հիշում, էտենց սիռտը լըսվում /Չէ, լացկան չէ, դառը օրեր շատ է տեսել, որ հիշում է, այդպես սիրտը լցվում է/

լալկել // լալկըվել, չբ. - կարկամել, համրանալ.- Էն իրեք տա՛րէկան թոռըս էլ մէրօյը շյա՛տ ա սիրում, վոր տէնում՝ էսի քիթը քաշում, գ՛ալում կյա՛յնում դ՛էմը, հիշկում, հիշկում, էտենց լալկըվում, մէկ էլ տէնում ես՝ է՛ն լյացը լյացավ, է՛ն լյացը լյացավ, իմ սիռտն էլ ա լըցվում… /Էն թոռս էլ մերոյին շատ է սիրում, որ տեսնում է՝ սա հուզվում է, գալիս կանգնում է առաջը, նայում է, նայում, համրանում, մեկ էլ տեսնում ես՝ այնպես լացեց, այնպե՛ս լացեց, իմ սիրտն էլ է լցվում/

լալուկյառ, ած - խուլ ու համր

լախ, ած. - փչացած /ձու/

լախ յա՛տամ, գ. - շարժվող ատամ

լախընալ, չբ. - փչանալ

լածիրակ, ած. - աներես

լակոտ, գ. - 1.շան ձագ, 2.երես առած տղա

լակոտ-լուկուտ, գ. - անչափահաս և թեթևամիտ տղաներ.- Լակոտ - լուկուտը ջ՛ոչին էլ յէ՞փ են բ՛անի տեղ դ՛ընում, զիղում են՝ հիրանք են վոր կյա՛ն /Թեթևամիտ ջահել-ները մեծերին չեն հարգում, կարծում են՝ իրենք են ամեն ինչ որոշողը/

լակոտութուն ա՛նել, չբ. - անվայել արարք թույլ տալ

լաղառակ, գ. - հերկված արտում՝ անվարել շերտ
լա՛մ, գ. - ատամի դեր կատարող լինդ
լա՛մբա՛կ, գ. - կոշիկի քուղ
լամփա // լամփ (իտալ., թրք.), գ. - նավթալամպ
լա՛մփա՛ռ, ած. - լայն, անճոռնի /վերջույթները/
լամփուշկա (ռուս.), գ. - էլեկտրալամպ
լայեղ (արաբ.) **ա՛նել**, չբ. - արժանի համարել, հարմար գտնել
լայեղին, ած - մեկին արժանի
լա՛յլուխ (թուրք.), գ. - թաշկինակ
լա՛չա՛կ (պրսկ.), գ. - գլխաշոր
լա՛չա՛ռ, ած. - ճղճղացող, լիրբ
լա՛չա՛ռութուն, գ. - լեզվանիություն, անզսպություն
լապըստըրրակ, գ. - նապաստակ
լասա /իըլը, լը ասա/ -   ապա ասա, ախր
լա՛սկան, ած. - 1.շատ լացող, 2.անընդհատ գանգատվող
լավ դէյի - լավ առումով.- Յես լավ դէյի յեմ ա՛սում, դ՛ու իընչե՞ս նեղանում /Ես լավ առումով եմ ասում, դու ինչո՞ւ ես վիրավորվում/
լավ ու վատին խառնըրվել, ած. - գործերին խառնվել.- Վա՞տ եմ ա՛սում, վոր խըլղի լավ ու վատին պէտկ չէ խառնըրվել /Վա՞տ եմ ասում, որ ուրիշի գործերին պետք չէ խառնվել/
լավամա՛ռթ հըլնել, չբ. - բարեկամ ձնանալ.- Վոնչ էլ պէտկ ա ըստուն-ընդուն լավամա՛ռթ հըլնել /Ոչ էլ պետք է սրան-նրան բարեկամ ձևանալ/
լավաշ, գ. - լավաշ.- Խա, չեմ ա՛սում՝ ձ՛եռըտ լավաշ հըլնի՝ չկիսես տաս ա՛նօթուն, կա՛մ հարէվնիտ, բ՛արէզմիտ չըխասնես /Հա՛, չեմ ասում՝ ձեռքիդ լավաշ լինի՝ չկիսես տաս սովածին, կամ հարևանիդ, հարևանիդ, բարեկամիդ չօգնես/

լավընալ, չբ. - 1.լավանալ, առողջանալ, 2. բարեհաճ դառնալ.- Բ՛այց ըսածըս էն ա, վոր խըլղի գ՛ոռծէրին պըտի չըխառնըրվես, ինչ ա՝ քօ խէտ լավընա. օրը գ՛ըքա, էլի քե մըռթատեղ չըդ՛ընա, մէ բ՛ան էլ հիրեսօվ կըտա /Բայց ասածս այն է, որ ուրիշի գործերին չպիտի խառնվես, ինչ է թե՝ քո հանդեպ բարեհաճ գտնվի. օրը կգա, էլի քեզ կարհամարհի, մի բան էլ երեսով կտա/

լավըցընել, նբ. - առողջացնել, շտկել

լավութուն, գ. - բարի գործ.- Իմ գիդալօվ՝ մըռթը պըտի լավութուն ընա, վոր մըռթ հըլնի, կէնթանուց տըրբէրվի, էտի յա մըռթին կէնթանուց տըրբէրում /Որքան գիտեմ՝ մարդը պետք է բարի գործ անի, որ մարդ լինի, կենդանուց տարբերվի, այդ է մարդուն կենդանուց տարբերում/

լավօթել, նբ. - 1.անպատվել, 2.ապականել

լարել, նբ. - ժամացույցը լարել.- Խին ժամացույց ա, օրը մէ քանի դըն պըտի լարենք, վոր չըկըյնի /Հին ժամացույց է, օրը մի քանի անգամ պիտի լարենք, որ կանգ չառնի/

լըրել, նբ. - հետապնդել, վռնդել.- Վոր էտենց ըսավ՝ հընգա հիդեվը լըրի, բ՛այց չըկըռցա բ՛ըռնի, փախավ /Որ այդպես ասաց, ընկա հետևից, հետապնդեցի, բայց չկարողացա բռնել, փախավ/

լըրոցի-բ՛ըռնոցի, գ. - մանկական խաղ

լըփըզըն (պրսկ.), ած. - դատարկախոս, շատախոս

լըփըռօշ, ած. - մեծաբերան, գռեհկաբան

լըփութըփ, գ. - ճաշի մնացորդ

լըքը (պրսկ., թրք.), գ. - 1. կեղտաբիծ, 2. կպչուն բնավորություն ունեցող

լըքօշ, ած. - մեծաբերան, անհամ խոսող

լեղաճըք ընել, նբ. - սաստիկ վախեցնել

լեղաճաքը հըլնել, չբ. - սաստիկ վախենալ.- Տընաշէն, էտ ի՞նչ ես դ՛ըրե գ՛ըլխիտ, լեղաճաքը հէլա /Տնաշեն, այդ ի՞նչ ես դրել գլխիդ, վախեցա/
լեղապատառ, մկ. - սարսափահար
լեղին կըդրել, չբ. - սարսափել, շատ վախենալ
լեղին ջ՛ուր դ՛առնալ, չբ. - սաստիկ վախենալ
լեռ քար, գ. - մեծ քար, ապառաժ
լեռթըռել, չբ. - լերդանալ, մակարդվել
լէլէ - փոքրին դիմելու փաղաքշական ձև
լէն լըփօշ,ած. - շատ լայն /հագուստը/
լէն ու բօլ, ած. - ընդարձակ.- Մէ խատ լէն ու բօլ տեղ էր, մէ քանի սեղան կա՛ր դ՛ըրուկ, բ՛այց ըսկի աթոռ չըկէր /Մի ընդարձակ տեղ էր, մի քանի սեղան կար դրված, բայց ոչ մի աթոռ չկար/
լէնթ (ռուս.), գ. - ժապավեն
լէնճակաթ, ած. - լայն ճակատ ունեցող
լէնոտ, ած. - մի փոքր լայն (հագուստը)
լէնսիրտ, ած. - լայնսիրտ
լէնք, գ. - լայնք
լէնք ու հէրկէնք, գ. - լայնք ու երկայնք
լէնքէն, մկ. - լայնքով
լէշ (պրսկ., թրք.), գ. - դիակ
լէստ, գ. - դանակի սայր
լէփուկ, գ. - մանկական քարախաղ
լը (արաբ.), մկ. - դեռ, ապա
լըբա, գ. - 1.ցեխաջուր, 2.թաց ձյունը գետնի վրա
լըժալ, չբ. - սահել, սայթաքել
լըժիկ, ած. - սահուն, լպրծուն
լըժկընալ, չբ. - 1.ջրիկանալ, անհամ բաներ անել, 2.ողորկ դառնալ.- Ճիժ են, մէշու հիրես ես տա՛լում՝ լըժկընում են, բ՛ան չըկա, էտ էլ գ՛ընցնի /Երեխա են, մի քիչ երես ես տալիս, ջրիկանում են, ոչինչ, այդ էլ կանցնի/

լըլել, չբ. - տղմակալել
լըխլըխալ // լըղլըղալ, չբ. - գիրությունից մսերը շարժվել
լըխլըխոտել, չբ. - անշնորհք գիրանալ
լըխկել, չբ. - 1.հասունանալուց փափկել, 2.տաքությունից հալվել
լըխկըռտալ, չբ. - հաստատուն չմնալ, շարժվել
լըխճել, նբ. - ճզմել, ճխլել
լըխպոր, ած. - տհաճորեն փափուկ
լըխտըզնալ, չբ. - փափկել, գիրուկ դառնալ
լըխտիկ, ած. - դալար, փափուկ, գիրուկ
լըկամ, գ. - սանձ
լըկել, նբ., ած. - հարբել, շատ խմել
լըկըռտալ, չբ. - շարժվել, տատանվել, իրար գալ
լըկըռտըվել, չբ. - անբարոյականությամբ զբաղվել
լըկըստել, նբ. - լիզել, լպստել
լըկըստըվել, չբ. - երես առնել
լըկըստցընել, նբ. - երես տալ
լըղել, չբ. - անկանոն քսել
լըղիկ-լըխտիկ, ած. - հաճելիորեն փափուկ, գիրուկ.- Մէ լըղիկ-լըխտիկ կընիկ գ՛ըթի, խէտը պըսակվի, բ՛ե դ՛ի տունըտ /Մի փափուկ, գիրուկ կին գտի՛ր, հետը պսակվի՛ր, բե՛ր տունդ/
լըղլըխկալ, չբ. - թուլանալուց շարժվել /ատամը և այլն/
լըղլըղցընել, նբ. - տանել-բերել, շարժել
լըղօզել, չբ. - անորակ քսել.- Էս վո՞րն ա էս պա՞տերը էսենց լըղօզե, մէ նօրմալ հուստէն վըրէտ կըղրէ՞ր էր .- Այս ո՞վ է պատերը այսպես անորակ քսել, մի կարգին վարպետ չէի՞ր կարող ճարել
լըղօզօրիկ, ած. - նիհար, վտիտ
լըմլըմցընել, չբ. - մի կերպ լնդերով ծամել
լըմուժըմ, գ. - ձայն-ծպտուն
լընգըռտալ, չբ. - 1.ոտքերի անհավասարության պատճառով տատանվել /սեղան, աթոռ/, 2.կաղալ

լընգուլմ̈վմ̈զ, ած. - անպիտան, աննշան /մարդիկ/.- Ինչքան լընգուլմ̈վմ̈զ կմ̈՝ բ՛էրում լըցում տունը, հառըվնէ չուր հիրկուն խաղում են /Ինչքան անպիտան կա՝ բերում լցնում է տունը, առավոտից երեկո խաղում են/

լընջըկել, նբ. - շալակել, շալակին գցել

լըշկընալ//լըժկընալ, չբ. - 1. հարթ ու սահուն դառնալ, 2. ջրիկանալ, չափը անցնել

լըպըտալ, չբ. - թեթև շարժվել.- Ռիսկ չանում՝ լըպըտա /Չի համարձակվում թեթև շարժվել/

լըպկել, նբ. - պոկել

լըռճըկվել, չբ. - շփանալ, երես առնել

լըռվել, չբ. - 1.պապանձվել, 2.խրվել մնալ

լըռփութուն դ՛ընել, չբ. - անպատկառ կերպով ճղճղալ

լըռփօտել, չբ. - անպատկառ դառնալ

լըվասկ // վըլասկ, գ. - լվացք

լըվասկ մ̈նել - լվացք անել

լըվասկ փըռել - լվացած շորերը փռել դրսում՝ լարի վրա

լըվասկ-թափ մ̈նել, չբ. - մեծ լվացք անել.- Հէսօր էրկօր էտա խառըը կօտօրվավ լըվասկ-թափ մ̈նէլօվ /Այս երկու օրը այդ հարսը շատ չարչարվեց՝ շատ լվացք անելով/

լըվասկ-թափի հըլնել, չբ. - պատրաստվել մեծ լվացք անելու

լըվասվել, չբ. - լվացվել

լըտրանոց, գ. - լիտրանոց տարա

լըփ, գ. - բուռ.- Մէ լըփ ջ՛ուր զմ̈ն հիրեսըտ, թօ քունըտ թըռնի /Մեկ ափ ջուր խփիր երեսիդ, թող քնատությունդ անցնի/

լըփել, նբ. - ափով վերցնել

լըփըռտալ, չբ. - արագ-արագ ինչ-որ բան իրենով անել

լըփլըփալ, չբ. - մի բանի վրա դողդողալ

լըփօփել, չբ. - վերքը գրգռվել, այտուցվել

լըքվել, չբ. - մեկի դեմ լարվել, զայրույթով լցվել

լի սըռտօվ, մկ. - լիասրտորեն

լիզու, գ. - լեզու.- Շունը էկավ, դ՛ուռը կա՞յնավ, խաչաց, խաչաց, էտ զա՞վզա՞կը հազիվ հէլավ գ՛ընաց, հա՞լբա՞թ հիրար խասկըցան, բը ի՞մալ՝ քախծըր լիզուն օցը բ՛ընէն կըխանա /Շունը եկավ, դռանը կանգնեց, հաչեց, հաչեց, այդ շատախոսը հազիվ ելավ գնաց, երևի իրար հասկացան, բա ինչպե՞ս՝ քաղցր լեզուն օձը բնից կհանի/

լիզու առնել, չբ. - սկսել խոսել.- Էտ ի՞նչ խէքա՞թ ես պա՞ղմում, շունը ի՞մալ կա՞նա լիզու առնի խօսա /Այդ ի՞նչ հեքիաթ ես պատմում, շունը ինչպե՞ս կարող է խոսել/

լիզու թափել, չբ. - երկար համոզել.- Վոր շա՞տ լիզու թափես՝ կըխօսա, շունն էլ կըխօսա, կա՞տուն էլ կըխօսա, զօնքաճըտ էլ կըխօսա… /Որ երկար համոզես, կխոսի, շունն էլ կխոսի, կատուն էլ կխոսի, զոքանչն էլ կխոսի/

լիզու թըռչել, չբ. - մեկի հետ խոսել.- Տըղա՛, էլի խըմէ՞ր էք, յես քօ խէտ լիզու թըռչո՞ւմ եմ, վոր դ՛ու իմ ա՞նունը տա՞լում ես /Տղա՛, էլի հարբե՞լ եք, ես քեզ հետ խոսո՞ւմ եմ, որ դու իմ անունը տալիս ես/

լիզու խանել, չբ. - հակառակվել.- Բը ի՛մալ, էրկու բաջանաղ ենք, էրկուսըս էլ չենք կա՞նա քօ դ՛էմը լիզու խանենք /Բա ինչպե՛ս, երկու քենակալ ենք, երկուսս էլ չենք կարող քեզ հակառակվել/

լիզու տալ, չբ. - հակաճառել.- Լը թօ քէֆըներըտ թօղա, նոր յես ձ՛եր խէտ կըխօսամ, տէնամ էն գ՛ախ էլի՞ լիզու կըտաք /Թող հարբածությունններդ անցնի, նոր ես ձեզ հետ կխոսեմ, տեսնեմ այն ժամանակ էլի՞ կհակաճառեք/

լիզուն բ՛ասվել, չբ. - 1.սկսել խոսել, 2.այլևս չհանդուրժել.- Զօնքա՛ճ, լիզուներըս հազիվ բ՛ասվե, թող խօսանք /Զոքանչ, հազիվ սկսել ենք խոսել, թող խոսենք/

լիզուն բ՛ըռվել, չբ. - համրանալ, չկարողանալ խոսել.- Թէ չէ ձ՛եր լիզուն յե՞փ էր բըռվե, վոր մըկա բ՛ասվե /Թե չէ ձեր լեզուն ե՞րբ էր փակվել, որ հիմա բացվել է/

լիզուն լալկըվել, չբ. - համրանալ.- Զօնքաճ ջան, դուզն եմ ճասում՝ քե վոր տէնում ենք, լիզուներըս լալկըվում /Զոքանչ ջան, ճիշտ եմ ասում, քեզ որ տեսնում ենք, համրանում ենք/

լիզուն կճապ հընգընել, չբ. - պապանձվել, չկարողանալ պատասխան տալ.- Ճիշտ ա, զօնքաճ ջան, լիզուներըս կճապ ա հընգում, ա՛, լը տե՛ /Ճիշտ է, զոքանչ ջան, լեզուներս կապ է ընկնում, ահա՛, տե՛ս/

լիզուն կըծել, չբ. - 1. լեզուն կծել, 2. գաղտնիքը կռահել.- Էսենց վոր զճնէր եմ չէ՛, էտ դ՛ուս խանուկ լիզուներըտ կըկըծէք, կըկըդրէք, կըտճնէք կըթճլէք էտ խօսօղ շճն դ՛էմը՝ չուտա /Էսպես որ խփել եմ՝ այդ դուրս հանած լեզուներդ կկծեք, կկտրեք, կտանեք կգցեք այդ խոսող շան առաջ, չի ուտի/

լիզուն կըպել, չբ.- վախից, անակնկալից կակազել.- Զօնքաճ, էտ ի՛նչ ասիր, լիզուս կըպավ /Զոքանչ, այդ ինչ ասացիր, վախից լեզուս չի շարժվում/

լիզուն կուլ էթալ - 1.լեզուն շրջվել դեպի կոկորդը, 2.պապանձվել.- Իմ լիզուն էլ կուլ գ՛ընաց, ա՛, էլ չեմ խօսում /Ես էլ պապանձվեցի, ահա՛, էլ չեմ խոսում/

լիզուն հիրանը քաշել, չբ. - լռել, չպատասխանել.- Է՛յ, Սճթօ, ճրի մճռթիտ ճսա՝ թօ լիզուն հիրանը քաշա /Է՛յ, Սաթո, ե՛կ ամուսնուդ ասա՛, թող լեզուն իրեն քաշի/

լիզուն հիրնից հէրկէն հըլնել - երկար լեզու ունենալ.- Սճրզօ, քօ մճռթի լիզուն էլ հիրնից հէրկէն ա /Մարզո, քո ամուսնու լեզուն էլ շատ երկար է/

լիզուն քճռթ չունենալ - մտքին եկածը ասել.- Զօնքաճ, քօ լիզուն էլ քճռթ չունի /Զոքանչ, քո լեզուն էլ արգելք չունի/

լիզվակըռիվ, գ. - վեճ

լիզվանի, ած. - լեզու տվող, անհնազանդ /հարս, կին, աղջիկ/

լիզվավորել, չբ. - դառնալ ագրեսիվ, հանդուգն

լիզվի տճնկ չըմընալ, չբ. - պատասխան տալ, հակաճառել

լիզվից ճռատ, ած. - շատախոս, հակաճառող

լիժ, ած. - խիստ ողորկ, լպրծուն

լիժ ու կոկ, ած. - հարթ, սահուն

լիժա (ռուս.), գ. - դահուկ

լիլ, գ. - տիղմ

լիմոնաթ (ռուս.), գ. - լիմոնադ

լիստ (ռուս.), գ. - թերթ

լոկ չայ, գ. - միայն թեյ

լող տալ, չբ. - լողալ

լորխ, գ. - կարտոֆիլի տեսակ

լուլ, մկ. - հարբած

լուլա (պրսկ., թրք.), գ. - 1. հրացանի փող, 2. սրունք, 3. կախված սառցաբեկոր

լուլկա, գ. - օրորոց

լուծ, գ.   - փորլուծ

լուծ քաշել, չբ. - ծանր աշխատանք կատարել.- Տընաշէն, խօ լուծ քաշել չէ՞ր, ճսին՝ էտա գ՛ըրքերը տեղավորա դա՛րա՛կը, նոր նըստի /Տնաշեն, հո ծանր աշխատանք չէ՞ր, ասացին՝ այդ գրքերը տեղավորիր դարակի մեջ, նոր քնիր/

լուծել // լուծ հըլնել, չբ. - փորլուծ ունենալ

լուս, գ. - 1. լույս 2. առավոտ 3. տեսողություն.- Դ՛ըռնէրից լուս ա թափում /Շատ մաքուր է բակը/

լուս ճնել, չբ. - 1.աստծու օգնելը, 2.լուսավորել, 3.լույսի աղբյուրի դեմը բացել.- Պըստի գ՛ախ տըղէս հըլնում էր նըստում էր լուսամութը, տընէցիքին ճսում էր՝ լո՛ւս ճրա /Փոքր ժամանակ տղաս ելնում նստում էր պատուհանի գոգին, տանեցիներին ասում էր՝ լո՞ւյս արա/

լուս ճռնել, չբ. - լուսավորվել

լուս ու հափեղա, ած. - մաքրամաքուր /հեգն./.- Սճղ ըսկըսին Վալօդին նճխատել, թէ հընչես խըլղի կընգա ճփտօն

նըստե, գ՛ացե Հէրէվան, Վալօդի կընիգն ասավ՝ լավ ա արե գ՛ացե, ձ՛եր ի՞նչ գ՛ոռծն ա, դ՛ուք լուս ու հափեղա՞ յէք /Բոլորը սկսեցին Վալոդին նախատել, թե՝ ինչո՞ւ ես ուրիշի կնոջ ավտոմեքենան նստել, գնացել Երևան, Վալոդի կինն ասաց՝ ձեր ի՞նչ գործն է, դուք մաքրամաքրո՞ւր եք/

լուս տալ, չբ. - լույս արձակել

լուս տալ, մութն առնել - ուշ ժամի /այցելել/.- Տըղա ջան, լուս տըվէր ես, մութն առէ՞ր ես, էս հընչե՞ս էս գ՛ախ էկե /Տղա ջան, էս ուշ ժամին ինչո՞ւ ես եկել/

լուսաթըլթախ, ած. - շատ գեղեցիկ.- Էս լուսաթըլթախ ախճի՞կը վորն ա. փախծըրէր ե՞ս /Այս չքնաղ աղջի՞կն ով է, փախցրել ե՞ս/

լուսամութ, գ. - պատուհան

լուսը բ՛ասվել - լույսը բացվել.- Քօ խէրն ու մէրը գիդո՞ւմ են. լուսը բ՛ասվավ՝ խէրըտ պըտի գ՛ա մեր տուն, էթում ենք խաշ ուտէլու /Քո հայրն ու մայրը գիտե՞ն, լույսը բացվեց՝ հայրդ գալու է մեր տուն, պիտի գնանք խաշ ուտելու/

լուսուղ՛եմ, գ. - լուսաղեմ.- Չեմ ասում՝ մըկա հըլնէք էթաք, բ՛այց լուսուղ՛էմին կամ պըտի էթաք, կամ պըտի լավ պախկըվէք, դ՛ու քօ խօր խայյաթը գիդում ես. ընձէլ քօ խէտ կըսպանա /Չեմ ասում՝ հիմա ելնեք գնաք, բայց լուսաղեմին կա՛մ պիտի գնաք, կա՛մ պիտի լավ թաքնվեք, դու քո հոր բնավորությունը գիտես՝ ինձ էլ քեզ հետ կսպանի/

լուսումըթախառը, մկ. - աղջամուղջին.- Լավ, խօրօխպէր, լուսումըթախառը կէթանք, մի՛ վախէցի /Լավ, հորեղբայր, աղջամուղջին կգնանք, մի՛ վախեցիր/

լուսուն, մկ. - վաղն առավոտյան.- Բ՛այց դո՞ր պըտի էթաք, տըղա ջան, լուսուն ճամփէքին սառույց գ՛ըլնի, դ՛ու յէլ խամ շօֆեր… /Բայց ո՞ւր պիտի գնաք, տղա ջան,

առավոտյան ճամփեքին սառույց կլինի, դու էլ անփորձ վարորդ…/

լուսուն խէտ, մկ. - լույսը բացվելուն պես.- Լուսուն խէտ, Խըչօյն ճսէր եմ, վոր գ՛ա. հիր ճֆտօյօվ կէթանք /Խչոյին ասել եմ, որ լույսը բացվելուն պես գա, իր ավտոմեքենայով կգնանք/

լուսօվ, մկ - ոչ գիշերով, երբ լույս կա.- Միրանո՛ւշ, ճխճըկան տճր, թօ քընի, մենք էլ մէշու հճշկ կըպցընենք, լուսօվ մէ բ՛ան կճնենք, քէլէք, քէլէք քընէլու… /Միրա՛նուշ, աղջկան տար, թող քնի, մենք էլ մի քիչ աչք կպցնենք, լույսը բացվի՝ մի բան կանենք, ելե՛ք, ելե՛ք քնելու/

լուսօվնալ, չբ. - լույսն առատանալ, պայծառանալ

լօդըռ (ռուս.), ած. - ծույլ, անբան.- Հէսա վոր լուսը բ՛ասվավ, խէրըտ գ՛ըքա, կճսա՝ էն մեր լօդըռ տըղին չէ՞ք տէսէ, գ՛իշերը էլի տուն չէկե. ի՞նչ ասեմ /Երբ լույսը բացվի, հայրդ կգա, կասի՝ մեր անբան տղային չե՞ք տեսել, գիշերը դարձյալ տուն չի եկել. ի՞նչ ասեմ/

լօթիյավարի, մկ. - անփույթ ձևով.- Լօթիյավարի դ՛էմը գ՛ընա-ճրի, ճսա՝ տէսէր եմ, յէտօ՞ /Անփույթ ձևով առջևը գնա-արի, ասա՝ տեսել եմ, հետո՞/

լօլօզ, ած. - երկարավուն, սրածայր.- Լավ ես ճսում, կըզճնա էսա լօլօզ գ՛ըլօխըս կըջ՛առթա /Լավ ես ասում, կխփի, էս երկարավուն գլուխս կկոտրի/

լօխկել, չբ. - քերծել /մաշկը/.- Բ՛այց հէտա քճչճլըտ լօխկուկ ա, էտ ի՞նչ ա հէլէ /Բայց ճաղատդ քերծված է, ի՞նչ է եղել/

լօխպըռտել, չբ. - քերծվածքներ ստանալ

լօկընալ // լօխկընալ, չբ. - լողանալ.- Լօխկուկ չէ, է՛, լօխպըռտուկ ա. տըղա՛ ջան, էնօր մըտէր ի բաղնիքը լօխկընում է, էս զալօտ էկավ, թէ՝ բ՛ե մէշկըտ պըռտեմ. ի՛մալ վոր ձ՛եռները դ՛ըրեց մըշկիս, վոտը թճլեց, ընձէլ բըռթեց, հընգա, գ՛ըլօխըս կըպավ վաննին, քէռծըվավ, ճրունը

չըռաց. հինքն էլ էտ ծա̊նդըր ջանօվ հընգե վըրէս, չըլնում /Մի տեղ չի քերծվել, քերծվածքներ եմ ստացել, տղա ջան, անցած օրը մտել էի բաղնիքը, լողանում էի, հորեղբորդ կինը եկավ, թե՝ բեր մեջքդ տրորեմ. հենց որ ձեռքերը դրեց մեջքիս, սայթաքեց, ինձ էլ հրեց, ընկա, գլուխս դիպավ լողատաշտին, քերծվեց, ահագին էլ արյուն եկավ. ինքն էլ իր ծանր մարմնով ընկել է վրաս, չի ելնում/

լօճել, չբ. - 1.լայնանալ /հագուստը, կոշիկը/, 2. ավել-պակաս խոսել.- Տըկից հազիվ ձ՛էն տըվի՝ տօ՛ յես քօ տիրու խէրը, տօ՛ յես քօ էսենց էնենցը, մէ կերպ վըրվիցըս հիչավ, ու ի՞նչ ա̊սա, վոր լավ հըլնի՝ բօլ ա լօճես, թօ վոդնէրիտ վըրէն պինդ կա̊յնիր, ընձէլ պա̊խիր /Տակից հազիվ ձայն տվեցի՝ տո՛ քո տիրու հերը, տո՛ քո այսինչ այնինչը. մի կերպ վրայիցս իջավ, ու ի՞նչ ասի, որ լավ լինի՝ հերիք է ավել-պակաս խոսես, թող ոտքերիդ վրա ամուր կանգնեիր, ինձ էլ պահեիր/

լօճըցընել, նբ. - լայնացնել.- Էլ չըդ՛իմացա, սա̊պոնը շըպըռտի վըրէն, ա̊սի՝ հէսա յես քե կըլօճըցընե՛մ, քօ տիրու մէրը… /Էլ չդիմացա, օճառը նետեցի վրան, ասացի՝ ես քեզ հիմա կլայնացնեմ, քո տիրու մերը…/

լօճուկ, ած. - լայնացած

լօճուկ /լօճօ/ բ՛էրան, ած. - մեծաբերան, պոռոտախոս

լօճօ-լօճօ խոսալ, չբ. - պոռոտախոսել.- Ընձի ա̊սավ՝ լօճուկ բ՛էրանըտ փագա, բօլա լօճօ-լօճօ խոսաս, ու էտ ծա̊նդըր ջա̊մդակն ա̊ռավ փախավ /Ինձ ասաց՝ լայնացած բերանդ փակի՛ր, հերիք է պոռոտախոսես, ու այդ ծանր մարմինն առավ փախավ/

լօմել, նբ. - լինգով աշխատել, հարվածել.- Հիշկացի կող ու կուշտըս, տէնամ՝ լօմն ընդե դ՛ըրուկ ա, վէրցի, էտենց տըգլոզ հընգա հիդեվը, ա̊սի՝ պըտի լօմեմ /Նայեցի շուրջս,

տեսնեմ՝ լինգն այնտեղ դրված է, վերցրի ու այդպես մերկ ընկա հետևից, ասացի՝ պիտի լինգով խփեմ/

լօնք, գ. - մեծ քայլ

լօնքել, չբ. - 1.մեծ քայլ անել, 2.մի բանի վրայով քայլ գցել-անցնել.- Վազավ մըտավ խացատուն, յես՝ հիդվից, թունդըրա բօլորն ընկըրսինք ֆըռալ, իմալ վոր ուզում ի թունդիրը լօնքի, հընգա մէչը, էս մէկէլ յանն էլ ըտե լօխկի /Վազեց, մտավ հացատուն, ես՝ հետևից, թոնրի շուրջ սկսեցինք պտտվել, հենց որ փորձեցի թոնրի վրայով մեծ քայլ անել, ընկա մեջը, այս մյուս կողմն էլ քերծեցի/

լօշտակ, գ. - մեծ ականջ .- Էկավ ձ՛եռըս բ՛ըռնեց, քաշեց, խէտն էլ ճասում՝ լօշտակներտ էլ ա քէռծըված /Եկավ ձեռքս բռնեց, քաշեց, հետո էլ ասում է՝ լոշտակներդ էլ են քերծվել/

լօշտակհանգըժներ, ած. - մեծ ականջներ ունեցող .- Չ՛էնըս էլ փորիցըս դ՛ուս չէր գ՛ալում, մէ կերպ ճասի՝ քօ լօշտակհանգըժներ խօր էսենց էնենցը…/Ձայնս փորիցս էլ դուրս չէր գալիս, մի կերպ ասացի՝ քո մեծականջ հոր այսինչ - այնինչը/

լօպազ, ած. - իրեն ցույց տվող, պարծենկոտ .- Էս էլ թէ՝ լօպա՛զ, խէրըս չըլնէր, դ՛ու ի՞նչ մճռթ իր. վոր դուզն ճասեմ՝ Էնենց քախծըր ընձի ճասավ՝ լօպա՛զ, դ՛ուրըս էկավ… /Սա էլ թե՝ լոպա՛զ, հայրս չլիներ, դու ի՞նչ մարդ էիր. որ ճիշտն ասեմ՝ այնպես քաղցր ինձ ասաց՝ լոպազ, դուրս եկավ…/

լօպազավարի, մկ. - ցուցադրաբար, սնապարծորեն .- Մէ խատ լօպազավարի թճլի թըշին, խընդաց /Մի հատ ցուցադրաբար խփեցի թշին, խնդաց/

լօպազնալ, չբ. - 1.իրեն ցուցադրել, պարծենալ, 2.ուժից վեր գործ բռնել .- Հուշիկ ճրունըս սըրփեց, ճասավ՝ դ՛ու կճնաս լօպազնաս, քանի վոր իմ նըման կընիկ

ունես /Կամաց արյունս սրբեց, ասաց՝ դու կարող ես լռպազանալ, քանի որ ինձ նման կին ունես/

լոտկա // լոտկ (ռուս.), գ. - նավակ

Խ

խա, վ. - հա, այո.- Խա՝ խա, չէ՝ չէ /Հստակ պետք է ասել՝ այո կամ ոչ/

խա յու չէ ա̈նել - հոգ տանել

խաբար (արաբ.), գ. - լուր, տեղեկություն

խաբար ա̈նել - տեղեկացնել, ապսպրել

խաբար ա̈ռնել, չբ. - լուր ստանալ, տեղեկանալ

խաբար գ՛ալ - լուր ստացվել

խաբար հըլնել, չբ. - տեղեկանալ, տեղյակ դառնալ

խաբար ունէնալ - տեղեկություն ունենալ

խաբար տալ - մատնել

խաբարբըզիկ // խաբրաբըզիկ, ած. - մատնիչ, խառնակիչ

խաբար-ջուղաբ, գ. - լուր, տեղեկություն, նորություն

խաբըրբ՛եր, գ. - լուր բերող

խազարան թեռթիկ, գ. - անասունի ստամոքս

խազարան խելքի տեր, ած. - շատ խելացի, բանիմաց

խազալ, չբ. - հազել

խազել // խազ քաշել - խազ՝ գիծ քաշել

խա̈զէն (ռուս.), գ. - տեր, ղեկավար, գործատու

խազը բ՛ըռնել, չբ. - սկսել հազել

խաթա (արաբ.), գ. - փորձանք

խաթըր (արաբ., թրք.), գ. - հարգանք, պատիվ

խաթըր ա̈նել , չբ.- պատիվը պահել, մեկին հարգել

խաթըրը չըկօղրել, չբ. - պատիվը պահել, ասածն անել

խաթըրն ա̈ռնել, չբ. - պատիվ տալով՝ սիրտը շահել

խաթրաշա̈խ, ած. - հարմարվող, պատիվ պահող

խաթրէ չըլնել - հարգանքը պահել, խոսքը անել
խաթրին, մկ. - մեկի պատվին, մեկին հաշվի առնելով
խաթրօվ, ած. - պատիվ պահող
խալաթ (արաբ., պրսկ.), գ. - տնային հագուստ
խալալ (արաբ., թրք.), ած. - արդար, մաքուր, հալալ
խալալ ա̂նել, նբ. - տալ մեկին՝ ի վայելումն.- Յես իմ սա̂ղ ունէ-
վասկը խալալ կա̂նեմ իմ ճըժէրին, հընչե՞մ տա̂լում
ըստուն-ընդուն /Ես իմ ողջ ունեցվածքը հալալ կանեմ
իմ երեխաներին, ինչո՞ւ եմ տալիս սրան-նրան/
խալալ - զուլալ, ած. - մաքուր
խալալ կա̂թնակեր, ած. - հալալ կաթնակեր, ազնիվ
խալալ հըլնել, չբ. - բարով վայելել
խա̂լա̂չօ, գ. - շինարարության մեջ օգտագործվող տախտակամած
խալաստօ (ռուս.), ած. - 1.առանց շարժիչը միացնելու, 2.ամուրի
խալել-խափանել, չբ. - հյուծվել-վերանալ (անեծք)
խալել-խըլըսել, չբ. - 1.սպառվել, 2.խիստ նիհարել.- Բալա ջան,
խաց չես ո՞ւտում, հընչե՞ս էտենց խալե-խըլըսե /բալիկ
ջան, հաց չե՞ս ուտում, ինչո՞ւ ես այդպես նիհարել/
խալըլել, չբ. - մաքրվել
խալի (պրսկ.) , գ. - գորգ
խալի-խալիչա, գ. - գորգեղեն.- Դ՛ու իմ զըռան-զըմփան տունը չե՞ս
խավնում, խալի-խալիչի դա̂ռղից ճա̂ր չըկա /Դու իմ շեն
ու լի տունը չե՞ս հավանում, գորգեղենով հագեցած է/
խալիչա (պրսկ.), գ. - գորգ
խալիսը (արաբ.) **քըցել**, նբ. - սպառել
խալիվոր, գ. - ծերունի, ալևոր
խալ-խալ, ած. - բծավոր
խալուկ յեղ - փխբ. մաքուր
խալուկ-թափուկ, մկ. - իսկական, ճիշտ և ճիշտ
խալումա̂շ, ած - հյուծված
խալումա̂շ հըլնել, չբ. - հալումաշ լինել.- Տըղէն էսա քանի տա̂րի
գ՛ացե խօպան, չըգ՛ալում, խառոն էլ խալումա̂շ ա հէլե,

խեխճը չիլա՝ բը ի՞նչ անա /Տղան այս քանի տարի գնացել է խոպան, չի գալիս, հարսն էլ հալումաշ է եղել, խեղճը չլա, բա ի՞նչ անի/

խալվաթ (արաբ., պրսկ.), ած. - խաղաղ, ոչ մարդաշատ

խալվաթ քըցել, չբ. - հարմար պահ ընտրել, որ մարդ չտեսնի.- Քըցե խալվաթ՝ թըխտերը գ՛օխծե /Հարմար պահ է ընտրել, թղթերը գողացել/

խալվըթել, չբ. - խաղաղվել, սակավամարդ դառնալ

խախանդ, ած. - խաղաղ, հանդարտ,

խախընդել, չբ. - խախաղվել, հանդարտվել

խախընդցընել, նբ. - հանդարտեցնել

խախծընել, նբ. - խաղացնել

խախկ, գ. - ծաղրանքի առարկա

խախկ ու խայտառակ անել, նբ. - խայտառակել

խախկ ու խայտառակ իըլնել, չբ. - խայտառակվել

խախտըվուկ, ած. - խանգարված, խելապակաս

խաղ ասել, չբ. - երգել

խաղ կապել, չբ. - մեկի կամ մի բանի վերաբերյալ երգ հորինել

խաղ ու պար, ած. - շատ հեշտ, դյուրին.- Իմ խըմար գ՛աճ քաշելը խաղ ու պար ա, բ՛այց չեմ գիդում, թէշտի մէչը հառէչ գ՛ա՞ճը լըցեմ, թէ՞ ջ՛ուրը /Ինձ համար պատ գաջելը շատ հեշտ է, բայց չգիտեմ՝ տաշտի մեջ սկզբից գաջը լցնե՞մ, թե՞ ջուրը/

խամ (պրսկ., թրք.), գ. - անփորձ, անմշակ.- Համ էլ լավ էք արե, վոր խամ մառթ չէք բ՛էրե, կավիրէր կըթօղէր. մէ լավ բ՛անվոր բ՛էրէք՝ թօ գ՛աճը շաղա, տա ընձի, կըտէնաք, թէ ինչ հուստա յեմ յես /Իրոք լավ էք արել, որ անփորձ մարդ չեք բերել, կավերեր, մի լավ բանվոր բերեք, թող գաջի շաղախը պատրաստի, տա ինձ,կտեսնեք, թե ինչ վարպետ եմ ես/

խամ ա̊ռնել, չբ. - տիաձ համ զգալ.- Ի՛մալ քօվլիդ եմ կըպե, էլ վոշ մէ խամ չեմ ա̊ռնում, չեմ գիդում՝ ինչ եմ ուտում, համ էլ՝ վոշ մէ բ՛ան դ՛ուրըս չըգ՛ալում /Ինչ քովլիդով վարակվել եմ, էլ ոչ մի համ չեմ զգում, չեմ իմանում՝ ինչ եմ ուտում, նաև՝ ոչ մի բան դուրս չի գալիս/
խամ գ՛ալ, չբ. - լըացուցիչ տիաձ համ ունենալ.- Էս յեղից խամ ա գ՛ալում, էլ ըտօվ ճա̊շ չէփես /Այս յուղից համ է գալիս, դրանով էլ ճաշ չեփես/
խամ խող, գ. - չցանված, բարեբեր հող.- Էն մեր վիրեվի բօստանը խամ խող ա, էստա̈րի ըտե կա̊ռտօլ եմ ցանում. վոր ջ՛ուրը տեղը հըլնի՝ յա̈քա̈ բերք կըտա /Այն մեր վերևի բոստանի հողը բարեբեր է, այս տարի այդտեղ կարտոֆիլ եմ ցանում, եթե ջուրը բավարարի, ահագին բերք կտա/
խամ ու խոտ, գ. - համ ու հոտ
խամախանէս, գ. - անաասունին խամից հանելը
խամավոր խառս, ած. - համեստ, հնազանդ
խամբըրել, նբ. - համբրել, հաշվել
խամեմ, գ. - համեմ
խամը խանել, չբ. - զզվեցնել, չափն անցնել.- Գա̈, դ՛ու ա̊ռթէն խամը խանում ես, լը ձ՛էնըտ կըղրա, նըստի տեղըտ /Տղա, դու արդեն չափն անցնում ես, լռի՛ր և նստի՛ր տեղդ/
խամը հըլնել, չբ. - անհետաքրքիր, անհամ դառնալ.- Հըմէն ինչի խամը հէլե. խացը էլ խաց չէ, ձ՛ուն ձ՛ու չէ, պա̊մադօրը պա̊մադօր չէ... յերքը յերք չէ… /Ամեն ինչ անհետաքրքիր ու անհամ է դարձել. հացը էլ հաց չէ, ձուն ձու չէ, պոմիդորը պոմիդոր չէ… երգը երգ չէ…/
խամընալ, չբ. - անվարժությունից ցավել
խամին էթալ, չբ. - մեկի տեղը դնել
խամ-խամ, մկ. - անվարժ ձևով
խամուղ (ռուս.), գ. - անուր
խամութուն, գ. - անվարժություն

խամօվ, ած. - համեղ
խամօվնալ, չբ. - համեղանալ
խայլի, գ. - հայելի
խայսաթ (արաբ.), գ. - բնավորություն.- Գա, ի՛մալ ըսկի խայսըթիտ թարգը չես տալում. ի՞նչ պառտադիր ա, վոր հըմընին անուն դ՛ընես /Այ տղա, ո՛նց բնավորությունդ չես փոխում. ի՞նչ պարտադիր է, որ բոլորի թերությունները նկատես/
խայսաթ անել, չբ. - դարձնել բնավորություն
խայսըթօվ, ած. - լավ բնավորություն ունեցող
խայտառակչի, ած. - խայտառակ անող
խանաք, գ. - կատակ
խանաք - չանաք անել, չբ. - կատակներ անել.- Ճըժերը հավքըվէր ին, խաղում ին, չուր լուս խանաք - չանաք արին, խընդացին /Երեխաները հավաքվել էին, խաղում էին, մինչև լույս կատակներ արեցին, խնդացին/
խանաք անել, չբ. - կատակել
խանաքվարի // խանաքվարի, մկ. - կատակով
խանգուռց , գ. - հանգույց.- Մէ կապեկի վըրէն խազար խանգուռց ա զանում /Խիստ ժլատ է/
խանդակ (արաբ., թրք.), գ. - փոս
խանել, նբ. - 1. հանել, 2. կռահել.- Էնենց լիզու ունի՝ օցը բ՛ընից կըխանա /Դյութող, համոզող խոսք ունի/
խանչալ (պրսկ.), գ. - դաշույն, թուր.- Կըռկըվե, մէ բ՛ուռ ա դ՛առցե, խանչալ զանես սիռտը՝ արուն չի գ՛ա, խէտը խօսալ չըլնում /Կծկվել, մի բուռ է դարձել, դանակ խրես սիրտը՝ արյուն չի գա, հետը խոսել չի լինում/
խանչըլել, նբ. - խանչալով հարվածել
խանութչի, գ. - խանութպան

խանում (թրք.), գ. - տիկին
խանք, գ. - շունչ
խանք ա̊ռնել, չբ. - հանգստանալ, շունչ քաշել.- Էլ չեմ կա̊նում, խանքըս կըդրում, կա̊յնէք մէշու խանք ա̊ռնենք, նոր էթանք /Էլ չեմ կարողանում, շունչս կտրվում է, կանգնեք մի քիչ շունչ քաշենք, նոր գնանք/
խանք խանել, չբ. - շունչ հանել, շնչել
խանքակըտուր, մկ. - շնչակտուր
խանքապա̊տառ, չբ. - շնչապատառ, շատ շտապ
խանքը կըդրել, չբ. - շունչը կտրվել.- Բ՛անցըր ու դիք սա̊ր էր, շա̊տէրի խանքը կըդրում էր, գ՛ախ-գ՛ախ կա̊յնում ին, նըստում ին յա պա̊րկում ին, բ՛այց ութանասուն տա̊րէկան պա̊պիկը ի՛մալ մէ խանքի հէլավ սա̊րի գ՛ըլօխը, նոր նըստավ /Բարձր ու ուղղահայաց սար էր, շատերի շունչը կտրվում էր, ժամանակ առ ժամանակ կանգնում էին, նստում կամ պառկում, բայց ութսուն տարեկան պապիկը ինչպե՛ս մի շնչով ելավ սարի գլուխ, նոր նստեց/
խանքը պա̊խել, չբ. - շունչը պահել
խանքը տեղը գ՛ալ, չբ. - շունչը տեղը գալ, հանգստանալ
խաշ, գ.- *ջրալի ճաշ՝ եղջերավոր անասունի ոտքերով, փորոտիքով*
խաշ դ՛ընել, չբ. - խաշ եփել.- Զօնքաճըս հէքուց խաշ ա դ՛ընում, հառավոտ գ՛ըքաս, էթանք ուտենք, էն քաշուկըտ ա̊րաղից կըբ՛էրես /Զոքանչս վաղը խաշ է եփում, առավոտյան կգաս, գնանք ուտենք, այն քաշածդ օղուց կբերես/
խաշլամա (թրք.), գ. - ջրում եփած միս.- Խաշլամա յէլ գ՛ըլնի, բը ի՞մալ /Խաշած միս էլ կլինի, բա ինչպե՞ս/
խաչ խանել, չբ. - խաչակնքել.- Զօնքաճըս բաջանաղիս ա շա̊տ սիրում, մէ խաչ ա̊սսու հիրեսն ա խանում, մէ խաչ էլ՝ բաջանաղիս /Զոքանչս քենակալիս է շատ սիրում, մի

խաչ աստծու երեսին է հանում, մի խաչ էլ՝ քենակալիս երեսը/

խաչան, ած. - հաչող.- Չէ՛, հիրանց շունը խաչան ա, կըծան չէ /Չէ՛, իրենց շունը հաչող է, կծող չէ/

խաչխամբուր, գ. - դրամ, որ գցում են եկեղեցու գանձանակի մեջ, փխբ. ողորմություն

խաչուփազ, ած. - խաչաձև

խա̈ռ, ած. - անհասկացող

խառ ու խավսար // խառը խավսար, մկ. - համահավասար.- Կո̈ռտօլը խառ ու խավսար ենք լըցե խորը, վոնչ սերմ ենք ջ՛օկե, վոնչ ջ՛ոչ, վոնչ պըստիկ /Կարտոֆիլը համահավասար լցրել ենք հորը, ո՛չ սերմ ենք ջոկել, ո՛չ մեծ, ո՛չ փոքր/

խառախուռա, գ. - մանր-մունր բաներ

խառըխըշտիկ, մկ. - խառնիխուռն

խա̈ռընալ, չբ. - դժվար հասկացող դառնալ

խառճըկաթ, գ. - խաչերկաթ.- Թունդըրա վըրէն խառճըկաթը դ՛ընում ին, դ՛առնում ին մէ ջ՛ոչ կո̈զանօվ ջ՛ուր ին դ՛ընում վըրէն, տո̈քնում էր, հըմընօվ լօկընում ինք, բը հ՞մալ /Թոնրի վրա խաչերկաթ էին դնում, հետո մեծ կաթսայով վրան ջուր էին դնում, տաքանում էր, բոլորով լողանում էինք/

խառնըշտել, նբ. - իրար խառնել, տակնուվրա անել

խառնըսվոր, գ. - հարսանիքավոր

խառնըստուն, գ. - հարսանքատուն.- Գիժը գ՛ընաց խառնըստուն, ո̈սավ՝ ըստե լավ ա քան մեր տուն /Ասվում է մի տեղ երկար մնալու, տուն դառնալը չհիշելու դեպքում/

խառջ (արաբ., պրսկ.), ած. - արժան, համեմատ.- Քօ խառջն ա /Քեզ արժան է/

խառսնաքուր, գ. - հարսնաքույր

խառսնութուն, գ. - հարսին վայել կեցվածք, չխոսկանություն

խաս (արաբ., պրսկ.), ած. - ընտիր, ազնիվ, անխառն

խասա (արաբ., թրք.), գ. - գործվածքի, կտորեղենի տեսակ
խասկընալ (հասկնալ), նբ. - հասկանալ.- Բ՛ան ճսա՝ բ՛ան խասկը-
նանք /Ասածիդ մեջ նյութ չկա/
խասկըցընել (հասկըցնել), նբ. - հասկանալ տալ
խասուկ, ած. - հասուն, հասած
խասվէխաս, մկ. - հասնելով, գրեթե հասնելով
խաստ ու բ՛արակ մէկ հըլնել - լավ ու վատ չտարբերակել
խաստագ՛ըլօխ, ած. - հաստագլուխ
խաստավիզ, ած. - հաստավիզ
խաստատ, ած. - հաստոտ
խաստաքամակ, ած. - մեծ հետույք ունեցող
խաստըցընել, նբ. - հաստ դարձնել
խաստհունքեր, ած. - հաստ ունքեր ունեցող
խաստուպինդ, ած. - մարմնեղ
խասցընել, նբ. - հասցնել
խավ, գ. - հավ.- Քաքակեր խավի նման կըտուցը գ՛էտնին ա քըսում /Երախտամոռ է/
խավան հըլնել// խավնել, նբ. - հավանել.- Էտ վոր վոշ մէկին խավան չես, դ՛ու ճնթճդճ՞ յես /Եթե ոչ մեկին չես հավանում, դու անթերի՞ ես/
խավարած, գ. - հավ պահող
խավի հճշկ, գ. - մանր աչք
խավողի գիլճ, գ. - խոշոր սև աչք
խավուճիվ, գ. - հավեր, տնային թռչուններ
խավսար, ած. - տարածական իմաստով հավասար, ոչ բարձր ու ցածր
խավսըրել, նբ. - հավասար դարձնել, հավասարեցնել
խավրել, չբ. - խավարել, մթագնել
խատ, գ. - միատեսակ առարկաներից յուրաքանչյուրը
խատ - խատ, մկ. - մեկ-մեկ
խատել, չբ. - սատկել.- Է՛շ, մի խատի, չում յօնջէն բ՛ուսի /Մինչև սպասելիքը իրականանա, ուշ կլինի/

խատըցընել, նբ. - սատկեցնել
խատուկ, ած. - սատկած.- Խատուկ էշ ա մա̀ն գ՛ալում՝ նա̀լերը քաշա /Անաշխատ շահ է որոնում/
խատուկուտ, մկ. - մեկընդմեջ
խարաբ (արաբ., պրսկ.), ած. - փչացած, չաշխատող, անսարք
խարաբ ա̀նել, նբ. - փչացնել.- Էս ի՛մալ ես էս ա̀փտօն խարաբ ա̀րե, վըրէն շա̀տ գ՛ոռծ կա̀, ա̀խպէր ջան /Այս ինչպե՛ս ես այս մեքենան փչացրել, վրան շատ գործ կա անելու, եղբայր ջան/
խարաբ հըլնել, չբ. - փչանալ
խարամ (արաբ.), ած. - անազնիվ, կեղծություն անող, անարդար, ապօրինի.- Լավ գիցի՝ խարամը գ՛ալում, խալալն էլ խէտն ա̀ռնում, էթում /Լավ իմացիր՝ հարամ ապրանքը գալիս, հալան էլ հետը առնում, գնում է/
խարամել, նբ. - փչացնել մեկի հաջողությունը, վայելքը.- Դ՛ուրըս չէկավ, վոր էտ ա̀նըռնօվ մա̀ռթը խըպառտ-խըպառտ պա̀դմում էր, թէ ի՛մալ հըռնգերը հիր ա̀նունը տըվե, օքտըվե, ու հինքը վօրօշե, վոր պըտի էտ մա̀ռթի վըրէն էտ օքուղը խարամա, ու խարամէ, գիվա̀ ի՞նչ՝ չըխասկըցա /Ինձ դուր չեկավ, որ այդ հայտնի մարդը հպարտ-հպարտ պատմում էր, թե ինչպես է ընկերը իր անունը տվել և օգտվել, իսկ ինքը որոշել է, որ այդ մարդու վրա այդ օգուտը պետք է հարամի, ու հարամել է, իբր ի՞նչ՝ չհասկացա/
խարամութուն, գ. - անազնվություն, կեղծություն
խարել, չբ. - տրորվելուց բորբոքվել, վերք առաջանալ
խարկել, չբ. - խարել, դաղել
խաց, գ. - հաց.- Ընդու խացի մէչն էլ ա̀ղ չըկա, վիրը լավ հէլավ, վօշ մէկը հաշվի չառավ /Նրան էլ գնահատող չկա, ում հանդեպ լավ եղավ, ոչ ոք հաշվի չառավ/
խաց ու խըմոր ա̀նել - հաց թխել

խաց տըվօղ, ած. - հյուրասեր
խացակեր, գ. - 1.հաց ուտող, 2. մարդ արարած
խացատուն, գ. - թոնրատուն.- Վայ թէ գ՛եղը էլ խացատուն չըմնցե, սնղ քանդած, էլ վո՞րն ա թունդիրը խաց թըխում /Երևի գյուղում էլ հացատուն չի մնացել, բոլորը քանդել են, էլ ո՞վ է թոնրով հաց թխում/
խացի հըլնել, չբ. - հաց թխելու մտադրություն ունենալ
խացխարամ, ած. - հացը հարամող, հաց ուտելը խանգարող.- Խացխարամ խօ չե՞ս, ծսի՝ կծյնի մէ կըտոր խաց ուտեմ, գ՛ամ /Հաց հարամող հո չե՞ս, ասացի՝ սպասի՛ր, մի կտոր հաց ուտեմ, գամ/
խացփոր, մկ. - /աշխատանք/ միայն ուտելու համար
խափան ջ՛ըրի հախպուր, գ. - անհետացող և նորից հայտնվող աղբյուր
խափանել, չբ. - անհետանալ.- Ա՛յ մառթ, ծֆտօյ բ՛ալնիսը դո՞ր խափանավ, հծշկընէրօվըտ չը՞նգե /Ա՛յ մարդ, մեքենայի բանալին ո՞ւր անհետացավ, պատահաբար չե՞ք տեսել/
խափըռտել, նբ. - խաբելով համոզել
խափլան, ած. - խաբող
խափխըփել, ած. - շարունակ խաբել
խափս տալ, չբ. - խաբելով խույս տալ
խծքծնդծզ // ծքծնդծզ, գ. - աղբթափիկ
խաք ու կծպ, գ. - հագ ու կապ, հագուստ.- Ըտու խաք ու կծպից էրէվում էր, վոր քախկից ա էկե. մեր դ՛արուփոս ճծմփէքին գ՛եղացին մծտկըրունգ չէր խաքնի, վոնչ էլ գ՛եղացին կըթօղէր, վոր ծխճիկը հուսերը էտքան բ՛ացէր /Դրա հագ ու կապից երևում էր, որ քաղաքից է եկել. մեր խորդուբորդ ճանապարհներին գյուղացին բարձրակրունկ չէր հագնի, ոչ էլ գյուղացին կթողներ, որ աղջիկը ուսերը այդքան բացեր/

խաքնել, նբ. - հագնել.- Մըկա վորն ինչ ուզում՝ խաքնում, էլ գ՛եղացի, քախկըցի չըկա /Այժմ ով ինչ ուզում՝ հագնում է, էլ գյուղացի, քաղաքացի չկա/
խաքցընել, նբ. - 1. հագնել տալ, 2. հարվածել
խաքուն-խըփուն, ած. - գեղեցիկ հագնված
խա̈ֆա̈, գ., ած.. - տոթ, հեղձուցիչ
խելք, գ. - խելք.- Վայ թէ մ̈ատըված խելքը մօտէտ մ̈ռե /Երնի խելքդ թռցրել ես/
խելք մ̈նել, չբ. - խելոք վարվել.- Դ՛ու վոր խելք մ̈նես, ջ՛ոչի խըրատը կըլըսաս, էտ մըտկից յետ կըկմ̈յնես /Դու խելոք կվարվես, եթե մեծի խրատը լսես, այդ մտքից հետ կկանգնես/
խելք խելքի տալ, չբ. - խորհրդակցել.- Հավքա՛ քեզնից խէլօքներին, խելք խելքի տըվէք, վոր մէ ճ̈ար գ՛ըթնէք /Հավաքի՛ր քեզնից խելոք մարդկանց, խորհրդակցեք, որ մի ելք գտնեք/
խելք հավքել գ՛ըլօխը - մտածված գործել.- Բօլ ա, խելք հավքա գ՛ըլօխըտ, խասկըցի՝ լավ բ՛ան չես մ̈նում, հէքուց մէկէլ օր սմ̈ղ կըթըքեն հիրեսըտ /Հերիք է, խելք հավաքիր գլուխդ, հասկացի՛ր, լավ բան չես անում, վաղը մյուս օր բոլորը քեզ կարհամարհեն/
խելքախան մ̈նել, նբ. - մոլորեցնել, հիմարացնել.- Տէնաս՝ վո՞րն ա քեզի խելքախան մ̈րե /Տեսնես՝ ո՞վ է քեզ մոլորեցրել/
խելքակըտուր, ած. - տրամաբանական, կարելի, հավանական.- Ախար ըսկի խելքակըտուր բ՛ան չես մ̈սում, է՜ /Ախր բոլորովին տրամաբանական բան չես ասում, է՜/
խելքել-խըրատել, նբ. - խելք սովորեցնել, խրատել.- Էտքան քեզի խելքում - խըրատում են, ի՛նչ գ՛ըլնի, լըսա՛, է՛լի /Այդքան քեզ խրատում են, ի՛նչ կլինի, լսի՛ր, է՛լի/
խելքէ խանել, նբ. - հրապուրել, մոլորեցնել.- Հաստաղ քեզի մէկը խելքէ խանե /Հաստատ քեզ ինչ-որ մեկը մոլորեցրել է/

խելքը բ՛ան չըկըդրել - չհավատալ, հույս չունենալ.- Խելքըս բ՛ան չըկըդրում, էտ մրածներըտ քօ խելքի բ՛անը չեն /Չեմ հավատում, արածներդ քո խելքի բանը չեն/
խելքը գ՛ըլխին, ած. - խելացի, դատող, կանոնավոր.- Լա՛վ, մէ խելքը գ՛ըլխին մարթը մեր վըրէն կըդրէ՞ր էր /Լա՛վ, մի՞թե մի խելամիտ մարդ չկար/
խելքը դ՛ընել մէկի խէտ - մեկի հետ վիճաբանության մեջ մտնել, ժամանակ վատնել.- Իզուր էլ խելքըս դ՛ընում եմ խէտըտ, մէկ ա՝ կարմիր կօվը կաշին չըփօխա /Իզուր էլ քեզ հետ ժամանակ եմ վատնում, միևնույն է՝ կարմիր կովը կաշին չի փոխի/
խելքը էթալ-գ՛ալօվ հըլնել - փոփոխամիտ լինել.- Դը քանի վոր խելքըտ էթալ-գ՛ալօվ ա, մէկ էս ես ասում, մէկ՝ էն /Դե որովհետև փոփոխամիտ ես, մեկ այս ես ասում, մեկ՝ այն/
խելքը էթալ մէկի խըմար - շատ սիրել.- Չըգիդաս՝ թէ ըտոնց խելքը քօ խըմար էթում, էն ա վոր՝ քեզնից օքուդ ունեն /Չիմանաս, թե դրանք քեզ շատ են սիրում, ուղղակի քեզնից օգուտ ունեն/
խելքը թըռցընել, չբ. - գժվել.- Չէ՛, իզուր ա, դ՛ու խելքըտ թըռցըրէր ես /Չէ՛, իզուր է, դու գժվել ես/
խելքը խացի խէտ ուտել, չբ. - հիմարանալ.- Խելքըտ խացի խէտ խօ չես կէրե, էտ ի՞նչ ես ասում /Խելքդ հացի հետ հո չես կերել, այդ ի՞նչ ես ասում/
խելքը կըդրել, չբ. - հավատալ.- Խելքըս չըկըդրում, ըտոնց խէտ մեր ջ՛ուրը մէ հառվօվ չէթա /Չեմ հավատում, մենք դրանց հետ համերաշխ լինել չենք կարող/
խելքը մաղել, չբ. - գլխապտույտ ունենալ
խելքը պաքսել, չբ. - գիտակցությունը որոշ չափով մթագնել
խելքը տալ /մէ բ՛անի/, չբ. - ողջ էությամբ տրվել մի բանի
խելքի բ՛էրել, նբ. - ճիշտ ուղու վրա կանգնեցնել
խելքի գ՛ալ, չբ. - խելոքանալ

խելքի մոտիկ, ած. - 1.կարելի, 2. բանական
խելքի պուտուկ /հեգն./, ած. - անխելք
խելքին խասնել, չբ. - հասկանալ.- Խա՛, ձսենք՝ էրէխա յա, խէլքին չըխասնում, էտենց բըշտո՞ւմ են /Հա՛, ասենք՝ երեխա է, չի հասկանում, այդպես կշտամբո՞ւմ են/
խելքին փըչել, չբ. - պատրաստվել անմիտ բան անելու
խելքիտ ձ՛ուն գ՛ա - հիմար ես
խելքից դ՛ուս, ած. - անչափ շատ
խելքից պմ̈կաս, ած. - թեթևամիտ, հիմար
խելքից-մըտկից // խելքէ-մըտկէ դ՛ուս - անչափ շատ
խելքն ուտել, չբ. - խաբելով համոզել
խեխճ ու կըրակ, ած. - խեղճ, թշվառ
խեխճընալ, չբ. - 1.խեղճանալ, 2.հնարավորությունները նվազել, 3.հիվանդանալ
խեխճ-խեխճ, մկ. - խեղճացած
խենթ ու խմ̈ֆիֆ, ած. - հիմարավուն
խեռը /մէկից/, մկ. - հեռու
խեռն ձ̈սօղաց խեռ լըսօղաց - հեռու ասողներից և լսողներից
խէզնել, նբ. - հեծնել
խէլըրել, չբ. - շշմել, ձանձրանալ
խէլըրթըփել, չբ. - հոգնել, շշմել
խէլըրթըփուկ, ած. - հոգնած, շշմած
խէլըրուկ, ած. - շշմած
խէլըրցընել, նբ. - շատ և անբովանդակ խոսելով՝ դիմացինին հոգնեցնել, շշմեցնել
խէլի վախտ, մկ. - երկար ժամանակ
խէլի վէջը // էթաջը (արաբ.) **չըլնել**, չբ. - անտարբեր լինել
խէլօք, ած. - խելացի
խէլօքնալ, չբ. - խելոքանալ
խէնախ, վ. - հարկավ, բնականաբար
խէվալ, չբ. - արագ-արագ շունչ քաշել
խէվխըվալ, չբ. - հևալ, շնչակտուր լինել

խէտ, կ. - 1.հետ, 2. անգամ.- Կ՞թի խէտ մըտուկը խօքու խէտ դ՛ուս գ՛ըքա /Մանկուց ձեռք բերված հատկանիշները հաստատուն են/

խէտը դ՛ընել, չբ. - անընդհատ հրահրել.- Վիր խէտ էլ էտքան դ՛ընեն, կընէրվայնանա, բը ի՛մալ ես ՞սում /Ում էլ այդքան հրահրեն, կնյարդայնանա, բա ի՞նչ ես կարծում/

խէտը խըռօվ հըլնել, չբ. - մեկի հետ խռոված լինել

խէտը հըլնել, չբ. - սիրային կապի մեջ լինել

խէտը հընգնել, չբ. - 1.ձեռք առնել, հեգնել, 2.թշնամանալ

խէտը ունէնալ, չբ. - բարեկամական հարաբերության մեջ լինել

խէտը չարա չըլնել, չբ. - չկարողանալ համոզել, հետ պահել

խէտը վոտ թ՞լել, չբ. - իրեն մեկին հավասար համարել, համեմատվել.- Դ՛ու ջ՞յէլ ես, բ՛այց էնի յէլ տ՞սը քօ չափ խելք ու փօռց ունի, ի՞մալ ես ընդու խէտ վոտ թ՞լում, հընչի վոր ջօչըցե, պըտի վոտից բ՛ըռնեն տ՞նեն թ՞լե՞ն, ինչ ա՝ քօ խըմար տե՞ղ բ՛ացեն… բ՞նդ հէլի, քօ գ՛ախն էլ գ՛ըքա /Դու ջահել ես, բայց նա էլ քեզնից տասն անգամ ավելի խելք ու փորձ ունի, ինչպե՞ս ես նրա հետ համեմատվում, ինչու եթե մեծացել է, պետք է մի կողմ նետեն, ինչ է թե՝ քեզ համար տե՞ղ բացեն… սպասի՛ր, քո ժամանակն էլ կգա /

խէր[1], գ. - հայր.- Փաշի հիդվից փաշի խէրն անիծում են /Բոլորի հետևից էլ խոսում են/

խէր[2] (արաբ., թրք.), գ. - բարիք, բարություն.- Վոնչ խէրն ըտուն, վոնչ բարաքէն ընդուն /Երկուսն էլ արժանի չեն/

խէր հըլնել, չբ. - բարենպաստ լինել

խէր տէնալ, չբ. - օգուտ քաղել.- Չուր մըկա քեզնից վո՞րն ա խէր տէսե, վոր մենք տէնանք /Մինչև այժմ ո՛վ է քեզնից օգուտ ունեցել, որ մենք ունենանք/

խէրագ՛ըլօխ, գ. - գործը նախաձեռնող, գլխավորող

խէրազ՛ըլօխ հըլնել, չր. - նախաձեռնել, միջնորդել.- Վորը խէրազ՛ըլօխ հէլե, թօ էն էլ պ՛ադասխան տա, իմ ի՞նչ գ՛ոռծն ա /Ո՛վ նախաձեռնել է, թող նա էլ պատասխան տա, իմ ի՞նչ գործն է/
խէրախօրուկ, ած. - հայրը թաղված (անեծք է)
խէրամեռ, ած. - հայրը մեռած (անեծք է)
խէրել // խէրվել, չր. - օգտվել
խէրկուրուս - բարիքի կորուստ.- Խէր ա՛րէր ես՝ խէրկուրուս մի ա՛րա /Բարություն ես արել՝ հակառակը մի արա/
խէր-շա՛ռ-ա՛ստըված - *կրկնելով ասվում է համրիչ քաշելիս*
խէրվընեկ, ած. - մեկ տարեկան /անասուն/
խէրվընէ // խէրվորէ, մկ. - նախորդ տարվանից
խէրքել, չր. - բավարար լինել, բավականացնել
խէրօվ, ած. - օգտակար, շահավետ
խըզբըզել, , չր. - անկանոն գծեր քաշել
խըզխըզալ, չր. - թոքերից խզոցի ձայն գալ
խըզխըզոց, գ. - խզխզոց
խըթ, մկ. - հենց.- Խըթ ձ՛ունը թըռավ, էտ հասարը պըտի շա՛րեմ /Հենց ձյունը հալվեց, պատը պիտի շարեմ/
խըթխէտուն, մկ. - անմիջապես
խըթվել, չր. - խրվել մի բանի մեջ, թաղվել.- Հէլ ա՛րի, էս ի՛նչ տիլ ա ձ՛եր ճա՛մփէն, ա՛ֆտօն խըթվե, ա՛րի բըռօթա, տէնամ՝ կա՛նա՞նք խանենք /Վեր կաց ե՛կ, այս ի՛նչ ցեխ է ձեր ճանապարհին, մեքենան թաղվել է, ե՛կ հրի՛ր, տեսնեմ՝ կկարողանա՞նք հանել/
խըժբըժալ , չր.- աչքերը շաղվել
խըժվըժալ, չր. - 1. միջատների զեռալը, շարժվելը, 2. աչքերի առջև պատկերների աղճատվելը, անկանոն շարժվելը
խըլամ (ռուս.), ած. - անպետք, անպիտան
խըլըսել, չր. - սպառվել
խըլիս//խալիս (արաբ., թրք.), գ. - վերջ
խըլիսը քըցել - վերջացնել, սպառել

խըլխըլալ, չբ. - շատ դանդաղ, հազիվհազ ուտել
խըլղ (արաբ.) , գ. - ուրիշ, օտար, կողմնակի մարդ.- Գիդո՞ւմ ես՝ ա̈խճիկը խըլղի տա̈ն ճըրաք ա, բ՛այց մէկ ա՝ խօր ու մօր հա̈շկի լուսն ա, օր ու ա̈րեվն ա /Գիտե՞ս՝ աղջիկը ուրիշի տանն է ապրելու՝ լույս տալու, բայց միևնույն է՝ հոր ու մոր աչքի լույսն է, օր ու արևն է/
խըլղի ճընջուլք ուտող, ած. - ուրիշի թերմացքը ուտող, ուրիշի հաշվին ապրող
խըլուշ-խըլուշ հըլնել, չբ. - անհանգիստ շարժումներ անել, իրար խառնվել
խըլվըլալ, չբ. - անկանոն շարժվել, վխտալ
խըլվըլիկ, ած. - անընդհատ շարժվող
խըլօրիկ, գ. - մանր կարկուտ
խըխճամ, գ. - ցավից ուռած գեղձ
խըխմել, նբ. - փշրել
խըմար, կ. - պատճառով, նպատակով, հօգուտ
խըմբըրել, չբ. - ընդարմանալ, հանգստանալ /ցավը/
խըմուկ, ած. - հարբած
խըմոր, գ. - խմոր.- Էտ խըմորը լը շա̈տ ջ՛ուր կըվէրցա /Այդ հարցը դեռ երկար կքննարկվի/
խըմցընել, նբ. - հարբեցնել, խմեցնել
խըմօղ, ած. - հարբեցող
խընամակա̈նչ, գ. - խնամիներին հյուրասիրելու նպատակով տուն հրավիրելը.- Հառէչ վոր տըղա-ա̈խճիկ նըշանում ին, էրկու յանանց խընամակա̈նչ ին ա̈նում, հիրար ծա̈նօթանում ին /Առաջ երբ տղա-աղջիկ նշանում էին, խնամականչ էին անում, իրար հետ ծանոթանում էին/
խընամի էթալ, չբ. - հարսանիքի ժամանակ աղջկա կողմից տղայի տուն գնալը
խընամի տա̈նել - հարսանիքի ժամանակ հրավիրվածին խնամու տուն տանել
խընգըռել, չբ. - խունանալ, գունաթափվել

խընդըցընել, նբ. - ուրախացնել
խընդմընդալ, չբ. - ժպտալ
խընթըրվորել, չբ. - շատ խնդրել
խընձըրախամ, գ. - խանձահամ.- Վէրցե ո՞սե՝ ո՞լնի յէր, խընձըրախամն էլ տըվեց վըրէն /Ասել է՝ մի բան չէր, ավելի վատացավ/
խընձըրել, չբ. - խանձվել
խընձըրխըմել, չբ. - խանձահամ ձեռք բերել.- Կընի՛կ, էրէվում՝ էս ճո՞շի տո՞կը կըպե, խընձըրխըմե, ուտել չըլնում /Կի՛ն, երևում է՝ այս ճաշի տակը այրվել է, խանձահամ է ձեռք բերել, ուտել չի լինում/
խընուց, մկ. - հնուց
խընչել, չբ. - քիթը մաքրել
խընջիկ - բընջիկ հըլնել, չբ. - ծածուկ ծիծաղել
խըշխըշոց, գ. - խշշոց
խըշկել, չբ. - 1.մարել, 2.լռել, չհանդգնել, 3.չգործել.- Կըրակը խըշկավ, հէլէք գ՛ացէք ձ՛եր տեղերը, քընէք, քանի չէք մըռսե /Կրակը մարեց, ելեք գնացեք ձեր տեղերը, քնեք, քանի չեք մրսել/
խըշշալ, չբ. - ջրի, անձրևի ձայնը
խըշուր ո՞ղ, գ. - խոշոր հատիկներով աղ
խըշտ (պրսկ.), ած. - ընդվզող
խըշտ հըլնել, չբ. - կտրուկ արձագանքել
խըշտել, նբ. - սուր առարկայով ծակել
խըշտել-բ՛ըշտել, նբ. - խիստ հանդիմանել.- Էտ ի՞նչ սօվօրութուն ա՝ սո՞ղին խըշտում-բ՛ըշտում էս, դ՛ո՞ւ յէս վօրօշում լավն ու վատը, սո՞ղ պըտի քօ խօսկօվ-խաբրօ՞վ հըլնեն /Այդ ի՞նչ սովորություն է՝ բոլորին հանդիմանում ես, դո՞ւ ես որոշում լավն ու վատը, բոլորը պետք է քո ասածո՞վ շարժվեն/
խըշտըկել, նբ. - մետաղյա ձողով խոցել
խըշտիկ (պրսկ.), գ. - մետաղյա ձող

խըշրել // խըրշել, նբ. - խշրվել, փշրվել
խըռալ // խըռըցընել, չբ. - խըռացնել
խըռզոտ, ած. - կտրված ձայն ունեցող
խըռզօտել, չբ. - ձայնը կտրվել, խռպոտել
խըռիկը տալ - վռնդել
խըռխըռալ, չբ. - խեղդվելիս ձայն հանել
խըռճըկել, նբ. - խոթել մի տեղ, թաքցնել
խըռշել, նբ. - փշրել, մանրել
խըռջել (արաբ., թրք.), նբ. - ծախսել.- Ժօղօվըռթի ձ՛եռին փող չըկա, ինչ ըստանում են՝ մէ քանօրվա մէչ խըռջում են, էլ ձ՛եռընէրին բ՛ան չըմընում, ի՛նչի վըրէն ուրախ հըլնեն… /Ժողովրդի ձեռքին փող չկա, ինչ ստանում են, մի քանի օրվա մեջ ծախսում են, էլ ձեռքներին բան չի մնում, ինչի՛ վրա ուրախ լինեն…/
խըռռալ, չբ. - անձրևի տարափ տեղալը
խըռռալէն, դբ. - մեծ թափով /անձրևը/
խըռտընել, չբ. - խրտնել
խըռտընցընել, նբ. - խրտնեցնել.- Շուն կա՞՝ խաչում, գ՛էլ ա խըռտընցընում, շուն կա՞՝ խաչում, գ՛էլ ա բ՛էրում /Ամեն մեկը նույն կերպ չի գործն անում/
խըռցել, նբ. - խուրձ կապել
խըռօվ // խըռօվ - խըռօվ, մկ. - խռոված
խըռօվ մընալ, չբ. - խռոված մնալ
խըռօվ պա՞խել, չբ. - մեկի հետ խռոված լինել
խըռօվել, չբ. - խռովել
խըսիլ (արաբ.), գ. - փսիաթ
խըստել, չբ. - սաստկանալ
խըրբել // խըրբըվել, նբ., չբ. - փչանալ, փչացնել
խըրել, նբ. - 1.խրել, 2. շտապ գնալ
խըրիշտակակոխ հըլնել, չբ. - գերբնական ուժերից հարված ստանալ, հրեշտակներից վախենալ, մարմնով թուլանալ.- Էս ա՞խճիկը վայ թէ խըրիշտակակոխ ա

հէլե, գ՛ույնը ըսկի դ՛ուրըս չըգ՛ալում, պըտի տա՞նես հիշկօղի կուշտ, հընչէ՞ս թա՞ռս հիշկում… /Այս աղջիկը երևի հրեշտակներից վախեցել է, գույնը բոլորովին ինձ դուր չի գալիս, պիտի տանես գուշակի մոտ, ինչո՞ւ ես խեթ նայում/

խըրխըրել, չբ. - փուխր դառնալ

խըրխիր, ած. - փուխր

խըրկել , նբ.- 1.վռնդել, 2. կնոջից բաժանվել.- Դըռնից խըրկում ես՝ հէռթըսից ա մըդնում /Համառ և աներես է/

խըրուսկ, գ. - օձառի մաշված կտոր

խըրվոր, , գ. - հարսանիքի ժամանակ հարսի տուն գնացողներ

խըփել, նբ. - փակել

խիբար, գ. - մանր քարեր

խիժ, գ. - նոր ծնած կովի կաթ

խիխճըտ կըղրի - *հանդիմանություն է*՝ անխիղճ *իմաստով*

խիմ ա՞նել, չբ. - շենքի հիմքը պատրաստել

խիմ քըցել, չբ. - հիմքը գցել.- Էթում ենք ա՞խպօրըս տըղի տա՞ն խիմը քըցենք, շա՞տ ջ՛ոչ ա բ՛ըռնըցըրե, շուտ չենք պըռծնի /Գնում ենք եղբորս տղայի տան հիմքը գցենք, շատ մեծ է նախատեսել, շուտ չենք ավարտի/

խիյալ (արաբ., պրսկ.), գ. - երազանք

խիյալօվ քընել, չբ. - ինչ-որ բանի մասին երազելով քնել.- Երեվի խիյալօվ ի քընե, էրազիս գիվա՞ էս հըմէն ինչը էրազ էր, յես զառթընէր ի, վոշ մէ վատ բ՛ան էլ չէր հէլե /Երևի երազելով էի քնել, երազումս իբր այս ամենը երազ էր, ես զարթնել էի, ոչ մի վատ բան էլ չէր եղել/

խիյար (պրսկ., թրք.), գ. - վարունգ

խինա՞ (արաբ., թրք.), գ. - հինա

խինա՞ժըվա՞, ած. - աներես, շարժուն

խինումին, ած.   - հնացած, հնոտի

խիվընդի խընձոր բ՛էրօղ, ած. - ուշացնող.- Քօ հույսին էլ մընալ չըլնի, իսկական խիվընդի խընձոր բ՛էրօղ ես, քա՞նի

ժամ ա՝ գ՛ացէր ես, չըկաս /Չենք կարող քեզ վրա հույս դնել, ուշացող ես, քանի՞ ժամ է՝ գնացել ես, չկաս/

խիվրնդոտ, ած. - հիվանդոտ

խիտրի (ռուս.), ած. - խորամանկ

խոզանոց, գ. - 1.խոզանոց, 2.կեղտոտ, թափթփված բնակարան

խող, գ. - հող.- Ընդու վոտի տըկի խողը չ՜աժի, բ՛այց հիրանը էնենց ա պ՜ախում, կ՜ասես՝ հինքն ա, վոր կ՜ա /Նրանից շատ ցածր մարդ է, բայց իրեն այնպես է պահում, կարծես ինքն է ամենակարևորը/

խող ու ջ՛ուր, գ. - հայրենիք, բնօրրան.- Հիր խող ու ջ՛ըրի հարգը չըգիցօղը հի՞նչ մ՜առթ ա /Իր հող ու ջրի հարգը չիմացողը ի՞նչ մարդ է/

խողգ՛ըլօխ - *անեծք է, հանդիմանություն*

խողերըս գ՛ըլխիտ - *իր առավելությունը խոսակցին հայտնելու կապակցություն*

խողոտ, ած. - հողոտ, փոշոտ.- Խողոտ վոդներով հառէչ մի՛ առի, դո՞ր ես գ՛ալում /Հողոտ ոտքերով առաջ մի՛ եկ, ո՞ւր ես գալիս/

խողօտել, նբ., չբ. - հողոտել, հողոտվել.- Վա՛յ, ասի կ՜այնի, է՛լի, ս՜աղ խալին խողօտիր, կըմ՜աքրե՞ս, էլի նէրվայնացա, չես տէ՞նում՝ ճ՜աշ եմ էփում /Վա՛յ, կանգնի՛ր, է՛լի, ամբողջ գորգը հողոտեցիր, կմաքրե՞ս, էլի նյարդայնացա, չե՞ս տեսնում՝ ճաշ եմ եփում/

խոտ, գ. - հոտ, բուրմունք.- Էս հ՛ինչ լավ խոտ ա գ՛ալում /Այս ինչ լավ բուրմունք է գալիս/

խոտ ա՛ռնել, չբ. - հոտ զգալ.- Դ՛ու խոտ չե՞ս ա՛ռնում, լը ձեռըտ բ՛ըռնա, էտ հ՞ինչ ես պ՜ախում /Դու բուրմունք չե՞ս զգում, մի ձեռքդ ցո՛ւյց տուր, այդ ի՞նչ ես թաքցընում/

խոտ գ՛ալ, չբ. - հոտ զգացվել.- Վա՛յ, Գըռիձորա ծ՜աղիկ ա, յես էլ ասում եմ՝ էս հ՞ինչ լավ խոտ ա գ՛ալում /Վա՛յ, Գռիձորի ծաղիկ է, ես էլ ասում եմ՝ այս ի՛նչ լավ բույր է գալիս/

խոտ խանել - հոտ հանել

խոտ քաշել - հոտոտել, հոտ քաշել.- Վա՛խ, տու խոտ քաշեմ, մի՛ խան, կօշիկներըտ մի՛ խան, բ՛ան չըկա, ճոթէն թօզօտե, հէսա կըբ՛էրեմ կըպիլասօսեմ /Վա՛խ, տու՛ր հոտ քաշեմ, մի՛ հան, կոշիկներդ մի՛ հան, արդեն փոշոտվել է, հիմա կբերեմ փոշեկուլով կմաքրեմ/

խոտել, չբ. - նեխելուց տհաճ հոտ արձակել.- Պըտի ջ՛ըրի մէչ դ՛ընեմ, վոր մընաց կըխոտի, նեռսից վազը կըբ՛էրե՞ս /Պիտի ջրի մեջ դնեմ, որ մնաց, կհոտի, ներսից վազը կբերե՞ս/

խոտը ճշխար բ՛ըռնել - բույրը տարածվել շրջակայքում.- Բ՛էրի՞ր, ճրի թուշըտ պճչեմ… Հընչի՞ չես թըրաշվում… Հէսա ծճխկի խոտը ճշխարը կըբ՛ըռնա, էն Թաքուշն էլ խոտը կճռնի գ՛ըքա /Բերեցի՞ր, եկ թուշդ համբուրեմ… հիմա ծաղիկի ամենուր կտարածվի/

խոտը բ՛էրան հնյվճն, ած. - անհասկացող.- Ի՞մալ խեխճին խոտը բ՛էրան հնյվճն մճռթը թօղեց, գ՛ընաց, ինչ ա՝ Թաքուշն ճսէր էր՝ տըլոտ վոդնէրօվ նեռս մի՛ ճրի /Ինչպե՞ս խեղճին անհասկացող ամուսինը թողեց, գնաց, ինչ է թե՝ Թաքուշն ասել էր՝ ցեխոտ ոտքերով ներս մի՛ եկ/

խոտը կըդրել, չբ. - այլևս չբուրել.- Քանի խոտը չըկըդրե, մէ քանի խատ կըտամ, թօ Թաքուշը տճնա, դընա իիր սեղանին /Քանի բուրմունքը չի կտրվել, մի քանի հատ կտամ, թող Թաքուշը տանի, դնի իր սեղանին/

խոտկեռ, գ. - գործիք, որով վերցնում են խուրձը

խոտն ճռնել - 1. Հոտը զգալ, 2. գլխի ընկնել, կռահել.- Ահա՛, էկավ, չասի՞՝ խոտը կճռնի գ՛ըքա /Ահա, եկավ, չասացի՞՝ հոտը կզգա, կգա/

խոտուկ, ած. - հոտած

խոտքաղ, գ. - խոտհունձ

խոց խանել, չբ. - խոց ունենալ

խոցոտել, չբ. - խոցերով պատվել
խուզլի,ած. - թթված, անեկ /խմոր, հաց/
խուզ անել, չբ. - զբաղվել ոչխար խուզելով.- Բիձա Թօրօյ նըման վոշ մէկը չէր կանում խուզ անէր /Բիձա Թորոյի նման ոչ ոք չէր կարողանում ոչխար խուզել/
խութ, գ. - 1.ծառի խութ, 2.անհասկացող
խուժան,ած. - իրեն լկտի, անպատկառ պահող, փողոցային
խուժանութուն անել, չբ. - լկտիություն անել
խուլ, գ. - ճարպագունդ
խում ու լում, մկ. - կենդանի-կենդանի, առանց եփելու /ուտել/
խում-խում, մկ. - հում վիճակում
խունջան, գ. - անդրավարտիքի կապ /թուլ խունջան/
խունջիկ - մունջիկ հըլնել, չբ. - խնդմնդալով կոտրատվել
խուշկուրուրիկ, գ., ած. - 1.խրտվիլակ, 2.կծկված մարդ
խուռդա (պրսկ., թրք.), գ. - մանրադրամ
խուռդել, նբ. - դրամը մանրել
խուս, գ. - խյուս
խուսել, նբ. - ճաշի մեջ խյուս լցնել.- Մըտէս գ՛ացէր էր, ճաշը չի խուսե. կիսուրըս թառս հիշկաց, բ՛այց բ՛ան չասավ. թէ ինչ արավ, ինչ չարավ՝ վորը կէրավ՝ խավնեց /Մոռացել էի, ճաշի մեջ խյուս չէի լցրել. սկեսուրս խեթ նայեց, բայց բան չասաց. թե ինչ արեց, ինչ չարեց՝ ո՛վ կերավ, հավանեց/
խուսել-լիզել, նբ. - անհյուրասեր լինել, դուռը փակել և նստել ճաշի
խուր (հյուր), գ. - հարսանիքի ժամանակ փեսայի կողմից հարսի տուն գնացող հյուր /խուր էթալ/
խուր էթալ, չբ. - 1.արագ և հանդիսավոր քայլել, 2.հարսանիքի ժամանակ գնալ հարսի տուն
խուր ու խըրեղեն, ած. - շատ գեղեցիկ
խուրմա, գ. - արմավ.- Բաղդադ էլ շա՞տ խուրմա կա՞ /Անմատչելի բարիքը ո՞ւմ է պետք/

խուփ[1], գ. -ամանի կափարիչ.- Խուփը գըլօրէ՝ ռ̈օռէ պուտուկին /Հանդիպածները իրար լրացնում են/

խուփ[2], ած. - փակ

խուփբ՛էրան, ած. - քչախոս, զաղտնապահ

խօ, վ. - հո

խօղ //խօղի տալ, նբ. - շարժիչն աշխատեցնել

խօղել, նբ. - մեքենայի շարժիչը աշխատեցնել

խօղը հանքել, չբ. - շարժիչը կանգ առնել.- Այ մառթ, էս ռ̈փտօյից յես բ՛ան չեմ խասկընում, հըմէն ինչ տեղն ա, մէկ էլ ճռ̈մփի մէշտեղը խօղը հանքում /Այ մարդ, այս մեքենայից ես բան չեմ հասկանում. ամեն ինչ տեղն է, մեկ էլ ճանապարհի կեսին շարժիչը կանգ է առնում/

խօղի հընգնել, չբ. - շարժիչն աշխատել

խօղի քըցել, նբ. - շարժիչը աշխատեցնել

խօզզին, գ. - ուզնկան, աղջիկ ուզող

խօզի // խօզնի, ձ. - երանի

խօթել, նբ. - խոթել, մտցնել, ներս կոխել

խօլոր, ած. - մռայլ, հանդիմանող շեղ հայացք

խօլոր զռ̈նել, չբ. - խեթ և չարությամբ նայել.- Մընում, մընում էր՝ էտ կընիկը մեզի խօլոր էր զռ̈նում, թէ ի՛նչը դ՛ուրը չէր գ՛ալում, չեմ զիդում /Ժամանակ առ ժամանակ այդ կինը մեզ խեթ էր նայում. Թե ինչը դուր չէր գալիս, չեմ իմանում/

խօլոր հիշկալ, չբ. - խեթ նայել

խօխմռ̈, գ. - ծիծաղաշարժ պատմություն

խօնթխընթալ, չբ. - իրեն չվերաբերող ինչ-որ բան որոնել

խօպանիստ, գ. - արտագնա աշխատանքի մեկնող

խօռ զռ̈նել, չբ. - կշտամբանքով շեղ նայել

խօռընթ, ած. - խորը.- Հընցած ռ̈շուն մէ խօռընթ փօս փօրինք, մէ մէշօք զռ̈զռ̈ր լըցինք, ծռ̈սկինք, վօր գ՛արնան յանը խանինք, բ՛այց գ՛արուն տեղը կուրցըրինք, էտենց

մընաց խողի տա̊կը /Անցած աշնան մի խոր փոս փորեցինք, մի պարկ գազար լցրինք, ծածկեցինք, որ գարնան կողմը հանեինք, բայց գարնանը տեղը կորցրինք, այդպես մնաց հողի տակ/

խօռընթնալ, չբ. - խորանալ

խօռընթցընել, նբ. - խորացնել

խօռթել, նբ. - 1.մաքրել, փոսից հանել, 2.տնից ապրանքը հանել

խօռճակ, գ. - խորշ

խօռմել, նբ. - խոռոմ՝ խուրձ անել

խօռմըռկըտալ, չբ. - բարկացած նայել և ինչ-որ ձայներ հանել

խօռօմ ա̊նել - խոտի խուրձ կապել

խօսալ, չբ. - խոսել.- Էլ խէտը խօսալ չըլնում /Այլևս հետը խոսել չի լինում/

խօսկ ա̊նել, չբ. - խնդրանքը, պատվերը կատարել

խօսկ ա̊ռնել, չբ. - աղջիկ ուզել և ստանալ ծնողների համաձայնությունը

խօսկ բ՛անալ, չբ. - մի բանի մասին զրույց սկսել

խօսկ թա̊լել, չբ. - միջամտել, անուղղակի հասկացնել

խօսկ ու խաբար, գ. - ասու ու խոս, բամբասկոտ քննարկում

խօսկ տա̊նել - բ՛էրել, չբ. - խառնակչություն անել.- Խօսկ տա̊նել-բ՛էրելը փէշա̊կ չէ, տընաքանդութուն ա /Խառնակչություն անելը արհեստ չէ, տնաքանդություն է/

խօսկ տալ, չբ. - խոստանալ, պարտավորվել

խօսկաշէն,ած. - պերճախոս

խօսկէրօվ կէրցընել, նբ. - անուղղակիորեն հասկացնել, նախատել

խօսկը կըդրել - խոսքն ընդհատել

խօսկը կօղրել - մերժել

խօսկը ջ՛ուրը քըցել - պատվերը չկատարել

խօսկը սա̊ր ու ձ՛որը քըցել - բուն նյութից դիտավորյալ շեղվել

խօսկը տալ, չբ. - աղջիկ ուզելու եկածներին համաձայնություն տալ

խօսկը տեղ խասնել - գաղտնի խոսակցությունը հայտնի դառնալ նրան, ում վերաբերում է

խօսկը փօխել - իր ասածից հրաժարվել, այլ բան ասել
խօսկըները մէկ անել, չբ. - գաղտնի համաձայնության գալ, պայմանավորվել
խօսկի, վ. - ենթադրենք
խօսկի մըն չիգալ - անմիջապես պատասխանը տալ, միտքը արագ աշխատել
խօսկի տըկ չըմընալ, չբ. - հակաճառել
խօսկի տէրն հըլնել, չբ. - խոստումը կատարել.- Տըղամըրթը պըտի խօսկի տէրն հըլնի. վոր ըսէր ես, ուրեմ վեռչ /Տղամարդը պետք է խոսքի տերը լինի, որ ասել ես՝ ուրեմ վերջ/
խօսկին գ՛ալ - նույն մտքին հանգել.- Էկա՞ր իմ խօսկին /Հանգեցի՞ր իմ մտքին/
խօսկին խօսկ բ՛էրել, չբ. - հակաճառել.- Ուզում եմ ըսեմ՝ դ՛ու իմ խօսկին խօսկ մի՛ բ՛է, ախար էրկու քօ թայն եմ /Ուզում եմ ասել՝ դու ինձ մի՛ հակաճառիր, ախր քո երկու տարիքին եմ/
խօսկին տէր կըյնել, չբ. - խոստումը կատարել
խօսկից դ՛ուս գ՛ալ - խոսքը, պատվերը չկատարել.- Դ՛ու ըսա, քօ խօսկից դ՛ուս չիգ՛ա, յես ըսում եմ՝ չանում /Դու ասա՛, քո խոսքը կկատարի, ես ասում եմ՝ չի անում/
խօսկից խօսկ բ՛ասվել - մի խոսակցությունից մի նոր խոսակցություն սկսվել
խօսկից հըլնել, չբ. - ասածը չանել
խօսկօվ հընգել, չբ. - տարվել խոսակցությամբ
խօսկօվ-խաբրօվ, մկ. - կամքով, կարգադրությամբ.- Ըտոնց տունը մօր խօսկօվ-խաբրօվ ա, տըղէն իրավունք չունի մէ կօպէկ էս յան-էն յան անա /Դրանց տանը մոր կամքով է ամեն ինչ, տղան իրավունք չունի մի դրամ ծախսի/
խօսպըռտալ, չբ. - 1.վիճաբանել, լեզվակռիվ անել, 2.մեկի վրա շարունակ խոսել

խօստխըստալ, չբ. - ծակծկվել

խօստօվանք, գ. - խոստովանություն

խօվ, գ. - ստվեր, շվաք.- Շունը պա̊րկե դ՛իզի խօվը, գիդում հիր խօվն ա /Մեկի հովանավորյալն է, բայց ձևացնում է, թե ինքնուրույն է/

խօվան, գ. - լողանալու տաք ջուրը հովացնելու համար նախատեսված սառը ջուր.- Կընի՛կ, էս յեռման ջ՛ուրը լըցիր, ջանըս էրէսցըրիր, խօվան չըկա՞ /Կնի՛կ, այս եռման ջուրը լցրիր, մարմինս այրեցիր, սառը ջ՛ուր չըկա՞/

խօվն հընգնել, չբ. - երեկոյանալ, զովանալ.- Բ՛ան չըկա, խօվն հընգե, գ՛ընես դ՛ուս՝ կըխօվնաս /Ոչինչ, հովն ընկել է, դուրս կգաս, կհովանաս/

խօվնալ, չբ. - հովանալ.- Հընչի յե՞փ եմ շոքընում, վոր հըլնեմ դ՛ուս՝ խօվնամ /Ինչու ե՞րբ եմ շոգում, որ դուրս ելնեմ՝ հովանամ/

խօվնել, նբ. - լողանալու տաք ջուրը հովացնել.- Յես քե ա̊սում եմ՝ ջ՛ուրը յեռման ա, խօվնա՛, էրէցա /Ես քեզ ասում եմ՝ ջուրը եռման է, հովացրո՛ւ, այրվեցի/

խօվցընել, նբ. - հովացնել.- Լա՛վ, նըստի էթամ հախպըրից բ՛էրեմ, չընայած չում էթամ գ՛ամ, ջ՛ուրը հիրան-հիրան կըպա̊ղի /Լա՛վ, նստի՛ր, գնամ աղբյուրից բերեմ, չնայած մինչև գնամ գամ՝ ջուրը ինքնիրեն կսառչի/

խօտաղ, գ. - տավարած

խօրական, ածն. - հայրական /կողմից/.- Խօրական յանըս էլ ա քա̈վա̈ռցի, մօրական յանըս էլ, յես խալալ-զուլալ քա̈վա̈ռցի յեմ, ինչ անենք, թէ մըկա Հէրէվան ենք ա̊բրում /Հայրական կողմս էլ է գավառցի, մայրական կողմս էլ, ես մաքուր գավառցի եմ, ինչ անենք, թե այժմ Երևանում ենք ապրում/

խօրել, նբ. - 1. թաղել /հանգուցյալին/, 2. հողի մեջ պահել

խօրել-թաղել - *անեծք է*

խօրէ, ած. - հայրական կողմից

խօրէ խօրքո՞ւրս ես, թէ՞ մօրէ մօրքուրըս - ոչ մի կողմից հարազատ չես

խօրիկ, գ. - գութանի երկրորդ լուծը

խօրիկ քըշել - լրացուցիչ եզնազույգին ղեկավարել

խօրխօզիկ, գ. - հալած դմակի կտորներ

խօրխօքու, մկ. - ծրի, անվարձահատույց

խօրքուր, գ. - հորաքույր

խօրօղնալ, չբ. - գեղեցկանալ

խօրօխպէր // խօրախպէր, գ. - հորեղբայր.- Խօրօխպէ՛ր Գազօ, ո̂րի նըստի՝ ծո̂շ լըցեմ կե, խօրօխպէ՛ր Գազօ, մէ բ՛աժակ ո̂րաղ կըխըմե՞ս, խօրօխպէ՛ր Գազօ /Հորեղբայր Գազո, ե՛կ նստիր ճաշ լցնեմ կեր, հորեղբայր Գազո, մի բաժակ օղի կխմե՞ս, հորեղբայր Գազո/

խօրօված, գ., դբ. - խորոված

խօրօվ-մօրօվ ո̂նել, նբ. - յուրացնել

խօրօտ, ած. - գեղեցիկ

խօրօտկութուն, գ. - գեղեցկություն

խօրօտ-մօրօտ, ած. - գեղեցկավուն

խօրօտ-նըխշուն, ած. - շատ գեղեցիկ

խօքէխաց, գ. - պատարագ, հոգեհաց

խօքէսխընել, չբ. - հոգոց հանել

խօքէտուն, գ. - գանգի վերևի թույլ մասը

խօքի, գ. - հոգի.- Քիթը բ՛ըռնես՝ խօքին կըտա /Շատ նվազ է/

խօքի կուրցընել, չբ. - ստել, արածը հանձ չառնել

խօքի մըրկել, չբ. - ստել, խղճին դեմ գնալ

խօքի ունես տո̂լու - վախեցիր դատաստանից.- Խօքի ունես տո̂լու, սութ մի՛ խօսա, հըմընօվ էլ ընդուն լավ ճո̂նշնում ենք /Վախեցիր դատաստանից, սուտ մի՛ խոսիր, բոլորս էլ նրան լավ ճանաչում ենք/

խօքի տալ, չբ. - շատ սիրել.- Էնի քօ խըմար խօքի յա տո̂լում /Նա քեզ շատ է սիրում/

խօքին ա̊ռնել - աստված հոգին իր մոտ տանելը, մահ տալ
խօքին էրմընգներն հ՛ըլնել - անխիղճ, դաժան, ժլատ լինել
խօքին ծա̊խել, չբ. - դավաճանել
խօքին տալ, չբ. - մահանալ
խօքու խէտ հըլնել - հոգեվարքի մեջ լինել
խօքուն մեխկ ա̊նել, չբ. - զուր կասկածել

Ծ

ծա̊լ, գ. - շերտ
ծա̊լապա̊տիկ, մկ. - ոտքերը ծալած
ծա̊լ-ծա̊լ, մկ. - շերտ-շերտ
ծա̊լծըլել, նբ. - մի քանի անգամ ծալել
ծա̊լպա̊կաս,ած. - խելապակաս
ծա̊լօվի,ած. - ծալվող
ծա̊խ գ՛ալ /հեգն./, չբ. - 1.վաճառքում լինել, 2.հանկարծակի արժևորվել
ծա̊խկըցընել, նբ. - չափազանցնել
ծա̊խս ա̊նել, չբ. - 1.ծախսել, 2.խնջույք անել
ծա̊խսը քաշել, չբ. - մեկի փոխարեն գումար տրամադրել
ծա̊խու, ած. - վաճառքի ենթակա
ծա̊կըռտել, նբ. - ծակծկել
ծա̊կըռտըվել, չբ. - ծակոցներ զգալ.- Հէրէկ դ՛ուռը մա̊ցէր էր բ՛աց, ըսկըրվազիտ ա ա̊րե, պա̊ղէր եմ, թիկունքըս ծա̊կըռտըվում /Երեկ դուռը բաց էր մնացել, միջանցահովիկի տակ եմ ընկել, սառել եմ, թիկունքս ծակում է/
ծա̊կծըկել, նբ. - շատ տեղերից կամ շատ անգամ ծակել

ծնկծնկ, ած. - ծակծկված

ծնկհնշկ, ած. - ազահ, անկուշտ

ծնկուծուկ, գ. -տան մասեր, ուր իրեր են թաքցվում

ծնկօսկըռել, չբ. -դառնալ շատակեր.- Այ մառթ, էս կօրօնայից յետօ մնռթ ինչօր ծնկօսկըռի, դուզն եմ ծսում՝ ուտէլօվ չեմ կըշտընում /Այ մարդ, այս կորոնավիրուսով հիվանդանալուց հետո մարդ շատակեր է դառնում, ճիշտ եմ ասում՝ ուտելով չեմ կշտանում/

ծնդ, գ. - հարսի կողմից փեսային եկող նվեր-զամբյուղ

ծնմ, գ. - մազ /կնոջ, աղջկա/.- Ծնմը հէրկէն, խելքը՝ կնռճ /Մազը երկար է, բայց կարճ է մտածում/

ծնմապօթիկ ննել, նբ. - մազերը գլխից պոկել (կանանց կռվի ժամանակ)

ծնմավոր, ած. - երկար մազեր ունեցող

ծնմել դ՛ընել բ՛էրանը - շատ հասկանալի բացատրել, սովորեցնել

ծնմերը պըշկել - մազերը պոկել /հաճախ՝ իբրև սպառնալիք/

ծնմերը փիդել - վշտից մազերը պոկել

ծնմծըմել, չբ. - ասելիքը պարզ չասել

ծնմոն, գ. - մաստակ

ծննդըր, ած. - 1. ծանր, 2. պատվավոր /ծննդըր խընամի/

ծննդըր բ՛եռի տնկ մըդնել - դժվարությամբ իրագործելի պարտավորություն ունենալ.- Մենք էլ ենք խասկընում, վոր ծննդըր բ՛եռի տնկ ես մըտնում, բ՛այց դը՝ փօռցը փօռցանք չէ /Մենք էլ ենք հասկանում, որ դժվար գործ ես բռնում, բայց դե՝ փորձը փորձանք չէ/

ծնդըր դնռդ, գ. - մեծ վիշտ, ցավ, հոգս

ծննդըր լըսալ, չբ. - լսողությունը վատանալ

ծննդըր խառնիս, գ. - մեծ հարսանիք

ծմնղըր խընամի էթալ - խնամու տուն իբրև մեծապատիվ հյուր գնալ.- Իմալ կմրքըն ա, հէլանք, ծմնղըր խընամի գ՛ացինք, խընամիս մեզի հարգեց, պմդվեց, դ՛առցանք էկանք /Ինչպես կարգն է, ելանք, հանդիսավորությամբ գնացինք խնամուս տուն, խնամիս մեզ հարգեց, պատվեց, դարձանք եկանք/

ծմնղըր հարգ, գ. - մեծ խնջույք

ծմնղըր ու թեթըվ մնել, չբ. - կշռադատել

ծմնղըրնալ, չբ. - 1. ծանրանալ, տկարություն զգալ, լավ չլսել, 2. հղիության վերջին շրջանում գտնվել

ծմնղըրութուն, գ. - ծանրություն

ծմնղըր պմխել, չբ. - ծանրակշիռ դրսևորել.- Վոր տեղը գ՛ալում՝ մմռթ պըտի հիրանը մէշու ծմնղըր պմխա, վոր չասեն՝ թիթիզ ա /Անհրաժեշտության դեպքում մարդ պիտի իրեն ծանրակշիռ դրսևորի, որ չասեն՝ թեթևամիտ է/

ծմնղըր տեղը չըթեթըվցընել - չխառնվել

ծմնղըր տուն, գ. - բազմաշունչ և հոգսաշատ ընտանիք

ծմնղըրդամաղ,ած. - քմահաճ

ծմնղըր-մմ/խ/կուլ, ած. - ծանրակշիռ, համեստ

ծմնղըրնմֆմս, ած. - ներկաների տրամադրության վրա իր ավելորդ լրջությամբ ազդող.- Ծմնղըրնմֆմս մմռթ կմ, վոր ինչօր շընչիտ նըստի, մմէք բ՛առըտ ծմնղըր ու թեթըվ ա մնում, մմէք խօսկիտ պոզ ու պոչ ա կըպցընում, վեռչին խօսկը պըտի հինքը մսա, ինչօր դաղավոր հըլնի /Ծանրաշունչ մարդ կա, որ կարծես շնչիդ նստի, ամեն բառդ ծանրութեթև է անում, ամեն խոսքիդ պոզ ու պոչ է կպցնում, վերջին խոսքը ինքը պիտի ասի, կարծես դատավոր լինի/

ծմնղըրվորել, չբ. - իրեն թանկացնել, ծանրացնել

ծմնդըրցընել, նբ. - դժվարացնել, իրողությանը ավելի մեծ կարևորություն վերագրել

ծմռ ու թուփ, գ. - բուսականություն

ծմռ-ծմռ, ած. - բարձրահասակ, թիկնեղ (որդիներ)

ծմսկել, նբ. - 1. ծածկել, 2. բեղմնավորել

ծմրվընալ, չբ. - ծարավել

ծմփ զմնել // ծմփ տալ, չբ. - ծափահարել

ծէծել, նբ. - մանրել, փշրել, հարվածել.- Կարկութը ծէծուկ տեղն ա ծէծում /Փորձանքին հաջորդում է մեկ այլ փորձանք/

ծէսկել, նբ. - ճնշել

ծէրատել, նբ. - ծայրը կտրել

ծէրը ծէրին, մկ. - հազիվհազ, մի կերպ

ծէրից ծէր, մկ. - ծայրից ծայր

ծէրխընել, նբ. - սկսել, ինչ-որ գործ ձեռնարկել.- Տմտիկըս ծէրխընե, չօրաբ ա գ՛օռծում, մէ քանի օրվա մէչ կըպըռծի, տմք-տմք կըխաքնեմ, վողներըս չեն պմղի /Տատս սկսել է գուլպա գործել, մի քանի օրում կավարտի, տաք-տաք կհագնեմ, ոտքերս չեն սառչի/

ծէփոն, գ. - ծեփ

ծըգլըվըզել, չբ. - վիզը երկարացնել՝ տեսնելու համար.- Հիշկամ տէնամ՝ մէկը ծըգլըվըզե, պմտի վըրվից հիշկում մեր հմյմթը, կըզա քարը վէրցի, մսի՝ զմնեմ հմշկը խանեմ, փախավ /Նայեմ տեսնեմ՝ մեկը վիզը երկարացրել, պատի վրայից մեր բակն է նայում, կռացա քար վերցրի, որ խփեմ աչքը հանեմ, փախավ/

ծըլել - ծմխկել, չբ. - բարգավաճել

ծըլծըլոտ, ած. - լորձունքոտ

ծըլծըլօտել, չբ. - քթից անընդհատ լորձունք գալ

ծըլծուլ, գ. - քթից եկող լորձունք

ծըլկել, չբ. - փախչել

ծըլվըլան, ած. - ծլվլացող

ծըլվըլոց, գ. - ճռվողյուն
ծըծան, գ. - խոնավությունը կլանող բարակ թուղթ
ծըծի կա՛թ, գ. - 1.կնոջ կրծքի կաթ, 2.մայրական կաթ
ծըծից // ծըծէ կըղրել, նբ. - 1.այլևս մայրական կաթով չկերակրել, 2.ընդհատել անհատույց օգնությունը
ծըձաղիիրես, ած. - ուրախ դեմքով.- Մէ ծըձաղիիրես, խօրօտ ա՛խճիկ գ՛ըթի, էթանք ուզենք /Մի ժպտերես, գեղեցիկ աղջիկ գտի՛ր, գնանք ուզենք/
ծըձմէր, գ. - ծծմայր
ծըղզալ // ծըզղալ, չբ. - ծիծաղել
ծըղզըցընել, նբ. - ծիծաղեցնել
ծըղիկ, գ. - ցողուններից հյուսված տարողություն, զամբյուղ
ծըղոն, գ. - ծղոտ
ծըմըրկըտալ, չբ. - ճմլկոտել, մարմինը կոտրատել.- Նըստուկ տեղից հէլավ, մէ լավ ծըմըրկըտաց, գ՛ընաց հիրեսը մէ չօփ ջ՛ուր զա՛նեց, էկավ պա՛րկավ /Նստած տեղից ելավ, մի լավ ճմլկոտեց, գնաց երեսին մի բուռ ջուր խփեց, եկավ պառկեց/
ծընաման, գ. - արգանդ
ծընզըցընել, չբ. - զանգել
ծընզոց, գ. - ծնգալու ձայն
ծընել, չբ. - տավարի՝ ձագ բերելը.- Սա՛ղ գ՛իշեր թալվից տուն չէկա, կօվը ծընում էր, մէ խատ խօրօտ հօռթիկ բ՛էրեց /Ողջ գիշեր գոմից տուն չեկա, կովը ծնում էր, մի հատ սիրուն հորթ բերեց/
ծընըցընել, նբ. - 1. օգնել անասունին՝ ծնելու, 2. շատ սպասել տալ
ծընծընալ, չբ. - խոնավացում, որ նշան է ջրի դուրս գալու
ծընունդը չօրնալ - *անէծք է*
ծըպկ, գ. - կախված թել
ծըպտոց, գ. - թույլ ձայն, ծպտուն
ծըպտուն, գ. - ցածր ձայն
ծըպտուն խանել, չբ. - որևէ ձայն հանել

ծըռավարի, մկ. - խենթի պես
ծըռել[1]**,** նբ. - ծուռ դարձնել, կեռել
ծըռել[2], չբ. - թունդ սիրահարվել.- Մեր տըղէն ծըռե հարէվնի ախճըկա վըրէն, գ՛իշեր չուր լուս յե՞փ ա տուն գ՛ալում /Մեր տղան սիրահարվել է հարևանի աղջկան, ողջ գիշեր ե՞րբ է տուն գալիս/
ծըռել-ծըռթըփել, չբ. - թունդ սիրահարվել
ծըռըցընել, նբ. - գժվեցնել, ձանձրացնել
ծըռմըռել, նբ. - սովորական տեսքը աղավաղել
ծըռմըռվել, չբ. - 1.ծըռմըռվել, 2.կոտրատվել
ծըռնէզըռթիկ // ծըռնէծըռթիկ,ած. - թեթևսոլիկ, անհեթեթ
ծըռնէծուռ, մկ. - հիմար-հիմար, անհեթեթ
ծըռպըտօտ տալ, չբ. - պարել ծռմռվելով.- Լը տե խօրքուր Սաթօյը, ի՞նչ ծըռպըտօտ ա տալում, էնենց ա դ՛ուրըս գ՛ալում /Նայի՛ր հորաքույր Սաթոյին, ինչպե՛ս է պարում, այնպես է դուրս գալիս/
ծըռվիզ,ած. - պարանոցը ծուռ
ծըռտախոտ, գ. - ծերտի հոտ
ծըռտոտ,ած. - ծերտոտ
ծըռտօտել, նբ. - ծերտոտել
ծըռուկ, ած. - սիրահար
ծըսկեր, ած. - 1.կրծքի կաթով սնվող, 2.փոքր, տհաս
ծըսցընել, նբ. - նորածին հորթին օգնել՝ ծծելու կովի կաթը
ծըվատել, նբ. - պատառոտել, եղունգներով /մագիլներով/ չանգռել
ծըվիկ-ծըվիկ անել, նբ. - պատառոտել, բզկտել
ծըվծըվալ, չբ. - թռչնի ծվծվալը.- Դ՛ըռան գ՛ըլխին ճընջըխները բ՛ուն ա դ՛ըրած, սաղ օրը ծըլվըլում են /Դռան գլխին ծտերը բույն են դրել, ամբողջ օրը ծլվլում են/
ծըրիկ - ծըրիկ, մկ. - հազիվհազ, քիչ-քիչ
ծըփալ, չբ. - 1.ջրի ծփալը, 2.հարուստ լինել և վայելել
ծըփել, նբ. - հարել
ծիլ ու ծաղիկ - *բուսականություն*

ծիլ ու ծմղիկը չօրնալ - *անեծք է*

ծիլ տալ, չբ. - ծլել

ծիծ, գ. - ստինք

ծիծ ու պըտուկ, գ. - կուրծք

ծիծ ուտել, չբ. - կրծքով կերակրվել.- Մըկավա ճըժերը մօր ծիծ յե՞փ են ուտում, բ՛այց գիդում ես՝ ինշքան օքտակար ա /Այժմվա երեխաները մայրական կուրծք ե՞րբ են ուտում, բայց գիտե՞ս՝ ինչքան օգտակար է/

ծիծ տալ, նբ. - կրծքով կերակրել

ծիծիկ, գ. - ստինք /փղքշ./

ծին, գ. - մարմնի վրա առաջացած փոքրիկ պալար

ծոր, գ. - հնձած խոտի լաս

ծոցը քընել - կենակցել

ծուխը կըդրել - օջախը, ընտանիքը կործանել

ծուռ,ած. - գիժ, խելագար, խենթ, քաջ, պոռթկուն.- Տըղա՛, խօ ծուռ չես, յետ դ՛առցի մրի, քե վո՞րն ա բ՛ան մսե /Տղա՛, հո գիժ չե՞ս, հետ դարձի՛ր, եկ, քեզ ո՞վ է բան ասել/

ծուռ - ծուռ, մկ. - հիմար-հիմար

ծուռ հմշկօվ հիշկալ - անբարյացակամ, կեղծ վերաբերմունք ունենալ

ծուռբ՛էրան, ած. - ծուռ բերան ունեցող

ծուռումուռ, ած. - ծուռնումուռ

ծուռքիթ, ած. - ծուռ քիթ ունեցող

ծուսկ, գ. - ոսկրածուծ

ծօվը չօքէրից հըլնել - վտանգը չպատկերացնել

ծօվը տմնել, ծմրավ յետ բ՛էրել - մատների վրա խաղացնել.- Չըգիդաս՝ էտի մէմմիտ ա, սմղիս կըտմնա ծօվը, ծմրավ յետ կըբ՛էրա /Չիմանաս՝ դա միամիտ է, բոլորիս կտանի ծովը, ծարավ հետ կբերի/

Կ

կյ̈աբ, գ. - լուցկու տուփ

կյ̈աբլի (ռուս.), գ. - կաթիլ

կյ̈աբնըվել մեկի խէտ, չբ. - սիրային կապի մեջ լինել

կյ̈աբուլ (արաբ.), գ. - ընդունում, ընդունելը, համաձայնություն

կյ̈աբուլ անել (արաբ.) , չբ. - ընդունել, հաճել

կյ̈ադա, գ. - փորձանք.- Բը հընչէ՞ն ա̈սում՝ օրը կէթա, կյ̈ադէն չէթա /Բա ինչո՞ւ են ասում՝ օրը կանցնի, փորձանքը՝ ոչ/

կյ̈ադէն վոտի տըկյից ա̈ռնել - փորձանքի հանդիպել (անեծք)

կյ̈ադըր (արաբ., թրք.), գ. - արժեք, հարգ

կյ̈ադըրը գիդալ - մեկի արածը, արժանիքները գնահատել.- Ըտոնք քօ կյ̈ադըրը էտենց էլ չըգիցան /Դրանք քո արժանիքը այդպես էլ չգնահատեցին/

կյ̈ադղուկ, ած. - կատաղած

կյ̈ադղուկ-հընգնավոր, ած. - խիստ կատաղած, բարկացկոտ

կյ̈ազ (թրք.), գ. - սագ.- Վոր էթում ինք խօրքուրիս տուն, հիրանց կյ̈ազերը կըծան ին, հընգում ին հիդվընեըրս՝ փախնում ինք /Որ գնում էինք հորաքրոջս տուն, իրենց սագերը կծող էին, ընկնում էին հետևներիցս, փախչում էինք/

կյ̈ազան (թրք.), գ. - պղնձե մեծ կաթսա

կյ̈ազարած, գ. - սագարած

կյ̈ազարմա (ռուս.), գ. - զորանոց

կյ̈աթ[1], գ. - կաթ.- Կյ̈աթի խոտը բ՛էրնից գ՛ալում /Դեռ մանուկ է/

կյ̈աթ //մէ կյ̈աթ, գ. - կաթիլ.- Դ̈ա̈նա̈կ զա̈նես սիռտը՝ մէ կյ̈աթ ա̈րուն չի գա /Շատ ծանր վշտի մեջ է, սիրտ չունի/

կյ̈աթ տալ, չբ. - 1.կթվել, 2. կաթով կերակրել

կյ̈աթախոտ, գ. - կաթի հոտ

կյո̂թա-կութա, գ. - փորձություն, փորձանք

կյո̂թըցընել, նբ. - կաթեցնել

կյո̂թի հիրեսը քաշել - կաթի սերը հավաքել.- Կիսուրըս հառավնեց հըլնում, կյո̂թի հիրեսը քաշում, բ՛ըռթում ուտում, նորուց էթում պյո̂րկում /Ամեն առավոտ սկեսուրս ելնում է, կաթի սերը հավաքում, բրդում ուտում, նորից գնում պառկում/

կյո̂թիլք, գ. - առաստաղից կաթկթալը

կյո̂թկըըթալ, չբ. - կաթկթել

կյո̂թ-կյո̂թ, մկ. - կաթիլ - կաթիլ

կյո̂թնախամ, գ. - կաթի համ

կյո̂թնախոտը բ՛էրնից գ՛ալ - դեռ մանուկ լինել՝ չնայած մեծ երևալուն կամ իրեն մեծավարի պահելուն.- Տըղա՛ ջան, կյո̂թնախոտը բ՛էրնիցըտ գ՛ալում, բ՛այց էկէր ես մեզի բ՛ան ես սօվըռցընում /Տղա ջան, դեռ երեխա ես, բայց եկել, մեզ բան ես սովորեցնում/

կյո̂թնո̂խպէր, գ. - մեկ մոր կաթը կերածներ

կյո̂թնակեր, ած. - կաթ ուտող, մանկահասակ

կյո̂թնո̂տամ, գ. - առաջին անգամ դուրս եկած ատամները

կյո̂թնուկ, գ. - *բույս է*

կյո̂թնօվ, գ. - կաթով և բրնձով պատրաստված կերակուր

կյո̂թքամիկ, գ. - կաթը քամելու մաղ

կյո̂ժ, ած. - շեկ

կյո̂ժընալ, չբ. - մազերը շեկ ներկել

կյո̂ժըցընել, նբ. - մազերը շեկ գույնի ներկել.-Լասա էրէխա ո̂խճիկ՝ մո̂զե̂րըտ հընչես կյո̂ժըցըրե /Մի սաս՛ երեխա աղջիկ, մազե̂րդ ինչու ես շեկ գույնի ներկել/

կյո̂լ, գ. - հացահատիկը կալսելու տեղը

կյա՛լ անել, չբ. - կալսել

կյա՛լ իըլնել, չբ. - հոգսի մեջ չիմանալ՝ ինչ անել

կյա՛լա՛թ (արաբ., թրք.), գ. - անխելք գործ, հիմարություն

կյա՛լա՛թ // կյա՛լլա՛թ անել, չբ. - հիմարություն անել, նախատինքի արժանի գործ անել, անիմաստ գործ անել.- Կյա՛լա՛թ ես արե, վոր քեզնից ջ՛ոչին լիզու յես տըվե /Հիմարություն ես արել, որ քեզնից ավազին հակաճառել ես/

կյա՛լա՛մ (արաբ., թրք.), գ. - մատիտ

կյա՛լամաշկա, գ. - սայլակ

կյա՛լատակ, գ., ած. - 1.կալ անելու տեղը, 2.կլոր, մեծ /երես/

կյա՛լբ (արաբ., թրք.), ած. - նենգ, խաբեբա, կեղծ

կյա՛լբաս // կյա՛լբաստ (ռուս.), գ. - երշիկ

կյա՛լբընալ, չբ. - նենգ, կեղծ դառնալ

կյա՛լբութուն, գ. - խաբեբայություն, նենգություն

կյա՛լել - կյա՛պել, նբ. - կախարդել, կաշկանդել

կյա՛լիբ (արաբ., պրսկ., թրք.), գ.- կաղապար, օճառի մեծ կտոր

կյա՛լիդոր (ռուս.), գ. - միջանցք

կյա՛լին (թրք.), ած. - հաստ, ամուր

կյա՛լմակյալ (թրք.), գ. - աղմուկ

կյա՛լմակյալ անել, չբ. - աղմկել

կյա՛լմէչ անել, նբ. - շրջապատել.- Քանի հօքի գ՛իշերօվ կյա՛լմէչ ին արե, թափէր ին վըրէն, ի՛մալ էր սաղին փըռե ասֆըլտին /Քանի հոգի գիշերով շրջապատել էին, հարձակվել էին վրան, ինչպե՞ս էր բոլորին փռել ասֆալտին/

կյա՛լնել, նբ. - թոնրի ակը փակել

կյա՛լուկուտ, գ. - բերքահավաք

կյա՛լչա (թրք.), գ. - ազդր

կյոլօշ (ֆր., թրք.), գ. - կրկնակոշիկ

կյոխանակ գ՛ըլօխ, ած. - 1.կախ գլուխ, 2.լուռ ու մունջ, 3.վտանգավոր

կյոխպյ, ած. - անբարոյական (կին)

կյոխպութուն, գ. - անբարոյականություն

կյոխվոռ, ած. - 1.հետույքը կախ ընկած, 2.դանդաղաշարժ

կյոխօվլի, ած. - կախած ձևով, կախվող

կյոկյա, գ. - կոնֆետ /մանկական/

կյոկյավորել, չբ. - տեսքը լավանալ, շատ նիհար չլինել.- Սոնատօրյան վըրէտ էկե, կյոկյավորէր ես /Առողջարանը լավ է ազդել, տեսքդ լավացել է/

կյոկըղել// կյոկըղնալ, չբ. - կակղել, փափկել

կյոկըղցընել, նբ. - կակուղ դարձնել

կյոկուղ, ած. - փափուկ

կյոկուղհիրես, ած. - դյուրությամբ զիջող

կյոկօբըրօ, ած. - մտերիմ, համերաշխ.- Մէկ տէնում ես՝ հիրար ուտում են, մէկ էլ տէնում ես՝ հէլած կյոկօբըրօ /Մեկ տեսնում ես՝ իրար տանել չեն կարող, մեկ էլ տեսնում ես՝ մտերիմ են դարձել/

կյոձէ, գ. - թրքուհի կամ նրա նման կին

կյոմ ու կյոց, մկ. - տատանողական, անհաստատ.- Հէրէկվորէ կյոմ ու կյոց եմ, չեմ գիդում՝ էտ կօվը օռնե՞մ, թէ՞ չէ /Երեկվանից տատանվում եմ, չգիտեմ՝ այդ կովը գնե՞մ, թե՞ ոչ/

կյոմ տէնալ, նբ. - կամենալ.- Վոր դ՛ու կյոմ տէնիր, էտ էլ կյոռնի, լը էրկու հօռթիկ էլ խէտը կյոռնի /Եթե դու կամենայիր, այդ էլ կգնեի, դեռ երկու հորթ էլ հետը կգնեի/

կյոմազ (արաբ., թրք.), ած. - անհասկացող, բութ, հիմար

կմման յեզ /բցս./, ած. -խիստ մարմնեղ.- Մէ կմման յեզ մոռթ ունի, հիրար ըսկի սմզ չեն գ՛ալում /Մի մարմնեղ ամուսին ունի, իրար բոլորովին չեն սազում/

կմմանդ տալ, նբ. - հրամայել

կմմանդ քաշել, չբ. - հրամաններ արձակել.- Թէ դ՛ո՞ւ հընչի էկար, ըսկըսիր կմմանդ քաշել, քե վո՞րը կմնչեց /Թե դո՞ւ ինչու եկար, սկսեցիր հրամաններ տալ, քեզ ո՞վ կանչեց/

կմմար (արաբ, պրսկ.), գ. - աղեղնաձև.- Քօ մսուկը մեր Սիրուշի տէքմր մխճիկն ա՝ հունքերը կմմար, հմշկերը խօրօտ, թըշերը կարմիր, մէշու քիթն ա ջ՛ոչ, բայց դը՝ նըխշուն կմռտիշկա յա… մէրն մսէր էր՝ տմնենք քիթը պըստըկցընենք, խէրը կմյիլ չէր հէլե /Քո ասածը մեր Սիրուշի տեգոր աղջիկն է՝ ունքերը կամար, աչքերը սիրուն, այտերը կարմիր, մի քիչ քիթն է մեծ, բայց դե՝ նախշուն պատկեր է… մայրն ասել էր՝ տանենք քիթը փոքրացնենք, հայրը համաձայն չէր եղել/

կմմէնալ, նբ. - ամուսնության հարցում միջնորդել.- Սիրուշը էտ մխճըկան կմմէցե հիր մխպօր տըղին. բօյօվ-բուսօվ, ձ՛եռի ջ՛ըրքօվ լավ տըղա յա /Սիրուշը այդ աղջկան բարեխոսել է եղբոր տղայի համար. բարձրահասակ, շնորհաշատ լավ տղա է/

կմմիշ (թրք.), գ. - եղեգն.- Չէ՛, մըկա Սիրուշի մխպօր տունը լավ են. ճիշտ ա՝ չում մէկէլօրներըս ըտոնց տմն ծմսկը կմմիշօվ էր, բ՛այց էտ տունը մռթէն քանդած, թմզմ տմն խիմ ա քըցած. էնքան էլ ջ՛ոչ ա բ՛ըռնըցըրած. տըղէն գիդո՞ւմ ես ինչ լավ գ՛ոռծի յա, էնենց քանդակներ ա մնում… /Չէ՛, հիմա Սիրուշի եղբոր ընտանիքը լավ է ապրում. Ճիշտ է, մինչև վերջերս դրանց տան ծածկը եղեգնով էր, բայց այդ տունը արդեն քանդել են, նոր տան հիմք են գցել. այնքան էլ մեծ են նախատեսել.

գիտե՞ս տղան ինչ լավ գործի է, այնպիսի քանդակներ է անում… /

կա̈մկա̈մ, ած. - չուտող, քչակեր.- Խա, Սիրուշի ա̊խպօր կընիկը զաբուն ա, քախկըցիք էտենցին ա̊սում են՝ նէժնի յա. էսի գ՛ախէն էլ կա̈մկա̈մ ա հէլե, հըմէն բ՛ան չըկէրե. ա̊սում՝ վոր գ՛ացած ըտուն ուզէլու, Սիրուշի մէրը վոր տէսե նէժնի յա, տըղին քաշե կըրաղ, ա̊սե՝ տըղա ջան, ըստու վըրէն մէ շա̊պիկ միս էլ չըկա, տա̊նում ենք՝ ի՞նչ ա̊նենք, տըղէն վէրցե ա̊սե՝ ի՞նչ պըտի ա̊նենք, ա՛յ մէր, կընիկ ենք տա̊նում, խօ կիլօյօվ միս չե՞նք տա̊նում. տէնանք ինչ ա, թէ վոր պէտկ հէլավ՝ լավ կըպա̊խենք, վըրա̈ գ՛ըքա. բ՛այց դը վոր կա̈մկա̈մ ա՝ հո՞ւստ վըրա̈ գ՛ա… /Հա՛, Սիրուշի եղբոր կինը նիհար է, քաղաքացիք նմանին ասում են՝ նուրբ է. սա ի սկզբանե էլ քչակեր է եղել, ամեն բան չի կերել. ասում են՝ երբ գնացել են դրան ուզելու, Սիրուշի մայրը որ տեսել է՝ նրբիկ է, տղային մի կողմ է կանչել, ասել է՝ տղա ջան, սրա վրա մի շապիկ միս էլ չկա, տանում ենք՝ ի՞նչ անենք, տղան ասել է՝ ի՞նչ պիտի անենք, այ մեր, կին ենք տանում, հո կիլոյով միս չե՞նք տանում. տեսնենք ինչ է, թե որ պետք եղավ՝ լավ կպահենք, կկազդուրվի. Բայց դե՝ որ քչակեր է, ո՞րտեղից կազդուրվի/

կա̊մօղ, գ. - հնաոճ պահարան.- Հէլե ա̊սէլիք. ա̊սում՝ կիսուրը հա վոր ըտուն զօռե, թէ՝ կե՛, կե՛, էսի ինչը չուզե ուտա՝ գ՛օխտուկ դ՛ըրե կա̊մօղի տա̊կը., հառէչ հըմընի տունը կա̊մօղ կէր՝ գ՛իշա՞ս չում մէ օր կիսուրը բ՛ըռնըցըրե… էտ օրվընէ էլ չըզօռե… տըղէն էլ ա̊սե՝ էսենց լավ էլ լավ ա, թօ չըչաղընա… /Ասում են՝ կիսուրը որ անընդհատ սրան ստիպել է, թե՝ կե՛ր, կե՛ր, սա ինչը որ չի ուզել ուտել՝ թաքուն դրել է հնաոճ պահարանի տակ. առաջ բոլորի տանը նման պահարան կար՝ հիշո՞ւմ ես. մինչև

մի օր սկեսուրը բռնացրել է… այդ օրվանից էլ չի ստիպել… տղան էլ ասել է՝ այսպես շատ էլ լավ է, թող չգիրանա…/

կյոմպուտըր, գ. - համակարգիչ .- Էս թա̈զա̈ խառսն էլ կիսուրի նըման մէյմիտ ա… ախար համալսարան ա սօրվում, դ՛ասերն էլ մըկա կյոմպուտըրօվ ա. դ՛ասի գ՛ախ սօրվօղնէրին ա̈սում են՝ պյոտուհան բ՛ացէք, գիցար չէ՞՝, կյոմպուտըրի մէչը. էսի գիդում՝ ա̈սում են լուսամութը բ՛ացէք, հըլնում վօր բ՛ացա, տէնում ուժեղ քամի յա, գ՛ալում ա̈սում՝ հընգե՛ր Էսինչյան, մեր գ՛եղը ուժեղ քամի յա, կըյամաթ, գ՛ըլնի՞ վօր յես լուսամութը չըբ՛ացեմ, համ էլ մըռսում եմ /Այս նոր հարսն էլ սկեսուրի նման միամիտ է… ախր համալսարանում է սովորում, դասերն էլ հիմա համակարգչով են անցկացնում. դասի ժամանակ սովորողներին ասում են՝ պատուհան բացեք, իմացար, չէ՞՝ համակարգչի մեջ. սա կարծում է՝ ասում են լուսամուտը բացեք, ելնում է, որ բացի, տեսնում է՝ ուժեղ քամի է, գալիս ասում է՝ ընկեր Էսինչյան, մեր գյուղում ուժեղ քամի է, կլինի՞ ես պատուհանը չբացեմ, համ էլ մրսում եմ /

կյոմֆետռ // կյոնֆետռ (ռուս.), գ. - կոնֆետ

կյա̈յդա̈ (արաբ.), գ. - ձև

կյա̈յդի, կ. - ձևի, նման

կյոյեն, ած. - դաժան, անգութ

կյոյենի կօտռշ, ած. - ժլատ, անտանելի

կյա̈յիլ (արաբ., թրք.), ած. - հավան, համաձայն

կյա̈յիլ հըլնել, չբ. - համաձայն լինել.- Էն գ՛ախ ա̈խպէրըս կյա̈յիլ չէլավ, վօր էթի սօրվէլու, ա̈սավ՝ ա̈խճիկն ինչ, սօրվելն ինչ /Այն ժամանակ եղբայրս համաձայն չեղավ, որ ես գնայի սովորելու, ասաց՝ աղջիկն ինչ, սովորելն ինչ/

կյա̈յիմ (արաբ.), ած. - ամուր, պինդ.- Ձ՛եռըս կյա̈յիմ բ՛ըռնա, չըթօղես, գ՛ընգընեմ /Ձեռքս պինդ բռնիր, չթողնես, կընկնեմ/

կյա̈յիմնալ, չբ. - ամրանալ

կյա̈յիշ (թրք.), գ. - շալվարի գոտի

կյա̈յլա̈ն, գ. - ծխամորճ

կյա̈յնել, չբ. - կանգնել.- Մէկըտ մէկիտ թեվ ու թիկունք կյա̈յնէք, վոր ձ՛ե բ՛ան ա̈սօղ չըլնի /Մեկդ մյուսիդ պաշտպանեք, որ ձեզ վնասող չլինի/

կյա̈յնըցընել, նբ. - կանգնեցնել

կյա̈յնուկ, ած. - կանգնած

կյա̈նալ[1], նբ. - կարողանալ.- Գիժը քարը թա̈լեց խորը, հազար խէլօք չըկյա̈ռցան խանին /Հիմար, անշրջահայաց արարքի հետևանքները դժվար է հաղթահարել/

կյա̈նալ[2], գ. - ջրատար

կյա̈նամփ, գ. - կանեփ.- Հառէչ սա̈ղ էլ հիրանց բօստանը մէ փօրօշ կյա̈նամփ ին ցանում, բ՛այց մըկա չեն թօղում /Առաջ բոլորն էլ իրենց բոստանում կանեփ էին ցանում, բայց հիմա չեն թողնում/

կյա̈նանչ, գ., ած. - 1. կանաչ /բուս./, 2. *գույնը*

կյա̈նանչի, գ. - կանաչեղեն

կյա̈նաֆ, գ. - ջրատար

կյա̈նդալել, նբ. - ձեռնաշղթա հագցնել

կյա̈նթ, գ. - ունկ

կյա̈նթել, չբ. - ձեռքերը կոնքերին դնել

կյա̈նսեռվա (ռուս.), գ. - պահածո.- Մըտէ՞տ ա, վոր խանութները միյնա̈կ կյա̈նսեռվա յէր մա̈ցե, յետո էտ էլ վէրացավ /Հիշո՞ւմ ես, որ խանութներում միայն պահածո էր մնացել, հետո դա էլ վերացավ/

կյա̈նվօ, գ. - ոսկիչ

կյաշյանգ, ած. - կիպ, լավ նստած

կյաշար (թրք.), գ. - քերիչ

կյաշառք, գ. - կաշառք.- Կյաշառքը մութ տեղը լուս կըտա /Կաշառքով շատ հարցեր են լուծվում/

կյաշառակեր, ած. - կաշառք վերցնող

կյաշի, գ. - կաշի, մորթ.- Կյարմիր կօվը կյաշին չըփօխա /Համառ մարդը իր էությունը չի փոխի/

կյաշի տալ, չբ. - շատ չարչարվել

կյաշի փօխել, չբ. - հայացքները փոխել

կյաշիլօկ (ռուս.), գ. - դրամապանակ

կյաշին դաբախանից գիդալ - ուղն ու ծուծով ճանաչել.- Ցես ըտու կյաշին դաբախանից եմ գիդում, էտի չըկյանա ընձի ֆըռըցընա /Ես դրան ուղն ու ծուծով եմ ճանաչում, դա չի կարող ինձ մոլորեցնել/

կյաշին խանել - չարչարել

կյաշին քէռթել - շատ չարչարել.- Լը թօ գ՛ա տուն՝ կյաշին կըքէռթեմ. բը դ՛ու մյանուկ մյառթ հըլնես՝ ախպօրըս խօսկը չանե՞ս

կյաշկա (ռուս.), գ. - սայլակ

կյաշպել, նբ. - քերել, քորել

կյաչաղ (թրք.), ած.- գող, ավազակ

կյաչաղութուն, գ. - գողություն, ավազակություն

կյապ հընգնել, չբ. - փորկապություն ունենալ

կյապեկ (ռուս.), գ. - կոպեկ

կյապը կըդրել, չբ. - սանձարձակ դառնալ

կյապը քաշել - զսպել

կյապըռտել, նբ. - կապկպել

կյապի գ՛ալ - կարգի հրավիրվել

կյապկըպունը մէչը հընգնել - գործը դժվարանալ, ձգձգվել

կյապուտ խազ, գ. - կապույտ հազ, ուժեղ հազով ուղեկցվող հիվանդություն.- Հառէչ յասում ին՝ կյապուտ խազին իշի կյաթն ա օքուդ /Առաջ ասում էին՝ կապույտ հազի դեպքում էշի կաթը առողջարար է/

կյապօվ հընգնել, չբ. - կապով խեղդվել

կյառ (պրսկ.), ած. - խուլ

կյառ - կյառ, մկ. - խուլ-խուլ

կյառ ու գէժ, ած. - և խուլ, և հիմար

կյառասա, ած. - համառ, ինքնասածի

կյառաֆադ (հուն., թրք.), գ.- մահճակալ.- Ի՞նչ կյառաֆադ, հառէչ կյառաֆադը դո՞ր էր, հըմէն էլ գ՛էտնին ին քընում /Ի՞նչ մահճակալ, առաջ մահճակալը ո՞ւր էր, բոլորն էլ գետնին էին քնում/

կյառդոն (ռուս.), գ. - ստվարաթուղթ

կյառզինգա (ռուս.), գ. - զամբյուղ

կյառըխ, ած. - ինքնագոհ

կյառընալ, չբ. - խլանալ

կյառըցընել, նբ. - խլացնել

կյառթ (թրք.), գ. - չորացած, պինդ

կյառթալ, չբ., նբ. - սովորել, ուսանել, նաև՝ ընթերցել

կյառթընալ, չբ.- չորանալ, պնդանալ

կյառթըսվոր, գ., ած. - 1.կարդացող, 2. գիտուն

կյածիք անել, չբ. - կասկածել

կյառկառ (թրք.), գ. - ագռավ.- Լիզուն չընի՝ կյառկըռները հաշկերը կըխանեն /Միայն խոսելով է կարողանում իրեն պաշտպանել/

կյառհանգած, ած. - 1. չլսող ձևացող 2. խուլ

կյառճընալ, չբ. - կարճանալ

կմռճըցընել, նբ. - կարճացնել

կմռտիշկա, ած. - գեղեցկուհի

կմսաբ (արաբ., թրք.) , գ.- մսագործ

կմսաբխանա (արաբ., պրսկ.), գ. - սպանդանոց

կմսես, շ. - կարծես, ասես թե

կմսինգա (ռուս.) , գ. - գլխաշոր

կմսնմկըրի, ած. - թեթևսոլիկ, դատարկաբան

կմստու (արաբ.), մկ. - դիտավորյալ

կմստում, գ. - կոստյում, պիջակ

կմստուրկա // կմստըրուլկա (ռուս.), գ. - կաթսա

կմվառ, գ. - մարգերի միջև փոքրիկ հողաթումբ, որը փակում է ջրի ճանապարհը

կմվառները բ՛անալ - մարգերի միջև ջրի ճանապարհը բանալ

կմվառները փագել - մարգերի միջև ջրի ճանապարհը փակել

կմվըռ, գ. - 1.արու ոչխար, 2.հիմար /տղա/.- Էրկու խատ թափով կմվըռ ունեմ, կըծմխեմ, մէ ցավ կըխօքամ /Երկու խոշոր արու ոչխար ունեմ, կվաճառեմ, մի հոգս կհոգամ/

կմվուն, գ. - սեխ

կմվուրմա (թրք.), գ. - յուղի մեջ եփված և սառը վիճակում պահվող միս՝ ձմռան պաշար.- Էստմրի յօթը խատ օխճար եմ մռե, էնենց կմվուրմա յեմ դ՛ըրե, վոր մմդներըտ խէտը կուտես /Այս տարի յոթ ոչխար եմ գնել, այնպիսի տհալ եմ դրել, որ մատներդ հետը կուտես/

կմտանգա, գ. - հաստ մետաղալար

կմտարը տմքնալ, չբ. - հարբել

կմտու տըփել պմտերը - կեղծ զայրույթ դրսևորել, խոսքը բուն նյութից շեղել

կյո̂ր, գ. - 1.կար, 2.միացման տեղը, հատվածը

կյո̂ր ա̂նել, չբ. - կար անել

կյո̂ր ու կըտուր ա̂նել, չբ. - կար անել.- Հառչըվա կընանիքը սա̂ղ էլ կյո̂րուկըտուր ին ա̂նում, լը մըկավա խառսնէրի ձ՛եռը թէլ ու ա̂սեղ տու, տէ կյա̂նա՞ն թելէն /Առաջվա կանայք բոլորն էլ կար էին անում, այժմվա հարսների ձեռքը թել ու ասեղ տուր, տես՝ կկարողանա՞ն թելել/

կյո̂ր տալ - մարմնի պատռվածքը կարել

կյո̂րա̈ խաբար, գ. - վատ լուր

կյո̂րա̈ղա̈նա̈ (թրք.), մկ. - իզուր, անիմաստ

կյո̂րա̈ղա̈նա̈ - կյո̂րա̈ղա̈նա̈ խօսալ - անհիմն, անիմաստ խոսել

կյո̂րա̈զը հըլնել /մեկի/ - կործանման պատճառը լինել

կյո̂րա̈չի (թրք.), ած. - աղմկարար, ճղճղացող /կին/

կյո̂րա̈չութուն ա̂նել, չբ. - ճղճղալ, աղմկել

կյո̂րա̈վա̈շ (թրք.), գ. - ծառա.- Դոր էթում՝ կյո̂րա̈վա̈շնէրը հիդվէն պըտըտում են /Ուր գնում է՝ ծառաները հետևից ման են գալիս/

կյո̂րա̈վուլ (թրք.), գ. - զինված պահակ

կյո̂րա̈վուլ կյա̂յնել, չբ. - հսկել, հետևել

կյո̂րա̈ր (արաբ.), ած. - հանգիստ, դանդաղ

կյո̂րա̈փա̈րութուն ա̂նել, չբ. - խաբեությամբ գործն առաջ տանել

կյո̂րաք, գ. - կարազ

կյո̂րբընալ, չբ. - օտարանալ

կյո̂րիբ (արաբ., թրք.) , գ., ած. - պանդուխտ

կյո̂րիբութուն էթալ, չբ. - պանդխտության գնալ

կյո̂րկըմել, չբ. - կարկամել

կյո̂րկըտան, գ. - պատռված զգեստի վրա կարված կտոր.- Մէ թել քաշիր՝ հազար կարկըտան կըթափէր վըրվից /Քուրջեր էր հագնում, աղքատ էր/

կյո̂րկըտել, նբ. - կարկատել

կյո̂րկութ, գ. - կարկուտ.- Բա̈, ա̂նձրեվից փախանք, հընգանք կյո̂րկըթի տակ /Բա, մի վատ բանից խուսափեցինք, ավելի վատի հանդիպեցինք/

կյո̂րմըրժըռել, չբ. - թունդ կարմրել

կյո̂րմըրխատ, ած. - կարմրահատ. ցորենի տեսակ

կյո̂րմըրճըտել, չբ. - կարմրել /դեմքը/

կյո̂րմըրցընել, նբ. - կարմրեցնել

կյո̂րմըրուկ, գ. - *հիվանդություն է*

կյո̂րմունջ, գ. - կամուրջ.- Դա̈վի խաղը կյո̂րմընջի վըրէն ա բ՛ըռնում /Անտեղի ու վտանգավոր քայլ է կատարվում/

կյո̂րքել, նբ. - ամուսնացնել

կյո̂րքըվել, չբ. - ամուսնանալ.- Խէրը ուզում էր կյո̂րքէր, բ՛այց հինքը կյա̈յիլ չէլավ, ա̂սավ՝ քանի գ՛ոռծ չունեմ, չեմ կյո̂րքըվի /Հայրն ուզում էր ամուսնացնել, բայց ինքը չհամաձայնեց, ասաց՝ քանի գործ չունեմ, չեմ ամուսնանա/

կյո̂րքըվուկ, ած. - ամուսնացած

կյո̂րքուսա̂րք, գ. - գործիքներ

կյո̂րօբկա (ռուս.), գ. - ստվարաթղթե արկղ

կյո̂րօղնալ, չբ. - կարոտել

կյա̈րօշ, ած. - սև

կյո̂փաղ (թրք.), գ. - կափարիչ, խուփ

կյո̂փուկօռ, ած. - տզեղ, այլանդակ

կյո̂ֆա (արաբ., թրք.), գ. - գլուխ, գանգ

կեխծավորնալ, չբ. - կեղծավորություն անել

կեխտի բ՛ուն, ած. - կեղտ առաջացնող
կեծ ու կմ՞րմիր, ած. - կաս-կարմիր (այտերը)
կեռ, գ. - կոր, ծուռ, ճանկաձև
կեռել, նբ. - կորացնել, ծռել
կեռընալ, չբ. - կոր դառնալ, ծռվել
կերկոխ, ած. - շատակեր
կերուխում, գ. - խնջույք.- Էթում են կերուխում գ՛ալում են՝ ՛ասում են՝ ՛անօթի յենք, բ՛էրէք խաց ուտենք /Գնում են խնջույք գալիս են, ասում են՝ սոված ենք, բերեք հաց ուտենք/
կէծակը զ՛նել - կայծակը հարվածել
կէյբ՛՛թ, գ. - բամբասանք
կէյբ՛՛թ ՛նել, չբ. - բամբասել
կէյբըթել, չբ., նբ. - բամբասել
կէյբըթի տուտը բ՛ացել - սկսել բամբասել
կէյբըթչի, ած. - բամբասող, բամբասկոտ
կէյր՛՛թ (արաբ., թրք.), գ. - ջիղ, ուժ, եռանդ
կէյրըթօվ, ած. - եռանդուն
կէս ՛նել, նբ. - ինչ-որ բանի գրեթե կեսը առանց հարցնելու իրենով անել
կէսբ՛էրան, մկ. - մի թեթև, հարևանցի, դժկամ
կէսզ՛ին, մկ. - կիսազին, էժան
կէսօրնէ յետ, մկ. - կեսօրից հետո
կէրցընել, նբ. - կերակրել, նաև՝ փխբ. նախատել
կըբնել, չբ. - 1.կպչել, 2.սկսել այրվել, 3.վարակվել, 4.նախատել
կըբնել-չըպըռծել, չբ. - 1.հիմնավորապես մեղադրել, 2.պարտադրել
կըբրէկ՛րաս, ած. - չկամ
կըդ՛ (արաբ., թրք.) , գ. - չափ.- Էսակըդ՛ մ՛ռթկութուն վոր հըլնէր մէչըտ, վայ թէ էտքան վատ չըլնէր վիճակներըս /Եթե մի փոքր մարդկություն լիներ մեջդ, երևի վիճակներս այդքան վատ չլիներ/
կըդէ, գ. - այծ

կըդի, գ. - խուտուտ
կըդի ա̊ռնել, չբ. - խուտուտ զգալ /երբ խուտուտ են տալիս/
կըդի գալ, չբ. - խուտուտ զգալ
կըդի տալ, նբ. - խուտուտ տալ
կըդրական, ած. - վճռական
կըդրակըցոն, ած., մկ. - կտորները իրար կցած, ոչ ամբողջական
կըդրել, նբ., չբ. - 1. կտրել, 2. կաթնեղենի փչանալը, 3. անձրևի դադարելը
կըզել, չբ. - կռանալ
կըզէկուզ, մկ. - կռացած
կըզըցընել, նբ. - 1.կռացնել, 2.ընկճել
կըզիկ (թրք.), ած.- 1.աղջկա բնույթով տղա, 2.վախկոտ
կըզկընալ, չբ. - իրեն աղջկա պես պահել
կըզկընակ, մկ. - աղջկա պես
կըզկութուն ա̊նել, չբ. - աղջկա նման շարժումներ անել
կըզօղլան, ած. - տղայի բնույթով /աղջիկ/
կըթան, գ. - կաթնատու անասուն
կըթել, նբ.- 1.կթել, 2.կարել
կըթնել, չբ. - կոպերը ուռչել
կըթնուկ, ած. - ուռած /կոպեր/
կըթու, ած. - կթվող, կթան
կըթուն, գ. - ընկույզի միջուկ
կըժալ, չբ. - բարձր ճչալ
կըժալէն, դբ. - գոռալով, ճչալով
կըժաֆ, գ. - ջրի հորձանք
կըժիկ, գ. - հող
կըժկըժալ, չբ. - ճղճղալ, ճչալ
կըժկըժան, ած. - ճղճղացող
կըժկըժոց, գ. - խառնաձայն աղմուկ
կըժման, մկ. - շատ արագ, վազեվազ, սուրալով
կըժմըթել // կըմըշտել, նբ. - կսմթել, կմշտել
կըժոց, գ. - բարձր ճիչ
կըլա̈յէկչի // կըլէկչի (թրք.), գ. - կլայեկող

կըլավ, ած. - գեր.- Մէ կըլավ խավ մօռթի, դ՛ըրի վըրէն, քանի ժամ սիֆտըլկխատ ձ՛ավարօվ լա՛վ եռաց, օսկըռխընի, կմ̈յնա գ՛ըլխին լա՛վ խառնի, քօ զիցուկ մ̈ռթար յեղ լըցի՛, խալավ-խավըըրա՛վ, հմ̈սըլա՛վ… խօ հմ̈րիսմ̈ չէլավ, խօ հմ̈րիսմ̈ չէլավ. կէրա՛նք կըշտըցանք. շմ̈տ էլ տունը փող չըմըտում՝ մենք ուտէլուց յետ չենք հընգում /Մի գեր հավ մորթեցի, դրեցի կրակին, սպիտակիատ ձավարով մի քանի ժամ լա՛վ եռաց, ոսկրահան արեցի, կանգնեցի լա՛վ խառնեցի, քեզ հայտնի արդար յուղ լցրի, հալվեց - տարրալուծվեց, համը եկավ տեղը… ի՛նչ հարիսա եղավ. Կերանք կշտացանք. շատ էլ տունը փող չի մտնում՝ մենք ուտելը պակաս չենք անում/

կըլավնալ, չբ. - գիրանալ.- Էտ խավը ի՞մալ կըլավցավ, վոր էսա քանի մ̈միս ձ՛եր տունը փող չըմըտե, դ՛ուք էլ կուտ չէք մ̈ռե… /Այդ հավը ինչպե՞ս գիրացավ, եթե մի քանի ամիս ձեր տուն փող չի մտել, դուք էլ հավի կեր չեք գնել/

կըլավուզնիկ, գ., ած. - զրպարտիչ.- Բ՛այց դ՛ու ի՛նչ կըլավուզնիկ դ՛ուս էկար. կուտ չենք մ̈ռե՝ խաց է՞լ չենք կէրե, բը ճմ̈շի հավէլին ի՞նչ ենք մ̈րե… /Բայց դու ի՛նչ զրպարտիչ դուրս եկար, հավի կեր չենք գնել՝ հաց է՞լ չենք կերել, բա ճաշի թերմացքը ի՞նչ ենք արել…/

կըլբըլալ, չբ. - մի քանիսի անհանգիստ խոսելը

կըլեփ, գ. - կեղև.- Խա՛, մըկա կմ̈սես՝ կմ̈ռտօլի կըլեփօվ էք խավէրին պմ̈խե, խացի փըշուրօվ, մմ̈զնաթանօվ… /Հա՛, հիմա էլ կասես՝ կարտոֆիլի կլեպով եք հավերին պահել, հացի փշրանքով, մածնաթանով…/

կըլեփը խանել - կլպել, կլեպը հանել.- Է՛ խա՛, կմ̈ռտօլի կըլեփը խանում ենք, էփում ենք, տմ̈լում ենք խավէրին, զիվմ̈ սո՞ւթ ա… /Է՛ հա՛, կարտոֆիլի կլեպը հանում ենք, եփում ենք, տալիս ենք հավերին, իբր սո՞ւտ է…/

կըլէ (ռուս.), գ. - սոսինձ.- Բը էտ ի՞մալ էր հէլե, վոր խավէրի դ՛էմը կըլէ յիք լըցե… /Իսկ ինչպե՞ս էր եղել, որ հավերի առաջ սոսինձ էիք լցրել…/

կըլէկչի, գ. - անազապատող

կըլէտկա (ռուս. , գ. - վանդակ.- Դ՛ո՞ւ հուստ զիցար… բա՜, ա՛դէն էր լըցե… մեր էտա տըղէն կըլէտկա յէր սա՛րքում, մէ բ՛աց ա՛ման կըլէ բ՛էրէր էր, դ՛ըրէր էր թալվի դ՛ուռը, տեղ էր գ՛ացե. էս ա՛դէն էտի տէսէր էր, զիցէր էր մա՛զնաթան ա, ա՛սէր էր՝ կա՛յնի լըցեմ խավէրի դ՛էմը. խէրախօրուկը խոտն էլ չէր ա՛ռե, տա՛րէր էր, լըցէր էր ըտոնց ջ՛ըրի ա՛մանը… էտ անխամ խավէրն էլ թէ իմալ ին ա՛րե՝ կըտըցէր ին, իրեքի կըտըցները կըպէր ին. չում խաբար հէլանք, չում դէ՛ս, չում դէ՛ն՝ էլ չըկա՛ռցանք ըտոնց կըտըցները պըռծըցընինք, ա՛դէն ա՛սավ՝ բ՛էրէք մօռթենք, հա՜րիսա՜ դ՛ընենք… ա՛սի՝ խէ՛րըտ խօրեմ, դասա ըտու խըմար իր կըլէն լըցե դ՛էմըները… էնենց էլ զաբուն ին… /Դո՞ւ որտեղից իմացար… գիտես՝ ադեն էր լցրել… մեր տղան վանդակ էր սարքում, մի բաց ամանով սոսինձ էր բերել, դրել գոմի դռանը, տեղ էր գնացել. Էս ադեն դա տեսել էր, կարծել էր՝ մածնաթան է, ասել էր՝ լցնեմ հավերի առաջ. հեր թաղածը հոտն էլ չէր զգացել, տարել էր, լցրել էր դրանց ջրամանը… էդ անհամ հավերն էլ թե ինչպես էին արել՝ կտցել էին, երեքի կտուցները կպել էին. մինչև իմացանք, մինչ այս, մինչ այն՝ էլ չկարողացանք դրանց կտուցները բացել, ադեն ասաց՝ բերեք մորթենք, հարիսա դնենք… ասացի՝ հերդ թաղեմ՝ դե ասա՝ դրա համար էիր սոսինձը լցրել առաջները… էնպես էլ նիհար էին…/

կըլըմբօստիկ, գ. - գլուխկոնծի.- Մէկ էլ դ՛ու յու ճըժերըտ ուրախութունից կըլըմբօստիկ չիք տա՛լում… հըմընիտ սըռտօվ ա հէլե, է՛լի… բը ա՛սում իր՝ մէ կըլա՛վ խավ իր

մօռթե՜… /Մեկ էլ դու և երեխաներդ ուրախությունից գլուխկոնծի չէիք տալիս… բոլորիդ սրտով է եղել, է՜լի… բա ասում էիր՝ գեր հավ էիր մորթել…/

կըլըրեկ, մկ. - դեպի վեր ցցված

կըլկըլցընել, չբ. - կլկլացնելով երգել.- Լա՜վ խա՜, բօլա կըլկըլցընես՝ մէ կըլաա՜վ խավ իր մօռթե՜… քեզի հա՛րիսա՛ չեմ տըվե, ըտու խըմար ես էտենց յեռի-յեռի գ՛ալում… /Լա՜վ հա՛, հերիք է կլկլացնես՝ մի գե՛ր հավ էիր մորթե՛լ… քեզ հարիսա չեմ տվել, դրա համար ես այդպես վրդովված խոսում…/

կըյօշ յուպկա, գ. - լայն փեշով շրջազգեստ.- Վա՜յ, մէկ էլ յերեվի էտա վըրվիտ խընգըռուկ կըյօշ յուպկէն կուզի՝ տիր ընձի… փորըտ կուշտ ա՝ ա՛ղզունցէ՞ր ես… թէ՞ յես խավ չունեմ… /Վա՜յ, մեկ էլ երևի այդ վրայիդ գունաթափ լայնափեշ շրջազգեստը կուզեի՝ տայիր ինձ… փորդ կուշտ է՝ կատաղե՞լ ես… թե՞ ես հավ չունեմ…/

կըլուբ (ռուս.), գ. - ակումբ.- Դը վոր ունես՝ գ՛ընա մօռթա կե, ընձընից ի՞նչ ես ուզում… լա՜վ, լա՜վ, խա՛նա՛ք եմ ա՛նում, ա՛րի, մի՛ գ՛ընա… հա՛րիսի կէսը լը կա՛, դ՛ըրէր եմ վըրէն, հէսա տըղէն կըլուբից գ՛ա՝ հիրար խէտ կուտէք. գիդում եմ, վոր շա՛տ ես սիրում… /Դե որ ունես՝ գնա, մորթի՛ր կեր, ինձնից ի՞նչ ես ուզում… լա՜վ, լա՜վ, կատակ եմ անում, ե՛կ, մի՛ գնա… հարիսայի կեսը դեռ կա, դրել եմ կրակին, շուտով տղան ակումբից որ գա՝ իրար հետ կուտեք. գիտեմ, որ շատ ես սիրում…/

կըլջել, նբ. - 1.նետվածը բռնել, 2.խլել.- Վոր էտենց ա՝ էսա կա՛նֆեռտը բ՛ըռնա՛, Լավռ՛ւր, թա՛լում եմ, կըլջա՛ /Որ այդպես է, այս կոնֆետը բռնի՛ր, Լաուրա, նետում եմ, բռնի՛ր/

կըլցընել, նբ. - կուլ տալ.- Մըկա յեսիմ դ՛ու ինշքան ես կըլցըրե, էսա մէկն էլ բ՛էրէր ես ընձի… /Երևի ահագին քանակության դու կուլ ես տվել, այս մեկն էլ բերել ես ինձ…/

կըլփել, նբ. - կեղևը հանել.- Կըլփա՛, թուխտը խան կե, էտ էլ քեզի շա՜տ ա /Կեղևը՝ թուղթը հանի՛ր, կե՛ր, դա էլ քեզ շատ է/

կըլօջ, գ. - բաղարջ.- Դը վոր էտենց ա, յես էլ քե կըլօջ չեմ տա՝ ուտես, թա՜զա՜ յեմ թըխե, Միրո՛ւշ ա՜խճիկ… /Դե որ այդպես է, ես էլ քեզ բաղարջ չեմ տա՝ ուտես, նոր եմ թխել, Միրուշ աղջիկ…/

կըլօրել, նբ., չբ. - 1.կլոր դարձնել, 2. թեթև գիրանալ.- Յաա՛, լավ էլ քեզի մուղաոթ ես, Լավո՛ւր, ըտու խըմա՞ր ես էս էրկօր էտենց կըլօրե /Յա՛, լավ էլ քեզ հետևում ես, դրա համա՞ր ես վերջերս այդպես թեթև գիրացել/

կըլօփ տալ, չբ. - կեղևի, դրսի շերտի առանձնանալը.- Լիզուտ քեզի քաշա՛, ա՜խճի, ընձի չըհա՜շկըռցընես, մըկա կըլօփ կըտամ, կըտըրաքեմ… /Լեզուդ քեզ քաշի՛ր, աղջի՛, ինձ աչքով չտաս, հիմա կշերտատվեմ, կպայթեմ/

կըխշու տալ - աղմուկով վախեցնել-փախցնել

կըխտակուրուս, ած. - 1.ուշ կեղտոտվող, 2.կեղտը ցույց չտվող

կըխտի մէչ կուրել, չբ. - շատ կեղտոտվել.- Վա՛յ, չըռթավի, հընչի դ՛ու նո՞ր պըտի տըրաքես, էտա կըխտակուրուս յուպկէն խաքէր ես, գիդում ես՝ չէ՞րէվում, վոր կըխտի մէչ կուրուկ ես. էտ յե՞փ ես տըրաքէ՝ չենք գիցե… /Վա՛յ, կշտամբախոս, ինչու դու նո՞ր պիտի պայթես, կեղտը կորցնող այդ կիսաշրջազգեստը հագել ես, կարծում ես՝ չի՞ երևում, որ կեղտի մեջ կորել ես. այդ ե՞րբ ես պայթել՝ չենք իմացել…/

կըխտոտ-մըխտա՜ռ, ած. - զզվելիորեն կեղտոտ

կըծան, ած. - կծող.- Տօ կըխտոտ-մըխտա՜ռը դ՛ու յես, մա՜ռթ մա՜ռթի չըքաշէր, հըմա դ՛ու պըտի քաշիր ա՜նիծուկ մա՜ռթի՞տ... բը հընչեն ա՜սում՝ ձ՛ին ձ՛իյան կող կա՜պես՝ յա կըծան գ՛ըլնի, յա թա՜փկան /Տո զզվելի կեղտոտը դու ես, մարդ մարդու չնմանվէ՛ր՝ դու պիտի հենց անիծված ամուսնո՞ւդ նմանվեիր. բա ինչու են ասում՝ ձին կապես ձիու մոտ՝ կամ կծող կլինի, կամ հարվածող/

կըծուֆըռ ա̊նել, չբ. - ուտելիս կում-կում հեղուկ խմել.- Օ՛ֆ, բօլ ա… ա̊խճի՛ Լավո՛ւր, կիսուրըտ էտ ի՞նչ ա կըծուֆըռ ա̊նում… /Օ՛ֆ, հերիք է… աղջի Լաուրա, սկեսուրդ այդ ի՞նչ է խմում, հետո էլ՝ ուտում/

կըծվախամ, գ. - կծու համ.- Ցես ի՞նչ եմ գիդում… չայ ա խըմում, մէշօլ կըծվախամ պա̊նիր կա̊ր, յերեվի էտի յա գ՛ըթե, խէտն ուտում… /Ես ի՞նչ գիտեմ… թեյ է խմում, մի քիչ էլ կծվահամ պանիր կար, երևի դա է գտել, հետո ուտում է…/

կըծօվի, ած. - թեյ խմելը՝ շաքարը կծելով.- Հէնա կըծօվի յա չայը խըմում, չըմդէ ձ՛եզի էլի կա̊շա՞ռք ա բ՛աժնա՛ծ… էս քանօրը ընտըրութուն ա… /Թեյը կարծես շաքարը կծելով է խմում, կարո՞ղ է՝ ձեզ էլի կաշառք են տվել… մոտ օրերս ընտրություն է…/

կըղզընել, չբ. - մի տեղ շատ մնալ.- Լավո՛ւր, ա̊խճի Լավո՛ւր, էտ Սիրուշը հընչա՞ կըղզընե, մեր տուն գ՛ալում՝ էլ չուզում էթա… տըղէն հընչի՞ յետըցավ… /Լաուրա, աղջի Լաուրա, այդ Սիրուշը ինչո՞ւ է կպել մեզ, մեր տուն գալիս է՝ էլ չի ուզում գնալ… տղան ինչո՞ւ ուշացավ/

կըճեփ // կըռճեփ, գ. - կեղև /սոխի, ձվի/.- Վա՛յ, խէրըտ խօրեմ՝ վոր խօրվե, ա̊դէ՛, էս սոխի կըճեփնե՞րը հընչես հավքե բ՛էրե լըցե ըստե, ի՞մալ գ՛ըլնի քօ խէտ… /Վա՛յ, հերդ թաղեմ՝ որ թաղվել է, աղե՛, այս սոխի կեղևնե՞րը ինչու ես հավաքել բերել, լցրել այստեղ, ի՞նչ անեմ քեզ հետ…/

կըճէ, գ. - թուրքի կամ քրդի կին.- Կըճէ՛, էտ ի՞նչ ես բըռթբըռթում, լա՛վ եմ ա̊րե, զա̊տիկին ձ՛ու չըպըտի՞ նէրկես… /Կճե՛, այդ ի՞նչ ես մռթմռթում, լա՛վ եմ արել, զատիկին ձու չպիտի՞ ներկես…/

կըճուճ, գ. - թրծած կավե աման, պուտուկ.- Զա̊տիկը լը դո՞ր ա, ա՛յ մէր… էս կըճուճն էլ ա̊ռթէն դ՛առտըկվե, վեռջի յեղը հէսօր եմ հա̊րիսին լըցե… /Դեռ ո՛ւր է՛ զատիկը, ա՛յ

մեր… այս կճուճն էլ արդեն դատարկվել է, վերջին յուղը այսօր եմ հարիսայի մեջ լցրել/

կըմըշտել, նբ. - կծմտել.- Լա՛վուր, քեզի կըմըշտա, էտ Սիրուշը, ՜սում են, փիս հ՜շկ ունի… /Լաուրա, քեզ կծմտի՛ր, այդ Սիրուշը, ասում են, վատ աչք ունի…/

կըմիշել (թրք.) - չխնայել.- Վա՛յ խէրըտ խօրեմ, չեմ էլ կըմիշում ՜սեմ՝ լիզուտ լալկըվի, յես վի՞րն եմ էսքան գ՛ախ վատ կ՜մէցե… /Վա՛յ, հերդ թաղեմ, չեմ էլ ուզում ասեմ՝ լեզուդ պապանձվի՛, ես ո՞ւմ եմ այսքան ժամանակ վատ կամեցել…/

կըմկըմալ, չբ. - կմկմալ.- Ի՞նչ ես կըմկըմում, է՛, չեմ լըսում, չօթէ՛… /Ի՞նչ ես կմկմում, է՛, չեմ լսում, ա՛յ կին/

կըմուկ, գ. - կատիկ

կըմուկը քըցել, չբ. - շատ սպասեցնել՝ ուտելիք մատուցելիս.- Օ՛ֆ, զ՜յլէս փախավ… ՜խճի Լավո՛ւր, կըմուկըս քըցիր, թէ տ՜լում ես՝ մէ ՜ման տո՛ւր ուտեմ, էթամ, կիսուրըտ ՜ռթէն նէրվէրիս վըրէն ՜զդում… /Օ՛ֆ, ձանձրացա… աղջի Լաուրա, շատ սպասեցրիր, թե տալիս ես՝ մի աման հարիսա տուր ուտեմ, գնամ, սկեսուրդ արդեն նյարդերիս վրա ազդում է/

կըյամաթ (արաբ., թրք.) , գ.- սառնամանիք, ցուրտ.- Լավո՛ւր, էս ի՛մալ կըյամաթ ա, էտ Սիրուշին ՜սա՝ թօ փէշտըմալօվ էրկու խատ ցան բ՛էրա, վառենք. ըտոնք ցան շ՜տ ունեն… /Լաուրա, այս ի՛նչ սառնամանիք է, այդ Սիրուշին ասա՝՝ թող գոգնոցով մի երկու հատ աթար բերի, վառենք. Դրանք աթար շատ ունեն…/

կըյամաթխանա, գ. - շատ ցուրտ բնակարան.- Կիսուրըտ դուզն ա ՜սում, համ էլ ձ՛եր տունը կըյամաթխանա յա, Լավո՛ւր, մէ բ՛աժակ էլ չայ բ՛ե խըմենք, տ՜քնանք… /Սկեսուրդ

ճիշտ է ասում, իրոք ձեր տանը շատ ցուրտ է, Լաուրա, մի բաժակ էլ թեյ բեր խմենք, տաքանանք/

կընգընակ, մկ. - կնոջ պես

կընգութուն ա՛նել, չբ. - մեկին իբրև կին ծառայել, կին լինել

կընդել, նբ. - խուզել /ոչխարը/

կընդուկ,ած. - խուզած

կընդօվ // կընդըկօվ էթալ, չբ. - մեկի ցանկությունը հաշվի առնել

կընիկ, գ. - կին ամուսին, կին

կընիկա՛րմատ, գ. - կին

կընութ, գ. - մտրակ

կընօպկա (ռուս.), գ. - կոճգամ, սևեռակ

կըշլաղ (պրսկ.), գ. - գյուղեզր, ձմեռանոց

կըշտընալ, չբ. - կուշտ դառնալ, հագենալ

կըշտընալիք, գ. - կշտանալիք /գործածվում է «խօ կըշտընալիք չէ» և նման կապակցություններում/

կըշտըցընել, նբ. - 1. կուշտ դարձնել, 2. ձանձրացնել

կըշտում, գ. - կշտանալը.- Է՛ խա՛, վո՛րը չըգիդում՝ ա՛քայ մա՛ռթին կըշտում չըկա, բ՛այց ա՛մօթն էլ լավ բ՛ան ա, չէ՞ /Է հա՛, ո՛վ չգիտի՝ ազահ մարդուն կշտանալ չկա, բայց ամոթն էլ լավ բան է, չէ՞/

կըչկըչալ, չբ. - 1.հավի ձայն հանելը, 2.բարձրաձայն ծիծաղել

կըչկըչան,ած. - կչկչացող

կըպըշկըվել, չբ. - կպչել ու պոկ չգալ

կըպչիկ,ած. - կպչուն, նաև՝ մարմնին կիպ կպած /հագուստ/

կըպչոն // կըպչան, գ. - փայտի կտորներ՝ կրակ վառելու համար

կըպցընել, նբ. - ամրացնել

կըռ[1] (թրք.), գ. - անջրդի քարքարոտ հող

կըռ[2], գ. - փորձանք

կըռ բ՛էրել - փորձանք բերել, տհաճ խոսակցության առիթ տալ

կըռ ու բըռ բ՛էրել - կռվի առիթ դառնալ

կըռալ, չբ. - 1.ագռավի ձայն հանելը, 2.ցավից դառը ձայն հանել

կըռապա՛շտ, ած. - ժլատ, անգութ

կըռաջ, գ. - քարքարոտ վայր
կըռաֆ (թրք.), գ. - եղյամ
կըռբօզ, ած. - դեմքին մազ չունեցող /տղամարդ/
կըռէթ, գ. - հողի ամուր կոշտ
կըռընձել, չբ. - 1.ճանգռանալ, 2.կծղել
կըռընձուկ, ած. - կուչ եկած, կծկված
կըռթալ, չբ. - չորացած հացի կամ այլ բանի կոտրվելը
կըռթել, չբ. - հասկակալվել
կըռթըզնալ, չբ. - հացի չորանալը
կըռթըլակ (թրք.), գ. - կոկորդ
կըռթիկ - չորացած /հաց/
կըռթկըռթալ, չբ. - չորացած հացի կամ այլ բանի ձայն հանելը ուտելիս կամ կոտրելիս
կըռթկըռթցընել, նբ. - չոր հաց կամ այլ բան ուտելուց ձայնի առաջանալը
կըռիս, գ. - 1.առնետ, 2.նենգ
կըռիվ - դա̈վլի ա̈նել, չբ. - վիճաբանել
կըռիվ - կա̈լմակալ ա̈նել, չբ. - աղմուկով կռիվ անել, վիճաբանել
կըռկել, չբ. - ցրտից կուչ գալ, կծկվել
կըռկըռալ, չբ. - 1.ագռավի ձայն հանելը, 2.չարագուշակ խոսել, 3.աղմկել
կըռկըռոց, գ. - 1.ագռավների աղմուկը, 2.չարագուշակ խոսելը, 3.աղմկելը
կըռկըռոց քըցել, չբ. - մեծ աղմուկ բարձրացնել
կըռկըվել , չբ.- 1.կուչ գալ, կծկվել, 2.շարժվել չկարողանալ
կըռկըվուկ, ած. - վերջույթները կուչ եկած
կըռկուկ, ած. - անճարակ
կըռճել, նբ. - 1.ջուրը որևէ տեղից ամանով հավաքել, 2.եղած ողջ ջուրը ագահաբար խմել
կըռճըցընել, չբ. - կրճտացնել
կըռճիկ, գ. - կրճիկ, աճառ
կըռճոն, գ. - 1.անասունի կերածի մնացորդը, 2.ուտելիքի մնացորդ

կըռճոն հավքել - ուրիշների կերածների մնացորդը հավաքել, թերմացքով մի կերպ ապրել.- Ըտոնք հառէչ կըռճոն ին հավքում, բ՛այց մըկա է՛լ խէտըները խօսալ յէ՞փ ա իըլնում… /Դրանք առաջ թերմացքով էին ապրում, բայց այժմ շատ գոռոզացել են/

կըռմիշ ձնել (թրք.), նբ. - մի կերպ հասկանալ.- Ի՛նչ ուզում ես՝ ձսա. ըսկի կըռմիշ չեմ ձնում, թէ ի՛մալ էսենց հէլավ… /Ինչ ուզում ես՝ ասա. ամենևին չեմ հասկանում, թե ինչո՛ւ այսպես եղավ…/

կըռնել, չբ. - 1.կռանով հարվածել, 2.ոտքով գնդակին ուժեղ հարվածել

կըռշ, գ. - 1.խոտի շյուղ, 2.թերմացք

կըռշ հավքել - ուրիշների թերմացքով ապրել

կըռոտ, ած. - քարքարոտ

կըռոց, գ. - աղեխարշ ձայն

կըռոց դ՛ընել, չբ. - աղեխարշ ձայն հանել.- Մեր հառչըվա ձտամնաբ՛ուժը, խեռը քեզնից, գիվձ ձտամ քաշօղ էր. վորը գ՛ալում էր կուշտը՝ մէ կըռոց էր դ՛ընում, մէ կըռոց էր դ՛ընում… ախար էտի ըսկի ձտամ քաշել չէր գիդում, սձղի ձղմըները ջ՛առթում էր, լընղերը ճըղճըղում էր, կձսիր՝ տձխտըկից մըխ ա քաշում /Մեր առաջվա ատամնաբույժը, հեռու քեզանից, իբր ատամ քաշող էր. ով գալիս էր մոտը՝ աղեխարշ ձայներ էր հանում… ախր սա ատամ հեռացնել բոլորովին չէր իմանում, բոլորի ատամները ջարդում էր, լնդերը պատառոտում, թե ինչպե՞ս էին դրան բերել այդտեղ/

կըռվըղձր // **կըռվըրար**, ած. - կռվարար.- Կըռվըղձր էլ էր, հա՛… մէ օր մէ զըռբաղանա մձռթի կըռոցը խանէր էր, էս մձռթը չէր դ՛իմացե՝ քըռփէր էր, էսի վէռցէր էր՝ բ՛աժակօվ ջ՛ուրը շըփէր էր էղ մձռթի հիրսին ու փախէր էր /Կռվարար էլ էր, հա՛… մի օր էլ մի հաղթանդամ

մարդու գոռոցն էր հանել, այս մարդը չէր դիմացել, հայհոյել էր, սա վերցրել էր, բաժակով ջուրը շփել էր այդ մարդու երեսին ու փախել/

կըռվըցընել, նբ. - իրար դեմ կռվի հրահրել

կըռուգ, գ. - կեռման.- Էտ զըռբադանա մåռթը հէլէր էր, հընգէր էր ըտու հիդեվը, չում հիվանդանոցի կըռուգը լåրէր էր… /Այդ հաղթանդամ մարդը ելել էր, ընկել էր դրա հետևից, մինչև հիվանդանոցի կեռմանը հետապնդել էր/

կըռուգ åնել, չբ. - պտտվել.- Էտենց քանի կըռուգ åրէր ին, մըտէր ին խըլղի բօստըններըը, քօլերը ջ՛առթէլօվ, խըթվէլօվ-հըլնէլօվ հիրար հիդեվ վազէր ին… /Այդպես մի քանի շրջան արել էին, մտել էին ուրիշների բոստանները, բույսերը ջարդելով, խրվելով ելնելով իրար հետևից վազել էին/

կըռուգ տալ, չբ. - շրջվել /ավտոմեքենան/.- Չում միլիցի åֆտօն ըտոնցը տէսէր էր, կըռուգ էր տըվե, խասէր էր ըտոնցը, էրկըսին էլ բ՛ըռնէր ին, տåրէր ին բ՛աժին… /Մինչև ոստիկանական ավտոմեքենան սրանց տեսել էր, շրջվել էր, հասել էր սրանց, երկուսին էլ բռնել էին, տարել բաժին…/

կըռուլթ, գ. - հասկ.- Մէ մåռթ էլ գ՛ըթէր ին՝ էկէր էր բ՛օղօքէր էր, թէ՝ մըտած իմ հառտը, սåղ կըռուլթները տåփսåղադ ա åրած, խավի ճըտէրին խատըցըրած… /Մի մարդ էլ գտել էին՝ եկել էր, բողոքել էր, թե մտել են իր արտը, բոլոր հասկերը գետնին են հավասարեցրել, հավի ճտերին սատկեցրել…/

կըռունձ, ած. - գանգուր.- Էրկըսին էլ տըսնըխինգ օր նըստըցըրին. էս åտամ քաշօղի կըռունձ մåզերը խուզէր ին, էն մåռթը տեղից էլ քåչåլ էր… /Երկուսին էլ տասնհինգ օր նստեցրին. այս ատամն քաշողի գանգուր մազերը խուզել էին, այն մարդը տեղից էլ ճաղատ էր…/

կըռտել, նբ. - 1.ամորձատել, 2. այրվածք ստանալ
կըռտուկ,ած. - 1.ամորձատված, 2.այրվածք ունեցող.- Էտ քաչալի գ՛ըլօխն ու հիրեսն էլ կըռտուկ էր, քընուկ գ՛ախ մթօռից հընգէր էր վառուկ փէջի վըրէն /Այդ ճաղատի գլուխն ու երեսը այրվածքներ ունեին, քնած ժամանակ աթոռից ընկել էր վառվող վառարանի վրա/
կըռփըցընել, նբ. - վատնել
կըսան, գ. - զրույց
կըսան անել, չբ. - զրուցել.- Էտ քանօրը էրկըսին մէ տեղ ին պախե. ըտոնք խօսպըռտացէր ին, ըսկըզբից հիրար լա՛վ անպադվէր ին, յետօ հանթըռտէր ին, կըսան յին արե, բաըիշէր ին /Այդ մի քանի օրը երկուսին մի տեղ էին պահել. դրանք վիճել էին, սկզբից իրար լա՛վ անպատվել էին, հետո հանդարտվել էին, զրուցել էին, հաշտվել/
կըսան-գանլանջի, գ. - զրույց, զվարճանք
կըսան-գանլանջի անել, չբ. - հաճույքով զրուցել, ժամանակ անցկացնել
կըսըր,ած. - ստերջ
կըսկըծավոր, ած. - կսկիծ ունեցող (անեծք է)
կըսկըծու, մկ. - կսկիծի պատճառով
կըսկըծու՝ փառք Աստու - *ներքին ցավը թաքցնելու դեպքում է ասվում*
կըսկըձվորել // կըսկըզվորել, չբ. - դարդոտել, վշտից կուչ գալ.- Վօր ըտեղից դ՛ուս են գ՛ալում, էս մառթը տըղին ասում՝ արի էթանք մեր տունը, մէ բ՛աժակ խըմենք, նօր կէթաս… տըղէն համաձայնում. էթում են տէնում են՝ էս մառթի մէրը կըսկըձվօրուկ նըստուկ ա. ինչ ա հէլե՝ կըսըր մաքին ու խէրվա գ՛առները կուրած… դարի՝ մի ասա՝ տըղի դառդը չէ, օխճըրի դառդըն ա... /Երբ այդտեղից դուրս են գալիս, այս մարդը տղային ասում է՝ գնանք մեր տուն, մի բաժակ խմենք, նոր կգնաս… տղան

համաձայնում է. գնում են տեսնում՝ այս մարդու մայրը դարդոտած նստած է. ի՛նչ է եղել՝ ստերջ մաքին ու անցյալ տարվա զառները կորել են… դե եկ ու մի՛ ասա՝ տղայի մասին չի մտածում, ոչխարի մասին է մտածում…/

կըսկըվել, չբ. - կծկվել, կուչ գալ

կըսմա̈թ (արաբ., թրք.), գ. - բախտ, բաժին.- Մէր ու տըղա փատըտվում են, տըղէն մօրը համօզում, թէ՝ ա՛յ մէր, հընչես էտենց կըսկըվե, օխճար ա՝ կուրե, հա̈լբա̈թ մեր կըսմա̈թը չէր. մէրը՝ չէ՛ վոր չէ, իմ օխճարը գ՛ըթի բ՛ե… /Մայր ու որդի փաթաթվում են, տղան մորը համոզում է, թե՝ ա՛յ մեր, ինչո՛ւ ես այդպես կծկվել, ոչխար է՝ կորել է, երևի մեր բաժինը չէր. մայրը թե՝ չէ՛ որ չէ՛, իմ ոչխարը գտի՛ր, բե՛ր…/

կըսմա̈թ ունէնալ, չբ. - ստանալիք ունենալ.- Մէկէլ տէնում են՝ մա̊քին՝ գ՛առները հիդեվը, մըտավ հա̈յա̈թ… էս մա̊ռթը դ՛առնում տըղին ա̊սում՝ դ՛ու կըսմա̈թ ունես, մէ գ՛առ պըտի մօռթեմ՝ ուտենք… /Մեկ էլ տեսնում են՝ մաքին, գառները հետևը զցած, մտավ բակ… Այս մարդը տղային ասում է՝ դու բախտ ունես, մի գառ պիտի մորթեմ, ուտենք…/

կըսմըթի ռաստ գ՛ալ - բախտը բանել, անակնկալ բաժնի տեր դառնալ.- Տըղէն չեմուչում ա ա̊նում, բ՛այց մա̊ռթը զօռում. մօռթում են, քըռթում են, խօրօված են ա̊նում, վեռչապէս… վոր նըստում են սեղան, էս տըղի հա̈շկը մընում էտ մա̊ռթի ա̊խճըկա հիրսին. ըտու դ՛եմքը, դ՛իրքը, ա̊րարմուտկը դ՛ուրը շա̊տ ա գ՛ալում… բ՛աժակ ա վէրցում, մէշօլ քէֆը լավ ա հըլնում, ռիսկօվ էտ մա̊ռթին ա̊սում՝ իսկականից յես իմ կըսմըթին եմ ռաստ էկե, էս ա̊խճիկըտ պըտի տաս ընձի… /Տղան մի քիչ

ընդդիմանում է, բայց մարդը պնդում է. մորթում են, քերթում են, խորոված անում, ինչ որ է… երբ սեղան են նստում, այս տղայի հայացքը մնում է աղջկա դեմքին. դրա տեսքը, շարժումները դուրը շատ են գալիս… բաժակ է վերցնում, մի քիչ էլ տրամադրությունը բարձր է լինում, համարձակվում է ասել այդ մարդուն՝ ես իսկապես իմ բախտը գտել եմ, աղջիկդ պիտի տաս ինձ…/

կըսմըթօվ,ած. - հաջողակ, բախտը բանող.- Էս մմ̊ռթի քէֆն էլ ա ա̊ռթէն հարմար հըլնում, էլ վոնչ վէրցում, վոնչ դ՛ընում, ա̊սում՝ դ՛ու կըսմըթօվ տըղա յես, վոր էկե՝ էկե, տա̊լում եմ… էլ ա̊խճըկան չեն էլ խառցընում, բ՛այց վոր ա̊խճըկա մըտկին չըլնէր, էտ բ՛անը գ՛ըլօխ չէր գ՛ե… մէշու էտ մա̊ռթի մէրն ա նեխսըռտում, թէ՝ էտենց ի՞մալ գ՛ըլնի, տըղէն ա̊սում՝ էս տըղի վոտը խէրօվ ա, տէսա՞ր՝ իմալ օխճարը էկավ՝ պա̊ռավը ձ՛էնը կըդրում… էտենց պըսակվում են, լավ էլ տուն ու տեղ են դ՛ընում, քանի խատ էլ ճիժ ունեն… /Այս մարդու տրամադրությունն էլ է արդեն բարձր լինում, առանց երկմտելու ասում է՝ դու բախտ ունեցող տղա ես, որ եկել՝ եկել է, տալիս եմ… աղջկան էլ չեն հարցնում. բայց եթե աղջկա մտքին չլիներ, այդ բանը չէր ստացվի… մի քիչ այդ մարդու մայրն է նեղսրտում, թե՝ այդպես ո՞նց կլինի, տղան ասում է՝ այս տղայի ոտքը հաջողակ էր, տեսա՞ր՝ ինչպես ոչխարը եկավ՝ պառավը ձայնը կտրում է… այդպես պսակվում են, լավ էլ ընտանիք են կազմում, օջախ ստեղծում, մի քանի երեխա էլ ունեն…/

կըսվէլ, չբ. - շների մերձենալը

կըստըկել - կատվի արտաթորելը

կըվախառը, ած. - թրիքախառը

կըվախոտ, գ. - թրիքի հոտ

կըվանոց, գ. - գոմում թրիքը լցնելու փոսը

կըվառտիրա (ռուս.), գ. - բնակարան
կըվաս, գ. - կաղամբով և գազարով թթու, թուռշի
կըվել, չբ. - թրիքել
կըվիտանցի (ռուս.), գ. - անդորրագիր
կըվոտ, ած. - թրիքոտ
կըվջ՜ուր, գ. - կվաջուր, թրիքաջուր
կըտախան անել, նբ. - կորիզը հանել
կըտըռտել, նբ. - կտրատել
կըտըռտըվել, չբ. - 1.կտրատվել, 2.շատ չարչարվել
կըտըռտըվուկ, ած. - տառապանքի ենթարկված (անեծք է)
կըտըցել, նբ. - 1.կտցել, 2.ակնարկներով նեղել
կըտկըտալ, չբ. - ընդհատ - ընդհատ աղմուկ, անձրևի կտկտոց
կըտոր, գ. - 1. որևէ բանի մաս, նաև՝ գործվածք, 2. սենյակ
կըտոր խանել /մեկից/ - խիստ ատել, զզվել
կըտոր-կըտոր հըլնել, չբ. - 1. կտորների բաժանվել, 2. կոտրատվել, ձևեր թափել
կըտորտանք, գ. - կտորներ
կըրագն հընգնել, չբ. - դժվարին կացության մեջ հայտնվել
կըրազվորել, չբ. - այրոցք զգալ, տաքություն զգալ /մարմնի որևէ մասում/
կըրակ անել, չբ. - կրակ վառել
կըրակ բ՜անալ, չբ. - կրակել
կըրակ թափել, չբ. - սաստիկ շոգ լինել
կըրակ ու պատիչ - պատուհաս
կըրակ տալ, նբ. - կրակի մատնել, այրել
կըրակի գ՜ին, ած. - շատ թանկ
կըրակի կըտոր, ած.- աշխույժ
կըրաղ (թրք.), մկ. - եզր, մի կողմ.- Դ՜ի գոռծի՝ քաշվի կըրաղ /Գործի դիր և վստահ եղիր, որ ամեն ինչ կանի/
կըրաղ մընալ, չբ. - մի կողմ քաշվել, չխառնվել
կըրաղ տեղ, մկբ. - մեկուսի վայր
կըրասինգա (ռուս.), գ. - նավթավառ
կըրասկա (ռուս.), գ. - ներկ

կըրարի, մկ. - միապաղաղ
կըրբախ, ած. - ձիգ, ոչ լայն /հագուստը/
կըրել-կըրվել, չբ. - հաղթել-պարտվել
կըրէտ, գ. - իշամեղու
կըրընգել, նբ. - կրունկով հարվածել
կըրըփ ջ՛առթել, չբ. - կտրուկ կոտրվել
կըրըփալ, չբ. - աղմուկով կոտրվել
կըրըփոցը խանել, նբ. - անակնկալ ջարդել
կըրիշա̈, գ. - ձեղուն
կըրիշա̈ կա̈պել, չբ. - ձեղունը կառուցել
կըրկըրալ, չբ. - ածելուց առաջ հավի կչկչալը
կըրոց, գ. - դաշտից բերքի բերելը
կըրուշկա (ռուս.), գ. - ջուր խմելու մետաղյա բաժակ
կըփըռտոց, գ. - տրաքտրաքելը, իրարանցում
կըփկըփալ, չբ. - տրաքտրաքել
կըփչիկ, ած. - ճկուն, աշխատող
կիսախուզ, ած. - կեսը խուզված
կիսամա̈շ, ած. - կիսով չափ մաշված
կիսամեռ, մկ. - մահամերձ
կիսավեր, ած. - կիսով ավերված
կիսատ-պըռատ, ած., մկ. - ոչ ամբողջական, կիսատ-պռատ
կիսաքուն - քունը չառած
կիսբ՛աց ա̈նել - կիսաբաց անել
կիսին խէտ - կիսով չափ
կիսվել, չբ. - 1.բաժանվել երկու մասի, 2.ինչ-որ բան իրար մեջ բաժանել
կիստել, նբ. - 1. կեսը դատարկել, 2. պակասեցնել
կիստուկ, ած. - 1. կարճահասակ, 2. կես արված
կիսրար, մկ. - 1.կիսելու ենթակա, 2.կիսովի
կիսուր, գ. - սկեսուր
կիսօվի, ած. - կիսով չափ
կիտուռ, գ. - փոքրամարմին /հեգն./

կիրա̈զմուտ, մկ. - շաբաթ օրվա երեկոն

կիրա̈կի, մկ. - կիրակի

կոթ, գ. - բռնակ, բռնելատեղ

կոկ, ած. - հարթ /լիժ ու կոկ/

կողել, նբ. - թոնրի կողին խմորահացը կպցնել

կողի հընգընել, չբ. - համառել

կող-կող, մկ. - իրար կողքի

կողուկուշտ, մկ. - շուրջը, չորս կողմը

կոշտ, գ. - գուղձ.- Կոշտը նըստե՝ քարի դա̈ռղն ա լալում /Իր հոգսը թողած՝ ավելի լավ վիճակում եղողի մասին է մտածում/

կուբա (արաբ., թրք.), գ. - գմբեթ

կուբօվ տուն, գ. - գմբեթաձև տանիքով տուն

կուգլա̈ (ռուս.), գ. - տիկնիկ

կուդում, գ. - ուժ

կուդումը կօդրել, չբ. - թուլանալ

կուզ, գ. - սապատ

կուզէկուզ, մկ. - կռացած, գաղտագողի

կուզուպօ̈ռզ օ̈նել, չբ. - կռանալ-ուղղվելու շարժումներ անել

կութ, գ. - կար

կութ զա̈նել, չբ. - մի կար անել

կութ տալ, չբ. - մի կար անել

կութի (պրսկ., թրք.), գ. - սնդուկ

կուժ ու կուլէն գ՛ըլխին ջ՛առթել - մեկին դարձնել քավության նոխազ

կուժկօդրուկ, գ. - ծաղիկ է, որը եթե տուն բերես, կուժը կկոտրվի

կուժղէզ, գ. - մի տեսակ բույսի պտուղը գետնի տակ

կուլ էթալ, չբ. - մեկի հեղինակության առաջ նահանջել, զիջել

կուլա̈բ, գ. - ծխելիս ծխի մեկ ումպը ներս տանելը

կուլ տալ, նբ. - կլցնել

կուլուղ (թուրք.) **օ̈նել**, նբ. - հոգ տանել

կուլուպուղ ա̈նել տա̈նել, նբ. - հապճեպ հարցերը կարգավորել ու տանել
կուխնի (ռուս.), գ. - խոհանոց
կուկու, գ. - երեխա, տիկնիկ /մանկ./
կուղ տալ, նբ. - օգնել, աջակցել
կուճուռել, չբ. - կծկված նստել, պպզել, կուչ գալ
կում, գ. - ումպ
կում ա̈նել, չբ. - մեկ ումպ խմել
կումար (արաբ.), գ. - գումարով խաղ
կումար խաղալ - գումարով խաղալ
կումարբազ (արաբ., պրսկ.), ած. - խաղամոլ
կում-կում, մկ. - ումպ-ումպ
կունգուխ, գ. - վեղար
կուշ (թրք.), գ. - 1.աղավնի, 2.թռչուն.- Երկընքի կըշէրի խէտ ա խօսում /Շատ գոռոզ է/
կուշտ[1], ած. - հազեցած.- Կուշտն ինչ գիդա ա̈նօթու հալը /Ապահովվածը անապահովի հոգսերին անտեղյակ է/
կուշտ[2], մկ. - մոտ
կուշտ ա̈քլօր, ած. - հպարտ, գոռոզ
կուչ, գ. - քարակույտ
կուչ ա̈նել, նբ. - կույտ անել
կուռիկ, գ. - փայտե փոքր աման
կուռծ, գ. - կուրծք /անասունի/.- Լը խոտը չըդ՛ըրե դ՛էմը՝ ձ՛եռը տա̈նում կուռծը /Շտապում է արդյունքը տեսնել/
կուռկուռ, գ. - հնդկահավ
կուռկուռի ձ՛ա̈ք, ած. - խղճուկ
կուռուխճի (թրք.), գ. - հանդապահ
կուսի, ած. - կծկված
կուվաթ (արաբ., թրք.), գ. - ուժ
կուտ, գ. - կորիզ
կուտ էթալ, չբ. - թոնրի պատին այրվել /հացը/
կուրբան (արաբ.) - զոհ, մատաղ

կուրբան հըլնել, չբ. - մատաղ լինել
կուրդ ու կուշ, գ. - վայրի թռչուններ
կուրել, չբ. - կորչել
կուրցընել, նբ. - կորցնել.- Ի՛նչ ա տէսե, ի՛նչ ա կուրցըրե /Մեծ բան
չէ կորցրածը՝ տեսածի դիմաց/
կուրուկ, աձ. - կորած
կուրուկ - մօլըրուկ, աձ. - կորած-մոլորած
կուրք, աձ., - ժլատ, անխիղճ
կօ, վ. - ահա, առանց այդ էլ
կօզվել, չբ. - պճնվել
կօզվել-սօզվել, չբ. - պճնվել
կօդրել, նբ., չբ. - ջարդել, կոտորել
կօզ (թրք.), գ. - թղթախաղում տակը բացված թուղթը
կօզաքար, գ. - կլոր քար
կօզբա̈նդ, գ. - հարսանիքի օրը փեսայի թևին կապվող շոր
կօթել, նբ. - հողագործական գործիքին կոթ ամրացնել
կօթիկ, գ. - ոչխարի հիվանդություն՝ հազով
կօթուն, գ. - ցողուն
կօժ-կօժ, ձ. - ձայնարկություն, որ ասվում է հորթին շոյելիս
կօլ, աձ. - կարճաթև
կօլայ (թրք.), աձ. - հիվանդ, վատառողջ
կօլայնալ, չբ. - հիվանդանալ
կօլթեվ, աձ. - առանց թեզանիքի, թևք չունեցող /հագուստ/
կօլթըղել, նբ. - դնել թևատակը
կօլթուղ (թրք.), գ. - անութ
կօլթուղը զա̈նել, նբ. - դնել թևատակը
կօլնել, նբ. - կույտ անել
կօլոն, գ. - կույտ
կօլօդնալ, չբ. - կարճանալ /հասակը/
կօլօլել, նբ. - փաթաթել
կօլօտ, աձ. - կարճահասակ
կօխել, նբ.- 1.մտցնել, 2.գողանալ
կօխել հա̈շկը, նբ. - ցույց տալ՝ ապացուցելով

կօծօծ, գ. - գորտնուկ
կօկել, նբ. - հարդարել
կօկել-սօկել, նբ. - պճնել, հարդարվել
կօկօ, գ. - գլուխ /մանկ./
կօկօլ, ած. - անպոչ, պոչի փետուրները հանած /հավ/
կօկօլ վառեկ, գ. - մազերը կտրած աղջիկ
կօղբէս, գ. - կողպեք
կօղբըսել, նբ. - կողպեքով փակել
կօղըռճել, նբ. - ոտքերով տրորել, ոտնատակ տալ.- Գ՛ըլօխը կօղըռճեu՝ ձէն չըխանա /Համբերող է/
կօղվիկ, գ. - հեքիաթի կողովը, որով ծնողը հեռացվում է տանից
կօճակ, գ. - ճարմանդ
կօմբա (ռուս.), գ. - կոմբայն
կօնախ (թրք.), գ. - հյուր
կօնախ սիրօղ, ած. - հյուրասեր
կօնախլըղ (թրք.), գ. - հյուրասիրություն
կօնգըստալ, չբ. - վնգստալ
կօնդախ (թրք.), գ. - բարուր
կօնդըխել, նբ. - բարուրել
կօնդըխշօր, գ. - բարուրի շոր
կօնդօլա, գ. - կոպիտ, անորակ կոշիկ
կօնձել, չբ. - ոգելից խմիչք խմել
կօնջ, գ. - կոշիկի, սապոգի ճիտ
կօշ, գ. - 1.հողը փորող հարմարանքով մեքենա, տրակտոր, 2.զուգահեռ, իրար կից
կօշկըռնել, չբ. - չորանալով կոշտանալ
կօշկոռ, գ. - իրի պինդ կտոր, կոշտ
կօչ (պրսկ., թրք.), գ. - արու ոչխար, խոյ
կօչաղ (թրք.), ած. - եռանդուն, ձեռնհաս
կօչաղնալ, չբ. - 1.քաջանալ, 2.ձեռնհաս դառնալ
կօչաղութուն, գ. - 1.քաջություն, 2.ձեռնհասություն
կօպալ, գ. - ձեռնափայտ
կօպըտել, չբ. - խիստ նախատել, վիրավորել

կօռ ու կօփ, ած. - շատ նիհար
կօռել, նբ. - կեռել
կօռի լըծել, մբ. - ստիպել իր համար ծանր աշխատանք անել
կօռծել, նբ. - գլխիվայր շրջել
կօռկօշ, գ. - կոշտ
կօռկօշնալ, չբ. - կոշտանալ
կօռօթիկ, գ. - անասունի գավակի ցցված մաս
կօռօփ, գ. - կույտ
կօս, գ. - գլխի վրա գնդաձև հավաքված մազ
կօս ա̈նել, չբ. - մազերը գնդաձև հավաքել
կօտ, գ. - գանգ
կօտեմ // կօղմուկ, գ. - *բույսը*
կօտըշխըրել, նբ. - 1.պոզահարել, 2.նեղել
կօտկըտալ, չբ. - դժգոհել, փնթփնթալ
կօտկիրիրա̈, գ. - կրիա
կօտկօտ, ած. - դժգոհող, փնթփնթացող
կօտոշ, գ. - եղջյուր
կօտոր չընգընել, չբ. - իր մեղքը չընդունել
կօրեկ, գ. - բույսը, դրա հատիկը
կօրընգան, գ. - բույսը
կօրի, գ. - այգու առու, ջրտար

Հ

հա (թրք.), մկ. - միշտ, շարունակ.- Հա՛ էթում ես - գ՛ալում ես /Շարունակ գնում-գալիս ես/

հա̈բա̈շ (արաբ., պրսկ.՝ եթովպացի, խափշիկ) - պահպանվել է *քօռ հա̈բա̈շ* հեգնական արտահայտության մեջ

հաբըրգել, չբ. - չափն անցնել, գոռոզանալ
հա̈բըրկել, նբ. - մկրատով խուզել
հա̈բրիկ, գ. - ոչխար խուզելու մեծ մկրատ

հա՛ղզա՛, ած. - տզեղ

հա՛զ (արաբ.) **ա՛նել**, չբ. - հավանել, դուրը գալ, ախորժել

հազարէն մէկ, մկ. - խիստ հազվադեպ

հազար տա՛րի յէլ մընա… - չլինելու բան է, երբեք.- Հազար տա՛րի յէլ մընա՝ յես ընդու ա՛սուկը չեմ ա՛նի /Ես նրա ասածը երբեք չեմ անի/

հա՛զըր (արաբ., թրք.), մկ., ած. - 1.առիթից օգտվելով, 2.պատրաստ

հա՛զըր տըղի տա՛ղմէր, ած. - ուրիշի պատրաստածին տեր կանգնող

հա՛զըրել, նբ. - պատրաստել (Ալշ., Խ.)

հալ (արաբ., պրսկ., թուրք.), գ. - վիճակ, դրություն.- Մէ տընով չենք, մէ հալով ենք /Բոլորս էլ նույն վիճակում ենք/

հա՛լբա՛թ (արաբ., թրք.), վ. - անշուշտ, թերևս, երևի.- Հա՛լբա՛թ ա՛սված մէ լուս կանա /Անշուշտ մի ելք կգտնվի/

հալէ հըլնել, չբ. - շատ հոգնել, այլևս ի վիճակի չլինել

հալի գալ, չբ. - վիճակը լավանալ

հալի հըլնել, չբ. - /ինչ-որ/ վիճակում լինել.- Էն էլ մէ հալի չէ, վոր քե ձ՛եռ պա՛ռզա /Նա էլ այն վիճակում չէ, որ քեզ օգնի/

հալվա (արաբ., պրսկ.), գ. - քաղցր խմորեղեն, որ պատրաստում են ալյուրով, յուղով, շաքարով կամ մեղրով

հախ (արաբ., պրսկ.), գ. - վարձ, վճար, հասանելիք

հախ ա՛ռնել - վարձ վերցնել

հախ տալ - վարձ վճարել.- Հախը գ՛ըլխա՞նց ես տըվե /Ինչպես կարողանում, այնպես անում եմ, վարձով չեմ աշխատում/

հախից գ՛ալ, չբ. - վրեժ լուծել

հախնախ, վ. - անպայման

հախու, մկ. - վախից, ահից ելնելով

հախօվ բ՛անել, չբ. - վարձով աշխատել

հակա բ՛աներ խօսալ, չբ. -որևէ մեկին հակառակ բաներ խոսել

հակա խանել, նբ. - մեկին մեղադրել ընդդիմանալու համար

հակամա, մկ. - պատահաբար

հակառ - հակառակ.- Ախար իընչե՞ս հակառ իընգե /Ախր ինչո՞ւ ես հակառակվում/

հակառ կա̈յնել, չբ. - հակառակվել

համ (պրսկ.) **էլ**, շ. - և, նաև, հենց.- Համ էլ կէթամ, քեզի չեմ հիշկա /Հենց կգնամ, քեզ չեմ նայի/

համ... համ (պրսկ.), շ. - և՛.... և՛ .- Հա՛մ կա̈նչէր ես, հա՛մ էլ ա̈սում ես՝ իընչե՞ս էկե /Եվ կանչել ես, և ասում ես՝ ինչու ես եկել/

համաղանի էշ, ած.- հիմար, անհասկացող.- Էն համաղանի էշից վո՞րն ա բ՛ան խասկընում /Էն հիմարից ո՞վ է բան հասկանում/

համամ (արաբ.), գ. - բաղնիք, բաղնիքի նման տաք

համբալ (արաբ.), գ. - բեռնակիր, սևագործ բանվոր

համբըլութուն ա̈նել, չբ. - սևագործ բանվորություն անել

հա̈մղա̈ր, ած. - դանդաղկոտ

հա̈մզուկ (պրսկ.), գ. - ծծակ

հա̈յա̈թ (արաբ., պրսկ.), գ. - բակ

հայդա (թրք.), ձ. - դե, փախիր

հայի բա̈խտ - անհաջողակություն

հայի հիդի խելք - ասվում է ուշացումով ելքը գտնելու, սխալը հասկանալու դեպքում

հային էթալ, չբ. - վարվել՝ ինչպես մեկ ուրիշի հետ նախկինում.- Պըստի ա̈խպօր հային գ՛ընաց՝ քաշվավ /Կարծեց՝ փոքր եղբոր նման կլինի՝ սխալվեց/

հայկարա (թրք.) **դ՛ընել**, չբ. - մեծ աղմուկ բարձրացնել

հայ-հա՛յ, ձ. - դժգոհ զարմանք, հուսախաբություն արտահայտող ձայնարկություն

հայհայն էթալ, վայվայը մընալ - ծերանալ, ուժից ընկնել.- Վոր տեսքին հիշկաս, կա̈սես՝ հայհայը գ՛ացե, վայվայն ա մա̈ցե, բ՛այց էտքան էլ ջ՛ոչ չէ /Տեսքին նայելով՝ կկարծես, թե ուժահատ է, բայց այդքան էլ մեծ չէ/

հայնա, վ. - ահավանիկ.- Հայնա էկան /Ահա եկան/
հայսա, վ. - ահավասիկ.- Հայսա գ՛ալում եմ /Հենց հիմա գալիս եմ/
հայտա, վ. - ահավադիկ
հӧյվӧն (արաբ.), գ. - 1.անասուն, 2.հիմար
հӧյվӧն-ӧննասուն, ած. - հիմար
հայտա, վ. - ահավադիկ.- Հայտա կըտան՝ դ՛ու յէլ կըտէնաս /Ահա կտան՝ դու էլ կտեսնես /հեգն.//
հӧյրӧղի, մկ. - շարունակ
հӧյրӧն կըդըրել, չբ. - հիանալ.- Էտ ӧխճըկան վոր տէսավ՝ հӧյրӧն կըդըրեց /Այդ աղջկան որ տեսավ՝ հիացավ/
հանատակ, ած. - անհատակ.- Գ՛ըրօղի ծոցն ա գ՛ացե, հանատակ ծօվն ա գ՛ացե /Գրողի ծոցն է գնացել՝ անհատակ ծովը/
հանգաժն օլըրել - խրատել.- Մէգ-մէկ էլ պըտի ӧնյենթակա ճըժի հանգաժն օլըրես, բը ի՞մալ /Մեկ-մեկ էլ պետք է չենթարկվող երեխային խրատես, բա ո՞նց/
հանգաճ, գ. - ականջ.- Խէլօք մӧռթի ӧսուկը օղ ӧրա, քըցա հանգաճըտ /Իմաստուն մարդու ասածը միշտ հիշիր/
հանգաճ ӧնել, չբ. - լսել, ենթարկվել, անսալ.- Տըղա՛ ջան, քօ խօրն ու մօրը հանգաճ ӧրա /Տղա ջան, լսի՛ր քո հորն ու մորը/
հանգաճ դընել, չբ. - լսել
հանգաճ չանել, չբ. - խորհրդին չհետևել.- Ջ՛ոչին հանգաճ չարիր՝ վուռըտ քարին կӧռնի /Մեծին չլսեցիր՝ ոտքդ քարին կառնի/
հանգաճ տӧնել - ձանձրացնել, բարձր ձայնով խոսել
հանգաճը դինջ, մկ. - հանգիստ, հոգսից հեռու
հանգաճը կӧնչա - ասվում է խոսքի մեջ մեկին հիշելիս
հանգաճը կըդըրել - պսակել, նշանել /տղային/
հանգաճը կըդըրել դ՛ընել հիդեվը - լսել, թե իր հետևից ինչ են խոսում

հանգաճը հընգընել, չբ. - նորություն լսել .- Հանգաճըս հընգավ՝ ուզում ես Հէրէվնա տունըտ ծåխես, ճի՞շտ ա /Լսել եմ՝ ուզում ես Երևանի տունդ վաճառել, ճի՞շտ է/
հանգաճը ձ՛էնի, մկ. - սպասողական վիճակում
հանգաճը քաշել - խելքի բերել, խրատել
հանգըժմըտուկ, գ. - միջատ՝ ականջմտուկ
հանգըժները կåխել, չբ. - փոշմանել
հանգըժները սըլկըցընել - լսողությունը լարել
հանգըճի հիդեվ քըցել, նբ. - չհետևել, անուշադրության մատնել
հանգըճին åսել, նբ. - ցածր ձայնով թաքուն ասել
հանգըճին խասնել, չբ. - տեղեկանալ
հանգըճին նըստել, չբ. - շարունակ խոսել, համոզել
հանգըճին օղ åնել - միշտ նկատի ունենալ, երբեք չմոռանալ.- Հանգըճիտ օղ åրա՝ փօռցուկ թանը åնփօռց մåծունից լավ ա /Միշտ նկատի ունեցիր՝ փորձված թանը անփորձ մածունից լավ է/
հանգըճօվ, ած. - լսող, հնազանդ
հանդա կըղå - ահա այսքան /բավականին մեծ/
հանդըռկըվել, չբ. - գնալ, հեռանալ /արհամարհական, բարկացկոտ տոնով/
հանդուտկ, գ. - անդունդ
հåնթå-հունթå, գ. - եղած-չեղած, ունեցած-չունեցած.- Էս հåնթå-հունթէքը վէրցա ըստեղից տåր, մըկա տունը մåռթ գ՛ըքա, åմօթ ա /Այս բաները վերցրու, այստեղից տար, հիմա տունը մարդ կգա, ամոթ է/
հանքան գ՛ախ, մկ. - ուշ ժամի
հանքընալ, չբ. - ուշանալ.- Էս հինչի՞ էսքան հանքըցար, դո՞ր իր գ՛ացե /Ինչո՞ւ այսքան ուշացար, ո՞ւր էիր գնացել/
հåշå (թրք.), գ. - թելերից հյուսած ծակոտկեն երիզ
հåշկ, գ. - աչք.- Մåռթի հåշկ հըլնի, åնունը չըլնի /Ավելի լավ է՝ մարդ կորցնի տեսողությունը, քան պատիվը/

հա̈շկ դ՛ընել (մի բանի վրա) - սեփականելու նպատակ ունենալ

հա̈շկ խանել, չբ. - կատաղի պայքարել մի բանի համար.- Պա̈շտոնի խըմար հա̈շկ ին խանում, մըկա հո՞ւր են /Պաշտոնի համար կատաղի պայքար էին մղում, այժմ ո՞ւր են/

հա̈շկ կըպցընել, չբ. - ննջել, քնել

հա̈շկ հըլնի (հըլնէր), վ. - ուր էր թե, երանի.- Հա̈շկ հըլնի՞՝ մէ լուս բ՛ասվի /Կտեսնե՞նք՝ մի ելք լինի/

հա̈շկ մըդնել, չբ. - սիրելի դառնալ

հա̈շկ չըբ՛անալ, չբ. /մէ բ՛անից/ - շարունակ մի բանով զբաղված լինել

հա̈շկ տալ (մեկին), չբ. - մեկի նման վարվել, ընդօրինակել

հա̈շկ ու հիրես չիշկալ - ոչ մի բան հաշվի չառնել

հա̈շկաբ՛աց // հա̈շկը բ՛աց, ած. - աչքաբաց

հա̈շկաթող - ուշադրությունից դուրս

հա̈շկալուսանք, գ. - ավետիք, աչքալուսանք.- Էթում ենք հա̈շկալուսանք, մեր Սիրունին տըղա թոռ ա ծընվե /Գնում ենք աչքալուսանք տանք, մեր Սիրունին տղա թոռ է ծնվել/

հա̈շկալուսանք ա̈նել - կատարված լավ իրողությունը նշել խնջույքով.- Խա, բը ի՞մալ, ծա̈նդըր հա̈շկալուսանք են ա̈նում, ախար խինգ ա̈խճըկանից յետօ նո՛ր տըղա յա ծընվե /Հա, բա ո՞նց, մեծ աչքալուսանք են անում, ախր հինգ աղջկանից հետո նոր միայն տղա է ծնվել/

հա̈շկալուսանք տալ - կատարված լավ բանի համար բարեմաղթել.- Խա, վոր ա̈սում ես՝ քօ ա̈նընից էլ հա̈շկալուսանք կըտանք, բ՛այց հընչի՞ դ’ու չես գ՛ալում, հըրավիրօվի չէ, վորն ուզում՝ էթում /Հա, քո կողմից էլ աչքալուսանք կտանք, բայց ինչո՞ւ դու չես գալիս, հրավիրելով չէ, ով ուզում է՝ գնում է/

հա̈շկաչափ, գ. - աչքաչափ

հա̈շկացավ, գ. - աչքի ցավ.- Տօ Մա̊րգուշ ջան, հա̈շկերըս ցավում, չեմ կա̊նում ա̊րեվի լուսին դուզը հիշկամ, էս ա̊նտէր հա̈շկացավը հո̂ւստ էկավ կըպավ ընձի, մըկա էլ յես յէ̂փ եմ նեռս ու դ՛ուս ա̊նում /Տո, Մարգուշ ջան, աչքերս ցավում են, չեմ կարողանում արևի լույսին ուղիղ նայել, այս անտեր աչքացավը որտեղի̂ց եկավ, ինձ կպավ, այժմ ես էլ ե̂րբ եմ կարողանում ներս ու դուրս անել/

հա̈շկերը բ՛ացել, չբ. - իրականությունը բացահայտել

հա̈շկերը բ՛ըռնել - արած լավությունը նախատինքով հիշեցնել

հա̈շկերը բ՛ըռվել, չբ. - կուրանալ.- Վախէնում եմ՝ հա̈շկերըս բ՛ըռվեն, հըլնեմ քօռ պա̊ռավ, նըստեմ տունը /Վախէնում եմ՝ կուրանամ, դառնամ կույր պառավ, նստեմ տանը/

հա̈շկերը լըսվել, չբ. - արտասվակալել.- Վա՛յ, քուրօ, էտենց բ՛ան մի՛ ա̊սա, հա̈շկերըս լըսվան, սա̊ղ հըլնեն խառս ու տըղէտ, կըտա̊նեն՝ կըբ՛ուժեն /Վա՛յ, քույրիկ ջան, այդպես մի՛ խոսիր, հուզվեցի, ողջ լինեն հարսդ ու որդիդ, կտանեն՝ կբուժեն/

հա̈շկերը ուռել /մեկի համար/ - *հեգնանքով ժխտվում է մեկի օգտին գործելու հանգամանքը* .- Խա՛, խա՛, խա՛, հա̈շկըները չուռէ իմ խըըմար, թօղէս՝ ընձի լավ-լավ կէրցընեն, խըմցընեն, նըստըցընեն, ըսկի չեն ա̊սի՝ ա̊րի մէ օր քեզի տա̊նենք բ՛ըժըշկի կուշտ, շա̊տ էլ գ՛անզատ չունեմ. համ էլ յես բ՛ըժըշկի չեմ էթա, հիրանցն էլ եմ ա̊սէ… /Հա՛, հա՛, հա՛, իմ մասին բոլորովին չեն մտածում, թողնես՝ ինձ լավ կերակրեն, խմեցնեն, նստեցնեն, բոլորովին չեն ասի՝ ե՛կ մի օր քեզ տանենք բժշկի մոտ, ինչ անենք, որ զանզատ չունեմ. բայց ես բժշկի չեմ էլ գնա, իրենց էլ եմ ասել/

հö՚շկերը չըռել, չբ. - բարկացած նայել.- Հö՚շկերըտ հընչի՞ չըռիր վըրես, դուզն եմ մասում, յես բ՛ըժըշկից վախէնում եմ, ընձի ի՞նչ ա հէլե, վոր էթամ բ՛ըժըշկի. գ՛ացի՞ք, կմասէք՝ հö՚շկըներըտ լուս հըլնի… /Ինչո՞ւ ես բարկացած նայում, ճիշտ եմ ասում, ես բժշկից վախենում եմ, ինձ ի՞նչ է եղել, որ գնամ բժշկի. գնացի՞ք, կասեք՝ աչքներդ լույս լինի…/

հö՚շկերը պմ՚ղել, չբ. - ակամայից աչքերը չթարթել, ինչը համարվում է մեկի գալու նախանշան

հö՚շկերը սեվնալ, չբ. - հանկարծ չտեսնել

հö՚շկերը փագել, բ՛էրանը բ՛ացել - առանց որևէ բանից քաշվելու՝ խիստ վիրավորել

հö՚շկերը փոս հընգնել - նիհարել, աչքերը խորն ընկնել

հö՚շկերըս չըքօռցած//չուռած քօ խըմար - քեզ համար զոհողության չեմ գնա

հö՚շկէ խանել, նբ. - վատաբանել.- Հըմընին հö՚շկէ խանին, վոր հիրանք լավ էրէվին /Բոլորին վատաբանեցին, որ իրենք իբրև լավ երևային/

հö՚շկէ հըլնել, չբ. - դառնալ ոչ սիրելի, աչքից ընկնել.- Բ՛այց հիրանք շմ՚տ շուտ հö՚շկէ հէլան, քանի վոր մըտկըները բ՛արի չէր /Բայց իրենք շատ շուտ աչքից ընկան, որովհետև բարի նպատակով չէին եկել/

հö՚շկէ հընգնել, չբ. - նախկին հարգը կորցնել, այլևս չսիրվել

հö՚շկէ պմ՚ղըռել, չբ. - չար աչքից վնաս կրել

հö՚շկէհö՚շկ, մկ. - ակնհայտորեն.- Հö՚շկէհö՚շկ մեզի խափում, գիդում՝ հավատում ենք /Ակնհայտորեն մեզ խաբում է, կարծում է՝ հավատում ենք/

հö՚շկէրօվ ուտել, նբ. - սևեռուն նայել, աչքը չկտրել մեկից, կրքոտ նայել

հö՚շկէրօվ մմ՚ռթ ուտել - կատաղած նայել

հյ̈շկը մ̈ռնել, չբ. - պատահաբար տեսնել

հյ̈շկը բ՛ացել, չբ. - իրեն հասկանալ

հյ̈շկը բ՛ըռնել, չբ. - աչքը բացասական ազդեցություն ունենալ

հյ̈շկը դ՛ուս, ած. - անբարոյական

հյ̈շկը թյ̈լել, չբ. - շլանալ

հյ̈շկը խաղալ, չբ. - աչքը թրթռալ

հյ̈շկը խանել - 1.վնաս տալ, պատժել, 2.սպառնալիք.- Հընչի էնի քօ հյ̈շկը խանէ՞ր էր, վօր չըկյ̈նչիր /Նա քեզ ի՞նչ վատություն էր արել, որ չկանչեցիր/

հյ̈շկը խուփ, ած. - շատ բան չտեսած

հյ̈շկը կըդրել, նբ. - տեսնել, հավանել

հյ̈շկը կըպել // հյ̈շկ կըպցընել, չբ. - նիրհել

հյ̈շկը կուշտ, ած. - ոչ ագահ, գոհացած.- Մեզի հյ̈շկը կուշտ մ̈ռթ ա պէտկ /Մեզ գոհացած անհատ է պետք/

հյ̈շկը կօխել, նբ. - ինչ-որ բան ապացուցելու համար բացահայտ ցուցադրել

հյ̈շկը հիդեվը թօղել - աղջկան ամուսնացնել ոչ հիմնական հավակնորդի հետ

հյ̈շկը հիդեվը մընալ - իր ուզածին չհասնել

հյ̈շկը ճըխտել, նբ. - ապացուցել.- Թէ մէ լավ բ՛ան մ̈րե՝ բ՛ե ճըխտա հյ̈շկըս /Թե մի լավ բան արել է՝ ապացուցիր/

հյ̈շկը ճըտել, չբ. - աչքը կկոցել

հյ̈շկը ճ̈մփին մընալ, չբ. - անհույս սպասել

հյ̈շկը մըղնել, չբ. - սիրելի դառնալ

հյ̈շկը չոր գ՛էտին մըղնել - զավակ չկորցրած մեռնել

հյ̈շկը ջ՛ուր կըդրել, չբ. - շատ սպասել

հյ̈շկը վախէնալ, չբ. - անհաջող փորձից հետո չհամարձակվել նույնը կրկնել

հա̈շկը վըրէն հըլնել - հավանել, ցանկանալ իրենով անել
հա̈շկը վըրէն մընալ - հավանել և մտադրվել իրենով անել
հա̈շկը վըրէն պա̈խել - հսկել, ուշադրության կենտրոնում պահել
հա̈շկը քօ՞ռ կուզա - ինչո՞ւ ոչ, լավ բանից ինչու պիտի հրաժարվի
հա̈շկըները հօռթարածի շա̈ն հա̈շկ հըլնել - շատ ու անհույս սպասել
հա̈շկըռել, չբ. - չար աչքից հաջողությունը փակվել
հա̈շկըռցընել, նբ. - աչքով տալ
հա̈շկըտ լուս - աչքդ լույս
հա̈շկի գ՛ըրօղ - ատելի
հա̈շկի դ՛էմը, մկ. - ներկայությամբ
հա̈շկի թառթըփօվ ժօղել, տուն դ՛ընել - մեծ տառապանքով, չնչին միջոցներով ուեցվածք կուտակել.- Մէրըտ հա̈շկի թառթըփօվ ժօղե, տուն ա դ՛ըրե, բ՛այց դ՛ու հէսօրան օրը ընդուն տէր չես կա̈յնում /Մայրդ մեծ տառապանքով ունեցվածք է ստեղծել, բայց դու այժմ նրա հանդեպ հոգատար չես /
հա̈շկի լուս, գ. - 1.տեսողություն, 2. շատ սիրելի
հա̈շկի լուսը խավրել, չբ. - տեսողությունը թուլանալ
հա̈շկի լուսից հընգել, չբ. - տեսողությունը թուլանալ
հա̈շկի հառէչը, մկ. - ներկայությամբ
հա̈շկի ճօթ, գ. - աչքի ծայր
հա̈շկի յէղն ա̈ռնել - դարձրել են սովորություն, էլ չեն վախենում.- Հա̈շկիտ յէղն ա̈ռած, իմալ ուզում են՝ էնենց ա̈նում են /Քեզնից էլ չեն վախենում, ինչպես ուզում՝ այնպես էլ վարվում են/
հա̈շկի ուլինգ, գ. - կապույտ ուլունք՝ չար աչքի առջևն առնելու համար

հա̈շկի պըչօվ//տըկօվ հիշկալ - թաքուն, ուրիշների համար աննկատ նայել

հա̈շկի փուշ դ՛առնալ, չբ. - դառնալ ատելի

հա̈շկին բ՛ան էրէվալ // հա̈շկին էրէվալ - տեսիլք տեսնել

հա̈շկին բ՛եռ բ՛առցըվել - թարթիչի վրա փոշեհատիկ հայտնվել, որը համարվում է ինչ-որ ստանալիքի նախանշան

հա̈շկին էրէվալ, չբ. - 1. Թվալ, 2. սրտին չնստել, դուրը չգալ, շատ երևալ

հա̈շկին թօզ փըչել - խաբել

հա̈շկին չէրէվալ, չբ. - չտեսնել, չարժևորել.- Ընդու հա̈շկին էլ վոշ մէ բ՛ան չէրէվում /Նրան այլևս ոչինչ չի հետաքրքրում/

հա̈շկին ա̈լա̈ջա̈-բուլա̈ջա̈ էրէվալ - աչքին տարօրինակ երևալ

հա̈շկիտ վիրեվը հունք կա̈ ա̈սել - թերությունը մատնանշել.- Վո՞րը կա̈նա ընդուն ա̈սա՝ հա̈շկիտ վիրեվը հունք կա̈ /Ո՞վ կարող է նրա թերությունը մատնանշել/

հա̈շկից դ՛ուս, մկ.. - ոչ տեսանելի, ծածուկ

հա̈շկից յեռու, մկ. - հսկողությունից դուրս

հա̈շկն ա̈ռնել, չբ. - հանկարծ նկատել.- Մէկ էլ հա̈շկըս ա̈ռավ՝ տէսա՝ գ՛ալում ա /Հանկարծ նկատեցի՝ գալիս է/

հա̈շկօվ հա̈շկ չունէնալ, չբ. - չսիրել

հա̈շկօվ ա̈նել, չբ. - աչքը թարթելով բան հասկացնել

հա̈շկօվ-հունքօվ ա̈նել, չբ. - նշանացի ակնարկել, հասկացնել.- Հիրար հա̈շկօվ-հունքօվ ա̈րին՝ գ՛ացին /Իրար նշանացի ակնարկ արեցին, գնացին/

հաշտ (թրք.), գ. - նախասենյակ, միջանցք

հա̈չա̈, գ. - ծառի ճյուղավորում, երկճյուղանի ցից

հա̈չ-հա̈չ, ձ. - ոչխարներին բաժանելու բացականչություն

հա̈ջա̈թ (արաբ.), գ. - գործիք

հառ ա̈ստըված հըլնի - հասնի աստծուն

հմռմկմջօ թըռնել // հմլմկաջօ թըռնել, չբ. - թռչկոտելով վազել, գաղտնի սեր անել
հառավնախառ, մկ. - վաղ առավոտյան
հառավնեց, մկ. - ամեն առավոտ
հառավնէհառավոտ, մկ. - ամեն առավոտ
հառավոտ լուսուն, մկ. - վաղ առավոտյան
հառէչ, մկ. - առաջ, նախ.- Հառէչ ůսեղը զմն քեզի՝ նոր մůխատը զմն հուրիշին /Ուրիշին ցավ պատճառելուց առաջ քեզ վրա փորձիր /
հառէչ ժամանակ, մկ. - առաջ, հնում
հառէչ հընգնել, չբ. - առաջ ընկնել
հառէչն ůռնել, չբ. - չթողնել, որ շարունակվի
հառծակ հօռթիկ, ած. - իր գլխի տերը եղող, հսկող չունեցող
հառծըկել, նբ. - արձակել
հառչել, չբ. - առաջ անցնել
հառչըկըտուր ůնել, չբ. - կանխել, մեկից առաջ ընկնելով՝ հայտնել
հառչի, ած. - սկզբի, նախկին
հառչի բ՛էրան, գ. - բերքահավաքի առաջին փուլը, առաջին անգամ
հառչի դմն, մկ. - առաջին անգամ
հառչի հավէս, գ. - անդրանիկ զավակի ամուսնությունը
հառչուց, մկ. - սկզբից
հառտ ու հափ, գ. - արտեր
հառտատեղ, գ. - արտ ցանելու տեղ
հառու թըռնել, չբ. - սիրային կապ ունենալ /կնոջ մասին/
հառու թըռնօղ, ած. - անբարոյական կին
հառու խանել - առու փորել
հառփէնալ, չբ. - հիանալ
հմռփից հըլնել, չբ. - դառնալ սանձարձակ.- Քօ տըղէն լըռիվ հմռփից հէլե, մէ զմմերը քաշա /Քո տղան լրիվ սանձարձակ է դարձել, մի սանձերը ձգի՛ր/
հասար (արաբ.), գ. - քարե ցանկապատ, պարիսպ
հասար քաշել - քարե ցանկապատ կառուցել

հաստրել, նբ. - քարե ցանկապատով պատել
հնչըլել (արաբ.), չբ. - համը գալ տեղը
հավալա (արաբ., թրք.), գ. - խաղ է, երբ խաղացողները հերթով թռչում են իրար վրայով
հավածըս - վիրավորական արտահայտությունից առաջ գործածվող բառ, որով խոսողը կարծես հաստատում է իր կարծիքը.- Հավա՛ծըս խըլղի ճընջուլք ուտօղ, քեզի վորը խօսցըրեց /Ա՛յ ուրիշի հաշվին ապրող, քեզ ով ձայն տվեց/
հավայի (պրսկ.), մկ. - իզուր տեղը, դատարկ, անիմաստ.- Մըկա հավայի խօսօղները շա՛տ են, գ՛ոռծ ա՛րօղ չըկա /Այժմ դատարկ խոսողները շատ են, գործ անող չկա/
հավատալի, ած. - հավատալու արժանի
հավար (պրսկ.) - օգնության կանչ
հավար կա՛նչել - օգնության կանչել
հավար քըցել, չբ. - օգնություն կանչել մեկին
հավարը տըփել, չբ. - այլևս չդիմանալ, շատ շտապել
հավարի էթալ, չբ. - օգնության շտապել
հավարի խասնել, չբ. - օգնության հասնել
հավարին, մկ. - շտապով, առանց հանգամանքները և ուրիշներին հաշվի առնելու.- Հավարին հիրանց մա՛ռթէրին են տեղավորում, ըսկի չեն ա՛սում՝ գ՛ոռծի գ՛ըլօխ պըտի գ՛իտուն մա՛ռթ հըլնի /Նախ և առաջ իրենց մարդկանց են տեղավորում, բոլորովին չեն ասում՝ գործը պետք է բանիմաց մարդ վարի/
հավար-հավար հըլնել /մեկից/, չբ. - մեկից շատ դժգոհել
հավարօվ, մկ. - առանց ուրիշներին հաշվի առնելու՝ իր գործերը շտապ առաջ տանելու մղումով
հավել, ած. - ավելի, նախատեսվածից շատ.- Խաց տու խաց թըխօղին, մէ խատ էլ հավել տու /Գործը վստահիր բանից տեղյակ մարդու/

հավել թիքն, գ. - լրացուցիչ շահ.- Ի՞նչ անեմ, քանի դն̈ն ն̈սի՝ գ՛օղութուն յէ՞փի ես ն̈նում, վոր տն̈լում են՝ վէրցա, հավել թիքէն փոր չըծն̈կա, հէքուց - մէկէլ օր կն̈րօղա էտ էլ պէտկ գ՛ա /Ի՞նչ անեմ, քանի անգամ ասացի՝ գողություն չես անում, եթե տալիս են՝ վերցրու, ավելցուկը չի խանգարի, վաղը - մյուս օր հնարավոր է՝ այդ էլ պետք գա/

հավել-պն̈կաս խօսալ, չբ. - ավել-պակաս բաներ խոսել, անտեղի բաներ ասել

հավէլի[1], մկ. - ավելի

հավէլի[2] **// հէվէլի**, գ. - ավելցուկ, թերմացք

հավէլի ն̈նուն, գ. - մականուն

հավէս (արաբ., պրսկ., թրք.), գ. - տրամադրություն, ցանկություն

հավէս ունէնալ, չբ. - տրամադրություն, ցանկություն ունենալ

հավէս ն̈նել - տրամադրվել մի բան անելու

հավէսը խանել, չբ. - վայելել

հավէսը փախնել, չբ. - ձանձրանալ, այլևս ցանկություն չունենալ

հավէսի հընգընել, չբ. - հաճույքով ինչ-որ գործ անել

հավէսին, մկ. - դուրեկան, հաճելի

հավէսօվ - բառ, որ հնչեցվում է պարելիս

հավըլնալ, չբ. - ավելանալ

հավըլցընել, նբ. - ավելացնել

հավըռել, չբ. - վերքը ցրտից ուռչել

հն̈վսն̈լն̈ (արաբ), գ. - տրամադրություն, ցանկություն

հավուզ (արաբ., թրք.), գ. - ավազան

հավքըռտել, նբ. - իրար վրա հավաքել

հատըկել, չբ. - ազատվել /գործից/, կարողանալ, հնարավորություն ունենալ մի բան անելու

հն̈րն̈քն̈թ (արաբ.), գ. - ուժ, զորություն.- Մն̈ռթ էլ գիդա՝ մէչը հն̈րն̈քն̈թ կն̈, բ՛այց էրկու վէդրօ կն̈ռտօլ չըկն̈նա

շըլկա /Կարող է թվալ, թե ուժ ունի, բայց երկու դույլ կարտոֆիլ շալակել չի կարողանա/

հա̈րիսա̈, գ. - հավի մսով և ձավարով պատրաստվող կերակուր

հարիր // հարուր, թ. - հարյուր

հա̈րիֆ (արաբ., թրք.), ած. - միամիտ, դյուրահավատ, ծանծաղամիտ

հա̈րիֆ-հա̈րիֆ, մկ. - միամտաբար, դյուրահավատորեն.- Հա̈րիֆ-հա̈րիֆ խողը կիսեց, տըվեց հարէվանին, գիցավ հիրանը լավ կա̊սեն. հէսօրան օրը սա̊ղ թըքում են հիրեսը /Հիմարաբար հողը կիսեց, տվեց հարևանին, կարծեց՝ իրեն կգովեն, բայց այսօր բոլորը նախատում են/

հա̈րիֆութուն ա̊նել, չբ. - դյուրահավատ գտնվել

հա̈րիֆցընել, նբ. - խաբել, դյուրահավատությունից օգտվելով՝ իր օգտին ծառայեցնել

հարուր տա̊րի յէլ մընա… - հարյուր տարի անց էլ, երբեք.- Հարուր տա̊րի յէլ մընա՝ էտի հիր բ́ընուտկը չըփօխա /Հարյուր տարի էլ անցնի՝ դա իր էությունը չի փոխի/

հափ, գ. - ափ.- Հափիդ մէչը ձըրվածեղ ա̊նես կէրցընես՝ էլի չըխասկընա /Լավությունը չի գնահատում/

հափեղա. - աբեղա, հեգն. մաքուր, անարատ.- Թէ չէ դ́ու յէլ լուս ու հափեղա յես, է́լի /Թե չէ դու էլ սուրբ մա՞րդ ես/

հա̈փսա̈թա̈թիկ, մկ. - չորեքթաթ

հա̈փսել, չբ. - երեխայի չորեքթաթ գնալը.- Մեր ճիժը նոր ըսկըսե հա̈փսել /Մեր երեխան նոր սկսել է չորեքթաթ գնալ/

հէղեվը գ́ալ, չբ. - գալ մեկին կամ մի բան տանելու

հէղեվանց, մկ. - հետնից, հետևի կողմից

հէղըռել, չբ. - գոհանալով՝ զզվել

հէժան, ած. - ոչ թանկ

հէժանանոց, ած. - էժան գին ունեցող

հէժանութուն, գ. - էժանություն
հէժնըցընել // հէժընցընել, նբ. - էժանացնել
հէլած-չէլած, գ. - ողջ ունեցածը
հէյրա՛ն (արաբ., թրք.) - զմայլված, հիացած
հէնա, վ. - 1.ահա, ահավանիկ, 2.որ այդպես է
հէշխ (արաբ., թրք.) տալ - դրդել, մղել, ոգևորել
հէշտընալ, չբ.- դյուրանալ
հէշտըցընել, նբ. - հեշտացնել
հէչ (պրսկ.) - 1.բնավ, 2. իհարկե
հէչ հըլնել, չբ. - փչանալ
հէչ ա՛նել, նբ. - փչացնել
հէսա, վ. - 1.հենց հիմա, 2.ահա, ահավասիկ
հէսա՛բ (արաբ., թրք.), գ. - հաշիվ
հէսօր-հէքուց, մկ. - մոտ ժամանակներս
հէսօր սա՛ղօր, մկ. - ողջ այս օրը
հէվըլնալ, նբ. - ավելանալ
հէտա, վ. - ահավաղիկ, ահա
հէրես //հիրես դ՛ընել, չբ. - պնդել, աներեսություն անել
հէրես //հիրես խաքնել, չբ. - աներեսություն անել, անկարգ դառնալ
հիրես հիրսէն ա՛մչընալ - շրջապատը զսպող դեր ունի
հէրես //հիրես պընդել, չբ. - համառելով մի բան ուզել
հէրես //հիրես տալ, նբ. - 1. շփացնել, 2.երեսով տալ
հէրես //հիրես/ ա՛ռնել, չբ. - շփանալ, անկարգ դառնալ
հէրես-բէրես //հիրես-բիրես ա՛նել, չբ. - առերեսում անել
հէրեսը //հիրեսը չըբ՛ըռնել, չբ. - ամաչել.- Տըղէն վոր չըկա՛ռցավ ըտոնց գ՛ոռծը գ՛ըլօխ բ՛էրէր, հիրեսը չըբ՛ըռնում՝ էթա ախճիկն ուզա /Քանի որ որդին չկարողացավ դրանց գործը գլուխ բերել, ամաչում է գնալ, դրանց աղջիկն ուզել/
հէրկէն ա՛րեվ հըլնես - երկար կյանք ունենաս
հէրկէն-բ՛արակ, մկ. - երկարացնելով, ձգձգված

հէրկէնչա̈նա̈,ած. - երկար ծնոտ ունեցող

հէրկէնվիզ, ած - երկարավիզ

հէրկէնք, գ. - երկայնք

հէրկէնքիթ, ած. - երկար քիթ ունեցող

հէրկընավըզիկ - լողացնելիս մանկան գլխից բռնելը և վեր բարձրացնելը՝ վիզը երկարացնելու նպատակով

հէրկընավըզիկ ա̈նել - մանկանը գլխից բռնած բարձրացնել

հէրկըննալ, չբ. - երկարել

հէրկընցընել, նբ. - երկարացնել

հէրկընքէն, մկ. - երկայնքով

հէքսի, ած. - հաջորդ /*հէքսի օրը* կապակցության մեջ/

հէքուց, մկ. - վաղը

հէքուց էլօր, մկ. - որոշ ժամանակ անց

հէքուց մէկէլ օր, մկ. - շուտով

հէքուց չէ մէկէլ օր, մկ. - վաղը չէ մյուս օր

հըլը /լը/ (արաբ.) - 1.ապա մի, 2.դեռ, տակավին

հըլըշվօտել, չբ. - կատաղել

հըլնել, չբ. - 1.ելնել, 2. լինել.- Գ՛իտունին գ՛էրի հէլի, ա̈նգ՛ետին սիրէլի մի հէլի /Տգետ մարդուց պետք է հեռու մնալ/

հըղեղ, գ. - ուղեղ

հըղըրկել // հօղըրկել, նբ. - ուղարկել

հըղօղել, նբ. - ողողել

հըմա(արաբ., թրք.), մկ. - հենց

հըմէն // հըմբէն, դ. - բոլորը, ամբողջը

հըմէն գ՛ախ, մկ. - ամեն ժամանակ.- Պա̈պէն հըմէն գ՛ախ փըլավ չուտա /Ամեն անգամ հաջողություն չի լինի/

հըմէն դա̈ն, մկ. - ամեն անգամ

հըմէն ինչ. դ. - ամեն ինչ

հըմէն խաղ խաղալ - որևէ բան անելուց հրաժարվելու արտահայտություն.- Հըմէն խաղ խախծէր ինք՝ մա̈ցէր էր էտի /Միայն այդ էր մեզ պակասում/

հըմէն-հըմէն, դ. - ամբողջը միասին վերցրած

հըմընա // հըմընի, դ. - ամենա
հըմընօվ, դ. - բոլորով
հըմընօր, մկ. - ամեն օր
հըմընօրան հըմընօր, մկ. - ամեն օր /դժգոհությամբ/
հըմկա, մկ. - հիմա
հընգել-հըլնել, չբ. - փորձությունների ենթարկվել
հընգել-հընգըսվորել, չբ. - անկողին ընկնել, հիվանդանալ
հընգերական, ած. - ընկերական
հընգերակոխ հըլնել, չբ. - նախանձել
հընգերանալ, չբ. - ընկերանալ
հընգերապա̃խութուն ա̃նել, չբ. - մեկի կողմը պահել, կողմնապահություն անել
հընգեր-հընգեր խաղալ, չբ. - բաժանվել երկու թիմի և խաղալ
հընգերք, գ. - ընկերք
հընգերօվի, մկ. - ընկերովի
հընգընել, չբ. - 1. ընկնել, 2. անկում ապրել, 3. նիհարել.- Ցեզը վոր հընգընում, դա̃նա̃կավորը շա̃տընում /Երբ մեկի դիրքերը թուլանում են, շատանում են նրա վրա գրոհողները/
հընգնավոր, ած. - կատաղի
հընգնավորել, չբ. - 1.վախենալ, 2.կատաղել
հընգնավորցընել, նբ. - 1.վախեցնել, 2.կատաղեցնել
հընգնել ա̃շխըրքի լէնքն ու հէրկէնքը/բցս./ - ելք գտնելու համար ջանքեր գործադրել
հընգնել թա̃լա̃քը, չբ. - հայտնվել անելանելի վիճակում
հընգնել հիդեվը, չբ. - հետապնդել
հընգնել հիր հիդեվը, չբ. - իրեն վտանգի մատնել
հընգուկ, ած. - 1.նիհարած, հիվանդոտ, 2.տնտեսական ծանր պայմաններում հայտնված
հընգուկ-հէլուկ, ած. - փորձված
հընդուշկա (ռուս.), գ. - հնդկահավ
հընթել, նբ. - թևի տակ դնել

հընչի, դ. - ինչու.- Հընչի յես պըտի ամեմ, նոր դու գիդա՞ս /Մի՞թե դու չգիտես/

հընսնել - դ՛առնալ, չբ. - գնալ-գալ, երթևեկել

հընսնօղ-դառցօղ // հընցօղ-դ՛առցօղ - անցնող-դարձող

հընցընել, չբ. - 1. անցնել, 2. դադարել, 3. հանգչել, 3. գնալ.- Կողօվ հընցնել չըլնում /Բռնկվող է/

հընցըցընել, նբ. - 1. անցկացնել, 2. մարել, 3.հղիությունն ընդհատվել

հըռադ //ռադ հըլնել, չբ. - հեռանալ /վիրավորական/.- Հըռա՛դ հէլի, չեմ ուզում քեզի տէնամ /Հեռացի՛ր, չեմ ուզում քեզ տեսնել/

հըռըկել, չբ. -խռովել գնալ

հըռըկի, ած. - պոչը կարճ, խռովկան, նեղացկոտ

հըռըկօպալի, մկ. - հախուռն.- Էտենց հըռըկօպալի մի՛ ամրա, հանգիստ հիրար ամրի /Այդպես հախուռն մի՛ արա, հանգի՛ստ շարժվիր/

հը՛ռռ, ձ. - ձիուն կանգնեցնելու ձայնարկություն

հըռփալ, չբ. - շան հարձակվելը, կծելու համար բերան զցելը

հիդեվ ամնել, չբ. - 1.շրջվել, 2.արհամարհել

հիդեվ // հէդեվ, մկ. - հետևը, հետևի կողմը

հիդեվը բ՛ացել ման գ՛ալ - կարճ շրջազգեստ հագնել

հիդեվը էթալ, չբ. - գնալ մեկին կամ մի բան բերելու

հիդեվը հընգնել, չբ. - 1.հետևից ընկնել, 2.ձգտել մեկին վնասել

հիդեվը քըցել, նբ. - հետը ման տալ

հիդեվ-հառէչ չիշկալ, չբ. - ոչինչ նկատի չունենալ, անփույթ լինել

հիդեվ-հառէչ չունենալ - երեխա չունենալ

հիդեվ-հիդեվ էթալ, չբ. - հետ-հետ գնալ

հիդի, ած. - վերջին

հիդի ամուկը հառչին չըբըռնել - իրար հակասող մտքեր ասել

հիդի պամտիվ, գ. - խնջույքից հետո առանձին անձանց տրվող պատիվ

հիղի տմրվա խօտաղ, գ. - վերջին զավակ, որին բարկացած ժամանակ համարում են անցանկալի ծնունդ
հիղի տմրօվ, մկ. - վերջում, վերջին ժամանակներում, ներկայումս
հիղվանց // հէղեվանց, մկ. - հետևից, հետևի կողմից
հիղվէն մմն գ՛ալ, չբ. - շահադիտական նպատակներով շարունակ ուղեցել
հիղվից էթալ, չբ. - 1.հետևել, 2.օրինակին հետևել
հիղվից խասնել, չբ. - շտապ հասնել մեկին
հիղվից խօսալ, չբ.- բամբասել
հիլոտ-քմփմնմկ (արաբ.՝ հիլլա՝ նենգություն), ած. - թոքախտավոր
հիմանալ, նբ. - իմանալ
հի՛շառ, ձ. - *դիմելաբառ, որով կովին հրամայում են ոտքը վերցնել*
հիշար, ած. - հիշող, լավ հիշողություն ունեցող
հիշէլիք, գ. - հիշելու արժանի եղելություն
հիշկալ // հիշկել, չբ., նբ. - 1.նայել, 2.սպասել.- Հիշկա ընձի, խըխճա քեզի /Իմ սխալը մի՛ կրկնիր/
հիշկըռտալ, չբ. - որոնել
հիշկօղ, գ. - գուշակ
հիշնել - հըլնել, չբ. - իջնել-բարձրանալ
հիռի, ձ. - ոչխարին քշելու ձայնարկություն.- Հի՛ռի, հի՛ռի, յես քօ տիրու խէրը, էս վի՞ր օխճարն ա՝ էկե լըսվե մեր հմյմթը, տօ հիռի՛ է, լը տե՝ սմղ թըմբերը մվիրին, հի՛ռի… / Հի՛ռի, հի՛ռի, յես քո…, այս ո՞ւմ ոչխարն է, եկել լցվել է մեր բակը, տո հիռի՛ է՛, տե՛ս՝ բոլոր թմբերը ավերին, հի՛ռի…/
հիստմկ, ած. - մաքուր
հիստըկել, նբ. - 1.մաքրել, 2.կեղևը հանել, 3.հատիկներից առանձնացնել ավելորդ բաները
հիստըկջ՛ըրել, նբ. - մաքրաջրել
հիր մրեվին, վ. - իր համոզմամբ, իր կարծիքով

հիրա բ՛էրնօվ ӑսել, նբ. - անձամբ ասել.- Խա՛, ӑխճիկը հիրա բ՛էրնօվ ӑսավ, վոր հինքըն ա էկե, չըփախծըրած... սիրում են հիրար, վա՞տ ա... /Այո՛, աղջիկն ինքն է ասել, որ ինքն է եկել, չեն փախցրել... սիրում են իրար, վա՞տ է.../

հիրա գ՛ըլխի ճӑրը տէնալ, չբ. - ելքը գտնել

հիրա գ՛ըլխու, մկ. - ինքնագլուխ

հիրա էշը քըշել, չբ. - համառել

հիրա խօղօվ, մկ. - իր ընթացքով, ոչ պարտադրված

հիրա ӑրածն ӑնել - իր անելիքն անել՝ առանց հաշվի առնելու ուրիշի ասածը

հիրա վըրէն ӑռնել - ասվածը իրեն վերագրել

հիրա վըրէն ֆӑյմել - կողմնորոշվել, հասկանալ իր անելիքը

հիրանը թӑլել ղօղէրի բախճէն - հիմար ձևանալ

հիրանը թӑլել կըրակը, չբ. - մի բանի հասնելու համար մեծ ջանք գործադրել

հիրանը ծӑնղըր պӑխել, չբ. - իրեն լուրջ պահել

հիրանը ծӑնղըրցընել, չբ. - դժվարացնել իր մասնակցությունը

հիրանը կըրակը թӑլել, չբ. - ամեն ջանք գործադրել

հիրանը կուրցընել, չբ. - չհասկանալ իր ասածն ու արածը

հիրանը պӑտէպӑտ տըփել, չբ. - լարվածությունից չիմանալ՝ ինչ անել

հիրանը ուտել // հիրանն ուտել, չբ. - խիստ կատաղել

հիրանը քախծըրցընել, չբ. - ծանրացնել, դժվարացնել

հիրանը քաշել, չբ. - միայն իր օգուտի մասին մտածել

հիրան-հիրան հըլնել, չբ. - նեղացածություն ցույց տալ

հիրան-հիրան, դ. - ինքն իրեն

հիրանն ӑռնել, չբ. - շատ վախենալ, հուզվել

հիրանն ա̈ռնել հընցնել, չբ. - չափն անցնել.- Հիրանն ա̈ռե հընցե, էլ վոշ մէկին չըյենթարկըվում /Չափն անցել է, էլ ոչ մեկին չի ենթարկվում/
հիրար ա̈ռնել, չբ. - դիպչել իրար
հիրար //հ՛իրուր գ՛ալ, չբ. - շարժվել
հիրար խէտ թուր ու թըվանք հըլնել - իրար ատել, շարունակ կռվել
հիրար //հ՛իրուր տալ, նբ. - շարժել
հիրար խասնել - 1. իրար հետ վիճել, 2. իրար օգնել.- Լավ հարէվաններըը միշտ էլ հիրար խասնում են, մէկը մէկին փօռցանքի մէչ չըթօղում /Լավ հարևանները միշտ էլ իրար օգնության են հասնում, մեկը մյուսին փորձանքի մեջ չի թողնում/
հիրար հընգնել, չբ. - իրար հետ ժամանակ անցկացնել
հիրար ուտել - մեծ վիճաբանության մեջ լինել
հիրարից դիլուժա̈ժ հըլնել - իրարից խռովել, նեղանալ
հիրեսատեղ, գ. - վստահություն
հիրեսն ա̈նել լուսնըկի տըսնըխինգ - գիրանալ.- Էտի՛ հընչա էտենց հիրեսն ա̈րե լուսնըկի տըսնըխինգ /Դա՛ ինչու է այդպես գիրացել /
հիրկընէ, մկ. - իրիկվանից
հիրկընէ հիրկուն, մկ. - ամեն երեկո
հիրկըվանէ // հիրկըվնէ // հիրկըվորէ, մկ. - իրիկվանից
հիրկուն, մկ. - երեկոյան
հիր հավէսին, մկ. - իր հաճույքով
հիրնէ խանել, նբ. - հորինել
հիրսանց, մկ. - երեսանց, առերևույթ.- Հիրսանց՝ խա̈յլի, տըկանց՝ ա̈ռծըլի /Երկերեսանի է/
հիրսից հիրես թափել - գեր, փարթամ լինել
հիրսօվ, ած. - անամոթ, չքաշվող
հութա̈ (թրք., պրսկ.), գ. - արդուկ

հութ՛ ա՛նել, նբ. - արդուկել.- Մենք հառթուկին հութ՛ յինք ա՛սում. կիսուրըս մէ ծա՛նդըր հութ՛ ունէր, վո՛ր օրը հութ՛ յի ա՛նում, թեվէրիցըս չի կա՛նում հիրար գ՛ի… /Մենք արդուկին հութա էինք ասում. սկեսուրս մի ծանր հութա ուներ, ո՛ր օրը արդուկ էի անում, թևերս ցավից չէի կարողանում շարժել/

հույթ, ձ. - շանը քշելու ձայնարկություն.- Ուզում ի մըտի զուքարան, տէնամ՝ հարեվնի սեվ շունը զուքարանի կողը օսկոռ ա կըռծում, ա՛րի՝ հո՛յթ, հըռփաց վըրես, ընձի թ՛ըլի զուքարանը, տէնամ՝ քըստըկները վոդնէրիս չեն… /Ուզում էի մտնել զուգարան, տեսնեմ՝ հարևանի սև շունը զուգարանի կողքին ոսկոր է կրծում, արի՝ հո՛յթ, գռմռաց ու հաչեց, ինձ զցեցի զուգարանը. տեսնեմ՝ հողաթափերը ոտքերիս չեն…/

հույուբույ ա՛նել, չբ. - հոխորտալ

հունա՛ր // հ՛ինա՛ր (պրսկ., թրք.), գ. - խելք, հնարագիտություն, շնորհք

հունթը զա՛նել, նբ. - թևի տակ դնել

հունք, գ. - հոնք.- Վո՞րը կա՛նա ընդուն ա՛սա՝ հա՛շկիտ վիրեվն հունք կա՛ /Որևէ մեկը չի կարող նրա թերությունը մատնանշել/

հունքերը կա՛խել, չբ. - տխրել, նեղվել

հունքը շինէլու տեղը հ՛ա՛շկը խանել - գործը ավելի փչացնել.- Ըստոնք էկան՝ հունքը շինէլու տեղը հ՛ա՛շկը խանին /Սրանք եկան՝ ունքը շինելու տեղը աչքը հանեցին/

հուշիկ, մկ. - կամաց

հուշիկ-հուշիկ, մկ. - կամաց-կամաց

հուշիկցընել, նբ. - 1. դանդաղեցնել, 2. ձայնը իջեցնել

հուշտ հըլնել, չբ. - 1. խրտնել, 2. գործից վախենալ

հուշտ ա՛նել, նբ. - խրտնեցնել

հուսին մընալ, չբ. - մեկի հույսին մնալ

hուստ, մկ. - որտեղից.- Կըճուճն ասավ տակըս լիքը վոսկի յա, շէրեփն ասավ՝ բը յես հուստ եմ գ՛ալում /Իրականությանը ծանոթ մարդու մոտ գլուխ գովելն անիմաստ է/
hուստա (թրք., պրսկ.), գ. - վարպետ
hուստըկել, նբ. - մազերը հյուսել
hուստութուն անել, չբ. - վարպետություն անել
hուսօվ անել, նբ. - հավատ ներշնչել, հույս տալ, որ ցանկալին կիրականանա
hուր, դ. - ուր, որտեղ
hուրի մալաք (պրսկ.), ած. - գեղեցկուհի
hուքմիշ հըլնել, չբ. - նյարդայնանալ
hուքմօվ (արաբ., պրսկ., թուրք.),մկ. - բարկացկոտ տոնով
hօբա (թրք.), գ. - սարատեղ
hօդա (թրք.), գ. - գոմին կից սենյակ
hօժար հըլնել, չբ. - համաձայն լինել
hօժարակամ, մկ. - կամովին
hօլ, գ. - հող
hօլընդել, նբ. - մի կողմ նետել
hօլթըլաղ (թրք.), մկ. - մեջտեղ
hօլիկ, գ. - հյուղակ սարատեղում
hօղըրկել, նբ. - ուղարկել
hօն, գ. - հնձվորի հնձի բաժինը
hօնքըռտալ, չբ. - հեկեկալ
hօնքուռ-hօնքուռ /թրք./ լալ, չբ. - հեկեկալ
hօշ, ձ. - *էշին քշելու ձայնարկություն*
hօշարի, գ. - մեծ դաշույն
hօռընալ, չբ. - չափից ավելի փարթամանալ.- Հազար անքամ ասի՝ կառտօլն էլ մի՛ ջ՛ըրէք, կըhօռընա, չըլըսացին, լը տե՝ ի՛մալ ա hօռըցե, սաղ ուժը տըվե քօլէրին /Շատ անգամ ասացի՝ կարտոֆիլը էլ մի՛ ջրեք, ուժը կտա բույսին,

չլսեցին, մի տե՛ս՝ ինչպես է չափից ավելի փարթամացել, ողջ ուժը տվել է ցողունին/

հօռթարած, գ. - հորթապահ

հօռթըկտել, չբ. - կովի վիժելը

հօռթիկ, գ. - 1.հորթ, 2. տխմար

հօռթուբօռթ ա՛նել, չբ. - գոռգոռալ, հոխորտալ

հօռօմի տեռը սա՛րքել - ծանրացնել, դժվարացնել

հօրուկ, գ. - ցից, որից կապում են կենդանուն

հօրուկել, նբ. - խոտակեր անասունը կապել՝ տվյալ տարածքում արածելու համար

հօփ, ձ. - կանգ առնելու կոչ, հրաման արտահայտող ձայնարկություն

հօփըստօպ ա՛նել, նբ. - կանգնեցնել՝ թալանելու նպատակով

հօքի մըրկել, չբ. - կեղծել, խաբել

Ձ

ձա՛ձա՛, գ. - հորեղբայր (դիմելաբառ՝ ուղղված իրենից տարիքով տղամարդուն)

ձա՛ք, գ. - ձագ, վարտիքի նստատեղի կախ ընկած մասը

ձա՛ք տալ, չբ. - մեղվի ձագ տալը

ձախլիկ, ած. - ձախ ձեռքով աշխատող

ձախուծուռ խօսալ, չբ. - անկապ-անկապ բաներ ասել

ձավար ունէնալ ծէծէլու - այցելություն թաքցված նպատակով

ձավրել, չբ. - շատախոսել, դատարկախոսել

ձ՛եռ, գ. - ձեռք.- Ձ՛եռը ձ՛եռ ա լըվում, էրկու ձ՛եռը՝ հիրես /Միասնությամբ ավելի մեծ գործեր են արվում/

ձեռ ա՛ռնել, նբ. - հեգնել, ծաղրել

ձ՛եռացագիր, գ. - ձեռագիր.- Իմ ա՛խճիկը էնենց ձ՛եռացագիր ունէր՝ սա՛ղ դըբռօցը ա՛սէլիք էր. մըկա էլ փո՛րն ա գ՛ըրչօվ գ՛ըրում, փոր ձ՛եռացագիր էլ ունէնա /Իմ աղջիկը

այնպիսի ձեռագիր ուներ՝ ողջ դպրոցում այդ մասին էին խոսում. Այժմ էլ ո՛վ է գրիչով գրում, որ ձեռագիր էլ ունենա/

ձ՛եռ բ՛ըռնել- նյութապես օգնել

ձեռ զնել, չբ. - կշռելիս խարդախություն անել

ձ՛եռ թըլել, չբ. - ձեռք զգել

ձ՛եռ ու վոտ հընգընել, չբ. - հապճեպ պատրաստություն տեսնել, ճարել

ձ՛եռ ու վոտի հըլնել, չբ. - կարողանալ ինքնուրույն քայլել

ձ՛եռ ու վոտից հընգընել, չբ. - դժվարությամբ տեղաշարժվել

ձ՛եռ չըկըբնել, չբ. - չճարվել

ձ՛եռ պնռզել, չբ. - ողորմություն խնդրել

ձ՛եռ վէրցել, չբ. - հարվածելու համար ձեռքը բարձրացնել

ձ՛եռ տալ, չբ. - 1.դիպչել, 2.բարևել, 3.գերեզմանոցում ցավակցել 4.շահավետ լինել

ձ՛եռ քաշել, չբ. - հրաժարվել

ձ՛եռէ վոտէ հընգնել, չբ. - անշարժունակ դառնալ

ձ՛եռէն //ձ՛եռից խանել, նբ. - մեկին մի բանից զրկել

ձ՛եռէն գ՛ալ, չբ. - ձեռքից գալ, կարողանալ

ձ՛եռէն տնել, նբ. - խլել

ձ՛եռէն ոռնել, նբ. - ձեռքից խլել, վերցնել

ձ՛եռը բ՛ըռնել, չբ. - 1.ձեռքը բռնել, 2.արգելել

ձեռը գ՛ալ, նբ. - վաստակել, միջոցներ ստեղծել

ձ՛եռը կըրագն հընգնել, չբ. - մեկի երեսից տուժել, չկարողանալ նրանից ազատվել.- Ըտու ձ՛եռը կըրագն ենք հընգե. Հիրա խելքին չըխասնում, հուրիշի յէլ մօտ չըթօղում /Դրա երեսից տուժում ենք, իր խելքի բանը չէ, ուրիշին էլ մոտ չի թողնում/

ձ՛եռը հընգնել, նբ. - ձեռքն ընկնել

ձ՛եռը մնքուր, ած. - ազնիվ, ոչ գող

ձ՛եռը պինդ, ած. - ժլատ

ձ՛եռը սօվոր, ած. - գողության սովոր

ձ՛եռի լա՜յլուխ, գ. - ուրիշների հանձնարարությունները կատարող
ձ՛եռի խէտ, մկ. - միաժամանակ
ձ՛եռի հառէչ ունէնալ, նբ. - միշտ պատրաստի ունենալ ինչ-որ բան
ձ՛եռի ջ՛ըրքօվ, ած. - արհեստներ իմացող, տարբեր կենցաղային գործերից գլուխ հանող
ձ՛եռի վըրա՜, մկ. - մասնավոր առնտուր
ձ՛եռի-վոտի հըլնել, չբ. - զբաղված լինել տնային գործերով
ձ՛եռի տա՜զն ունէնալ, նբ. - ձեռքի տակ ունենալ
ձ՛եռի փէղ, գ. - ձեռնափայտ
ձ՛եռին բ՛անել, չբ. - վարպետի մոտ բանվոր լինել
ձ՛եռին հիշկալ, չբ. - մեկի տվածով ապրել, անընդհատ ակնկալել օգնություն
ձ՛եռին ճա՜ր //չարա հըլնել - հնարավորություն ունենալ
ձ՛եռին օր չըտէնալ - մեկի տրամադրության տակ դժվարին կյանք ունենալ
ձ՛եռից բ՛ան չիգալ - անճարակ, անբան լինել
ձ՛եռից գ՛ալ, նբ. - կարողանալ.- Վիր ձ՛եռից գ՛ալում՝ թօ էն էլ էտ գ՛ոռծնա՜նա, հընչե՞ս բէբաշարին գ՛ոռծի դ՛ընում /Ո՛վ կարողանում է, թող նա էլ այդ գործն անի, ինչո՞ւ ես անճարակին գործի դնում/
ձ՛եռից էթալ, չբ. - խիստ տկարանալ, փչանալ
ձ՛եռից թըռնել, չբ. - 1.ձեռքից ընկնել, 2.ինչ-որ թանկ բան կորցնել
ձ՛եռից թըռցընել, նբ. - խլել
ձ՛եռից թօղել, նբ. - ձեռքից բաց թողնել
ձ՛եռից խանել, նբ. - առիթը չօգտագործել, կորցնել
ձ՛եռից հըմէն ինչ գ՛ալ - ամեն ինչ կարողանալ անել
ձ՛եռից չըպըրծընել, նբ. - 1. ժլատ լինել, 2. չփրկվել.- Դ՛ու ընդու ձ՛եռից չես պըռծընի, դոր էլ հըլնես՝ մէ օր քէ կըգ՛ըթնի /Դու նրա ձեռքից չես ազատվի, ուր էլ լինես՝ մի օր քեզ կգտնի/
ձ՛եռից պըրծում-ա՜զատում չըլնել, չբ. - մեկի պարտադրանքին ենթարկվելը, ազատվել չկարողանալը

ձ՛եռից ջօնել, նբ. - մեկից խլել, հափշտակել
ձ՛եռն հընգնել, նբ. - ձեռքն ընկնել
ձ՛եռնամեղօվ, մկ. - անտեղի, զուր տեղը
ձ՛եռնէձ՛եռ, մկ. - ձեռքից ձեռք
ձ՛եռուվոտը կմ՟բվել, չբ. - ինչ-որ բանով զսպվել, չկարողանալ գոր-
ծել
ձ՛եռօվ ա՟նել, նբ. - կանչել
ձ՛եռօվ էթալ, նբ. - մեկի ձեռքով կործանվել
ձ՛եռօվ-վոտօվ, ած. - աշխատունակ, առողջ
ձ՛եռօվ ցանել, նբ. - ցանել միայն մարդու աշխատանքով.- Հառէչ հըմէնն էլ բօստանը ձ՛եռօվ ին ցանում, մըկա հէշտըցե, էտա պըստի տըրակտօրները հըմէն ինչ ա՟նում են /Առաջ բոլորն էլ բոստանը ձեռքի աշխատանքով էին ցանում, այժմ հեշտացել է. այդ փոքր տրակտորները ամեն ինչ անում են/
ձ՛եվ ա՟նել, նբ. - ձևացնել
ձ՛եվ թափել, չբ. - ձևեր անել
ձ՛եվել, նբ. - 1.ձևել, 2.եղունգներով պատռել
ձ՛եվ տալ, չբ. - ձևեր ընդունել
ձ՛եվօ, ած. - սեթևեթող
ձ՛էն ա՟նել, չբ. - ձայն հանել
ձ՛էն ա՟ռնել - ձայն լսել.- Էտ գըմփոցի ձ՛ենն ա՟ռանք, հընգնավորանք, հէլանք թափանք դ՛ուս, տէնանք՝ սա՟ղ ժօղօվուռթը դ՛ուսն ա /Այդ պայթյունի ձայնը լսեցինք՝ վախեցանք, արագ դուրս եկանք, տեսանք՝ ամբողջ ժողովուրդը դրսում է/
ձ՛էն գ՛ալ, չբ. - ձայն լսվել
ձ՛էն դ՛ընել, չբ. - աղմկել.- Էտ ի՞նչ ձ՛էն էք դ՛ըրե, բ՛ան չէմ լըսում, լը ձ՛էնըներըտ կըդրէք /Այդ ինչքա՞ն եք աղմկում, բան չեմ լսում, մի ձայններդ կտրե՛ք/
ձ՛էն խանել, չբ. - ձայն հանել
ձ՛էն հընգել հանգաձը - լսել

ձ՛էն ձ՛էնի տալ, չբ. - նույն բանն ասել
ձ՛էն տալ, չբ. - 1.ձայնել, կանչել, 2.քվեարկել մեկի օգտին
ձ՛էն ունէնալ - 1.երգեցիկ ձայն ունենալ, 2.կշիռ ունենալ
ձ՛էնը գ՛ալ, չբ. - կարողանալ լավ երգել
ձ՛էնը գ՛ըլօխը քըցել, չբ. - բարձր գոռալ.- Ձ՛էնը գ՛ըլօխն ա քըցե, բոռում, գիվժ յերքում. էտի յե՞րք ա /Ձայնը գլուխն է գցել, գոռում է, իբր երգում է. դա ե՞րգ է/
ձ՛էնը կըդրել, չբ. - 1.ձայնը խզվել, 2.լռել
ձ՛էնը տա՛ք տեղից գ՛ալ - ապահով լինել
ձ՛էն-ծըպտուն, գ. - չնչին ձայն
ձ՛էնձ՛ընել, չբ. - լուր տարածել
ձ՛էնօվ, ած. - 1.երգել կարողացող, 2.բարձր ձայն ունեցող, 3.բարձ-րաձայն
ձ՛ըթել, նբ. - ձյութով պատել
ձ՛ըկտել, չբ. - ձգտել
ձ՛ըկտըվել, չբ. - մարմնով ձգվել՝ հասնելու մի բանի
ձ՛ըմա, գ. - խոնավ, արևից զուրկ տեղ
ձ՛ըմըռնուկ, ած. - ձմռանը դիմացող /միրգ/
ձ՛ընագ՛ընդիկ, գ. - ձնագունդ
ձ՛ընագ՛ընդիկ խաղալ, չբ. - ձնագնդերով իրար հարվածել
ձ՛ընբ՛աքի, մկ. - անօթևան /ձմռանը/
ձ՛ընել, չբ. - ձյուն դնել
ձ՛ընթօփ, գ. - ձնագունդ
ձ՛ընծաղիկ, գ. - ձնծաղիկ
ձ՛ընձըխկըտալ, չբ. - մաքրությունից փայլփլել
ձ՛ընոտ, ած. - ձյունոտ
ձ՛ըսմի թան, գ. - խնոցու թան
ձ՛ըսմի կա՛րաք, գ. - խնոցու կարագ
ձ՛ըվածեղ, գ. - կերակուր՝ հարած ձվով և յուղով
ձ՛ըվխեխտ ա՛նել, նբ. - նախնական վիճակում ինչ-որ բանի դեմն առնել, մեկին լռեցնել

ձ՛ըրի, ած. - անվճար.- Ձ՛ըրի պա՟նիրը միյնա՛կ թա՛լա՛քի մէչն ա
հըլնում, գիցա՞ր, ըտոնք քեզի խափում են, լավ քըցա-
բ՛ըռնա /Առանց վճարի ոչինչ չի լինում, իմացա՞ր,
դրանք քեզ խաբում են, լա՛վ մտածիր /

ձ՛ըցում, գ. - խնոցի

ձ՛ըցում զա՛նել, չբ. - խնոցի հարել

ձ՛ըցում խէզնօղ, ած. - կախարդ, ջադու

ձ՛ըքս, գ. - մարդու հասակ

ձ՛իթխաց, գ. - ձէթ քամելու արհեստանոց՝ գործատուն

ձ՛իթոտ, ած. - ձեթոտ

ձ՛իյավոր, գ. - ձի հեծած, հեծյալ

ձ՛ու, գ. - հավկիթ.- Ձըվի մէչը մա՟զ ա մա՟ն գ՛ալում /Մանրախնդիր է/

ձ՛ուն, գ. - ձյուն.- Ձ՛ըմեռը ձ՛ուն ուզես՝ չիտա /Խիստ ժլատ է/

ձ՛ուն բ՛ըռնել, չբ. - սկսել ուժեղ ձյուն գալ

ձ՛ուն գ՛ա գ՛ըլխիտ - *հեգնական արտահայտություն է*

ձ՛ուն գ՛ալ, չբ. - ձյունել

ձ՛ուն դ՛ընել, չբ. - ձյունը նստել

ձ՛ուն թա՛լել, չբ. - ձյուն սկսվել.- Ձ՛ուն ա թա՛լում, հէլի խոտը ծա՟սկա,
էն բ՛ան ու մանը նեռս բ՛ե /Ձյուն է սկսվում, ե՛լ խոտը
ծածկի՛ր, էն ապրանքն էլ ներս բեր/

ձ՛ուն շըփել, չբ. - թափով ձյուն գալ

ձ՛ուն ու բ՛ուք, գ. - բքախառն ձյուն

ձ՛ուն քըցել, չբ. - թեթև ձյուն գալ

ձ՛ունը թըռնել, չբ. - ձյունը հալվել

ձ՛ուն-ձ՛ըմըռնոցով, մկ. - ձմռանը, ձմեռ ժամանակ

Ղ

ղըրկել //հըղըրկել// հօղըրկել, նբ. - ուղարկել

Ճ

ճմկաթ, գ. - ճակատ.- Չէր տէսէ պմտից կմխ՝ տէսավ ճմկտից կմխ /Անակնկալ ունեցավ մի բան, որն ունենալու հնարավորությունից շատ հեռու էր/

ճմղ (վրաց.), գ. - շյուղ, փայտե ձող

ճմմփա էթալ, չբ. - հեռու տեղ գնալ

ճմմփա կըդրել, չբ. - ճանապարհ անցնել

ճմմփա հընգնել, չբ. - ճանապարհ ընկնել

ճմմփա պմխել, չբ. - սպասել

ճմմփա տալ, չբ. - հետ քաշվել, զիջել

ճմմփել, նբ. - ուղարկել

ճմմփէն կըդրել - առաջն առնել, դեմը կտրել

ճմմփու դ՛ընել, նբ. - ճանապարհել

ճմն, գ. - վեզ

ճմնգ (պրսկ.), գ. - ճանկ

ճմնգել, նբ. - 1.բռով վերցնել, 2.քորել

ճմնգըռթել, նբ. - եղունգներով քերծել

ճմնգն հընգնել, նբ. - ձեռքն ընկնել

ճմնչընալ, նբ. - ճանաչել, իմանալ, հասկանալ.- Էտա դ՛իմակները վոր դ՛ընում են, շմտ գ՛ախ չես ճմնշնում, թէ գ՛ալօղը վորն ա, խօսում՝ նոր գ՛ըլխի յես հընգնում /Այդ դիմակները որ դնում են, հաճախ չես ճանաչում, թե եկողը ո՛վ է, խոսում է՝ նոր միայն գլխի ես ընկնում/

ճմնջխատըցըրիկ, գ. - ճանճ սատկացնելու հարմարանք

ճմշ ուտել - 1.ապուր ուտել, 2.պատիժ կրել

ճմպ, ած. - ձախլիկ

ճմպմնմկի, մկ. - ձախ ձեռքով

ճռախօս, ած. - մեծ-մեծ խոսող

ճռվ, գ. - ճակնդեղի ցողունը

ճռվիկ, գ. - ճակնդեղի տերևների կոթուններից պատրաստված թթու

ճռր, գ. - ելք.- Ճռրընե՞րս ինչ /Ելք չունենք/

ճռր ռնել, չբ. - օգնել, ելք գտնել

ճռր ու ճռմփա, գ. - ելք, հնարավորություն

ճռրերը բ՛ացել - զարտուղի միջոցներով իր համար հնարավորություն ստեղծել

ճռրը կըդրել, չբ. - ստիպված լինել, այլ ելք չունենալ

ճռք, գ. - ճաքած տեղը

ճեղ, գ. - ձիգ, ջլոտ

ճեղ պռնիր, գ. - թել պանիր

ճեղէ տիկին, ած. - ճկուն

ճեմօվ ճռշ նըստել, չբ. - հանդիսավոր նստել ճաշելու /հեգն./

ճենջ, գ. - ճարպային կամ յուղային նյութ

ճենջախոտ // ճէնջախոտ, գ. - ճենճի հոտ

ճեռօք (քրդ.), գ. - ձև, սեթևեթանք

ճեռօքնէրօվ, ած. - քմահաճ, ձևեր անող

ճեռօքցընել, չբ. - բարդացնել, ձևեր անել

ճէլէ, ած. - նիհար

ճէնջըռթալ, չբ. - ճարպի այրվելու ձայնը

ճէվալ, չբ. - 1.ծորալ, 2.ձգվելով երկարել

ճէվան, ած. - երկարացող

ճէվըցընել, նբ. - 1.ձգելով երկարացնել, 2.խոսքը երկարացնել.- Էտքան վոր չըճէվըցընես, կռռճ ու կօնգըրէտ ռսես՝ չը՞լնի /Այդքան որ չերկարացնես, կարճ ու կոնկրետ ասես՝ չի՞ լինի/

ճէրէրալ, չբ. - 1.ցավերի մասին խոսել, նվնվալ 2.դժգոհել

ճըբըղվել, չբ. - տափականալ, գետնին սեղմվել

ճըբռոտ, ած. - ճպռոտ

ճըբռուկ, գ. - ուտելի բույս է
ճըբռօտել, չբ. - աչքերի ճպռոտվելը
ճըգըռել, չբ. - ճկռել, կքել
ճըգըռկըտալ, չբ. - ծանրությունը հազիվ տանել, կքած քայլել
ճըգըռկըտալէն, դբ.. - ծանրության տակ կքած, մի կերպ տանելով
ճըգըռցընել, նբ. - ճկռել տալ
ճըթըռել, չբ. - լցվել, փարթամանալ, ուռչել
ճըթըռուկ, ած. - լավ բերք բռնած
ճըթճըթալ, չբ. - փայտի կոտրվելու, այրվելու ձայն հանել.- Լույսերը հա՛ թուլցան-ուժեղացան, թուլցան-ուժեղացան, մէկ էլ կա̊մպուտըրից ճըթճըթալու ձ՛էն էկավ, մուխ հէլավ… էլ ի՛նչ… /Հոսանքը թուլցավ-ուժեղացավ, թուլցավ-ուժեղացավ, մեկ էլ համակարգչից այրվելու ձայն եկավ, ծուխ ելավ… է՛լ ինչ…/
ճըթճըթոց, գ. - փայտի կոտրվելու, այրվելու կամ այդ կարգի այլ ձայն
ճըժանակ, մկ. - երեխայի պես
ճըժատել, չբ. - վիժել
ճըժէ կըղըել, չբ. - 1.այլևս երեխա չունենալ, 2.խիստ վախենալ
ճըժօվ, ած. - հղի
ճըժօվնալ, չբ. - հղիանալ
ճըլերը կա̊յնըցընել, չբ. - բարկությունից ջլերը լարվել
ճըլըթալ, չբ. - ճթթոց հանել
ճըլըրեկ, գ. - 1.մանր կարկուտ, 2.դրա նման կոնֆետներ
ճըլխել, նբ. - ճխլվել
ճըլխուկ, ած. - ճխլած
ճըլճեխ, գ. - ցեխ
ճըլճըլալ, չբ. - բարակ ջուր գալ
ճըլպըտուն, ած. - խատուտիկ, գույնզգույն
ճըլվըլալ, չբ. - ճռվողել
ճլվըլիկ, գ. - լվացք փռելու պարան
ճըլտէ, ած. - նիհար
ճըլտուզ, ած. - փոքրամարմին

ճըլօթ, գ. - ապտակ
ճըլօթ զա̈նել, չբ. - ապտակել
ճըլօթել, նբ. - ապտակել
ճըխճըղել, նբ. - պատառոտել
ճըխճըղուկ, ած. - պատառոտված
ճըխմըռտել, նբ. - շատ ուժեղ սեղմել
ճըխնախան ա̈նել, նբ. - ծխնուց հանել
ճըխտել, նբ. - մտցնել, խոթել.- Մա̈տըտ ճըխտիր մէկի հա̈շկը՝ չէր տէնի /Շատ մութ էր/
ճըխտուկ, ած. - լիքը լցված, սեղմված
ճըկութ, գ. - ճկույթ. - Ընդու ճըկութը չա̈ժի /Նրա համեմատ չնչին մարդ է/
ճըղա̈նգ, ած. - նիհար, ջլոտ
ճըղել, նբ. - 1.պատռել, 2.փախչել
ճըղըռտել // ճըղճըղել, նբ. - պատառոտել
ճըղոն, գ. - ճեղք
ճըղուկ, ած. - պատռված
ճըղուկ-ճըխճըղուկ, ած. - պատառոտված
ճըմախամ, գ. - ճահճահամ.- Մէ տէսակ ճըմախամ ա̈ռա, սիռտըս խառնեց /Մի տեսակ ճմահամ առա, սիրտս խառնեց/
ճըմախոտ, գ. - ճահճահոտ
ճըմըլկըտալ, չբ. - ծմրկտալ
ճըմըռտել, նբ. - ճմռթել
ճըմըռտուկ, ած. - ճմռթված
ճըմճըմա, ած. - ճահճոտ
ճըմուռ, գ. - նոր թխած բոքոնը մանր կտորներով յուղի մեջ թաթախած
ճըմք, գ. - մարմին
ճընգըցընել, նբ. - ափի մեջ դնել (դրամ, զարդ և այլն)
ճընդըրիկ, ած. - *ճընդըրիկ սեվ* կապակցության մեջ, իբրև՝ շատ սև
ճընջըխապա̈շար, գ. - *բույս է*
ճընջուլք, գ. - ուրիշի աշխատանքից յուրացվածը

ճըպճըպցընել, չբ. - աչքերը արագ-արագ թարթել
ճըռ մութ - շատ մութ
ճըռալ, չբ. - 1.ճռռալ /սայլը, ծղրիդը/, 2.ծանր հոգսի տակ լինել
ճըռըզել, չբ. - ուռչել
ճըռըզուկ, ած. - ուռած
ճըռթճըռթալ, չբ. - փայտի՝ այրվելու ժամանակ ձայն հանելը
ճըռիկ (թրք.), գ. - ծղրիդ
ճըռճըռալ, չբ. - ճըռռալու ձայն հանել
ճըռճըռթոց, գ. - կոտրվելու, այրվելու ձայն
ճըռճըռոց, գ. - ճըռռալու ձայնը
ճըստալ, չբ. - մկան ձայն հանել
ճըստոց խանել, չբ. - շատ թույլ ընդդիմանալ
ճըվալ, չբ. - ճչալ
ճըվճըվալ, չբ. - ճղճղալ, գոռգոռալ /կինը/
ճըվտել, չբ. - վերջույթի ոլորվելը, տեղից դուրս գալը
ճըվտըկախան ա̈նել, նբ. - քաշքշել, ոտքերը պոկել
ճըտել, չբ. - աչքը կիսախուփ անել
ճըրաքու, գ. - ճրագու.- Ըրվից ճըրաքու յա խանում /Սաստիկ ժլատ է և ագահ/
ճըփճըփալ, չբ. - թաց, խոնավ լինել
ճիժ, գ. - երեխա.- Դուզը խօսկը տան ճըժից են գիդում /Գաղտնիքը երեխաներից են իմանում/
ճիժ բ՛էրել - երեխա ունենալ
ճիժ ու պիժ, գ. - բոլոր երեխաները
ճիլ, գ. - ջիլ
ճիկ ու վիկ ա̈նել, չբ. - ծիկրակել, գաղտագողի նայել.- Էտ ի՞նչ ճիկ ու վիկ էք ա̈նում, լը էկէք տէ՛նամ, Սօֆիկ, ճըժէրին խընձոր բ՛ե, թօ ուտեն /Ի՞նչ եք ծիկրակում, եկեք տեսնեմ, Սոֆի՛կ, երեխաներին խնձոր բե՛ր, թող ուտեն/
ճիկ տալ, չբ. - ծիկրակել
ճիճըռնեկ հա̈շկեր, ած. - փոքր, կկոցված աչքեր ունեցող
ճիճու, գ. - մակաբույծ որդ
ճիմ (թուրք.), գ. - ճահճոտ վայր

ճիշտ վոր, վ. - իսկապես, իրոք
ճիվ, գ. - սրունք
ճիրել // ճիրքել, նբ. - վերջին կաթիլները քամել
ճոթ (թթր.) - ծայր, եզր
ճութ, գ. - խաղողի ողկույզ
ճուլկի, գ. - երկաթե ձողիկ, որ անցկացնում են սռնու ծայրին
ճուկ, գ. - 1.վեզի մի կողմը, 2.սրունքի ներքևի մասում հոդ, 3. անակնկալ
ճուճ // ճուճուլ, գ. - տղա երեխայի սեռական անդամ
ճուճ ու պըլոր, գ. - սեռական օրգաններ
ճուճին, ած. - վտիտ /տղա/
ճու-ճու-ճու, ձ. - հավերին կանչող ձայնարկություն.- Ճո՛ւ-ճո՛ւ-ճո՛ւ, ա՞նտէր մա՞ցուկները դո՞ր են, գ՛ան ուտեն, մըկա ճընջըխները կըտա՞նեն /Ճո՛ւ-ճո՛ւ-ճո՛ւ, անտեր մնացածները ո՞ւր են, գան ուտեն, հիմա ճնճղուկները կտանեն/
ճուռ, գ. - ազդր
ճուրել, նբ. - մուրալ
ճուրընգան, ած. - մուրացկան
ճօբնել, նբ. - ձոպանով կապել
ճօլան-ճօթան, ած. - լավ հագնված (պառավ կինը)
ճօլտախան ա՞նել, նբ. - ձգելով պոկել, գլխատել
ճօլտել, նբ. - ձգելով պոկել
ճօխըցընել, նբ. - 1.ճոխացնել, 2.չափազանցնել
ճօխլըխան, ած. - շատ ճոխ
ճօղել, նբ. - 1. ճողվածք ստանալ, 2. ոտքերը՝ ազդրերը իրարից լայն հեռացնելը
ճօղել-ճըռնատել, չբ. - ճողվածք ստանալ, ոտքերը ծռմռվել
ճօղէճօղ, մկ. - ոտքերը իրարից հեռու գցելով
ճօղուկ, ած. - ճողվածք ունեցող
ճօճ ու կէյբա՞թ ա՞նել, չբ. - բամբասել
ճօշկ, գ. - բամբասանք

ճօշկ անել, չբ. - բամբասել

ճօպան, գ. - հաստ պարան

ճօռբ՛էրան, ած. - շատախոս

ճօռել, չբ. - բերանը ծռել

ճօռթել, չբ. - չռել, լայն բացել /աչքերը, բերանը/, պատռել

ճօռթուկ, ած. - 1.չռված, 2. Պատռված.- Հառավոտ շուտ էնա ճօռթուկ հմ̈շկեր Ժօրօն էկե դ՛ուռը տըփում, ամսում՝ միս մ̈րօղը ձ՛եզի միս ա դըրկե, ամսի՝ մենք միս չենք ուզե, ամսավ՝ յա՛, ինչ անեմ, բ՛էրէր եմ, խօ յետ չե՛մ տանի. էլ ի՛նչ անի, փողը տըվի, վէրցի…

ճօօ-ճօօ խոսալ, չբ. - պոռոտախոսել

Մ

մ̈զ̈ր (թրք.), վ. - արդյոք, մի՞թե

մ̈դմ̈ժմ̈ժ հըլնել, չբ. - շատ զզվել

մ̈դղաշ, ած. - մատղաշ, փոքր

մ̈դղացու, ած. - մատաղացու

մ̈դղել, նբ. - մատաղացուն մորթել

մ̈դղի միս, գ. - մատաղ արված կենդանու միս

մ̈դնաշունչ, գ. - մատի հիվանդություն՝ ուռչելը

մ̈դնիք դ՛ընել, չբ. - նշան դնել, նշանել

մ̈դնիքը յետ տալ - նշանը հետ տալ

մ̈դրաս (ռուս.), գ. - ներքնակ.- Մ̈դրասը դո՞ր էր, մինդ̈ր ինք փըռում թունդըրա շուռթին, պ̈րկում ինք, քընում ինք /Ներքնակ չկար, մինդար էինք փռում թոնրի շուրթին, պառկում էինք, քնում/

մ̈զ̈լու (թրք.), ած. - զարմանալի, տարօրինակ, ծիծաղաշարժ

մա̊զա̊նդա̊ (թրք.), գ. - ընդունված, ընթացիկ գին

մա̊զէ, ած. - մազից պատրաստված

մա̊զն ա̊նել գ՛էրան - չափազանցնել.- Բիձա̊, դ՛ու յէլ ես շա̊տ, մէ պըստի բ՛անը ա̊րիր յա̊քա̊ բօլօլա, իսկականից վոր՝ մա̊զն ա̊րիր գ՛էրան… /Բիձա, դու էլ ես տարօրինակ, ոչնչից մեծ աղմուկ սարքեցիր, իսկապես որ՝ չափազանցրիր…/

մա̊զնաբ՛ըռթօշ, գ. - հացը մեջը բրդած մածուն.- Տօ լա՛վ է՛, սըթից խօսում ես. չե՞ս խա՛սկընում՝ յես մըկա ուզում եմ մա̊զնաբ՛ըռթօշ ուտեմ, բ՛այց հինքը հ՞ինչ ա բ՛էրե, տե՝ էսի հ՞ինչ ա… /Դե լա՛վ, է՛, անիմաստ խոսում ես. չե՞ս հասկանում՝ ես հիմա ուզում եմ մածնաբրդոշ ուտել, բայց ինքը ի՞նչ է բերել, տե՛ս՝ սա ի՞նչ է…/

մա̊զնաթան, գ. - մածունից պատրաստված, ոչ խնոցու թան.- Ի՛նչ ա, բ՛ե տէնամ՝ ի՞նչ ա… է խա՛, մա̊զնաթան ա, ի՛նչ տա̊րբէրութուն, բ՛ըռթա կե. վոր խացը շա̊տ ա̊նես՝ գ՛ըլնի մա̊զնաբ՛ըռթօշ, է՛լի … /Ի՛նչ է, բեր տեսնեմ՝ ի՛նչ է… է հա՛, մածնաթան է, ի՞նչ տարբերություն, բրդի՛ր կե՛ր. եթե հացը շատ անես՝ կլինի մածնաբրդոշ, է՛լի…/

մա̊զնաջ՛ուր, գ. - մածնի ջուր.- Խօքուս խէ՞տ ես խաղում, էսի ըսկի մա̊զնաթան էլ չէ, մա̊զնաջ՛ուր ա. դը վոր էտենց ա՝ ա̊ռ քեզի, ուզում ես՝ կե, ուզում ես՝ խըմա, ուզում ես… /Հոգուս հե՞տ ես խաղում, սա իսկի մածնաթան էլ չէ, մածնաջուր է. դե որ այդպես է՝ վերցրու քեզ, ուզում ես՝ կեր, ուզում ես՝ խմիր, ուզում ես…/

մա̊թ, գ. - քաղցու.- Չէ, չեմ ուզում, մէշու հառէչ մա̊թ եմ խըմե, չեմ ուզում խառնեմ… /Չէ, չեմ ուզում, քիչ առաջ քաղցու եմ խմել, չեմ ուզում խառնել…/

մåժել, նբ. - 1.շփել,տրորել, 2.շոյել.- Էտ ճåկա՞թըտ հընչես մåժում, լը բ՛ըռնա… էտ հընչա՞ ուռե… /Էդ ճակա՞տդ ինչու ես տրորում… մի ցո՛ւյց տուր… այդ ինչո՞ւ է ուռել…/

մåժըռտել, նբ. - շատ շփել, շոյել

մåժմըժել, նբ. - շարունակ շոյել, գուրգուրել

մåլ (արաբ., թրք.), գ. - 1.անասուն, 2.տխմար.- Տօ մըտա թալվէն, åսի՝ մåլի տåկը åվլեմ, վոտըս պåդայական կըպավ գուռբ՛ախին, պոչը հիչավ ճåկտիս… /Դե մտա գոմը, ասացի՝ անասունի տակը ավլեմ, ոտքս պատահաբար դիպավ խորաբահին, պոչը իջավ ճակատիս…/

մåլա (պրսկ., թրք.), գ. - ծեփիչ, սվաղելու գործիք.- Բը մåլէն ի՛նչ ես åնում. Ժէնիկ, լը մեր սըվաղզ՛ըթէլները բ՛ե. մէկը ջ՛ոչ ա, մէկը՝ պըստիկ, վո՞ր մէկն ես ուզում /Իսկ ծեփիչն ի՛նչ ես անում. Ժենի՛կ, մեր ծեփիչները բե՛ր. մեկը մեծ է, մյուսը՝ փոքր, ո՞րն ես ուզում/

մåլադօ (ռուս.), ած. - նորակոչիկ.- Գիվå շå՛տ եմ գիդում… յես բ՛անակ տեղ մåլադօ գ՛ախ եմ սըվաղ åրե, ըտուց յետօ ձ՛եռըս մåլա չեմ åռե… Էնենց լավ մåծուն ունենք, բիձէ՛ս, հիրեսը մէ մåտ սեր ա բ՛ըռնե, քէլա էթանք մեր յան. հա՛մ մåզնաբ՛ըռթօշ կուտես, հա՛մ էլ թալվի պåտի ծեփը մէ պըստի տեղ թափե՝ կըսըվաղես… /Իբր շատ գիտեմ… ես բանակում նորակոչիկ ժամանակ եմ սվաղ արել, դրանից հետո ձեռքս ծեփիչ առած չկամ… այնպիսի լավ մածուն ունենք, բիձաս, երեսին մի մատ սեր է բռնել, ե՛լ գնանք մեր տուն. և՛ մածնաբրդոշ կուտես, և՛ գամի պատի ծեփը մի փոքր տեղ թափվել է՝ կսվաղես…/

մåլåլ, ած. - տրամադրվածություն, հավես.- Է՜, ումուդ ջան, մåլåլըս փախե, էլ հառչըվանը չեմ, գ՛ընա հուրիշ

մծնուն ուտօղ գ՛ըթի… /Է՛, տղա ջան, հավեսս փախել է, էլ առաջվանը չեմ, գնա ուրիշ մածուն ուտող գտի՛ր…/

մԷլԷլ ա՛նել, չբ. - տրամադրվել.- Լա՛վ, բիձա՛, մէ պըստի տեղ ա, մԷլԷլ չա՛նես էլ՝ էտի մէ ժամվա մէչ կըպըռծես… /Լա՛վ, բիձա, մի փոքր տեղ է, հավես չանես էլ՝ դա մի ժամում կավարտես…/

մԷլԷլօվ, մկ. - տրամադրված կերպով, սիրով, հավեսով.- Ումո՛ւդ, լավ էլ մԷլԷլօվ էդ մա՛զնաթանը բ՛ըռթում ես, պըտի ուտե՞ս… /Տղաս, լավ էլ հավեսով այդ մածնաթանը բրդում ես, պիտի ուտե՞ս…/

մԷլԷմըշել, չբ. - տխրել, տրտմել, մոլորվել.- Տօ բիձա՛ ջան, վոր ա՛սիր՝ չես գ՛ալում սըվաղն ա՛նես, խառվա հիրար, չեմ զիդում՝ ինչ եմ ա՛նում, մԷլԷմըշա մա՛ցի, էլի… /Դե բիձա ջան, որ ասացիր՝ չես գալիս սվաղն անելու,շփոթվեցի, չգիտեմ՝ ինչ եմ անում, մոլորվեցի մնացի, է՛լի…/

մԷլԷմըշուկ, ած., մկ. - տխուր-տրտում.- Էտի մԷլԷմըշուկի բ՛ա՞ն ա. վոր էս մա՛զնաթանը էտենց գ՛ըթլում ես, ձ՛եր սերը հիրսին մա՛ծունը բը վո՞րը կուտա… /Դա մոլորվածի բա՞ն է. որ այս մածնաթանը այդպես արագ-արագ գդալով ուտում ես, բա ձեր սերը երեսին մածունը ո՞վ կուտի…/

մա՛լատիրկա (ռուս.), գ. - կալսիչ.- Ժէնի՛կ, քըվորըտ տըղէն ինչօր մա՛լատիրկա հըլնի… /Ժենի՛կ, քրոջդ որդին կարծես կալսիչ լինի…/

մԷլա՛քոր, գ. - զզվելուց առաջացող քոր.- Վոր էտենց ուտէլու վըրէն չե՛ս խօսո՛ւմ՝ զըզվանքըս գ՛ալում, էտենց մի՛ հիշկա, դուզն եմ ա՛սում, խա՛, մԷլա՛քոր եմ հըլնում… չուտօղի մա՛լը ուտօղին խալալ ա… դ՛ըրէր ի դ՛էմըտ՝ թօ ուտիր, ա՛նուն չըդընիր… տըղէս, էլի կուզե՞ս… /Որ այդպես ուտելու վրա չե՛ս խոսում՝ զզվում եմ, այդպես մի՛

նայիր, ճիշտ եմ ասում, հա՛, մոլաքոր եմ ունենում… չուտողի ունեցածը ուտողին հալալ է… դրել էի առաջդ՝ թող ուտեիր, անուն չդնեիր… տղա՛ս, էլի կուզե՞ս/

մա̈լէրօվնի (ռուս.), ած. - արծնապատված.- Էս վեռչի տա̊րինէրին խօրքուրըս յեղ ու մեղըրը, պիսօքն ու ա̊լուրը, ձ՛ավարեղենը լըցում էր մա̈լէրօվնի ջ՛ոչ կա̊ստուրկէքի մէչը, կող կողի շա̊րում էր. վոր էթում ինք հիրանց տունը, տա̊նում էր՝ մէկ-մէկ նըշանց էր տա̈լում, հիր ունէցածի վըրէն ուրխընում էր… /Հորաքույրս յուղ ու մեղրը, շաքարավազն ու ալյուրը, ձավարեղենը լցնում էր արծնապատ մեծ կաթսաների մեջ, կողք կողքի շարում էր. երբ գնում էինք իրենց տուն, տանում էր, մեկ-մեկ ցույց էր տալիս, իր ունեցածի վրա ուրախանում էր…/

մա̈լըմ (արաբ.) ա̊նել, չբ. - նշմարվել, երևալ.- Տունը էնենց մա̊քուր էր պա̊խում, հըմէն ինչ էնենց դ՛ասավորուկ էր, ըսկի մա̈լըմ չէր ա̊նում, վոր հազար տա̊րվա շենք ա /Տունը այնպես մաքուր էր պահում, ամեն ինչ այնպես դասավորված էր, բոլորովին չէր երևում, որ շատ հին շենք է/

մա̈լմալաթ (ռուս.), գ. - քաղցրավենիք՝ մարմելադ.- Հըմընից շա̊տ հիրա տըվուկ մա̊լմալաթն ի սիրում, է՛ն ի՛մալ խամօվ էր, մըկա էտենց մա̊լմալաթ հո՞ւստ ա… /Ամենից շատ իր տված մարմելադն էի սիրում, ի՜նչ համով էր, այժմ այդպիսի մարմելադ չկա…/

մա̊լյար (ռուս.), գ. - ներկարար.- Խօրքուրիս մա̊ռթը մա̊լյար էր, մեր սա̊ղ ա̊սկ ու տըրկի տըները հինքն էր ռէմօնտ ա̊նում, խօրօտ նըխշեր էր խանում… սա̊ղ էլ ձ՛ըրի յէր ա̊նում, խօրքուրըս կըթօղէր՝ էնի մեզնից փո՞ղ ա̊ռնէր… էնենց էր ա̊նում, վոր ռէմօնտից յետօ մէ բ՛ան էլ խեխճ մա̊ռթն

էր պմ̊ռտք մընում… վոր մ̊ռթը ըտե չէր հըլնում, խօրքուրըս ընդու մ̊րուկը շ̊տ էր գ՛օվում, բ՛այց վոր մ̊ռթը ըտե յէր հըլնում, տընաշէնը էտ մ̊րուկը կ̊ստու բէզրում էր… մ̊սում էր՝ թօ հիրես չառնի, շ̊տ բան չէ, պմ̊ռտավոր ա… /Հորաքրոջս ամուսինը ներկարար էր, մեր բոլոր բարեկամների տները ինքն էր վերանորոգում, պատերին գեղեցիկ նախշեր էր նկարում… ամբողջն անվճար էր անում, հորաքույրս չէր թողնի, որ նա մեզնից փող վերցներ… այնպես էր անում, որ վերանորոգումից հետո մի բան էլ խեղճ մարդն էր պարտք մնում… ամուսնու բացակայության դեպքում հորաքույրս նրա արածը շատ էր գովում, բայց ամուսնու ներկայությամբ տնաշենը այդ արածը դիտավորյալ վատաբանում էր… ասում էր՝ թող երես չառնի, շատ բան չէ, պարտավոր է/

մ̊խ, գ. - մահ.- Խա, խօրքուրըս մ̊ռթի վըրէն մ̊խտ էր, մ̊ռթը հիրնից շ̊տ էր վախէնում… տեղից էլ վախկոտ մ̊ռթ էր. էրազին կ̊տուն հընգէր էր հիդեվը՝ վախից լիզուն կ̊պ էր հընգե, ̊նկ̊պ ձ՛էներ էր խանե, խօրքուրըս մէ կերպ զառթընցըրէր էր… Հա՛ մ̊սում էր՝ տըղա ջան, Էրկու մ̊խը մէ մ̊խ ա… /Հա՛, հորաքույրս ամուսնուն իշխում էր, ամուսինը իրենից շատ էր վախենում… էությամբ էլ վախկոտ մարդ էր. երազուն կատուն իր հետևից էր ընկել, վախից լեզուն կապ էր ընկե, անկապ ձայներ էր հանել, հորաքույրս մի կերպ արթնացրել էր… Միշտ ասում էր՝ տղա ջան, երկու վախը մի մահ է…/

մ̊խաթ մ̊եղ // մ̊խատ, գ. - մեծ, մախաթ ասեղ.- Խօրքուրըս, ճիշտ ա, բայէվօյ կընիկ էր, համ էլ՝ շ̊տ մ̊քրասէր, բ՛այց ձ՛եռից բ՛ան չէր գ՛ալում, իմալ մ̊սում՝ իշի վոռը

մա̂խատ բզել չէր զիդում… /Հորաքույրս, ճիշտ է, համարձակ կին էր և շատ մաքրասեր էր, բայց որևէ գործ անել չգիտեր, ինչպես ասում են՝ էշին բզել չէր կարողանա…/

մա̂ղ ա̂նել, չբ. - մաղել.- Շա̂՛տ շուտ կընանիքի խէտ գ՛ացէր էր կօլխօզի կա̂լը մա̂ղ ա̂նելու, բ՛այց չէր բաշարե, օղակավարը զարմացէր էր, յետօ վըրէն խօսացէր էր. էս խօրքուրըս ըտուն բ՛ըշտէր էր, խասէր ին հիրար, ծա̂մապօթիկ ին ա̂րե, դը կընգա կըռիվն իմալ ա հըլնում… էս կօլխօզնա̂խակէն խօրքուրիս կէսրարի խէտ մօտ ա հէլե, խընթըրե, վոր խօրքուրիս է՛լ կօլխօզ չըղըրկեն… /Շա՛տ տարիներ առաջ կանանց հետ գնացել էր կոլտնտեսության կալատեղ՝ մաղ անելու, բայց չէր կարողացել, օղակավարը զարմացել էր, հետո նախատել էր, էս հորաքույրս դրան խիստ պատասխան էր տվել, իրար քաշքշել էին, մազեր պոկել, դե կանաց կռիվն ինչպե՛ս է լինում… կոլտնտեսության նախագահը հորաքրոջս սկեսրայրի հետ մոտ է եղել, խնդրել է, որ հորաքրոջս այլևս կոլտնտեսություն աշխատանքի չուղարկեն…/

մա̂ղազա (արաբ., թրք.), գ. - քարանձավ

մա̂ղալ, գ. - խորոված պատրաստելու հարմարանք

մա̂ճառ, գ. - չհասած գինի

մա̂մա̂չի, գ. - ծառա

մա̂միկ, գ. - տատ.- Հառէչ կընանիքը շուտ ին ծերանում, սա̂ղօր ջ՛ուր ին կըրում, լըվասկ ին ա̂նում, թունդիր ին վառում, խաց ին թըխում, ճա̂շ ին էփում, տա̂վար-մա̂լ ին ա̂նում… իմ մա̂միկը մէ բ՛ուռ էր դ՛առցե… հիրա թայ կընանիքը մըկա՛ խաքուն-խըփուն, քըսվուկ-պըռտըվուկ դ՛ուս են գ՛ալում, գ՛ոռծի յեն էթում, վոշ մէ բ՛անից յետ չեն հընգում… /Առաջ կանայք շուտ էին

ծերանում, ամբողջ օրը ջուր էին կրում, լվացք էին անում, թոնիր էին վառում, հաց էին թխում, ճաշ էին եփում, անասուններին էին հոգ տանում… իմ տատը մի բուռ էր դարձել… իր հասակի կանայք այժմ գեղեցիկ հագնված, հարդարված դուրս են գալիս, գործի են գնում, ոչ մի բանից հետ չեն մնում/

մա́մշախոտ, գ. - մամշածի հոտը

մա́մշել, չբ. - բորբոսնել

մա́մպաս // մա́մպաստ (ռուս.), գ. - կոնֆետի տեսակ

մա́մռօտել, նբ. - մամռոտվել

մա́յա (պրսկ.), գ. - 1.պանրի պատրաստման նյութ՝ ստացված պանրի շիճուկից, կովի ստամոքսից, 2.դրամագլուխ

մա́յիլ մընալ (մայիլ /արաբ., թրք.), չբ. - հմայվել

մա́յլմ (արաբ., թրք.), գ. - թաղ.- Հիրկընեց մա́յլի կընանիքը հավքըվում ին մեր պա́տի տա́կը. ջ՛ոչերը նըստում ին տա́տիկիս կող ու կուշտը՝ իշավոտնուկի վըրէն, ջա́յէլներն էլ, շա́տ գ՛ախ ճըժերը գ՛ըրկըներին, կա́յնում ին կողի խէտ, ջ’ոչէրի կըսէքն ին լըսում /Իրիկունները թաղի կանայք հավաքվում էին մեր պատի տակ. մեծահասակները նստում էին տատիս կողքերը՝ իշոտնուկի վրա, ջահելներն էլ, սովորաբար երեխաներին գրկած, կանգնում էին մոտները, մեծերի զրույցներն էին լսում/

մա́յլա́թ, գ. - արժեք.- Հարէվնի պա́տի տա́կն էլ տըղամա́ռթիքն ին հավքըվում, ա́շխըրքի վեր ու դ՛ըրից ին խօսում, գ՛եղի նօրութուններն ին հիրար պա́դմում. ջա́յէլները ըստուն-ընդուն ձ՛եռ ին ա́ռնում, ծըղզում ին, մէգ-մէկ էլ ըտոնց ջ՛ըրերը մէ հառվօվ չին էթում, բօռբըռում ին, հիրար ա́նպա́տիվ խօսկեր ին ա́սում… մէկը մէկին ա́սում էր՝ քօ մա́յլա́թն ի՛նչ ա, էն մէկն էլ ըտուն էր ա́սում՝ բը քօ

մǖյլǖթն ինչ ա… ջ՛ոչէրից մէկն էլ ըտոնցը սǖստում էր, ǖսում էր՝ ձ՛էնըներըտ կըդրէք, էրկըսիտ մǖյլǖթն էլ մէ բ՛ան չէ… /Հարևանի պատի տակ էլ տղամարդիկ էին հավաքվում, աշխարհի իրադարձություններից էին խոսում, գյուղի նորություններն էին իրար պատմում. Ջահելները արան-նրան էին ծաղրում, ծիծաղում էին, մեկ-մեկ էլ գժտվում էին, գոռգոռում էին, իրար անպատվում… մեկը մյուսին ասում էր՝ դու անարժան ես, մյուսն էլ հակադարձում էր՝ անարժանը դու ես… մեծերից մեկն էլ դրանց սաստում էր, ասում էր՝ լռե՛ք, երկուսդ էլ անարժան եք/

մǖյլǖ-մǖյլǖ, մկ. - թաղ-թաղ.- Էտենց մǖյլǖ-մǖյլǖ հավքըվում ին պǖտէրի տǖկը, ǖսում-խօսում ին, քընէլու գ՛ախ նոր ցըրվում ին տըները… /Այդպես յուրաքանչյուր թաղում հավաքվում էին պատերի տակ, ասում-խոսում էին, քնելու ժամանակ նոր գնում էին տուն/

մǖյմուղի, գ. - ոսկե դրամ.- Մǖռթիք հանգիստ հիրանց խըմար ǖխշատում ին, ǖբրում ին, հէլածօվ բ՛ավարարվում ին. ունէցածները մըկավա նըման էտա յեռախօսներն ու ǖփտօները չէր, էն գ՛ախ շուշեղենօվ ու մէբէլօվ ին թըռնում… վոր ǖսեմ՝ էտենց վոսկեղեն էլ չըկար. մէ քանի մǖյմուղի վիրը կǖր՝ գիդում էր՝ էտի յǖքǖ հարըստութուն ա… /Մարդիկ իրենց համար հանգիստ աշխատում էին, ապրում էին, եղածքվ բավարարվում էին. Հիմիկվա պես ունեցածները այդ հեռախոսներն ու ավտոմեքենաները չէին. այն ժամանակ հպարտանում էին ապակեղենով ու կահույքով… ասեմ, որ այդքան ոսկեղեն էլ չկար. ո՛վ մի քանի հին ոսկեդրամ ուներ, կարծում էր՝ դա ահագին հարստություն է…/

մǖյրǖմ (արաբ.) - պակասություն, կարիք.- Ժօղօվուռթը շǖտ բ՛անի մǖյրǖմ չէր մընում. շǖ՞տ ին գիդում՝ ǖխշարն ինշ կǖ,

ինչ չըկա… /Ժողովուրդը շատ բանի կարիք չուներ. Շա՞տ էին իմանում՝ աշխարհում ի՛նչ կա, ինչ չըկա…/

մա̈ն գ՛ալ, չբ. - 1. շրջել, 2. որոնել, 3. ընկերություն անել /տղա-աղջիկ/.- Շա̈տ չէ, բ՛այց մա̈ռթ էլ կա̈ր՝ էթում էր սա̈նատօրյա, ծօվ, մա̈ն գ՛ալու… /Շատ չէ, բայց մարդ էլ կար՝ գնում էր առողջարան, ծով, շրագայության/

մա̈նգա̈նա̈ (թրք.), գ. - 1.մամլիչ, 2.կեռ

մա̈նգա̈նա̈ վողներ, ած. - կեռ ոտքեր ունեցող.- Մէ տա̈րի էտա մեր Սէփօյ Յերունը գ՛ացէր էր Յապատօրյա, էկէր էր, մա̈յլի կընանիքի դ՛էմը խըպառտցէր էր, թէ՝ մըտա ծօվը լօկըցա. Խամբօյ Հըռօզը վէրցէր էր ա̈սէր էր՝ թումբընօ՞վ իր մըղնում ջ՛ուրը, թէ՞ էտա մա̈նգա̈նա̈ վողներըտ խըլղի տըղամա̈ռթիքի դ՛էմը բ՛ացում իր, հընգում իր օյին… /Մի տարի մեր Սեփոյի Երունը գնացել էր Եվպատորիա, եկել էր, թաղի կանանց մոտ հպարտացել էր, թե՝ մտա ծովը լողացա. Համբոյի Ռոզան ասել էր՝ վարտիքո՞վ էիր ջուրը մտնում, թե՞ այդ կեռ ոտքերդ օտար տղամարդկանց առաջ բացում էիր, ասպարեզ մտնում/

մա̈նզզիլ (արաբ., թրք.), գ. - տարածություն, չափ

մա̈նզըղել, նբ. - մանզաղով քաղել

մա̈նղա̈կ, գ. - *բանջար է*

մա̈նղըր ու բ՛էտ - մեծ ու փոքր

մա̈նղըրաբ՛անիկ, ած. - մանրակրկիտ աշխատանք

մա̈նղըրից, մկ. - քիչ-քիչ

մա̈նղըր-մունղըր, ած. - մանր-մունր

մա̈նղըրցընել, նբ. - մանրացնել

մա̈նէթ // մէթ (ռուս.), գ. - ռուբլի

մա̈նթըրած հընգընել, չբ. - հանկարծակիի գալով՝ շփոթվել

մնուկ, գ. - մանուկ, երեխա.- Մէրը մնուգն ուրացե /Անտեսվում է հարազատությունը/

մնուկ մռթ - գործածվում է *դ՛ու մնուկ մռթ հըլնես* արտահայտության մեջ, որը ասվում է, երբ մեկը հանդգնում է անցանկալի մի բան անել.- Դ՛ու մնուկ մռթ հըլնես՝ իմ խօր բ՛արեվը չառնե՞ս /Դու այնքան հանդուգն լինես՝ իմ հոր բարևին չպատասխանե՞ս/

մշինա (ռուս.), գ. - մեքենա

մշվել, չբ. - 1.նիհարել, 2.քրքրվել

մշվուկ, ած. - նիհարած

մջլ, գ. - ժամանակ, հնարավորություն

մռ, գ. - փայտի ծեղ, մանր փշիկ

մռդ (պրսկ.), ած. - մարդկային, ձեռքաց

մռդնկ (պրսկ.), մկ. - առատաձեռնորեն

մռդընալ, չբ. - հանկարծ առատաձեռն դառնալ

մռթ, գ. - 1. մարդ, 2. կնոջ ամուսին.- Մռթ էլ կ՛, մռթ էլ /Բոլոր մարդիկ միանման չեն/

մռթ ու կընիկ հըլնել, չբ. - ամուսինների պես լինել

մռթ ռնել - ամուսնանալ /կինը/

մռթաբօյ, ած. - մարդու հասակի չափ

մռթաթող, ած. - ամուսնուց բաժանված /կին/

մռթաթող հըլնել, չբ. - ամուսնուց բաժանվել

մռթաթող նել, նբ. - մեկի՝ ամուսնուց բաժանվելու պատճառ դառնալ

մռթախավան, ած. - մարդ հավանող.- Վոնչ մառթանըման ա, վոնչ մառթախավան ա /Շնորհք չունի, ուրիշներին էլ չի հավանում/

մռթախոտ, գ. - մարդկային շնորհք

մռթահաշիվ - մարդ համարվելը՝ ճանաչվելը

մåռթամեռ,ած. - ամուսինը մեռած

մåռթամէչ հըլնել, չբ. - մարդկանց հետ շփվել, ճանաչվել

մåռթամըչի // մåռթամըչու, ած. - 1.ճանաչված, ականավոր, 2.դուրս գալու /հագուստ/

մåռթամօտ, ած. - շփվող

մåռթանըման, ած. - մարդկային կերպարանք ունեցող

մåռթավարի, մկ. - մարդավարի

մåռթատեղ դ՛ընել, նբ. - հարգանքի արժանացնել

մåռթացու, ած. - ամուսնանալու /աղջիկ/

մåռթի էթալ, չբ. - ամուսնանալ

մåռթի տåնել, նբ. - հարս տանել

մåռթի տալ, նբ. - ամուսնացնել

մåռթօվ կընիկ, գ. - ամուսին ունեցող կին

մåռլå (ռուս.), գ. - մառլա

մåռնապետ, գ. - մառանապետ

մåռջ գ՛ալ, չբ. - գրազ գալ

մåռս (թրք.) - նարդու՝ կրկնակի արժեքով հաղթություն

մåռսել, նբ. - 1. կերակուրը ստամոքսում յուրացնել, 2. Հանցանքի համար չպատժվել

մåսåլå (արաբ., թրք.), գ. - զվարճալի պատմություն, առակ

մåսխարա (արաբ.), ած. - զվարճալի, զվարճաբան

մåստը բ՛ըռնել, չբ. - բնավորությունը հասկանալ, հարմարվել

մåսուլ, գ. - 1.կաթնամթերք, 2.բերք

մåսուր, գ. - մասուր

մåտ, գ. - մատ.- Մåղներըղ խէտը կուտիր /Շատ համեղ էր/

մåտ թափ տալ, չբ. - մեկին նախատել՝ մատը նրա վրա թափ տալով

մåտ տալ դըզըզբ՛ուն - հրահրել

մ՛ատ տալ ղըզըզը՛ուն, քաշվել կըրաղ - հրահրել ու չքմեղ ձևանալ

մ՛ատաղ, գ. - զոհաբերություն.- Է՛լի յեմ ՛ասում՝ ՛աղն ա կէրե մ՛ատաղը /Դարձյալ ասում եմ, որ նկատի եմ առնում որոշ հանգամանքներ/

մ՛ատաղ ՛անել, նբ. - 1.մատաղ անել, 2.զոհաբերել

մ՛ատաղ հըլնել, չբ. - 1.իրեն զոհաբերել, 2.իր սերը և նվիրվածությունը մեկին հայտնելու արտահայտություն

մ՛ատել, չբ. - մատով ստուգել, համը տեսնել

մ՛ատէ-յեղընգէ հընգընել, չբ. - ձեռքով որևէ գործ անելու անընդունակ դառնալ

մ՛ատը խառը հըլնել, չբ. /մէ բ՛անի/ - մասնակցություն ունենալ մի բանում

մ՛ատը մ՛ատին չիտալ, չբ. - որևէ բան չձեռնարկել

մ՛ատի փաթաթան ՛անել, նբ. - անընդհատ հիշեցնել, ամեն տեղ այդ մասին խոսել

մ՛ատից փուշ խանել - ըստ հնարավորին՝ որևէ կերպ օգնել

մ՛ատկըրունգ, ած. - բարձրակրունկ

մ՛ատօռ (ռուս.), գ. - շարժիչ

մ՛ատօվ նըշանց տալ, նբ. - առանձնացնել, ուշադրություն հրավիրել.- Էնենց տըղա յա՝ մ՛ատօվ են նըշանց տ՛ալում /Այնպիսի տղա է՝ բոլորից առանձնանում է/

մ՛ատօվ ՛անել, չբ. - 1.մատով կանչել, 2.մատ թափ տալ

մ՛արալ (թրք.), գ. - 1.եղնիկ, 2.գեղեցկուհի

մ՛արախում, գ. - փոշի, մառախուղ

մ՛արմ՛ամ հըլնել, չբ. - ձգտել, սպասել առիթի

մ՛արմ՛ամըթել, նբ. - մի կերպ նորոգել

մ՛արմ՛ամըշուկ, ած., մկ. - շշմած, հոգնած

մ՛արիմ-մ՛արիմ, մկ. - հանգամանորեն

մա̈րիֆա̈թ (արաբ., թրք.), գ. - շնորհք

մա̈րխօշ (պրսկ., թրք.), ած. - քաղցր ու թթվահամ

մա̈ցուկ, ած. - 1.մնացած, 2.տանը մնացած /աղջիկ/

մա̈քուր սըռտի տէր, ած. - մաքրասիրտ, ազնիվ

մեզիկ, դ. - *եւ* դերանվան հոգնակի տրականը

մեխկ, ած. - խեղճ

մեխկը գ՛ալ, չբ. - խղճալ

մեխկը վիզ ա̈ռնել, չբ. - հանցանքը հանձն առնել.- Ռույլի վըրէն քունը տա̈րէր էր, ա̈ֆտօն գ՛ացէր էր, մէկի պա̈տը բ՛ըլցըրէր էր. հինքը մեխկը վիզ էր ա̈ռե, հաաարն էլ շա̈րել էր տըվե /Ղեկին քնել էր, մեքենան գնացել էր, մեկի պատը փուլ էր տվել. ինքը հանցանքը հանձն էր առել, պատն էլ շարել էր տվել/

մեխկի տա̈կ հընգընել, չբ. - պատճառ դառնալ մեկի անհաջողության, դժբախտության

մեխկն ա̈ռնել, չբ. - անտեղի մեղադրել, կասկածել

մեծավոր, գ. - պաշտոնյա

մեղ դ՛ընել, նբ. - մեղադրել

մեղա գ՛ալ, չբ. - զղջալ, հանցանքը խոստովանել

մեղայ ա̈սսու // մեղաասու, վ. - զարմանքի արտահայտություն

մեղդ՛ըրում, գ. - մեղադրանք, մեղադրելը

մեղըր, գ. - մեղր.- Մէ ձ՛եռը յեղի մէչ ա, մէ ձ՛եռը՝ մեղըրի /Տնտեսական վիճակը շատ լավ է/

մեռել, գ. - հանգուցյալ

մեռըլոց, գ. - մեռելոց

մեռնի տուն, գ. - մեռելատուն

մեռցընել, նբ. - մեռնելու պատճառ դառնալ

մէ, թ. - մի, մեկ

մէ ա̈շխար, ած. - հսկայական քանակություն

մէ ա̈րուն, ած. - արյունակից

մէ բ՛էրան, մկ. - մի անգամ, ձնի համար /ասել/

մէ բ՛ուռ դ՛առնալ, չբ. - կծկվել, կուչ գալ
մէ բըռ, ած. - ահագին
մէ բօլ, մկ., ած. - ահագին.- Մէ բօլ խօսացինք, խընդացինք, նոր հէլանք, վէշերը դ՛ըրինք, ռ̈ռանք գ՛ացինք ռ̈յրօպօռտ, ճռ̈մփու դ՛ըրինք, գ՛ընաց /Ահագին խոսեցինք, ծիծաղեցինք, ներ ելանք, իրերը դրեցինք ճամպրուկների մեջ, առանք գնացինք օդանավակայան, ճանապարհեցինք, գնաց/
մէ բօյի, ած. - նույն հասակի
մէ գ՛ախ, մկ. - մի ժամանակ
մէ թիքռ̈, ած. - մի քիչ
մէ ժուկ, մկ. - միառժամանակ, որոշ ժամանակ
մէ խռ̈յըըթի, ած. - բնավորությամբ նման
մէ խանքի, մկ. - առանց դադարի
մէ խէլքի, ած. - նույն կերպ մտածող
մէ ծըռտիկ, ած. - շատ քիչ
մէ հալի, ած. - նույն վիճակի
մէ հավի, մկ. - շարունակ
մէ ճռ̈նգ, ած. - մի բուռ, մի քիչ
մէ ճռ̈ր ռ̈նել - մի ելք գտնել
մէ մռ̈ստի, ած. - մի բնավորության, մի խելքի
մէ մռ̈տ ճիժ, գ. - փոքր երեխա.- Լը տե՝ մէ մռ̈տ ճիժ՝ ի՛մալ սռ̈ղ խռտերը հավքեց, մէշօքները ծռ̈լեց, ճըղերը դ՛առսեց, վէղրօները տռ̈րավ դ՛ըրեց պռ̈ղվալը, մըկա յէլ սռ̈պուկներն ա լըվացում /Տե՛ս՝ փոքր երեխա՝ ինչպես բոլոր խոտերը հավաքեց, պարկերը ծալեց, ճյուղերը դարսեց, դույլերը տարավ դրեց նկուղը, հիմա էլ սապոզներն է լվանում/
մէ շռ̈պիկ միս, գ. - թեթև զիրություն, քաշ
մէ պըդղունց, ած. - մի քիչ
մէ պըստի, մկ. - մի քիչ

մէ սմնղըրի կըտավ հըլնել - իրար շատ նման լինել
մէ վախտ, մկ. - մի ժամանակ
մէ տմկ մըտածել, չբ. - խորը չմտածել
մէ տմն կընիկ - տան ողջ հոգսը իր վրա կրող տնտեսուհի
մէ տմն սուն - ընտանիք պահող, ընտանիքի հույս
մէ տմրի, մկ. - անցյալում, մի տարի
մէ ցավի գ՛ալ, չբ. - ինչ-որ հիվանդություն ձեռք բերել.- Հէքուց մէկէլօր մէ ցավի գ՛աս՝ յես ի՞նչ անեմ /Եթե շուտով ինչ-որ հիվանդություն ձեռք բերես, ես ի՞նչ անեմ/
մէ փէշ, ած. - շրջազգեստի կամ կիսաշրջազգեստի քղանցքը՝ իբրև տարողության չափ
մէ փըշուր, ած., մկ. - շատ քիչ
մէ փըռթուճ // մէ փըռթիկ, ած. - շատ քիչ
մէմմիտ, ած. - միամիտ, միամիտ ձևով, պատահաբար
մէբէլ, գ. - կահույք
մէգ - մէկ, մկ. - մեկ առ մեկ, մեկական
մէգմէկու, դ. - մեկմեկու
մէգնըվել, չբ. - 1.համագործակցել, 2.հաշտվել
մէլ (ռուս.), գ. - կավիճ (Դ.)
մէկէլ, դ., մկ. - 1.մյուս, 2.հանկարծ
մէկէլօրներըս, մկ. - մի քանի օր առաջ
մէկէն, մկ. - միանգամից
մէկէսմէկ, մկ. - միանգամից, անսպասելի
մէկը էրկու չըլնել, չբ. - տնտեսական վիճակը չբարելավվել
մէկուճմր, ած. - մինուճար
մէկումէչ, մկ. - մեկընդմեջ
մէկօրան մէկ օր, մկ. - օրերից մի օր
մէյդմն (արաբ., թրք.), գ. - հրապարակ
մէյմուն (պրսկ., թրք.), ած. - անպետք /նախատական/
մէյմուն-կմպիկ - *նախատական արտահայտություն*
մէշմ (թրք.), գ. - անտառ

մէշկ մըշկի, մկ. - մեջք մեջքի
մէշկը կօղրել, չբ. - ծանր վիշտ ունենալ
մէշտեղ, մկ. - մեջտեղ
մէշու // մէ փըշուր, ած. - մի քիչ
մէշօլ />մէ փշուր էլ/, մկ. - մի քիչ էլ
մէշօք (ռուս.), գ. - պարկ
մէչ առնել, նբ. - շրջապատել
մէտեղվել, չբ. - միանալ, իրար հետ ապրել
մէր ու կընիկ քըռֆել - հայհոյել՝ հիշատակելով մորն ու կնոջը
մէր ու քուր - 1.մայր և քույր, 2.դիմելաբառ՝ ուղղված կին զրուցակցին
մէր քըռֆել - հայհոյել՝ հիշատակելով մորը
մէրան, գ. - մակարդ
մէրացու, գ. - խորթ մայր
մէրել, նբ. - մակարդել
մէրէ - մայրիկ /դիմելաբառ/
մէրը մ՚նուզն ուրանալ - արյունակցական կապերը հաշվի չառնել
մէրոց, գ. - 1.մածուն մերելը, 2.մածնաման՝ մածունով
մէրու, գ. - ձագ բերող, մայրացու /կենդանի/
մըզմըկալ, չբ. - մկկալ
մըզմըկոց, գ. - մկկոց
մըզնանոց, գ. - մկներով լի տեղ
մըզրադ (արաբ.), գ. - մկրատ
մըզրըդել, նբ. - մկրատով կտրել
մըդմըտուկ, ած. - ճարպիկ, հնարամիտ
մըզալ, չբ. - կովի ձայն հանելը՝ առանց բերանը բացելու
մըզել, նբ. - շորը քամել
մըզեխ, գ. - ատամի արմատ
մըզմըզ (թրք.), ած. - դանդաղաշարժ, մանրախնդիր
մըզմըզալ, չբ. - դանդաղ աշխատել, հապաղել
մըզմըստալ, չբ. - ծակծկվել և թմրել
մըզրախ (արաբ., թրք.) - ցից
մըզրըխի ծիրին խանել - ցից հանել, խիստ քննադատել

մըթէլ - վերմակի, ներքնակի աստառ
մըթընդել - մթնել, մթազնել
մըթընցընել // մըթըցընել - մթնեցնել
մըթըվեր // մըթօվ - մութ ժամանակ
մըժ // մըժ-դուման, գ. - մառախուղ
մըժեղ, գ. - մոծակ, մժեղ
մըժիկ, գ. - մրջյուն
մըժօժ, ած. - մանր
մըլել, նբ. - մղել
մըլիկ, գ. - մրջյուն
մըլուլ (արաբ.) **տալ // մըլուլել**, չբ. - ուշացնել, ձգձգել
մըխալ, չբ. - ծխալ
մըխախոտ, գ. - ծխի հոտ
մըխակ-տո՛ռճին, գ. - մեխակ-դարչին
մըխել[1], չբ. - ծուխ անել
մըխել[2], նբ. - մեխել
մըխըցընել, չբ. - ուժեղ ծուխ առաջացնել
մըխկըտալ, չբ. - մղկտալ
մըխկուտ, գ. - մղկտոց, մրմուռ, կսկիծ.- Մըխկուտ զա՛նեմ սըռտիտ /*անեծք է*/
մըխոտ, ած. - ծխոտ
մըխտա՛ռ // մուխտա՛ռ (պրսկ.), ած. - 1.կեղտոտ, 2.տհաճ
մըխտա՛ռ միս, ած. - անցանկալի, մերժված անձ
մըխտըռել, նբ. - 1.կեղտոտել, 2.փչացնել
մըկա // հըմկա, մկ. - հիմա, այժմ
մըկավա, ած. - այժմյան
մըկավնէ // մըկավնուց, մկ. - այժմվանից
մըկընդ՛եղ, գ. - մկնդեղ
մըհանա (պրսկ., թուրք.), գ. - պատճառ, պատրվակ, շարժառիթ.- Հառտը՝ խախուտ, մըհանէն՝ կո՛րկութ /Բուն պատճառը թողած՝ ինչ-որ առիթ են մատնանշում/
մըղեղ, գ. - փոշենման հարդ

մըղըղել, չբ. - նիրհել
մըղըղցընել, նբ. - շատ խոսելով՝ շշմեցնել
մըղմեղ, գ. - մժեղ
մըղըըբ, գ. - իրիկնամուտ
մընձըրել, չբ. - այրվել, մոխրանալ
մընձըրցընել, նբ. - այրել, մոխրացնել
մըշախոտ, գ. - շորի այրվելու հոտը.- Թունդիր թա՛լես՝ մըշախոտ չիգա /ատ աղքատ է/
մըշել, չբ. - կիսով չափ այրվել առանց բոցի
մըշըցընել, նբ. - առանց բոցի կիսով չափ այրել
մըշկացավ, գ. - մեջքի ցավ
մըշտըկել // մըշտուկ զա՛նել, չբ. - հորթի՝ կաթը ծծելիս դնչով մոր կրծքին հարվածելը
մըչէմէչ, մկ. - ներսից ներս
մըչու, ած. - չեզոք, ոչ մեկի կողմից չլինող, միջնորդ
մըռալ, չբ. - հոգ տանել
մըռափ, գ. - նիրհ, քուն
մըռափ թափել վըրէն, չբ. - քնկոտություն ունենալ
մըռղըխել, չբ. - քնել /արհամարհական/
մըռթըները կա՛խել, չբ. - մռայլվել
մըռթըշվորել, չբ. - մռութ անել, նեղանալ
մըռթօշ, ած. - հաստ շրթունք ունեցող
մըռմըռավոր, ած. - կսկիծ ունեցող
մըռու, ած. - կծու
մըռութ, գ. - դունչ, շուրթ
մըռսել, չբ. - ցրտից հիվանդանալ, ցրտահարվել
մըռսըկոտ, ած. - շուտ մրսող
մըռսըցընել, նբ. - մրսեցնել
մըռսուկ, ած. - մրսած
մըռվընալ, չբ. - կծու դառնալ
մըռտըբ, ած. - անմարդկային, ժլատ
մըռփել, չբ. - մրափել /արհամարհական/
մըսակեր, ած. - միս ուտող

մըսամօլ, գ. - աչքի մեջ աճած ավելորդ միս
մըսաջ՛ուր, գ. - արգանակ
մըսացու, ած. - մորթելու կենդանի
մըստըկալ, չբ. - հետևի ոտքերով հարվածել /ավանակը/
մըստըկան, ած. - հարվածող, իրեն մոտ չթողնող
մըվալ, չբ. - մլավել
մըտախան ա̃նել, նբ. - մոռանալ
մըտաճմունք, գ. - հոգս, ծանր մտածմունք
մըտէն գ՛ալ, նբ. - հանկարծ հիշել
մըտէն էթալ, նբ. - մոռանալ
մըտէն հըլնել, նբ. - չմոռանալ, հիշել
մըտէն հընգել, նբ. - հանկարծ հիշել, մտաբերել
մըտէն մընալ, նբ. - չմոռանալ
մըտէն պա̃խել, նբ. - չմոռանալ
մըտկամօլոր, ած. - անուշադիր, ցրված
մըտկափոխ, ած. -1. հղի, 2.միտքը փոխած
մըտկափոխ հըլնել, չբ. - միտքը փոխել
մըտկափոխ ա̃նել, նբ. - համոզելով միտքը փոխել
մըտկել, նբ. - մտածել
մըտկէն /մըտկից/ խանել, նբ. - 1.մոռանալ, անուշադրության մատնել, 2.հրաժարվել
մըտկի մէչը, մկ. - մտովի, մտքում
մըտկի տա̃կ հընգընել, չբ. - մտահոգվել
մըտկին դ՛ընել, նբ. - մտադրվել
մըտկին հըլնել, նբ. - մտադրված լինել
մըտկին տեղ հըլնել, չբ. - համաձայն լինել
մըտկօվ հընցնել, նբ. - մտքով անցնել
մըտցընել, նբ. - ներս մտնել տալ
մըրել, նբ. - 1.մուր քսել, 2.խիստ քննադատել, անպատվել
մըրկա̃թ, գ. - առաստաղից կաթող մրաջուր
մըրկել, նբ. - այրել
մըրոտ, ած. - մրոտ

մըրօտել, նբ. - մուր քսել
մըքըլկել // մըքըռել, չբ. - գորշ ամպեր կուտակվել
միդն էթալ, նբ. - մոռանալ
միդն հընգնել, նբ. - հիշել
միժնեկ, ած. - տարիքով միջինը
միլիցա (ռուս.), գ. - ոստիկան
միլլա̈թ (արաբ., թրք.), գ. - ցեղ, ազգ
միյնա̈կ // մինա̈կ, մկ. - մենակ
միյնա̈կ-միյնա̈կ, մկ. - մենակ-մենակ
մինդա̈ր (թրք.), գ. - բարակ ներքնակ՝ վրան նստելու համար
միչինգ, գ. - մեծ բաղարջ, որի մեջ դրամ են դնում, և ով հայտնաբերեց դրամը, տարին նրա համար հաջողակ է լինելու
միս ա̊նել, չբ. - մսացու կենդանին մորթել
միսը ուտել, թօղել օսկըռները - մեկին շատ նեղել, չարչարել
միսն ուտել, նբ. - շատ չարչարել
միտը բ՛էրել, նբ. - նորից հիշել
միտը հընգնել, նբ. - հիշել
միտը մընալ, նբ. - հիշել
միտը պա̊խել, նբ. - չմոռանալ
միտը քըցել, նբ. - մտաբերել
միտկ ա̊նել, չբ. - մտածել, միտք անել
միտկը փօխել, չբ. - որոշածից հրաժարվել
միրաթ (արաբ., պրսկ.), ած. - անտեր.-էն միրաթ մա̊ցուկ թուխտը ինչ հէլավ /էն անտեր մնացած թուղթն ի՞նչ եղավ/
մոմ դ՛առնալ, չբ. - տկարանալ, նիհարել
մոմ վառել - 1.մոմ վառել, 2.շնորհակալ լիել աստծուն
մութ ա̊շխարք - հետամնաց, անտեղյակ
մութը գ՛էտինը տըփել // մութը տալ // մութն հընգնել, չբ. - մթնել
մուլք (արաբ.), գ. - անշարժ գույք, ունեցվածք
մուխ, գ. - ծուխ
մուխ ա̊նել, չբ. - ծուխ առաջացնել

մուխ ա՜ռնել, չր. - ծխել

մուխ խանել, չր. - ծուխ արձակել

մուխ կ՜ապել, չր. - ծխով ծածկել

մուխա՜նա՜թ, ած. - թիկունքից հարվածող, նենգ

մուխա՜նա՜թութուն ա՜նել, չր. - նենգություն անել, պայմանավորվածությունը չարամտորեն խախտել

մուխտէջ, գ. (արաբ, թրք.) - կարոտ, հույս

մուխտէջին հընգընել, չր. - մեկի վրա հույս դնել, մեկի օգնությանը դիմել

մուղառթ // մուղաթ (արաբ., թրք.) - հոգածու, ուշադիր

մուղառթ //մուղաթ մընալ, չր. - ուշադիր լինել, հսկել.- Հիրանը շ՜ատ մուղառթ ա /Իր հանդեպ շատ զգուշավոր է/

մուղուր գ՛ալ, չր. - խոստովանել

մուճուճուրիկ, ած. - փոքր աչքեր ունեցող

մույնա՜թ // մինա՜թ (արաբ, թրք.), գ. - նախատինք՝ ակնկալիքը չիրականանալու համար

մույնա՜թ գ՛ալ, չր. - մեկի վրա նեղանալ՝ իր ակնկալիքը չարդարացնելու համար

մույնըթի տա՜կ մընալ, չր. - մեկին պարտական մնալ

մունդա՜ռ (պրսկ., թրք.), ած. - կեղտոտ

մունդըռնեկ (պրսկ., թրք.) - նախատական բառ

մուշ-մեղավոր, ած. - անմեղ ձևացող

մուշտա՜րի // միշտա՜րի (արաբ., թրք.), գ. - գնորդ, հաճախորդ

մուշտուլուղ (թրք.), գ. - ուրախալի լուր, ավետիս, ավետիս բերողին տրված վարձ

մուշտուկ, գ. - ծխամորճ

մուռ, գ. - ոխ, վրեժ

մուռ խանել, չր. - վրեժ լուծել

մուռ պ՜ախել, չր. - քեն պահել

մուր ու լեղի ուտել, չր. - ամեն կերպ փորձել համոզել

մուր ու մըզրաղ հըլնել - համառել, աներեսություն անել

մուրազ // մուրադ (արաբ.) - փափագ, հույս
մուրազատու - խոսքը կատարող
մուրազը փորը մընալ - իղձը չկատարվել
մուրիկ-մուրիկ, մկ. - խեղճ-խեղճ, անհույս
մուրուս, գ. - մորուք
մուրուսը ձ՛եռն հըլնել - կախման մեջ լինել
մուֆտա (արաբ., պրսկ.), մկ. - ձրի, ձրիաբար
մօզ, գ. - անասուններին խայթող մեծ ճանճ
մօզըռել, չբ. - 1.ճանճի կծելու պատճառով փախչել, խրտնել, 2.կտրուկ ընդդիմանալ
մօլըրուկ, ած. - մոլորված
մօծակ, գ. - մոծակ
մօծըռել, չբ. - ծիլ արձակել
մօծիլ, գ. - կրակից թռած կայծ
մօկօնել, նբ. - հնարել, ստեր հորինել
մօմըզվել, չբ. - կպչել, պոկ չգալ
մօռ (թրք.), ած. - կարմրամանուշակագույն
մօռթ անել // մօռթել, չբ., նբ.- մորթել
մօռնալ, նբ. - մոռանալ
մօտէմօտ անել, նբ. - սիրաշահել
մօտիկ, մկ. - մոտ, մոտակա
մօտիկից, մկ. - ավելի մոտ, ավելի սերտ
մօրական, ած. - մայրական
մօրուց // մօրէ, մկ.- ծնված օրից
մօրքուր, գ. - մորաքույր
մօրքուրօղլի, գ. - մորաքրոջ որդի

Յ

յա[1], ձ. - անհամաձայնության, դժգոհության ձայնարկություն
յա[2] (թրք.), շ. - կամ.- Յա աղն ա պակաս, յա մաղը /Ինչ-որ կարիք ունի, որ ցույց չի տալիս/

յաբախտի, մկ. - բախտի քմահաճույքին թողած
յա դ՛ուռն ա, յա հէռթիսը - շուտով
յա թէ չէ, շ. - կամ թե չէ
յաբու, գ. - ծերացած ձի
յադ (պրսկ., թրք.), ած. - օտար
յադա́կ (թրք.), գ. -ամուսնուց բաժանված կնոջ՝ հետը բերած երեխա
յադընալ, չբ. - օտարանալ.- Բ՛արէկամը չէթալ-գ՛ալօվ յադընում, յադը էթալ-գ՛ալօվ բ՛արէկամ ա դ՛առնում /Բարեկամը կապը խզելով օտարանում է, օտարը շփվելով մտերիմ է դառնում/
յազվա, գ. - խոց, կպչուն /մարդ/
յազվա հըլնել // յազվընալ, չբ. - կպչել-պոկ չգալ
յալանչի (թրք.), գ. - ծաղրածու
յալնիշ (թրք.) հըլնել, չբ. - թյուրիմացության մեջ լինել
յախա (թրք.), գ. - օձիք
յախա թախտըփել, չբ. - դժգոհել, բողոքել /կարող է ուղեկցվել օձիքը թափ տալով/
յախնի (պրսկ., թրք.), գ.- մսով, կարտոֆիլով և առատ սոխով ճաշ
յախու (թրք.), գ. - հեքիմական պատրաստուկ, սպեղանի
յախու քըցել, չբ. - հեքիմական պատրաստուկը կապել մարմնի՝ բուժման կարիք ունեցող մասին
յաղու (թրք.), ած. - դառը
յան (թրք.), մկ. - կողմ
յանակի, մկ. - մի կողմի վրա
տըղամա̂ռթկութուն, գ. - տղամարդկություն
տըղասկան, գ. - ծննդկան
տըղի տէր, գ. - տղա ունեցող
տըմբըզել, չբ. - ուռչել
տըմբուշկա, գ. - փոքրիկ պահարան
տըմբտըմբցընել, չբ. - քայլելիս գլուխը վերև ներքև շարժել
տըմտըմալ, չբ. - հողաշերտի՝ ճահճի պես խոնավ ու փափուկ լինելը
տընազ (արաբ.), գ. - ծաղրով նմանակում
տընազ ա̂նել, չբ. - մեկին ծաղրանքով նմանակել
տընազատեղ, գ. - հեգնանքի առարկա
տընական, ած. - տնային պայմաններում պատրաստված
տընակոլ, ած. - տնաքանդ, տնավեր
տընաշէն, ած. - *հանդիմանական բառ*

տընավարի, մկ. - ոչ պաշտոնական, տանը վարվելու ձևով
տընավորել, չբ. - տուն դնել, ընտանիք կազմել
տընատեղ, գ. - հողակտոր, որտեղ տուն են կառուցելու
տընաքանդ, ած. - տնաքանդ, նաև՝ դիմելաբառ
տընաքանդութուն, գ. - վնասակար բան
տընգըռտալ, չբ. - հատակին կամ գետնին հաստատուն չլինել, վերև - ներքև շարժվել
տընգըվել, չբ. - 1.ցցվել, անշարժ կանգնել-մնալ, 2.խրվել
տընգըվըզ, գ. - խնջույք
տընգտընգալ, չբ. - տեղում շարժվել, պարել
տընգօզ, մկ. - 1.զվարթ, աշխույժ, 2.թեթև գինովցած
տընգօզնալ, չբ. - 1.աշխուժանալ, տրամադրությունը բարձրանալ, 2.գինովնալ
տընդըղել, նբ. - տնտղել, զննել, ուսումնասիրել
տընէ մա՛ռթ, գ. - ընտանիքին մոտ մարդ
տընէ - տընէ, մկ. - նեղ բարեկամական շրջապատով, առանց ուրիշների.- Տընէ - տընէ հավքըվան, ծընունդը ա՛րին պըռծան /Նեղ բարեկամական շրջապատով հավաքվեցին, ծննդյան օրը նշեցին, վերջացրին/
տընէտուն, մկ. - տանից տուն
տընէցիք, գ. - տան անդամներ
տընվոր, գ. - տանը վարձով ապրող
տընփէսա՛, գ. - տնփեսա
տընօվի, մկ. - ամբողջ ընտանիքով
տընօվ-տեղօվ, մկ. - ընտանիքով և ունեցվածքով
տըշել, նբ. - ոտքով հարվածել
տըռա՛ղա՛շտիկ ա՛նել, նբ. - վտարել, վռնդել
տըռըզել, չբ. - ուռչել
տըռըկույտ ա՛նել, չբ. - սուտ ասել, խառնակչություն անել
տըռըվըռ, գ. - ձևականություններ
տըռճըկալ, չբ. - տըռճիկ տալ, ցատկոտելով վազել
տըռճիկ, գ. - մարդու կամ անասունի ցատկոտելը

տըռուզ, ած. - ուռած, լիքը
տըռտըռնոտել, չբ. - դեմքը վերքերով պատվել
տըսկել, չբ. - թրջել, թրջվել
տըսկուկ, ած. - թրջված
տըսնէրկու// տըսվէրկու, թ. - տասներկու
տըվածուրիկ, ած. - բնատուր
տըրակտօր (ռուս.), գ. - տրակտոր
տըրաքել, չբ. - պայթել, խիստ ատել.- Ըտու հնչկից քար կըտըրաքի
/Չար աչք ունի/
տըրէթ, գ. - անգամ
տըրըխկ, գ. - հարվածի ձայն
տըրըխկալ, չբ. - հարվածի ձայն առաջանալ
տըրըխկցընել, չբ. - հարվածել
տըրընգուզ, գ. - *մանկական խաղ*
տըրըփալ, չբ. - բաբախել, թրթռալ
տըրիվօզ (ռուս.), գ. - տագնապ
տըրումբա (ռուս.), գ. - խողովակ
տըփել, նբ. - 1.ծեծել, 2.բախել
տըփոց, գ. - ծեծ
տըփոց տալ, նբ. - ծեծել
տըփտըփցընել, չբ. - ձեռքով կամաց խփել
տըքալ, չբ. - տնքալ
տըքտըքալ, չբ. - տընքտընքալ
տիգնակըլօնձ, գ. - աչքի կոպի վրա առաջացած այտուց
տիղիթ, գ. - մեքենայի ազդանշան
տիզ, գ. - մակաբույծ միջատ
տիզ հըլնել, չբ. - կպչել, պոկ չգալ
տիլ, գ. - ցեխ
տիլ-ճըլճեխ, գ. - ջրիկ ցեխ
տիկ, գ. - կենդանու մորթուց կարված տոպրակ.- Հինքը հէլե տիկ, մնռթին նրե բէրան /Ինքը հրահրում է, ամուսինը՝ խոսում/
տիկին, գ. - տիկնիկ

տիպիշնի (ռուս.), ած. - տիպիկ
տիտիկ տալ, չբ. - նստած մնալ
տիտիկ անել // տիտել, չբ. - նստել /մնկ./
տիտօղիկ, գ. - մանկական խաղ
տիրամեռ - տերը մեռած, անտեր
տիրութուն անել, չբ. - տեր դառնալ, պաշտպանել
տիրօխնի, գ. - տերտերի կին
տիրօվի, ած. - տեր ունեցող
տուզախ (թրք.), գ. - թակարդ
տուժ տալ, նբ. - պատժել, նեղություն պատճառել
տուկ, գ. - խոտի խտացված խուրձ՝ պատրաստված կոմբայնի կողմից
տուճ, գ. - փոքրիկ կճուճ
տուն դ՛ընել - տնավորվել, տնտեսություն ստեղծել
տուն դ՛ըրօղ, ած. - աշխատանքով ունեցվածք ստեղծող, տնտեսող
տուն պախել - ընտանիքի հոգսը իր վրա կրել
տուն տանել, նբ. - հյուրասիրել, օթևան տալ
տունը բ՛առցել աքլօրի - տանը ամեն ինչ խառնել իրար.- Էկա տէնամ՝ էտա մեր անհիրես թուլեն հարէվնի ճըժէրի խէտ տունը բ՛առցե աքլօրի, մէրն էլ ըսկի ձ՛էն չըխանում /Եկա տեսնեմ՝ այդ մեր աներես երեխան հարևանի երեխաների հետ տանը ամեն ինչ խառնել է իրար, մայրն էլ բոլորովին ձայն չի հանում/
տունը մընալ, չբ. - չամուսնանալ /աղջիկը/
տունուտեղ, գ. - տուն և ունեցվածք.- Գիդը՞ւմ ես՝ էնի թառթըփօվ հավքե, տունուտեղ ա դ՛ըրե, բ՛այց հէսօրան օրը բ՛անի տեղ դ՛ընօղ չըկա /Գիտես՝ նա մեծ դժվարությամբ հավաքել, տուն և ունեցվածք է ստեղծել, բայց այսօր գնահատող չկա/
տուռնա-տուռնա, ած. - մարմնի՝ ուռուցքներ ունեցող մակերես
տուտ, գ. - ծայր, սահման

տուտը բ՛անալ - սկսել.- Էտի վոր բ՛օղօքի տուտը բ՛ացեց, էլ դ՛էմն ա՚ռնել չըլնի /Դա որ սկսեց բողոքել, ընդհատել չի լինի/
տուտը բ՛ըռնել - ծայրը գտնել
տուտուզ /մնկ./, գ. - հետույք
տուր տալ, նբ. - ծեծել
տուրուտըփոց ա՚նել, չբ. - ծեծի ենթարկել.- Էս մեր Գ՛էվօն գ՛ացէր էր մըտէր էր ըտոնց տունը, տուրուտըփոց էր ա՚րե, միլիցէն էկէր էր, տա՚րէր էր /Էս մեր Գևոն գնացել մտել էր դրանց տուն, ծեծի էր ենթարկել, ոստիկանը եկել տարել էր/
տուֆլիկ (ռուս.), գ. - կանացի բարձրակրունկ կոշիկ
տօբրակ (թրք.), գ. - տոպրակ
տօլմա (թրք.), գ. - *կերակրատեսակ*
տօկ (ռուս.), գ. - էլեկտրականություն
տօկը զա՚նել, չբ. - հոսանքահարվել.- Հիշկա՝ լարէրի մէչը բ՛աց տեղ չըլնի, ճիժ են, հանգառծ չըկըպէն՝ տօկը զա՚նա /Նայի՛ր, լարերի մեջ բաց տեղ չլինի, երեխաները հանկարծ չդիպչեն՝ հոսանքահարվեն/
տօկի տալ, նբ. - 1.հոսանքահարել, 2.իրար հետևից արագ-արագ ուտել
տօմաթ (ռուս.), գ. - տոմատ
տօն տալ, չբ. - քաջալերել, աջակցություն հայտնել
տօռմուզ (ռուս.), գ. - արգելակ
տօտա (ռուս.), գ. - կին անձնավորությանը դիմելու բառ
տօտիկ // տօտօ /մնկ./, գ. - ոտք
տօտօքի կա՚յնել, չբ. - շտապել, պատրաստվել գնալ
տօքանել, նբ. - տուզանել
տօքանք, գ. - տուզանք

Ց

ցախ, ած. - կոշտ /մակերևույթ/
ցախավել, գ. - ճյուղերով կապված ավել.- Հառէչ գ՛եղը բ՛էրում ին ցախավել ին ծ՛ախում, մըկա էտենց բ՛ան չըկա, կ՛ամ ճ՛ամփէքից ենք ՛առնում, կ՛ամ բազառի կըշտից /Առաջ ցախավելը բերում էին, գյուղում վաճառում, հիմա նման բան չկա, կամ ճանապարհներից ենք գնում, կամ շուկայի մոտից/
ցամաք, ած. - անշաղախ, զուրկ, նաև՝ առանց այլ կերակուրի /ցամաք խաց/
ցամաք ձ՛որի ՛աղվէզ, ած. - նիհար.- Տընաշէնի տըղէն հընչա՞ էտենց զաբընե, հէլե ցամաք ձ՛որի ՛աղվէս /Տնաշենի տղան ինչո՞ւ է այդպես նիհարել, շատ է հյուծվել/
ցամքել, չբ. - ցամաքել
ցամքըցընել, նբ. - 1.ցամաքեցնել, 2.կաթնատու անասունի կիթը որոշակի ժամկետով դադարեցնել
ցայել, նբ. - ողողել
ցան, գ. - աթար.- Մէկ էլ կըտէնիր՝ խէրըս ՛ամբըրոցը կըքանդէր, կ՛ասէր տեղը փօխում եմ, ՛արէք ցաները կըրէք /Մեկ էլ կտեսնեիր՝ հայրս աթարի դեզը կքանդեր, կասեր՝ տեղափոխում եմ, եկեք աթարները կրեք/
ցանվել, չբ. - հեռանալ, աչքին չերևալ
ցանցառ, ած. - 1. նոսր, 2. թեթևամիտ
ցավ գ՛ալ, չբ. - գթալ, ափսոսել.- Ցես քեզի ցավ եմ գ՛ալում /ես քեզ ափսոսում եմ/
ցավ տալ, նբ. - ցավեցնել, ցավ հասցնել
ցավ/ը/ քաշել, չբ. - 1.հոգալ, 2.երկունքի ցավերով բռնվել
ցավալ, չբ. - 1. ցավել, 2. գթալ, ափսոսել, հոգատար լինել. - Դ՛ու ընձի ըսկի չես ցավում /Դու իմ հանդեպ բոլորովին հոգատար չես/
ցավը բ՛ըռնել, չբ. - 1. սկսել ցավել, 2. երկունքի ցավերը սկսվել

ցավը զմնել սիռտը, չբ. - շատ ուժեղ ցավել.- Էնենց դ՛ուռը շըրըխկցըրիր, մմտըս մընաց տմկը, ցավը զմնեց սիռտըս /Այնպես դուռը շրխկացրեց՝ մատս մնաց տակը, շատ ուժեղ ցավեց/

ցավը թօղել, չբ. - այլևս չցավել.- Յմքմ գ՛ախ ձ՛եռըս պմխի պմղ ջ՛ըրի տմկ, նոր ցավը թօղեց /Աիազին ժամանակ ձեռքս պահեցի սառը ջրի տակ, նոր ցավը թողեց/

ցավը կըղըրել, չբ. - ինչ-որ բան անելու կարիքը չունենալ

ցավցընել, նբ.- ցավեցնել

ցեթ, գ. - մեզ /կենդանիների/, նաև՝ մարդկանց /վիրավորական/

ցեռ, գ. - անասունի ջրիկ կղկղանք

ցեփ (ռուս.), գ. - շղթա

ցէթան, ած. - 1.տակը միզող, 2.փնթի

ցէթել, չբ. - միզել

ցէմենդ (ռուս.), գ. - ցեմենտ

ցըլ զմնել, չբ. - սահելով խաղալ.- Ճըժերը դ՛ուռը էնքան ցըլ ա զմնած, չենք կմնում հընցնենք, վոտըներըս թմլում /Երեխաները դռանը այնքան են սահելով խաղացել, որ չենք կարողանում անցնել, սայթաքում ենք/

ցըլալ, չբ. - սահել

ցըլըցընել, նբ. - սահեցնել

ցըլիկ, գ. - սահուն

ցըխել, նբ. - փշրել և սփռել

ցըխըցընել, նբ. - ջարդել

ցըխկըվել, չբ. - ատել, զզվել

ցըխկըվցընել, նբ. - զայրացնել, նախանձից պայթեցնել

ցըխուկ, ած. - փշրված

ցըմփոր, ած. - մեծափոր

ցընգցընգնոտել, չբ. - վերքերով պատվել

ցընդըրմիշ հըլնել, չբ. - խելքը պակասել, հիշողությունը կորցնել

ցընդուկ, ած. - ցնդած, խելապակաս

ցընէ, ած. - փնթի

ցընոտ, ած. - փնթի
ցըռան, ած. - 1.փորլուծ ունեցող, 2.վախկոտ.- Ցըռան կօվը նա̊խրի ա̊նունն ա̊վիրում /Անշնորհք մեկը բոլորին հեղինակազրկում է/
ցըռբեխ, գ. - ջրալի թրիք
ցըռել, չբ. - փորլուծ ունենալ /մարդը, կենդանին/
ցըռթել, չբ. - ձագ ունենալ /շունը, կատուն/
ցըռիկ, գ. - փորլուծ
ցըռիկ կըբնել, չբ. - փորլուծ ունենալ
ցըռտերն հընգնել, չբ. - ցուրտ եղանակ սկսվել
ցըռտին, մկ. - ցուրտ ժամանակ
ցըռցամ տալ, նբ. - նախաձեռնել, սկսել
ցըսկել // ցըսկըվել /վիրավ./, չբ.- տեղում մնալ
ցըրվել // ցըվրել, չբ., նբ. - ցրվել, նաև՝ բաժանել՝ տալ շատերին
ցըփնել, նբ. - շաղ տալ, սփռել
ցիգան (ռուս.), ած. - ագահ
ցիգանութուն, գ. - ագահություն.- Ցիգանութունը լավ բ՛ան չէ, մա̊ռթ պըտի հիր հէլածօվ բ՛ավարարվի /Ագահությունը լավ բան չէ, մարդ պիտի իր ունեցածով բավարարվի/
ցիլինդըր (ռուս.), գ. - լայնեզր գլխարկ
ցիլք (ռուս.), գ. - կրկես
ցուռտ ա̊նել, չբ. - ցուրտ լինել.- Խէրու էս գ՛ախ էնենց ցուռտ ա̊րավ, սա̊ղ բ՛երքը սըռը տա̊րավ /Անցյալ տարի այս ժամանակ այնպիսի ցուրտ եղավ, որ ամբողջ բերքը ցրտահարվեց/
ցուռտը տա̊նել - ցրտահարվել
ցուսկ, ած. - այլանդակ, սատանայական կերպարանք ունեցող
ցուցանք, ած. - բցս. ուշադրություն գրավող, խայտառակ
ցօլցըլալ, չբ. - փայլփլել
ցօնցել, չբ. - գլուխը ցնցել, բարկացած շարժումներ անել.- Կօվը իմալ վոր ցօնցեց՝ կօտռշն ա̊ռավ հուսիս, լը տե ի՛մալ ա կա̊պըտե /Կովը որ գլուխը ցնցեց, կոտոշը դիպավ ուսիս, տե՛ս՝ ինչպես է կապտել/

ցօքցօք, ած. - բարակ և երկար

ՈՒ

ուզար (ռուս.) **հըլնել**, չբ. - զազերից թունավորվել
ուդառ (ռուս.), գ. - հարված.- Գիդո՞ւմ ես՝ ախպօրըս տըղէն ի՛նչ .- ֆուդբօլ էր խաղում, էնենց ուդառ ունէր… /Գիտե՞ս՝ եղբորս տղան ի՛նչ ֆուտբոլ էր խաղում, այնպիսի հարված ուներ/
ուզել, նբ. - ցանկանալ, կամենալ.- Ուզօղի մէ հիրեսն ա սեվ, չըտըվօղի՝ էրկու /Ուզելը ամոթ է, չտալը՝ առավել ևս/
ուզընգան, գ. - հարսնախոս.- Խօրօտ ախճըկա խօր տուն հըմընօր ուզընգան գ՛ըքա, քանի մէկին խօսկ չըտըված /Գեղեցիկ աղջկա հոր տուն ամեն օր խնամախոս կգա, քանի դեռ մեկին խոսք չեն տվել/
ուժ ու կուվաթ, գ. - ուժ ու զորություն
ուժ ու կուվաթից հընգընել, չբ. - թուլանալ, տկարանալ.- Բալա ջան, ուժ ու կուվաթից հընգէր եմ, էլ յե՞փ եմ կա՛նում մէշօք շըլկեմ /Բալիկ ջան, տկարացել եմ, էլ չեմ կարողանում պարկ շալակել/
ուժ տալ, չբ. - ուժերը լարել.- Վօր մէշու ուժ տաս, յես էլ էս յանից լօմօվ բըռթեմ, սա՛լը կըշըռճենք, հա՛ /Որ մի քիչ ուժ տաս, ես էլ այս կողմից լինգով հրեմ, սալաքարը շուռ կտանք, հա՛/
ուժէ-կուդումէ հընգընել, չբ. - ուժը կորցնել
ուժը պա՛տել, չբ. - ուժը բավարարել, կարողանալ
ուժը վըրէն ա՛խտ հըլնել - մեկի վրա կարողանալ, նրանից ուժեղ լինել
ուժից հընգնել, չբ. - թուլանալ, ուժը կորցնել
ուժօվ, ած. - ուժեղ

ուժօվնալ, չբ. - ուժեղանալ.- Լավ ուժօվցէր ես, ձբրես, տըղէն պըտի ուժեղ հըլնի /Լավ ուժեղացել ես, ապրես, տղան պիտի ուժեղ լինի/
ուլերը գ՛ալ, չբ. - նյարդային, անհաշտ վիճակում լինել
ուլինգ, գ. - ուլունք
ուխ, ձ. - ուրախության ձայնարկություն
ումբռ (թրք.), գ. - կոնքի հաստ ոսկորը
ումբըր (պրսկ., արաբ., թրք.), գ. - կյանք
ումիվալնիկ (ռուս.), գ. - լվացարան
ումուդ (պրսկ., թրք.), գ. - հույս, փաղաքշական դիմելաբառ՝ ուղղված արական սեռի անձին.- Ումո՛ւդ, ըը էտա ձթօռը տու դէս, մէշու նըստեմ /Տղա՛ս, այդ աթոռը մի ի՛նձ տուր, մի քիչ նստեմ/
ումուդմեռ - *անեծք է*
ունէվոր, ած. - հարուստ.- Ունէվորը վոր խելք ու խիխճ չունէցավ, իզուր ա, բ՛անի պիտանացու չէ /Եթե ունևորը խելք ու խիղճ չունեցավ, իզուր է, բանի պետք չէ/
ուշաթափֆել, չբ. - ուշագնաց լինել
ուշկ, գ. - ուշք.- Վիր ու՛շկ, վիր մի՛տկ, վոր էտի մնցե ձֆտօյ մէչը, դ՛ուս չէկե /Ո՞վ էր հիշում, որ դա մնացել է մեքենայի մեջ, դուրս չի եկել/
ուշկ ու միտկ, գ. - ողջ ուշադրությունը.- Մեր ջնյէլի ուշկ ու միտկը հուրիշ յան ա, դ՛ու թող ձրի էս յան, քօ գ՛ոռծը չէ /Մեր երիտասարդի ուշադրությունը ուրիշ կողմի վրա է, դու թող եկ այս կողմ, քո գործը չէ/
ուշկը էթալ, չբ. - 1.ուշաթափվել, 2.շատ ծիծաղել, 3. շատ սիրել.- Մեր հըմրնի ուշկը քօ խըմար էթում, ձրի քե ուզեմ տըղիս /Մենք բոլորս քեզ շատ ենք սիրում, եկ քեզ ուզեմ տղայիս կին/
ուշկի բ՛էրել, նբ. - սթափեցնել
ուշկի գ՛ալ, չբ. - սթափվել

ուռել, չբ. - ուռչել.- Հա՚շկերըս չուռե ընդու խըմար /Նրան չեմ սիրում/
ուռել - ուռուցվորել, չբ. - շատ ուռչել
ուռել-ուռատըկել, չբ. - ուռչել /մարմինը/, գիրանալ.- Դ՛ո՛ւ հընչես էտենց ուռե-ուռատըկե, քա՞նի կիլօ յես /Դո՛ւ ինչու ես այդպես գիրացել, քանի՞ կիլոգրամ ես/
ուռթել, չբ. - հանդիպել
ուռուկ, ած - ուռած, փքված
ուռուկ գ՛ըլօխ, ած - հաստագլուխ
ուռուսվորել, չբ. - այտուցներ ունենալ
ուռցընել // ուռըցընել, նբ. - ուռչել տալ
ուտօղ-ուրացող - երախտամոռ
ուրխընալ, չբ. - ուրախություն զգալ
ուրխըցընել, նբ. - ուրախացնել

Փ

փազ ու բ՛ալնիս, գ. - փականք
փազ՛բ՛էրան, ած. - զաղտնապահ
փազել-փազըռտել, նբ. - դուռ ու լուսամուտ փակել
փա՚թա՚ (թրք.), մկ. - հավասար
փաթուսխա, գ. - սպիտակեղենի կտոր
փալախ, գ. - կոշտ անասնակեր
փալան (պրսկ., թրք.), գ. - համետ.- Էշն էլի էն էշն ա, փալանն ա փօխվե /Էությունը նույնն է, արտաքինն է փոխվել/
փա՚լա՚ա՚նք, մկ. - շատ
փալաս-փուլուս, գ. - անպետքական հագուստեղեն
փալնել, նբ. - համետել
փալնըվել, չբ. - չափից շատ հագուստ հագնել
փախլավա (թրք.), գ. - մեղրով և ընկույզով պատրաստվող թխվածք.- Խառնըսին վոր սեղանին փախլավա չըլնի,

էտի հէլավ խառնի՞ս /Եթե հարսանիքի սեղանին փախլավա չլինի, դա եղավ հարսանի՞ք/

փախծընել, նբ. - աղջիկ փախցնել ամուսնական նպատակով.- Գ՛եղ տեղ չուր մըկա յէլ ա̈խճիկ փախծընելը կա̈, ի՛մալ ա̈սեմ՝ կա̈ վոր ա̈խճիկը համաձայն հըլնում, կա̈ վոր՝ էնքան էլ չէ, բ՛այց դը՝ ջա̈յէլ են, հիրար խասկընում են, բա̈խտա̈վորում են /Գյուղական վայրերում մինչև այժմ էլ աղջիկ փախցնելու սովորությունը կա, ո՞նց ասեմ՝ պատահում է, որ աղջիկը համաձայն է լինում, պատահում է, որ այնքան էլ չէ, բայց դե երիտասարդ են, իրար հասկանում են, բախտավոր լինում/

փախճան, ած. - ամուսնական նպատակով տղայի հետ փախած աղջիկ

փախս հըլնել, չբ. - խուսափել

փամփըռնել, չբ. - ուռչել

փամփըռնուկ հա̈շկեր, ած. - կոպերը ուռած

փայ (պրսկ., թրք.), գ. - բաժին

փայ խանել, չբ. - բաժին հանել.- Էս կա̈ռտօլից ձ՛ե յէլ ենք փայ խանե, ա̈ֆտօյօվ ա̈րէք, վոր տա̈նէք /Այս կարտոֆիլից ձեզ էլ ենք բաժին հանել, մեքենայով եկեք, որ տանեք/

փայ ու բ՛աժին, գ. - բաժին

փայ ու բ՛աժին հըլնել - բաժին դառնալ

փա̈յեն (թրք.), գ. - չորացած ու փոշենման դարձած թրիք

փա̈յլէվան (պրսկ.), գ. - լարախաղաց.- Գ՛եղը վոր փա̈յլէվան էր գ՛ալում, սա̈ղ էթում ին, բ՛օլըրում ին, հիշկում ին, յալանչին էլ գ՛ըլխարկը ձ՛եռին փող էր հավքում. վորը չէր տա̈լում՝ խայտառակ էր ա̈նում, վորն էլ շա̈տ էր տա̈լում՝ գ՛օվասանք էր ա̈նում /Երբ լարախաղաց էր գյուղ գալիս, բոլորը գնում էին, շրջապատում, նայում, ծաղրածուն էլ գլխարկը ձեռքին փող էր հավաքում, ով

չէր տալիս՝ խայտառակում էր, ով շատ էր տալիս՝ գովաբանում էր/

փǘյնել, չբ. - 1.փոշենման չոր թրիքը շաղ տալ անասունի տակ, 2.շրջակայքը կեղտոտել

փաչա (պրսկ.), գ. - սրունքի մոտ մասը

փǘռ բ՛ըռնել, չբ. - մակերևույթին նստվածքի բարակ թաղանթ առաջանալ

փառաբ՛ընել, նբ. - անպատվել

փǘռղǘ (պրսկ.), գ. - վարագույր

փǘռղըխտել, նբ. - իրարից անջատված մասերը միացնել, ծածկել

փǘռիկ, ած. - ծուռ, կոր /ոտնաթաթ/

փǘռչ (պրսկ.), գ. - կավե կամ պղնձե առանց ունկի աման.- Մէ տǚրի մեր տǚն կուշտը էկած ին հառու յին փօրում, խողի տըկից խին ու մին բ՛ան գ՛ըթան, մէ խատ էլ՝ պըղընձէ փǘռչ, մըկա չեմ գիդում՝ դոր ա /Մի տարի եկել էին, մեր տան մոտ առու էին փորում, հողի տակից հին ու մին բաներ գտան, մեկ հատ էլ՝ փարչ, չգիտեմ՝ այժմ որտեղ է/

փǘս (թրք.), գ. - շրթունքների վրա առաջացած փառ

փǘսոտ մըռթըներ, ած. - շուրթերին փառ ունեցող

փատըտել, նբ. - փաթաթել

փատըտվել, չբ. - փաթաթվել, գրկախառնվել

փարա (պրսկ.), գ. - դրամ, փող

փարատիչ, գ. - թոնրի կողերը սրբելու շոր

փǘրվǘզ (թրք.) տալ, չբ. - մեկնվել, տարածվել

փափա /մնկ./, գ. - հաց

փափաղ (թրք.), գ. - գլխարկ.- Հառէչ գ՛ախ տըղամǚռթիք գ՛ըլխըներին փափաղ ա դ՛ըրած, էտի պǚդվի նըշան ա հէլե /Առաջ ժամանակ տղամարդիկ գլխներին փափախ են դրել, դա համարվել է պատվի նշան/

փափաղ ճնել, չբ. - անաշխատ եկամուտ ունենալ, օգտվել

փափաղը գ՛էտինը տըփել - մեկի /հոր կամ եղբոր/ հեղինակազրկվելու պատճառ դառնալ.- Ըտու խըմար էլ վոր մեկը խօր կըմմ ճխպօր պըճդվի խէտ խախծե, ճսած՝ փափաղը գ՛էտինը տըփիր /Դրա համար էլ երբ մեկը այնպիսի բան է արել, որ հոր կամ եղբոր համար անպատվաբեր է, ասել են՝ փափախը գետինը տփեցիր/

փափաղը ծուռ դ՛ընել - հպարտանալ.- Բ՛այց վոր մէզն էլ ուզէցե նըշանց տա, թէ հինքը հուրիշնէրից հառավել ա, փափաղը ծուռն ա դ՛ըրե, թէ՝ տէսէք, տէսէք… /Բայց երբ մեկն էլ կամեցել է ցույց տալ, թե ինքը մյուսներից առավել է, փափախը ծուռն է դրել, հպարտացել է, թե՝ տեսեք, տեսեք…/

փափուճ (պրսկ.), գ. - անկրունկ կոշիկ, հողաթափ

փափուշ (պրսկ.), գ. - մաշիկ

փեղամ - լուր, գ.

փեղամ ղըրկել, չբ. - լուր ուղարկել

փէդ, գ. - փայտ.- Շըմն ճնուն տու՝ փէդն ճռ ձ՛եռըտ /Անունը տալիս ես՝ կողքիդ է հայտնվում/

փէդ ու փիդուռ, գ. - փայտ ու տաշեղ, մանրափայտ

փէդընալ, չբ. - փայտանալ, ցրտից անշարժանալ

փէժգիր (պրսկ.), գ. - սրբիչ

փէլփըլալ, չբ. - փայլփլել

փէլքըստալ, չբ. - փայլփլել

փէճատ (ռուս.), գ. - կնիք

փէճատել, նբ. - կնքել

փէճատը զճնել, չբ. - 1.կնքել, 2.հաստատել

փէշ (պրսկ.), գ. - 1.քղանցք, 2.կիսաշրջազգեստ, 3.քղանցքը իբրև տարողություն

փէշճկ (պրսկ.), գ. - արհեստ

փէշերը ֆըռֆըռցընել, չբ. - գնալ-գալ՝ զգեստի լայն քղանցքները այս ու այն կողմ տարածելով

փէշը մրուն լըցել - կռվի պատրաստվել, կռիվ հրահրել
փէշը լիքը քար լըցել - կռիվ որոնել, հրահրել
փէշի տըկի, ած. - մոր հովանու տակ մեծացող տղա
փէշտըմալ (պրսկ.), գ. - գոգնոց
փէշքէշ (պրսկ.), գ. - ընծա, նվեր
փէջ (ռուս.), գ. - 1.վառարան, 2. մեջքի թիակ
փէսնբեղվել, չբ. - փեսայի նման գեղեցիկ հագնվել, իրեն հարդարել /տղամարդը/
փէսնփայ, գ. - հարսի կողմից փեսային բերվող բաժին, ընծա
փէքօլ ընել, չբ. - փորել, քանդել, փոշի բարձրացնել
փըդուկ, ած. - փտած
փըթիր, գ. - չորացած աթար
փըթխել, չբ. - ձվի ջարդվելը, պայթելը
փըլավ, գ. - փլավ
փըլավքամիկ, գ. - ծակոտկեն աման՝ սննդամթերք քամելու համար
փըլխել, չբ. - փշրվել
փըլուշ, գ. - օղու հումքը թթված վիճակում
փըխկ, ձ. - *քշելու, հեռացնելու ձայնարկություն*
փըխկալ, չբ. - այլևս չկարողանալ ծիծաղը զսպել
փըխփըխկալ, չբ. - ծիծաղել՝ չկարողանալով իրենց զսպել
փըխփըխկոց, գ. - թաքուն ու դժվարությամբ զսպվող ծիծաղ.- Փըխփըխկոցը հընգավ կընանիքի մէչը, հէլան խայտառակ, լասա՝ հընչի՞. ուրեմ էկե մեռնի տուն, ըտու ախճըգնէրին խառցընում՝ բիձէն ի՞մալ ա, ասում ին՝ խիվանդ ա. մըտէն գ՛ացե, վոր բիձէն էտ մեռուկն ա /Դժվարությամբ զսպվող ծիծաղ սկսվեց կանանց մեջ, խայտառակ եղան, մի ասա՛՝ ինչո՞ւ. ուրեմն եկել է մեռելատուն, մահացածի աղջիկներին հարցնում է՝ բիձան ինչպե՞ս է, ասում էին՝ հիվանդ է. մոռացել է, որ բիձան այդ մահացածն է/
փըմփըխել, չբ. - փափկել, ուռչել, բարձրանալ
փըմփուխ, ած. - փափուկ

փընթի, ած. - անմաքրասեր
փընթի պէտի, ած. - շատ փնթի
փընչըցընել, չբ. - զայրացած փնչալ
փընքալ, չբ. - զայրույթից բերանից օդի հոսք արձակել՝ չիմա-
նալով՝ ինչ անել
փըշախան հըլնել, չբ. - հնանալուց միսը փշերից անջատվել /ձկան/
փըշախան ա՛նել, նբ. - փշերը հանել
փըշատ, գ. - փշատենու պտուղը
փըշաքաղվել, չբ. - սարսռալ, մազերը բիզ-բիզ կանգնել
փըշի քօլին նըստել, չբ. - ոչինչ չունենալ
փըշի-փըշի ա՛նել, նբ. - սիրաշահել
փըշոտ, ած. - շատ փուշ ունեցող
փըշտ // փըշտա՜, ձ. - *կատվին քշելու ձայնարկություն*՝ փիշտ
փըշուր գ՛ախ, մկ. - կարճ ժամանակ, անհարմար ժամանակ.- Էս
փըշուր գ՛ախ դ՛ու հուստ էկար /Այս անհարմար պահին
դու ինչու եկար/
փըշփըշոտ, ած. - փշերով պատված
փըշօվ, ած. - ըստ անհրաժեշտության՝ դիմացինին կարգի
հրավիրող, անփութություն չհանդուրժող
փըչան, ած. - ստախոս
փըչել նըստըցընել, նբ. - հոգատարությամբ շրջապատել
փըջացընել, նբ. - փչացնել, խաթարել, դարձնել անպիտան
փըջել, չբ. - փուչ դառնալ, պատիճի ներսում չորանալ, սմքել
փըջել-սիֆտըկել, չբ. - աչքը փչանալ /անեծք/
փըջուկ, ած. - փուչ դարձած
փըռել, նբ. - բացելով գցել, տարածել
փըռըռտել, նբ. - թռցնել, իրարից խլխլել
փըռթըկալ, չբ. - փռթկալ
փըռթիկ, գ. - պատառ, կտոր, ծվեն
փըռնըչի (թրք.), գ. - փռապան
փըռչ, գ. - 1.թուփ, 2.մազ
փըռչոտ, ած. - մազակալած
փըռվել, չբ. - փռվել, տարածվել

փըռփըռնօտել, չբ. - կատաղել
փըռփըռցընել, նբ. - փրփուր առաջացնել
փըսընալ, չբ. - վատանալ, վատ զգալ
փըտոն, գ. - որևէ նպատակի համար մի քանիսի ներդրում
փըտոն դ՛ընել, չբ. - որևէ նպատակի համար միջոց ներդնել
փըսսալ, չբ. - ծակվել, և օդը դուրս գալ (գնդակը)
փըսսոց, գ. - ծակված տեղից օդի դուրս գալը
փըսսոցը խանել, չբ. - ծակել
փըստ հընցնել, չբ. - նշանակետին չդիպչել
փըստալ, չբ. - սահելով վրիպել
փըստըցընել, նբ. - 1.սահեցնելով վրիպել, 2.թեթևակի ծխել
փըսփըսալ, չբ. - շշուկով խոսել
փըսօրել, չբ. - մանրել, փշրել, դառնալ ոչ առաձգական /եփած միսը/
փըրքըվել, չբ. - 1.սայթաքել և փռվել գետնին, 2.անփույթ պառկել
փըրքըվցընել, նբ. - գետնին տապալել
փըքվել, չբ. - վիրավորված կեցվածք ընդունել, չհաղորդակցվել
փըֆ (թրք.), ձ. - *ձայնարկություն, որ արտասանվում է տհաճ հոտ զգալիս*
փըֆըցընել, չբ. - քնած ժամանակ բերանից հնչյուններ արձակել
փըֆիկ, ած. - թեթև, անհամ
փիդոն ա՛նել, չբ. - հունձից հետո արտում մնացած խոտը ձեռքերով պոկոտել
փիդռել, նբ. - պոկոտել
փիլա՛քյան (պրսկ.), գ. - աստիճան, սանդուղք
փիձել, չբ. - մեռնել
փինա՛, գ. - անհմուտ գործ
փինա՛չի (պրսկ., թրք.), չբ.- ոչ հմուտ արհեստավոր, մի կերպ գործը գլուխ բերող
փինել, նբ. - մի կերպ գործը գլուխ բերել
փիս (թրք.), ած. - վատ
փոխ տալ, նբ. - փոխարինաբար տրամադրել

փոխս հընգնել, չբ. - մի իրի փոխարեն սխալմամբ մեկ ուրիշը ունենալ
փոխս քըցել, նբ. - մի իրի փոխարեն սխալմամբ մեկ ուրիշը վերցնել
փող, գ. - դրամ.- Փողին փող չասում /անչափ փող ունի/
փողուփարա, գ. - դրամական միջոցները
փոնթ, գ. - ծալք, փաթ
փոնթըռտել, չբ. - ճմռթվել, ծալքեր առաջանալ
փոսընալ// փոս հընգնել, չբ. - փոս ընկնել
փոր ու փըսոր, գ. - փորոտիք
փոր քըցել, չբ. - փորը գիրությունից մեծանալ
փորացավ, գ. - ասելիք, մտահոգություն
փորը թափել - 1.դանակահարել, 2.հանդիմանություն շատակերության համար
փորի գ՛էրի, ած. - որկրամոլ
փորի ցավը քաշել - ուտելու մասին հոգալ
փորից ծ̈րուն էթալ, չբ. - մի բանի համար շատ ափսոսել, վշտանալ
փորից յետ չընգնել, չբ. - լավ սնվել՝ պայմանները հաշվի չառնելով
փորխոց հըլնել, չբ. - շատ ծիծաղել
փորցավ, գ. - փորացավ
փոցըղ ծ̈նել, չբ. - զբաղվել փոցխելով
փոցխել, նբ. - փոցխով հավաքել
փուղ, գ. - կշռի միավոր
փուղ քար, գ. - փուխր, թեթև քար
փուզ̈, գ. - վրձին
փութիկ - մեղմ հանդիմանական բառ
փուլ, գ. - բլրակ, կույտ
փուխըր, ած. - փխրուն
փունք տալ-փունք ծ̈ռնել, չբ. - բարկությունը աճել
փունքը թափել, չբ. - մեկի վրա բարկությունը թափել.- Գ՛ոռծ չունես, յեռու մ̈ց, փունքը վըրէտ չըթափա /Գործ չունես, հեռո՛ւ մնա, բարկությունը վրադ չթափի/
փուշը թօղել, չբ. - բարկությունն անցնել

փուշկ (թրք.), գ. - վիճակ
փուչիկ - 1.միզապարկ, 2.փուչիկ
փուչ (պրսկ.) - փուչ, մեջը դատարկ
փուռ, գ. - հաց թխելու հնոց
փուռ դ՛ընել - կարտոֆիլը եփել աթարի կրակում
փուռ ուտել - փուռ դրած կարտոֆիլ ուտել
փուռիկ, գ. - հագուստի խուճուճ եզրակար
փուսկուլ (թրք.), գ. - ծոպ
փուսուլմ (թրք.), գ. - գիտակցություն, էություն
փուսուլէն կուրցընել, չբ. - իրեն կորցնել
փուստ հընցնել, չբ. - նշանակետին չդիպչել
փուքմ,ած. - դատարկ, դատարկամիտ
փօղրաթ (ռուս.), գ. - կապալ
փօզել // փօզմիշ մնել, նբ. - ընդհատել, դադարեցնել գործը
փօզմիշ հըլնել, չբ. - դադարել
փօխան, գ. - վարտիք
փօխինդ // փօխինձ, գ. - խոշոր ալյուրով պատրաստված խմորեղեն
փօխծի մքլօր, ած. - փողոցում շատ լինող
փօխնմկ, գ. - երկրորդ կին կամ ամուսին
փօխնոռթ, գ. - ներքնաշորեր, որ փոխվում են լողանալուց հետո
փօխվել, չբ. - շորերը փոխել
փօկէմմղ, գ. - մաղ՝ ցորեն մաղելու համար
փօշման (պրսկ.), մկ. - զղջացած
փօշմընել, չբ. - զղջալ, հետ կանգնել
փօշտ, գ. - փոստ
փօշտալօ (ռուս.), գ. - փոստատար.- Ըտու մմռթը գ՛ախին փօշտալօ

յա հէլը, հըմընի տունը մըտե - հէլե /Դրա ամուսինը ժամանակին փոստատար է եղել, բոլորի տուն ելումուտ է ունեցել/

փօռ, գ. - շորի ծալ
փօռցանքի բ՛ուն, ած. - անընդհատ փորձանքի պատճառ դարձող
փօռցուկ թան - փորձված, վստահելի, ծանոթ

փօստ (պրսկ.), գ. - մորթի
փօստախան - 1.մորթին հանված, 2.նիհար
փօստախան հըլնել, չբ. - շատ նիհարել
փօր ու փօշման, մկ. - իրենց արածի համար զղջալով
փօրփըրել, չբ. - շարունակ փորել, փորձել մեկից մի բան իմանալ

Ք

քա, ձ. - դժգոհության որոշ երանգ արտահայտող ձայնարկություն, որ գործածվում է հիմնականում կանանց խոսքում՝ սովորաբար կոչականի հետ
քäբäբ (արաբ., պրսկ.), գ. - աղացած մսից խորովելով պատրաստվող խորտիկ, քաբաբ
քäթäն (արաբ., թրք.), գ. - գործվածքի տեսակ, քաթան
քալ, ած. - չհասած, խակ
քäլäգօզ, ած. - արկածախնդիր
քäլäմ (պրսկ.), գ. - 1.կաղամբ, 2.շաhաբեր
քäլäք (պրսկ.), գ. - փորձանք
քäլբäթի (պրսկ., թրք.), գ. - աքցան
քäլգäղäն ձ՛ի, ած. - եռանդուն, աշխատասեր.- Խօրքուրս ճսում էր՝ իմ խառըը քäլգäղäն ձ՛ի յա /Հորաքույրս ասում էր՝ իմ հարսը շատ աշխատասեր է/
քäլլä (պրսկ.), գ. - գանգ.- Հäշկերը թռան քäլլէն /Խիստ զարմացավ/
քäլլä տալ, չբ. - մի բանի համար պայքարել, համառել
քäլմընոց, գ. - կաղամբ ցանված տարածք
քախանք // քարխանք, գ. - քաղհան, նաև՝ մոլախոտեր
քախընքել // քարխընքել, նբ. - քաղհանել
քախծըր լիզու, գ. - շողոքորթ խոսք
քախծըր հäշկ, գ. - սիրով լի նայվածք

քախծըր հիշկալ, չբ. - շիլ նայել
քախծըրմըրուն, ած. - սիրելի
քախկըվորի, մկ. - քաղաքի լեզվով
քախկըցի, գ. - քաղաքացի
քած, գ. - անբարոյական կին
քաղ անել, չբ. - հնձել
քաղ էթալ, չբ. - հնձի գնալ
քաղուկապ, գ. - հնձելը և խուրձ կապելը
քաղվոր, գ. - հնձվոր
քամախառը, ած., մկ. - քամու հետ խառը
քամապընչուկ, մկ. - մեծ թափով, շտապով
քյամար (պրսկ.), գ. - լայն գոտի
քամբախ, գ. - ավերակ տուն
քամբըխվել, չբ. - 1.ավերակվել, ամայանալ, 2.եղածը չքվել
քամբըխցընել, նբ. - այնպես ներկայացնել, կարծես ամեն ինչ չքացել է
քամի խաղալ, չբ. - միջանցահովիկ լինել.- Դ՛ուռ ու լուսամութ պինդ մի՛ փագա, պըտի մէշու քամի խաղա, վոր ապրանքը չըփըջանա /Դուռ ու լուսամուտը ամուր մի՛ փակիր, պիտի միջանցահովիկ լինի, որ ապրանքը չփչանա/
քամի անել, չբ. - 1. Քամի լինել, 2.ստել
քամի առնել, չբ. - մրսելուց թեթև մրսել
քամոտ, ած. - հոդացավով հիվանդ
քամուն տալ, նբ. - 1.վատնել, 2.քամու օգնությամբ հատիկը հարդից զտել
քամօտել, չբ. - հոդացավով հիվանդանալ
քյանդըրբազ (թրք., պրսկ.), գ. - 1. Լարախաղաց, 2. խաբեբա
քյանդըրբազություն անել - խաբեբայություն անել.- Էկե սատանի մայլէն, քյանդըրբազութուն ա անում /Փորձում է խաբեբայություն անել տեղյակ մարդկանց միջավայրում/
քյանդըրել, նբ. - խաբել

քանդքընդել, նբ. - քանդել բայի բազմապատկականը
քանըսնոց, ած. - ինչ արժեցող
քանի էթա, մկ. - աստիճանաբար, հետզհետե
քաշ - քաշ, գ.
քաշ ânել, չբ. - կշռել
քաշել, նբ. - 1.քարշ տալ, 2. ծխել, 3. տնել, 3. չարչարանք կրել, 4. նմանվել, 5. քսել, 6.գծել, 7.ձգել.- Գâզ չըքաշա, մâզ կըքաշա /Արյունակիցներին ինչ-որ առումով կնմանվի/
քաշվել, չբ.. - 1. կշռվել, 2. հուսախաբ լինել, 3. ամաչել
քաշքըռնել, նբ. - քաշքշել
քաշօվլի, գ. - փլավ, որի ջուրը եփելով է վերջանում
քâչâլ (պրսկ.), ած. - ճաղատ.- Քâչâլը վոր դ՛եղ âրօղ հըլնի, հառէչ հիր գ՛ըլխին դ՛եղ կâնա /Իր խնդրի լուծումը չունեցող մարդը չի կարող ուրիշի նույն կարգի խնդիրը լուծել/
քâչըլնալ, չբ. - ճաղատանալ
քâչըլցընել, նբ. - գլուղը սափրել, ճաղատացնել
քâռթ, գ. - առարկայի վրա արված փոս.- Ըտու լիզվի տâկը քâռթ չըկա, ինչ բ՛էրանը գ՛ալում ՝ âսում ա /Դրա լեզվին խանգարող հանգամանք չկա, խոսում է առանց մտածելու/
քâռթâկ, գ. - լայնաշեղբ գործիք, որով մաքրում են ծեփիչը
քâռթըվնալ, չբ. - հնանալ
քâռթու (պրսկ.), ած. - հնացած, օգտագործման համար ոչ պիտանի /սննդամթերք/
քառճին, գ. - վայրի տանձ
քառսընքան, ած. - քառասուն օրական երեխա
քառսուն, թ. - քառասուն
քառսունչոռս, թ. - քառասունչորս
քառսունք, գ. - 1. ննջեցյալի մահվան քառասուներորդ օրվա հիշելու արարողությունը, 2. Նորածնի կյանքի քառասուներորդ օրը

քասա (պրսկ., թրք.), գ. - ապուր ուտելու կավե խոր աման
քյասյր (թրք.), մկ. - 1.ուղիղ և կարճ, 2.առանց ձգձգելու
քյաս կըղրել - գնալ-գալը կտրել
քյասիբ (պրսկ., արաբ.), ած. - աղքատ, խեղճ.- Քյասիբը վոր հարըստնա, քառսուն տրռի քյասպախոտը վըրվից գ՛ըքա /Հոգեբանությունը դժվարությամբ է փոխվում նույնիսկ իրավիճակը փոխվելուց հետո/
քյասպընալ, չբ. - աղքատանալ
քյատմյան (թրք.), գ. - շագանակ
քյատել, չբ. - ոտքերը միմյանց առջև դնելով՝ գալ իրար ընդառաջ՝ պարզելու, թե ով է խաղը սկսում
քյասուր մընալ, չբ. - զուրկ մնալ
քյվզիր (պրսկ.), գ. - ծակոտկեն մեծ շերեփ
քավոր, գ. - կնքահայր
քավորկընիկ, գ. - քավորակին
քյր (պրս.), գ. - օգուտ, շահ
քյր ա՛նել (պրսկ.) - օգուտ ստանալ
քար թյլել - 1.քար նետել, 2.խոսքը մեկին ուղղել.- Քար ես թյլե՝ թեվըտ ցավո՞ւմ /Ծանր աշխատանք չես արել, ինչո՞ւ ես նեղվում/
քար քաշել, չբ. - 1.ծանր աշխատանք կատարել, 2. շիրմաքար դնել
քար ա՛պառաժ, ած. - շատ պինդ /ասվում է պնդացած հողի կամ այլ իրի մասին/
քարաճիկ, գ. - կտնառք
քյրյվուզ (թրք.), գ. - կանաչեղենի տեսակ
քարէ, ած. - քարե
քարէ կա՛րկութ, գ. - 1.խոշոր հատիկներով կարկուտ, 2.խոսքի տարափ
քարը պա՛յթի տըրրաքի, մկ. - ծայրահեղ դեպքում
քարը քըցել, չբ. - բոլոր դեպքերում իր առաջարկն անել

քարընալ (քարնալ), չբ. - քարանալ
քարկըռտիկ, գ. - փոքր կլոր քարերով հատակին ձեռքերով խաղացվող խաղ
քարկիջ - ոտքի հիվանդություն
քարմա̂ղ - մաղի մի տեսակ
քա̈րվա̈ն (թրք.) - քարավան
քարուքանդ ա̂նել - ամբողջովին ավերել
քարուքըռա̈ - քարքարոտ տարածք
քա̈րփինջ (թրք.) - աղյուս
քարքընդել, նբ. - քարուքանդ անել
քարօվ-թըփօվ լա̈րել, նբ. - մեկին խիստ ձևով վռնդել, հետևից իրեր շպրտել
քարօվ քարալեղ ա̂նել, նբ. - մեկի վրա քարեր նետել
քացաղ, գ. - քացախ
քա̈փա̈նա̈կ (թրք.), գ. - *հիվանդություն է*
քա̈փչա̈, գ. - ծեփիչ
քա̈փքա̈փ, ած. - բերանում տհաճ չոր զգացողություն առաջացնող
քաքակեր, ած. - ժլատ
քա̈քուլ (արաբ., թրք.), գ. - ճակատի մազափունջ, խոպոպիք
քաֆըր (պրսկ., արաբ.), ած. - անխիղճ, անհավատ, անօրեն, անիրավ
քա̈ֆկ (պրսկ.), գ. - քափ, մսաջրի երեսին հավաքվող փրփրանման զանգված
քա̈ֆտօռ (պրսկ.), ած. - ծեր, քավթառ
քա̈ֆտօռնալ, չբ. - ծերանալ
քե-քե // քեզի-քեզի, մկ. - քեզ ու քեզ
քէն քըշել, չբ. - քեն պահել
քէնչի, ած. - քեն պահող, քինոտ.- Քէնչի մա̂ռթը բ՛անի նըման չէ, խէտը ճա̂մփա չէթաս /Քինոտ մարդը բանի նման չէ, հետը ճանապարհ չգնաս/

քէչա̈ (թրք.), գ. - թաղիք

քէջ, ձ. - *հորթերին քշելու ձայնարկություն*

քէռթել // քըռթել, նբ. - մորթը՝ մաշկը մսից բաժանել

քէրիկ, գ. - քերիչ

քէփըռտալ // քէփըլտալ, չբ. - սայթաքել, գայթել

քէֆ (արաբ.), գ. - խնջույք

քէֆ ա̈նել, չբ. - զվարճանալ, խնջույք կազմակերպել

քէֆ տալ, չբ. - հաճելի տրամադրություն ստեղծել

քէֆ քաշել, չբ. - հաճելի ժամանակ անցկացնել

քէֆը բ՛էրել, չբ. - արածը մեկի դուրը գալ

քէֆը գ՛ըլօխը, մկ. - հարբած

քէֆը թօղել, չբ. - հարբածությունն անցնել.- Ըտու քէֆը թօղե՞, թէ լը խըմուկ ա /Դրա խմածությունն անցե՞լ է, թե դեռ հարբած է/

քէֆը իմալ քաշա - ինչպես ցանկանա

քէֆը տալ գ՛ըլօխը, չբ. - հարբել

քէֆին քէֆ չըխասնել - շատ բարձր տրամադրության մեջ լինել

քէֆ-ուրախութուն, գ. - ուրախ խնջույք

քէֆչի (արաբ., թրք.), գ. - խնջույք, զվարճություն սիրող

քէֆօվ, ած. - հարբած

քէֆօվնալ, չբ. - հարբել

քըթից բ՛էրել, նբ. - հարամել

քըթօվ-մըռթօվ // քըթօվ-մույնըթօվ, մկ. - դժկամ, դժգոհ կեցվածքով.- Էնենց էլ մէ քըթօվ-մըռթօվ ա խէտըներըս խօսում, կա̈սես հիրանը տա̈լիք ենք /Հետներս այնպիսի դժգոհ կեցվածքով է խոսում, կարծես իրեն պարտք ենք/

քըթֆըթալ, չբ. - ինչ-որ բան որոնել, շարժվել

քըլընգել, նբ. - քլունգով փորել

քըլունգ (թրք.), գ. - քարոտ հող փորելու երկսայր գործիք

քըլուփըստ, գ. - գաղտնի և ցածրաձայն խոսակցություն

քըլուփըստի մէչ հըլնել - գաղտնի և ցածրաձայն խոսակցություն վարել

քըլուքըս, գ. - հասարակության համար անպիտան մարդիկ

քըլք, գ. - մնացորդ
քըլք ու մըլք, գ. - տակի մնացորդ
քըլքը կըղըրել - ամեն ինչ վերացնել
քըլքըլ հընգնել, չբ. - ման գալ, փնտրել
քըխ, գ. - կեղտ
քըխկալ, չբ. - հազել
քըծիբ, ած. - ժլատ
քըծիբնալ, չբ. - ժլատանալ
քըծիբութուն, գ. - ժլատություն
քընախարամ ա̊նել, նբ. - քունը ընդհատել, քնահարամ անել
քընթօ, ած. - քթի մեջ խոսող
քընկոտ, ած. - քնկոտ
քընձըռոտ, ած. - քրջոտ
քընձոխ, մկ. - քիչ քնած, անքուն մնացած
քընջէ քունջ, մկ. - անկյունից անկյուն
քընջի, ած. - ոչ մարդամիջի, ոչ ներկայանալի
քընուկ, ած. - 1.քնած, 2.թմրած, 3. ծույլ
քըշա̈, ձ. - *կենդանիներին, թռչուններին քշելու ձայնարկություն*
քըշկընալ, չբ. - քչանալ
քըշկըցընել, նբ. - քչացնել, պակասեցնել
քըշտել, նբ. - փեշերը հավաքել. թևքերը ծալել
քըչընալ, չբ. - քչանալ, պակասել
քըչութուն, գ. - պակասություն
քըչվոր, ած. - սակավանձ /ընտանիք/
քըչքըչալ, չբ. - կարկաչել
քըջըջել, չբ., նբ. - 1.հավի քուջուջ անելը, 2. ի վնաս դիմացինի՝ շարունակ մի բան որոնել
քըջուջ ա̊նել, չբ. - քուջուջ անել
քըռ գ́ալ, չբ. - գետնին քաշվելով տարվել այս ու այն կողմ
քըռ տալ, նբ. - քարշ տալ
քըռա̈, գ. - քարքարոտ վայր
քըռալ, չբ. - քարշ տրվել

քըռըցընել, նբ. - գետնին քարշ տալ
քըռթ, մկ. - գիրթ, կտրուկ, միանգամից, վերջնականապես
քըռթել, նբ. - քերթել
քըռկմ՞պ, գ. - այլևս չբացվող հանգույց
քըռկմ՞պ տալ, չբ. - այնպես հանգույց անել, որ այլևս չբացվի
քըռնել, չբ. - անհարթ և անվարժ կարել
քըռնուկ, ած. - անվարժ կարված
քըռռն ՞նել, չբ. - հնձից հետո խոտի մնացորդը ձեռքերով քաղել
քըռչիկ, գ. - կաղամբով ապուր
քըռչոտ, ած. - քրջոտ
քըռչուփալաս // քըռչուքավալ, գ. - քուրջեր
քըռտըընխաշ հըլնել, չբ. - քրտնելուց մաշկը գրգռվել
քըռտըընուկ, ած., դբ. - քրտնած
քըռտըընփըրչել, չբ. - քրտնաթոր ու ոգևորված աշխատել
քըռտըընփըրչուկ, մկ., դբ. - արագ-արագ շարժվելուց քրտնաթոր
քըռտըընքի մէչ կուրել, չբ. - շատ քրտնել
քըռփըշտուն, ած. - անհարթ, խորդուբորդ
քըռքաշ, մկ. - քարշ տալով
քըռֆատու, ած. - հայհոյանք տվող
քըռֆել, չբ. - հայհոյել
քըս, ձ. -հարձակվելու կոչ շանը
քըս տալ, նբ. - հարձակման հրահրել /շանը/
քըսել, նբ. - շփել, շպարել
քըսըցընել, նբ. - քսելով սահեցնել
քըսիկ, գ. - սահնակ
քըսմել, չբ. - 1.ցրտից փայտանալ, 2.շարժունակությունը կորցնել
քըսմըսվել, չբ. - քծնել
քըսմուկ, ած. - անճարակ, խեղճ
քըսնըվել, չբ. - քծնել
քըսվել, չբ. - շպարվել
քըսվուկ, ած. - շպարված
քըստիկ, գ. - հողաթափ
քըստքըստցընել, չբ. - հողաթափերը գետնին քսելով քայլել

քըսքըսցընել, չբ. - ոտքերը գետնին քսելով քայլել
քըրմ (արաբ.), գ. - վարձ
քըրգութ (թրք.), գ. - ծծումբ
քըրել, նբ. - վարձել
քըրօվ, ած. - վարձով.- Տըղէն գ՛ացե քըրօվ ա նըստում, հիրանց տունը նեղվասկ ա /Տղան գնացել վարձով է ապրում, իրենց տանը նեղվածք է/
քըֆուռ (արաբ.), գ. - հայհոյանք
քըֆուռ տալ, չբ. - հայհոյել
քըֆուռ-քաֆառ, գ. - հայհոյանք
քըֆուռ-քաֆառ ըմնել, չբ. - հայհոյանք տալ
քիթ ու մըռութ ըմնել, չբ. - նեղանալ, խռովել, դժկամություն ցույց տալ
քիթ քըթի հարևան, գ. - մոտիկ հարևան
քիթ քըթի տալ, չբ. - գաղտնի զրուցել
քիթը կըմխել, չբ. - ընկճվել, դժգոհել
քիթը տընգել, չբ. - գոռոզանալ, հպարտանալ.- Էնի հընչի նո՞ր ա քիթը տընգե, հա յէլ էտենց էր /Ինչու նա նո՞ր է գոռոզացել, միշտ էլ այդպիսին էր/
քիթուբ՛էրնի, մկ. - բերանքսիվայր
քիշմիշ (պրսկ., թրք.), գ. - չամիչ
քիչ - քիչ, մկ. - փոքր առ փոքր, աստիճանաբար, հետզհետե
քիչումիչ, մկ. - քիչ, սակավ
քիսմ, գ. - լողանալիս մարմնի կեղտը հանող կոշտ շոր
քիսմչի, գ. - լողացողի մարմնի կեղտը հանող
քիսել, չբ. - հանդիպել
քիսիկ (պրսկ.), գ. - քսակ
քիսպաթ (արաբ.), գ. - դեմք, կերպարանք
քիփլիկ, ած. - վրան լավ նստող
քիքիր, գ., ած. - 1.պառավ կին, 2.կանացի բնավորությամբ տղամարդ
քոր, գ. - մաշկի եռուքոր

քոր գ՛ալ, չբ. - քոր զգալ
քուղի, գ. - բրդյա գլխարկ.- Լը գ՛ըլխիցըտ էտ քուղին խան, տէնանք՝ վո՛րն ես, վոր էտենց ռիսկօվ խօսում ես /Մի այդ գլխարկը գլխիցդ հա՛ն, տեսնենք՝ ո՛վ ես, որ այդպես համարձակ խոսում ես/
քութիկ, գ. - շան լակոտ
քութ-քութ, ձ. - շանը կանչելու ձայնարկություն
քուլ (պրսկ.), գ. - փոշի
քուլըշ // քիլըշ, գ. - հնձած հասկերը՝ ցողուններով
քուլխան, գ. - փոշեհան
քուլֆըթ // քիլֆըթ (թրք.), գ. - կին, ընտանիք
քուն ու դ՛աթար չունենալ - անընդհատ աշխատել
քունը գ՛ալ, չբ. - ցանկանալ քնել
քունը գ՛ըլօխը, մկ. - քնաթաթախ, քնից լրիվ չսթափված
քունը թըռնել, չբ. - այլևս չկարողանալ քնել
քունը թըռնել գ՛ըլօխը, չբ. - քնահարամ լինել
քունը տանել, չբ. - քնելու ցանկություն ունենալ
քունը փախնել, չբ. - չկարողանալ քնել
քունն առնել, չբ. - քնից բավարարվել, լիովին հանգստացած արթնանալ
քունջ (պրսկ.), գ. - անկյուն
քունջ ու պուճախ, գ. - բոլոր անկյունները
քունջ-քունջ հըլնել, չբ. - քաշվել մի կողմ և փսփսալ
քուչա (պրսկ.), գ. - փողոց
քուչէքից տուն գ՛ալ, չբ. - վերջապես տուն գալ
քուչի դէլ, ած. - փողոցային, անբարոյական կին
քուչիկ // քուչօ /փղքշ./, գ. - շնիկ
քուռակ, գ. - ձիու կամ էշի ձագ
քուռթ, գ. - քուրդ
քուռսի (թրք.), գ. - 1.ցածր աթոռ, 2.շենքի պատերի մեկ հորիզոնական շարք
քուր, գ. - քույր

քուր ու մէր, գ. - սիրելի կանայք.- Քուր ու մէր ջան, լավ էր՝ յես գ՛էտինը մըդնի, ձ՛եր դ՛էմը քըֆուռ չիտի /Սիրելի կանայք, լավ կլիներ՝ ես գետինը մտնեի, ձեր ներկայությամբ չհայհոյեի/
քուրք (թրք.), գ. - մուշտակ
քուրօ - քույրիկ (դիմելաբառ)
քուֆըռ // քըֆուռ, գ. (արաբ.)- հայհոյանք
քուֆըռ-քաֆառ, գ. - հայհոյանք
քուֆըռ-քաֆառ ա̈նել, չբ. - հայհոյանք տալ
քուֆտա̈//քիֆտա̈ (պրսկ.), գ. - ծեծած մսից զնդակի տեսքով եփած կոլոլակ, քուֆթա
քուֆտըցու, գ.,ած. - միս, որից կարելի է քուֆթա պատրաստել
քօզ, գ. - ցանկապատված տարածք, որտեղ առանձնացնում են գառներին
քօթուկ (թրք.), գ. - կոճղ.- Մէ խատ քօթուկ բ՛ե դ՛ի ըստե, էն միսն էլ բ՛ե կըտըռտեմ… տա̈պուռն հո՞ւր ա /Մեկ հատ կոճղ բեր դիր այստեղ, էն միսն էլ բեր կտրտեմ… կացինն ո՞ւր է/
քօլ, գ. - կարտոֆիլի վերգետնյա զանգվածը
քօլել // քօլօմըստել, նբ. - խաբելով համոզել
քօլօզ, գ. - սրածայր գլխարկ
քօծ, գ. - ծառա
քօծութուն, գ. - ծառայելը, մեկի համար ծառայի տեղ աշխատելը
քօմ (թրք.), գ., մկ. - հավաք, խումբ
քօմա̈կ (պրսկ.), գ. - օգնական
քօմա̈կ կա̈յնել, չբ. - օգնել, զորավիգ լինել.- Մէկըս մէկիս պըտի քօմա̈կ կա̈յնենք, վոր վոտի հըլնենք /Մեկս մյուսիս պիտի զորավիգ լինենք, որ ոտքի ելնենք/
քօմել, նբ. - հավաքել, հավաքվել
քօմըլել, չբ. - հավաքվել
քօմուկ, մկ., դբ. - հավաքված
քօմ-քօմ, մկ. - խումբ-խումբ

քոնձախ, գ. - խղճուկ տնակ
քոչ (պրսկ., թրք.), գ. - ունեցվածքով հանդերձ տեղափոխվող ընտանիք, ամբոխ, խումբ
քոչել, չբ. - խմբովին տեղափոխվել
քոռ (պրսկ.), ած. - կույր
քոռ բ՛ուվ, ած. - վատ բան կանխորոշող
քոռ ու փօշման, մկ. - դատարկաձեռն և զղջացած
քոռֆյուր, ած. - չկողմնորոշվող.- Քոռֆյուրմի կյյդի ի՞մալ ըտոնցը լըսացինք /Ինչպե՞ս հիմարաբար դրանց լսեցինք/
քոռակյյդի, մկ. - կույրի պես
քոռի տալ, չբ. - չտեսնելու տալ
քոռնալ, չբ. - 1.կուրանալ, 2.սրությունը կորցնել, 3.նախանձել
քոռնալ-սիֆտըկել, չբ. - նախանձել
քոռութօփալ, ած. - կույր և կաղ
քոռուփուջ ա՛նել, նբ. - վատնել, շռայլել.- Հէլած-չէլածը սա՛ղ քոռուփուջ ա՛րին, հէքուց մէկէլ օր կըթօղեն կըփախնեն /Ողջ եղածը վատնեցին, վաղը մյուս օր կփախչեն կգնան/
քոփա (թրք.), ած. - փոքր, մատղաշ
քոռ-քոռ, մկ. - անուշադիր, առանց շրջապատը հաշվի առնելու, չիմանալով
քոսա (պրսկ.), ած. - երեսի մազածածկույթ չունեցող /տղամարդ/
քոսոտ, ած. - քոս հիվանդություն ունեցող
քորքօշնալ, չբ. - հպարտանալ, ինքն իրենով հրճվել
քօփյազօղլի (թրք.) - շանորդի
քօփյակ (թրք.) - շուն, վիրավորական բառ
քօփօղլի (թրք.) - շանորդի
քօք (պրսկ., թրք.), գ. - արմատ, ցեղ
քօքել, նբ. - լարել
քօքել-թօղել, նբ. - մեկին հրահրել
քօքը կըդրել - վերացնել

քօքխան անել, նբ. - արմատահան անել

քօքուր՛ուս, գ. - ցեղ, ծագում.- Ըտու քօքուր՛ուսը կըդրէր, վօր մեզի ռաստ չիգէր /Դրա արմատը չորանար, որ մեզ չհանդիպեր/

O

օ՛hօ, ձ. - *կովին քշելու ձայնարկություն*

օզոր, գ. - նախշազիծ

օզոր-մօզոր, մկ. - ծուռ ու մուռ

օթաղ (թրք.), գ. - սենյակ

օժիտ, գ. - հարսի բաժինը հայրական տնից.- Խառսի օժիտը վօր բ՛ացին, սըղի բ՛էրանը մընաց բ՛աց /Երբ հարսի օժիտը սկսեցին ցուցադրել, բոլորը մնացին զարմացած/

օլըրել, նբ. - ոլորել

օլըրվել, չբ. - շուռ գալ, շրջվել, ոլորվել.- Վոտըս փիս օլըրվավ, յես ըսի՝ ջ՛առթավ /Ոտքս խիստ ոլորվեց, ինձ թվաց՝ կոտրվեց/

օլըրցընել, նբ. - շրջել, հետ դարձնել

օլոր-մօլոր, մկ. - ոլոր-մոլոր

օլօք, գ. - սրունք

օխ, ձ. - *ուրախություն արտահայտող ձայնարկություն*

օխայ, ձ. - *բավականություն արտահայտող ձայնարկություն*

օխլավ, գ. - խմորը բաց անելու բարակ փայտ

օխճար, գ. - ոչխար.- Էծը իծին լավ ա, քան մէ սուրու օխճարը /Մարդ իր նմանների շրջապատում է իրեն լավ զգում/

օղբ̈ըթ, ած. - տարօրինակ

օղոռթ, ած. - ճիշտ

օղուլ (թրք.), գ. - զավակ, տղա

օղօճիկ // օղօճիթ, գ. - հանգույց

օյաղ (թրք.), ած. - սթափ

օյաղնալ, չբ. - հարբածությունն անցնել.- Գ՛ընա՛ հ՞ւշկըտ կըպցըրա, կօյաղնաս, նոր գ՛ըքաս կըխօսանք /Գնա քնի՛ր, հարբածությունդ կանցնի, նոր կգաս, կխոսենք/
օյամըշել, չբ. - ուշքի գալ
օյին (թրք.), գ. - 1.խաղափուլ, 2.չար կատակ, 3.փորձանք
օյին խանել, չբ. - երևեցնել, հայտնի դարձնել
օյին խանել գ՛ըլխին - հոգու հետ խաղալ, փորձանք բերել գլխին.- Լը կ՞այնի՝ յես էնենց օյին խանեմ ըտու գ՛ըլխին, վոր ըսկի մըտէն չէթա /Սպասիր, ես այնպիսի խաղ խաղամ դրա գլխին, որ երբեք չմոռանա/
օյինբազ (թրք.), գ. - ծաղրածու, կատակաբան
օյին-օյին հըլնել, չբ. - ձևեր թափել
օշլոտ,ած. - ոջլոտ
օշլօտել, չբ. - ոջլոտել
օջախ (թրք.), գ. - վառարան, կրակ
օռծըկըտալ, չբ. - ործկալ.- Հազար եմ ՞ասէ՝ էտքան մի՛ խըմա, ս՞աղ գ՛իշեր օռծըկըտաց /Միշտ ասում եմ՝ այդքան մի՛ խմիր, ամբողջ գիշեր ործկաց/
օռնալ, չբ. - ոռնալ
օռշնուկ, ած. - օրհնած
օսկըռախան ՞անել, նբ. - եփած մսից ոսկորները անջատել
օսկըռոտ, ած. - խոշոր ոսկորներ ունեցող
օսկոռ, գ. - ոսկոր.- Օսկոռ բ՛էրօղ շունը օսկոռ կըտ՞անա /Ուրիշից խոսք բերողը քեզնից էլ խոսք կտանի/
օսկոռ կըռծօղ կօվ, ած. - ուշացող
օր ու ՞արեվ, գ. - կյանք
օր չիտալ, նբ. - նեղել
օր ջ՛օչութուն, մկ. - ծերության օրերին
օր ու ՞արեվ չիտալ, նբ. - նեղել, չարչարել.- Կիսուրը խեխճին օր ու ՞արեվ յե՞փ էր տ՞ալում /Սկեսուրը խեղճին շատ էր նեղում/
օրական, մկ. - յուրաքանչյուր օր

օրէ // օրէ բ՛ընէ, մկ. - ի սկզբանե
օրը ցէրէկօվ, մկ. - բացահայտ
օրըմէչ // օրումէչ, մկ. - երկու օրը մեկ
օրըրել, նբ. - օրորել
օրին, ած. - նման.- Ըտու օրին մ՞ռթ չըկա /Դրա նման մարդ չկա/
օրումէչ, մկ. - երկու օրը մեկ
օրվա խացի կ՞րոտ, ած. - ծայրահեղ աղքատ.- Մեր հարէվանն ին, օրվա խացի կ՞րոտ ին, բ՛այց տըղէրքը գ՛իշեր-ցէրէկ ՞շխատին, հիրանցը սՙրմՙ դըզին, գ՛ոռծ դ՛ըրին, վոտի հէլան /Մեր հարևանն էին, ծայրահեղ աղքատ էին, բայց որդիները գիշեր-ցերեկ աշխատեցին, իրենց միջոց ստեղծեցին, գործ դրեցին ոտքի ելա /
օրօճիկ, գ. - խխունջ
օրօշկըտալ, չբ. - հորանջե
օց, գ. - օձ.- Օցը դ՛ախծից ա փախնում, դ՛ախծն էթում ՞ճնում օցի բ՛ընան դ՛էմը /Ինչից խուսափում ես՝ հաճախ ես հանդիպում/
օցէրի կըծուկ, ած. - նենգ, մռայլ, չար
օցի լիզու խանել, չբ. - հնարամիտ կերպով համոզել
օցի փուշ - *խիստ նախատական, չարակամ արտահայտություն*
օցիփըշվել, չբ. - զխտվել
օցուկ՞րիճ, ած. - նենգ, չարակամ
օցօտել, չբ. - խռովել, չարանալ
օքտել, չբ. - օգտել, օգնել, օգուտ տալ

Ֆ

ֆՙյլՙ, գ. - բանվոր
ֆՙյլՙ բազառ, գ. -օրավարձով բանվորների հավաքատեղի.- Ձ՛եր տ՞ն կուշտը ֆՙյլՙ բազառ չըկա՞, գ՛ընա ըտեղից բ՛անվոր բ՛ըռնա, տ՞ր, թօ էտ դաշնամուրը խանեն

խինգեռօրթ հարգ /Ձեր տան մոտ օրավարձով բանվորների հավաքատեղի չկա՞, գնա այդտեղից բանվոր վարձիր, տար, թող այդ դաշնամուրը հանեն հինգերորդ հարկ/
Ֆա՛յմ (արաբ.), գ. - հասկացողություն
ֆա՛յմ ունէնալ - հասկացողություն ունենալ
ֆա՛յմել, նբ. - կողմնորոշվել, գլխի ընկնել.- Մ՚ատըրտ դ՛ընես բ՛էրանը՝ չըֆա՛յմի կըծա /Շատ չկողմնորոշվող, շշմած է/
ֆա՛յմօվ, ած. - հասկացող, կողմնորոշվող
ֆա՛յտոն (ռուս.), գ. - կառք
ֆա՛նա՛ր (թրք.), գ. - լապտեր.- Էնքա՛ն հէլե՝ բօստանը գ՛իշերօվ եմ ջ՛ըրե, ֆա՛նա՛րի լույսով /Այնքա՛ն է պատահել՝ բոստանը գիշերն եմ ջրել, լապտերի լույսով/
ֆա՛նդ (պրսկ.), գ. - հնար, խաբեություն
ֆա՛նդ ու ֆըլուշկ, գ. - խաբեություն
ֆա՛նդօվ, ած. - հնարամիտ եղանակով
ֆա՛նէրկա (ռուս.), գ. - ֆաներ
ֆա՛ռթուկ (ռուս.), գ. - գոգնոց
ֆա՛ռշ[1] (ռուս.), ած. - կեղծ
ֆա՛ռշ[2] (ռուս.), գ. - շարֆ
ֆա՛ս (թրք.), գ. - գլխարկ
ֆա՛սա՛լ, գ. - գործ անելու հարմար եղանակ
ֆա՛սա՛լ քըցել, չբ. - հարմար առիթ գտնել.- Ֆա՛սա՛լ քըցա, վըռազ ա՛րի խաց կե, գ՛ընա /Հարմար առիթ գտիր, շտապ ե՛կ հաց կեր, գնա/
ֆա՛սա՛լօվ, մկ. - 1.հարմար եղանակով, 2.աննկատ
ֆա՛սոն (ռուս.), գ. - ձև, կերպարանք
ֆա՛րա՛գ թէ // ֆա՛րա՛գում (արաբ.), վ. - ափսոս որ, իզուր
ֆէլ (արաբ.), գ. - կեղծիք, հորինվածք

ֆէլ ու ֆա̈նդ, գ. - խաբեբայություն

ֆէլ ու ֆա̈նդ ա̈նել, չբ. - ստեր հորինելով խաբել, մոլորեցնել.- Բօլ ա ֆէլ ու ֆա̈նդ ա̈նես, բ՛ան ունես ա̈սէլու՝ դուզն ա̈սա /Հերիք է ստերով մոլորեցնես, բան ունես ասելու՝ ճիշտն ասա/

ֆէլ ա̈նել, չբ. - հորինել, կեղծել, խաբել

ֆէլչի (թրք.), ած. - հորինող, սուտասան, խաբեբա

ֆէլօվ-ֆա̈նդօվ, մկ. - կեղծիքով, խաբեբայությամբ

ֆըրթֆըրթալ, չբ. - արագ-արագ խոսել և շարժումներ անել

ֆըրթֆըրթիկ, ած. - արագախոս և արագաշարժ

ֆըլան (արաբ.), դ. - այսինչը, այնինչը

ֆըլան-բէֆան, դ. - այս ու այն /մարդ/

ֆըլանքա̈ս, դ. - որևէ մեկը

ֆըլան-ֆըստան, դ. - այս ու այն /մարդ/

ֆըլի (արաբ.) **օսկոռ**, ած. - խիստ դիմացկուն, չմաշվող

ֆըշըցընել // ֆըշֆըշցընել, չբ. - սուլել

ֆըշշալ, չբ. - օձի ձայն հանել

ֆըշտըկալ, չբ. - բորբոքվել, միանգամից զայրույթ արտահայտել, ջրի շթի հանկարծակի հորդելը

ֆըշտըկան, ած. - դյուրաբորբոք

ֆըռա̈նգի կօղբէս, գ. - ներքին կողպեք

ֆըռալ, չբ. - 1.շուռ գալ, 2.պտտվել

ֆըռըցընել, նբ. - 1.շրջել, 2.պտտել, 3.խաբել

ֆըռթըկալ, չբ. - բռնկվել

ֆըռթօնա (իտալ., թրք.), գ. - կեղծ աղմուկ

ֆըռթօնա ա̈նել, չբ.- աղմուկ բարձրացնել

ֆըռթօնէք բ՛անցընել, չբ. - կեղծ աղմուկ բարձրացնել

ֆըռիկ, գ. - հոլ, խաբեություն

ֆըռիկ ա̈նել, չբ. - փորձել խաբելով գլուխն ազատել

ֆըռօնտ (ռուս.), գ. - ռազմաճակատ

ֆըռօվի, ած. - պտտվող

ֆըռֆըռալ, չբ. - *ֆռալ* բայի բազմապատկականը.- Դոր էլ էթաք, ֆըռֆըռաք, մէկ ա՝ պըտի ղ՛առնաք, գ՛աք ձ՛եր խող ու ջ՛ըրին տէր կ՛ընէք /Ուր էլ գնաք, ման գաք, միննույն է՝ պիտի հետ գաք, ձեր հող ու ջրին տեր կանգնեք/

ֆըսալ, չբ. - շնչելիս թեթև աղմուկ հանել

ֆըսըցընել, չբ. - շնչելիս թեթև աղմուկ հանել

ֆըսոց, գ. - թեթև շունչ

ֆըսֆըսալ, չբ. - *ֆըսալ* բայի բազմապատկականը

ֆիգուռա (ռուս.), գ. - կազմվածք

ֆիդան, ած. - արտաքնապես գեղեցիկ

ֆիթիլ (արաբ.), գ. - բռնկվող պատրույգ

ֆիլ (արաբ., պրսկ.), գ. - փիղ

ֆուղբօլ, գ. - ֆուտբոլ

ֆուրղուն, գ. - ֆուրգոն

ֆուֆայկա (ռուս.), գ. - շապիկ

ֆօլել-ֆօքսել, նբ. - խաբել

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտ տեղեկություններ Բայազետի բարբառի վերաբերյալ……………………………………………………… 4
Բառարանի կառուցվածքը…………………………………… 15
Համառոտագրություններ…………………………………….. 17
Բառացանկ…………………………………………………….. 18

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ԲԱՑԱՋԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Հ. Խառատյանի